



ՏԱՐԵՎԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ
ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 13

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ..... 22

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 26

 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 28

 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ..... 49

 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 58

 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ..... 68

 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ..... 83

 ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ..... 87

 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 96

ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ..... 114

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 122

ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ..... 171

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ..... 180

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... 185

ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԵՎ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 194

ԱՌԱՆՁԻՆ ԽՈՒՄԲ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ..... 205

 ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 205

 ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 240

 ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 256

 ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 270

 ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ, ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ
 ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 308

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բարձր առաքելությունը յուրաքանչյուր պետության ամենազգայուն և, դրանով հանդերձ, կարևորագույն ոլորտներից է: Այն կարող է անմիջական ազդեցություն ունենալ ինչպես երկրի զարգացման, այնպես էլ յուրաքանչյուր անձի պաշտպանվածության վրա:

Իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեությունը լի է մարտահրավերներով, որոնք անընդհատ փոփոխվում են և հաղթահարման համար յուրաքանչյուր դեպքում պահանջում նոր մոտեցումներ: Դրա հետ միասին, իրավունքների պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ պետության ներսում գործում է այդ խնդրով զբաղվող մարմինների ու կազմակերպությունների հստակ ու որոշակի համակարգ: Դա իր հերթին ենթադրում է այդ մարմինների կամ կազմակերպությունների գործառույթների հստակ տարանջատում՝ պայմանավորված դրանց դերով ու խնդիրներով: Նրանցից յուրաքանչյուրը պետք է ունենա իրեն վերապահված գործառույթներով պայմանավորված իրավական այնպիսի կարգավիճակ, որը հատուկ է բացառապես այդ մարմնին կամ կազմակերպությանը և չի կրկնում մյուսներին:

Հայաստանի Հանրապետությունում իրավապաշտպան գործունեությունը և դրանում Մարդու իրավունքների պաշտպանի դերը նորովի արժևորվեցին 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով: Մի կողմից բարձրացվեց այդ մարմնի նշանակությունը երկրի իրավական համակարգի կատարելագործման հարցում, մյուս կողմից արձանագրվեց Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու յուրաքանչյուր անձի բացարձակ իրավունքը:

Սա է եվրոպական արժեհամակարգի վրա հիմնված ժամանակակից այն մոտեցումը, որը դրված է Հայաստանի Հանրապետության իրավապաշտպան համակարգի զարգացման հիմքում:

Նշված մոտեցումն առավել էլ քան օրինաչափ է: Իրավապաշտպան քաղաքակիրթ պահանջները մեծ ծանրություն են դնում պետությունների վրա: Համաձայն նոր ձևավորված համաեվրոպական սկզբունքների՝ պետություններն իրենք պետք է հնարավոր ամեն ինչ գործադրեն, որպեսզի յուրաքանչյուր ոք իրեն լիարժեք պաշտպանված զգա սեփական երկրում: Ըստ այդմ, օմբուդսմենի ինստիտուտին վերապահվում է հատուկ նշանակություն՝ որպես իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգի ինքնուրույն մասնակցի:

Այսպեսով հանդերձ, Մարդու իրավունքների պաշտպանը պետք է ընկալվի ոչ թե որպես պետությունից օտարացած մարմին, այլ այնպիսի սուբյեկտ, որը լրացնելով պետական ինստիտուտների համակարգը և վեր լինելով գերատեսչական որևէ շահից՝ կոչված է նպաստելու իրավունքների պաշտպանության ողջ մեխանիզմի ուժեղացմանը:

Այս առումով, Հայաստանում Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը ստեղծման օրից ի վեր ապրել է շարունակական զարգացման

գործընթաց: Դա արձանագրվել է Մարդու իրավունքների նախորդ բոլոր երեք պաշտպանների օրոք: Այդպիսի զարգացում հնարավոր է ապահովել միայն հետևողական աշխատանքի շնորհիվ. աշխատանք, որը կոչված է նաև ապահովելու ինստիտուցիոնալ հետևողականություն: Այսպիսի սկզբունքներով աշխատանքն է, որ հնարավորություն է տվել ունենալու միջազգային «A» կարգավիճակ և ակտիվ ներգրավվածություն ապահովել միջազգային գործընթացներում:

2016 թվականն ընդհանրապես նշանավորվեց մարդու իրավունքների տեսանկյունից մի քանի հիմնարար մարտահրավերներով: Խոսքն առաջին հերթին վերաբերում էր ադրբեջանական զինված ուժերի նախաձեռնած ագրեսիային Արցախի նկատմամբ ու ապրիլյան քառօրյա պատերազմին: Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի կողմից այդ օրերին անմիջական աջակցություն ցուցաբերվեց արցախյան գործընկերոջը՝ իրավապաշտպան անհրաժեշտ աշխատանքների իրականացման հարցում: Դրանից բացի, ապրիլյան քառօրյա պատերազմը վեր հանեց այնպիսի հիմնարար հարց, որն առնչվում է Ադրբեջանի իշխանությունների ամենաբարձր աջակցությունը վայելող ատելությանը հայերի նկատմամբ: Այդ ատելությունն էր, որ հանգեցրեց խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի այլ ձևերի: Այս հայատյաց քաղաքականությունը խրախուսելն ակնհայտ արտահայտվում է նրանում, որ միայն հայ լինելու փաստի ուժով նրանց կյանքից զրկող ադրբեջանցի զինվորականներն արժանանում են ամենաբարձր պարգևների Ադրբեջանի իշխանությունների կողմից: Մրա վառ ապացույցը հետագայում հանդիսացավ Հայաստանի Տավուշի մարզի Չինարի գյուղի նկատմամբ ադրբեջանական հարձակումը, հայ զինվորների սպանությունն ու այդ սպանությունը կատարողին բարձր պարգևի արժանացնելը Ադրբեջանի նախագահի կողմից:

2016 թվականի ընթացում արձանագրված մարտահրավեր էր, իհարկե, նաև զինված անձանց կողմից Ոստիկանության պարեկապահակակետային ծառայության (ՊՊԾ) գնդի գրավումը հուլիսի 17-ին: Հուլիսյան իրադարձությունների ընթացքում տեղի ունեցան Ոստիկանության կողմից խախտումներ խաղաղ հավաքների ընթացքում, արձանագրվեցին անօրինական բերման ենթարկելու ու բերման ենթարկվածների իրավունքները ռոնահարելու դեպքեր, ինչպես նաև եղան հրապարակումներ խոշտանգման վերաբերյալ: Կյանքից զրկվեց ոստիկանության երեք ծառայող, ինչպես նաև իրավապահ մարմինների հատուկ գործողությունների ընթացքում հրազենային վիրավորում ստացան զինված խմբի անդամներ և ոստիկանության ծառայողներ: Հուլիսյան իրադարձություններն աչքի ընկան նաև ատելության ու բռնության քարոզչության աննախադեպ բռնկումով: Դրան նպաստեցին, իհարկե, Ոստիկանության կողմից թույլ տրվող խախտումները: Արձանագրվեցին լրագրողների նկատմամբ բռնության, ինչպես նաև նրանց մասնագիտական աշխատանքը խոչընդոտելու դեպքեր:

Այս բոլոր իրադարձությունները հիմնավոր կերպով վերլուծվել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առանձին զեկույցի շրջանակներում: Այդ վերլուծության համատեքստում իրականացվել են փաստահավաք աշխատանքներ, որի արդյունքում կազմվել են համապատասխան նշումներով քարտեզներ: Դրանից բացի,

այդ զեկույցում ամբողջական տեսքով ներկայացվել են նաև Պաշտպանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի որոշման դրույթները:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն արտոցուղղ սույն հաղորդումը ներառում է Պաշտպանի կատարած աշխատանքը 2016 թվականի ընթացքում՝ հուլիսյան իրադարձությունների մանրամասն վերլուծությունը թողնելով հատուկ զեկույցին: Ընդ որում, սույն հաղորդումը ներառում է միայն մարտ ամսից մինչև դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի աշխատանքը՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2016 թվականի փետրվարի 24-ին պաշտոնը ստանձնելու պահից սկսած:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական դերն ու գործառույթների շրջանակը վկայում են, որ այդ ինստիտուտի իրավապաշտպան գործունեությունը պետք է խարսխված լինի երկու հիմնարար ուղղության վրա:

Առաջին, իհարկե, իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելը, իսկ խախտման դեպքում՝ դրանց վերականգնմանը նպաստելն է անհատական բողոքների քննարկման միջոցով: Սա ենթադրում է քաղաքացիների հետ մշտական անհատական աշխատանք՝ նպատակ ունենալով ճիշտ նախանշել բողոքում բերված հարցերի լուծման ուղիները:

Երկրորդ հիմնարար ուղղությունը Մարդու իրավունքների պաշտպանի կանխարգելիչ գործունեությունն է: Այն պետք է իրականացվի մոնիթորինգային պարբերական այցելությունների, այդ այցելությունների ընթացքում վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ ներկայացնելու և այդ առաջարկների իրացմանը նպաստելու միջոցով: Ընդ որում, սա հաճախ ներառում է նաև անհատական աշխատանք քաղաքացիների հետ:

Գործունեության այս երկու ուղղությունները չեն կարող առանց մեկը մյուսի գոյություն ունենալ, դրանք պետք է լրացնեն իրար: Միայն այդ ուղղությունների զուգակցված իրականացումը կարող է հնարավորություն տալ հասնելու իրական արդյունքի՝ նպատակ ունենալով բացառել պետական և տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման դեպքերն հետագայում:

Կասկածից վեր է, որ Մարդու իրավունքների պաշտպանը, որպես պետական պաշտոնատար անձ, պետք է պահպանի բացարձակ անաչառություն և իր գործառույթներն իրականացնի արդարության ու հավասարության պայմաններում:

Հավասար վերաբերմունքը, սակայն, չի նշանակում, թե կարող են ուշադրությունից վրիպել հասարակության առանձին խմբերի իրավունքների իրականացման հարցերը և այդ նպատակի համար անհրաժեշտ մասնագիտացումը:

Խոսքը վերաբերում է, օրինակ, փախստականների և ապաստան հայցողների կամ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը: Կարևոր է կրթական իրավունքների, զինվորական ծառայողների, ազատությունից որևէ կերպ զրկված անձանց իրավունքների ապահովումը և այլն:

Մասնագիտացված մոտեցումն է, որ օգնում է ճիշտ հասկանալու թվարկված խմբերից յուրաքանչյուրի հատուկ կարիքները և անհատական մոտեցման պայմաններում նպաստել նրանց բարձրացրած հարցերի լուծմանը:

Մարդու իրավունքների պաշտպանն իր առջև դրված խնդիրները պետք է իրականացնի՝ անկախ որևէ կողմնորոշումից: Ընդ որում, Պաշտպանը պետք է ոչ միայն ինքը բացառի քաղաքական կամ որևէ այլ կողմնորոշմամբ պայմանավորված

կանխակալ ցանկացած մոտեցում, այլ նաև այդպիսի կողմնորոշումների վտանգից զերծ պահի իր աշխատակազմը:

Իրավապաշտպան գործունեությունը պահանջում է արդարացի և անաչառ վերաբերմունք իրավունքի խախտման ցանկացած դեպքի նկատմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը պետք է լինի հետևողական:

Պետական յուրաքանչյուր մարմին կամ պաշտոնատար անձ պետք է գիտակցի, որ պաշտպանի կողմից լինելու է բացարձակ անհանդուրժողական վերաբերմունք իրավունքի խախտման ցանկացած դեպքի նկատմամբ: Նման մոտեցումը օմբուդսմենի հեղինակությունը պայմանավորող կարևոր գործոն է:

Մարու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր սկզբունք է հաշվետվողականությունը: Սա ենթադրում է հետադարձ կապի հաստատում քաղաքացիական հասարակության և դրա ինստիտուտների, ինչպես նաև խորհրդարանի հետ:

Այս ամենով հանդերձ, Պաշտպանը և նրա աշխատակազմը պետք է մատչելի լինեն յուրաքանչյուրի համար:

Այստեղ պետք է նշել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանումների զարգացման անհրաժեշտությունը, որպիսի գործընթացը սկիզբ է առել դեռ 2010 թվականից: Օրենսդրական նոր կարգավորումների միջոցով պետք է բարձրացնել այդ ստորաբաժանումների դերը՝ դրանց վերապահելով ինքնուրույնության այնպիսի աստիճան, որը բավարար կլինի տեղում իրավունքների ոտնահարման դեպքերին արագ արձագանքելու, առաջ եկած խնդիրների իրավական լուծումները գտնելու համար:

Քաղաքացու վստահության և, հետևաբար, նաև արդյունավետ աշխատանքի երաշխիք է անհապաղ արձագանքը իրավունքի կամ ազատության խախտման ցանկացած դեպքին: Տարիներ շարունակ դա իրականացվել է Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման ծառայության միջոցով: Անգնահատելի է այդ գործառույթի կարևորությունը և անհրաժեշտ է ավելի զարգացնել նշված ստորաբաժանման կարողություններն ու առավել հստակեցնել գործունեության սկզբունքները:

Մարդու իրավունքների պաշտպանին բնորոշ խստությամբ հանդերձ, նրա քննադատությունները չպետք է լինեն ինքնանպատակ, դրանք պետք է ունենան իրավաբանական փաստարկման բարձր աստիճան և պարունակեն վեր հանված խնդիրների լուծման կոնկրետ առաջարկներ:

Առանձնակի կարևորություն ունի մշտական երկխոսության ու համագործակցության սկզբունքների համադրմամբ տարվելիք աշխատանքը: Ուստի, անչափ կարևոր է երկկողմ կապի ստեղծումը բոլոր գործընկերների հետ:

Նման գործունեության համար առկա են անհրաժեշտ բոլոր սահմանադրական երաշխիքները: Մասնավորապես, ամրագրելով պաշտպանի անկախությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են

օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին:

Եվ իհարկե, Մարդու իրավունքների պաշտպանի հեղինակության կարևորագույն երաշխիք է նրա ընտրվելը երկրի բարձրագույն ներկայացուցչական մարմնի կողմից:

Անդրադառնալով համագործակցությանը հիմնական գործընկերների հետ՝ նախևառաջ պետք է կարևորել աշխատանքը քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ: Իրավունքների պաշտպանության սահմանադրական առաքելությունն իրականացնելիս Մարդու իրավունքների պաշտպանը պետք է ինքը խթանի տարբեր ոլորտի հասարակական կազմակերպությունների ակտիվ աշխատանքը՝ լինելով հաճախ կապող օղակ քաղաքացիական հասարակության և պետության ինստիտուտների միջև: Այստեղ կարող են լինել համագործակցության տարբեր ձևուն ձևաչափեր: Օրինակ՝ ներգրավվումը Պաշտպանին առընթեր խորհուրդներում կամ մոնիթորինգային համատեղ դիտարկումների իրականացումը:

Քաղաքացիական հասարակության հետ միասին, առաջնահերթ կարևորություն ունի Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը խորհրդարանի հետ՝ վերջինիս վերահսկողական գործառույթներին համապատասխան:

Կարող է տպավորություն ստեղծվել, թե Ազգային ժողովի հետ աշխատանքը միայն ենթադրում է լիազուրկ նիստերի ընթացքում արդեն իսկ կազմված և հրապարակված տարեկան զեկույցների քննարկում: Իրականում, խորհրդարանում զեկույցի կամ, ինչպես սահմանադրական կարգավորումներն են ամրագրում, տարեկան հաղորդման քննարկումը պետք է նպատակ հետապնդի խորհրդարանին ներկայացնել յուրաքանչյուր տարվա ընթացքում համատեղ քննարկված խնդիրները՝ կապված ինչպես երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի, այնպես էլ այդ տեսանկյունից առաջարկվող լուծումների հետ: Սա իր հերթին պետք է ենթադրի պարբերական մասնագիտական աշխատանք ինչպես խորհրդարանական հանձնաժողովներում, այնպես էլ առանձին պատգամավորների հետ: Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա մտահոգող հարցերին ցուցաբերել ահատականացված մոտեցում և համատեղ ջանքերով գտնել դրանց համար անհրաժեշտ լուծումներ:

Առանձնակի նշանակություն ունի Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը դատական իշխանության հետ: Լինելով իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողության ինքնուրույն սուբյեկտ՝ Մարդու իրավունքների պաշտպանը պետք է ակտիվ գործունեությամբ նպաստի այն իրավական ակտերի բացառմանը, որոնք հակասում են Սահմանադրությանը կամ վտանգավոր են մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման տեսանկյունից: Այս առումով, անհրաժեշտ է առավել զարգացնել պրակտիկական, որ տարիների ընթացքում ձևավորվել է Մարդու իրավունքների պաշտպանների Սահմանադրական դատարանի հետ ակտիվ աշխատանքի շնորհիվ:

Մշտապես բարձրացվում և քննարկման առարկա է դառնում հարցն այն մասին, թե

որն է Մարդու իրավունքների պաշտպանի դերը ընդհանուր իրավասության դատարանների գործունեության ոլորտում: Գիտակցելով արդարադատության իրականացմանը չմիջամտելու սահմանադրական արգելքը՝ Մարդու իրավունքներին պաշտպանն այստեղ, այդուամենայնիվ, պետք է ունենա որոշակի դերակատարություն: Օրինակ՝ գործունեության այդպիսի ուղղություն կարող են լինել դատական համապատասխան նիստերի դիտարկումները՝ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխանության տեսանկյունից արդար դատաքննության իրավունքի համակարգային խախտումները վեր հանելու և դրանք վերացնելու համար առաջարկներ ձևավորելու նպատակով: Մեկ այլ օրինակ կարող է լինել անհատական բողոքների հիման վրա այն գործերի ուսումնասիրությունը, որոնցով կայացվել են վերջնական դատական ակտեր:

Անձի իրավունքների առավել արագ վերականգնմանը նպաստելու տեսակետից կարևոր նշանակություն ունի աշխատանքը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Հատկապես պետք է ցուցաբերել հետևողականություն այն խնդիրների լուծման նկատմամբ, որ առաջ են քաշվում անհատական բողոքներում: Պետք է ակտիվորեն օգտագործել օրենքով պաշտպանին ընձեռված հնարավորությունները: Այստեղ նկատի պետք է ունենալ, օրինակ, առանձին բողոքների քննարկման ընթացքում իրավասու մարմիններին փորձագիտական հետազոտություններ իրականացնելու, մասնագիտական եզրակացություններ ներկայացնելու հանձնարարություններ տալը:

Առանցքային է աշխատանքն իրավապահ մարմինների հետ:

Իրավապահպան գործունեությունն ինքնին, ուղղված լինելով հանրության համար վտանգ ներկայացնող ռոնձգությունների դեմ պայքարին, այդուհանդերձ, չպետք է ստիպի մոռանալ մասնավոր շահերի մասին: Գաղտնիք չէ, որ հենց իրավապահ գործունեության ոլորտում են իրավունքների և ազատությունների խախտման հիմնական վտանգները, ուստի Մարդու իրավունքների պաշտպանը ոչ միայն պետք է նպաստի իրավունքների խախտումների բացառմանն այս ոլորտում, այլ նաև պետք է ձևավորի իրավապահ մարմինների հետ կառուցողական աշխատանքի սկզբունքներ:

Մարու իրավունքների պաշտպանի գործունեությունը չի կարող լինել միակողմանի: Այն պետք է ուղղված լինի նաև պետական հաստատությունների ինստիտուցիոնալ և կազմակերպական կարողությունների ամրապնդմանը: Իրավունքների և ազատությունների պաշտպանությունն արդյունավետ է այն դեպքում, երբ դրա համար պատասխանատու մարմինների պաշտոնատար անձինք, ասենք, քրեակատարողական հիմնարկների ծառայողներն ունեն իրավագիտակցության և մտածելակերպի անհրաժեշտ մակարդակ, ապահովված են բավարար նյութատեխնիկական պայմաններով և սոցիալական երաշխիքներով: Ուստի, պետք է քայլեր ձեռնարկել նաև այդ մարմինների կարողությունների ամրապնդման, նրանց ծառայողների աշխատանքի պայմանների բարելավմանը նպաստելու ուղղությամբ:

Կարևոր է նաև Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը Փաստաբանների պալատի և, ընդհանրապես, փաստաբանական համայնքի հետ:

Փաստաբանները, լինելով իրենց գործի պրոֆեսիոնալները, կարող են ճշգրիտ կողմնորոշել դիմումատուներին, ինչպես նաև լինել հուսալի գործընկեր ոլորտի խնդիրները վեր հանելու և դրանց լուծմանը հասնելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանի կարևոր գործընկեր են լրատվական գործունեություն իրականացնող անձինք և լրագրողները: Մա է պահանջում թափանցիկ աշխատանքի հիմնարար սկզբունքը՝ իհարկե, կոնկրետ բողոքների դեպքում չխախտելով օրենքով պահանջվող գաղտնիությունը: Առանցքային նշանակություն ունի լրագրողների օգնությամբ երկրի քաղաքացիներին Մարդու իրավունքների պաշտպանի իրավասության շրջանակի, հարցերի լուծման իրավական հնարավորությունների մասին ճիշտ տեղեկությունների մատուցումը: Լրատվության բոլոր միջոցների հետ հավասարակշռված համագործակցությունն է, որ կարող է համատեղ արդյունքներ արձանագրելու կարևոր երաշխիք դառնալ: Դա կարելի է անել ուսուցողական բնույթի քննարկումներ կազմակերպելու կամ, ասենք, հանրային իրազեկման ծրագրեր համատեղ իրականացնելու միջոցով:

Վերջապես, պետք է անդրադառնալ Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությանը միջազգային կազմակերպությունների և այլ երկրների մարդու իրավունքների հաստատությունների հետ: Կասկածից վեր է, որ այս ոլորտի ակտիվ աշխատանքը լրջորեն կնպաստի մեր երկրի իրավական համակարգում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների առավել ամբողջական ներդրմանը:

Լինելով միջազգային ինտեգրացիոն գործընթացների մասնակից՝ Պաշտպանը ոչ թե պետք է հանդես գա միջազգային կառույցների գնահատականները մեջբերողի կամ դրանք պարզապես վերարտադրողի դերում, այլ պետք է լինի այդ կառույցների կողմից քաղաքականության մշակման անմիջական մասնակիցը, իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների անմիջական ձևավորողը:

Մարդու իրավունքների պաշտպան, օժտված լինելով անկախության սահմանադրական երաշխիքներով և կրելով խորհրդարանական իրավապաշտպանի բարձր կոչումը, պետք է գործադրի Հայաստանի Հանրապետությունում իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի բարելավմանն ուղղված հնարավոր ամեն ջանք՝ հիմքում ունենալով Մարդու իրավունքների պաշտպանի իրավական կարգավիճակի պահանջները:

Վերոգրյալով հանդերձ, ՀՀ ազգային ժողովը 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունեց սահմանադրական օրենքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»:

Մշակման փուլում օրենքի նախագիծն անցել է բազմաթիվ քննարկումներ ինչպես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու լրատվամիջոցների, պետական մարմիններին, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ընդ որում, միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ քննարկումները տեղի ունեցել այդ կազմակերպությունների ինչպես Հայաստանում ներկայացված, այնպես էլ արտերկրում գործող վերադաս մարմինների հետ: Օրենքի նախագիծը նաև քննարկվել և դրական

եզրակացության է արժանացել Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համատեղ կարծիքում:

Օրենքի մշակման և քննարկման փուլում կազմակերպվել են հիմնարար հանրային քննարկումներ՝ երկու փուլով: առաջին քննարկումը կազմակերպվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համատեղ աշխատանքի շրջանակներում: Երկրորդ հանրային քննարկումն իրականացվել է ՀՀ ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի առաջնորդությամբ:

Խորհրդարանի կողմից ընդունված օրենքն ունեցավ կարևորագույն նշանակություն՝ Մարդու իրավունքների պաշտպանի դերի ամրապնդման, ինչպես նաև միջազգային հեղինակության բարձրացման համար:

Օրենքով ամրապնդվեցին Մարդու իրավունքների պաշտպանի իրավական կարգավիճակը՝ կապված անհատական բողոքների քննարկման հետ, ինչպես նաև ինստիտուցիոնալ ազդեցության մակարդակը: Վերջինի լուծումն ուներ նաև ռազմավարական նշանակություն, քանի որ օրենքով անհրաժեշտ էր Պաշտպանի օժտել լիազորություններով, որոնք հնարավորություն կտային նպաստել երկրում մարդու իրավունքներին առնչվող համակարգային հարցերի լուծմանը՝ կանխարգելիչ աշխատանքի շնորհիվ:

Խոսքն, օրինակ, վերաբերում է Սահմանադրական դատարանում և Ազգային ժողովում ներկայացուցիչներ ունենալուն կամ խոշտանգումների կանխարգելման ոլորտում իրավասու մարմիններին առաջարկների ներկայացման ու արդյունքի հասնելու մեխանիզմներին և այլն: Սահմանադրական օրենքով ամրապնդվեց նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարգավիճակը. նախատեսվեցին հարցաքննության արգելքի նորմեր ինչպես աշխատակազմի իրավասու ներկայացուցիչների, այնպես էլ օրենքով նախատեսվող հրապարակային մեխանիզմի միջոցով ընտրվելիք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու անկախ փորձագետների համար և այլն: Սահմանադրության կարգավորումների շնորհիվ ամրապնդվեցին նաև աշխատակազմի ֆինանսական երաշխիքները: Մասնավորապես, սահմանադրական օրենքով նախատեսվեց, որ ուրաքանչյուր տարի Պաշտպանի և նրա աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

Ավելին, օրենքով մանրամասն կարգավորվեցին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները, այդ թվում՝ ֆինանսական և սոցիալական, ամրագրվեց Պաշտպանի գործունեությանն աջակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պարտականությունը: Օրենքով հատուկ ուշադրություն է դարձվում նաև Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց և կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության երաշխիքներին: Հաշվի առնելով միջազգային չափանիշներն ու

Պաշտպանի աշխատակազմի կողմից տարիներ շարունակ վերհանված գործնական խնդիրները՝ մանրամասն կարգավորվեց նաև Պաշտպանի իրավասությանը վերապահված հարցերի քննարկման ընթացակարգը:

Հատուկ կարգավորման ենթարկվեց Պաշտպանի գործունեությունն առանձին բնագավառներում, մասնավորապես՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման, նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման և մի շարք այլ ոլորտներում: Օրենքով ամրագրվեց, որ Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ
ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը սահմանված է հիմք ընդունելով մասնագիտացված մոտեցման սկզբունքը՝ հաշվի առնելով 2016 թվականի ֆինանսական ռեսուրսները:

Ըստ այդմ, Պաշտպանի աշխատակազմում գործել են հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները:

- 1) Քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների պաշտպանության վարչություն,
- 2) Քրեադատավարական և զինծառայողների իրավունքների պաշտպանության վարչություն,
- 3) Խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման վարչություն,
- 4) Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին,
- 5) Արագ արձագանքման վարչություն,
- 6) Իրավական վերլուծության վարչություն,
- 7) Միջազգային համագործակցության վարչություն,
- 8) Քաղաքացիների ընդունելության և նամակների բաժին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականին ստացել է 5000-ից ավելի դիմում-բողոքներ, որոնց մանրամասն վիճակագրությունը ներկայացվում է ներքոնշյալ հավելվածներում:

Պաշտպանի գործունեությունն առանձին ոլորտներում

Պաշտպանի գործունեությունը նորմատիվ իրավական ակտերի և դրանց կիրառության պրակտիկայի կատարելագործման ոլորտում

2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի են ներկայացվել 90-ից ավելի իրավական ակտեր, այդ թվում՝ օրենսգրքերի, օրենքների, կառավարության որոշումների և այլ իրավական ակտերի նախագծեր: Ընդ որում, նախագծերի մեծամասնությունը կարծիքի է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից: Նշված իրավական ակտերից 55-ով ներկայացվել են առաջարկներ և նկատառումներ:

Հաշվի առնելով կարևորությունը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրվել են ՀՀ ընտրական օրենսգիրքը և ՀՀ հարկային օրենսգիրքը, որոնց վերաբերյալ ներկայացվել են հրապարակային առաջարկներ, որոնք ուղարկվել են նաև իրավասու մարմիններին: Ուսումնասիրվել է նաև համայնքների խոշորացման գործընթացը, որի արդյունքում ներկայացվել է վերլուծություն՝ համապատասխան առաջարկներով:

Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի ուսումնասիրության արդյունքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ձևավորված առաջարկները վերաբերել են՝

1. քվեարկության ընթացքի տեսանկարահանման ապահովմանը և դրա համար անհրաժեշտ չափանիշների սահմանմանը.

2. քվեարկության սենյակում տեղական դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների միաժամանակ ներկայության առավելագույն քանակի ընդլայնմանը.

3. քվեարկությանը մասնակցած քաղաքացիների ցուցակների հրապարակմանը՝ միջազգային կազմակերպությունների և ՀՀ սահմանադրական դատարանի ձևավորված չափանիշներին համապատասխան.

4. հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման պայմանների ապահովմանը, այդ նպատակով օրենսդրական անհրաժեշտ կանոնների սահմանմանը.

5. կանանց ընտրական իրավունքի ապահովմանը՝ ընտրություններում կանանց պատշաճ ներկայացվածությունն ապահովելու նպատակով.

6. ընտրական գործընթացի նոր մասնակցի՝ մասնագետի իրավական կարգավիճակի առանձին սահմանմանը.

7. հանձնաժողովի նիստերին կամ քվեարկության սենյակում ներկա գտնվելու համար դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների գրանցումն ապահովող պատշաճ պայմանների ստեղծմանը.

8. նախագծի՝ Երևանին առնչվող կարգավորումները Գյումրի և Վանաձոր քաղաքներին հավասարապես վերաբերելի դարձնելուն:

Նշված առաջարկները սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ կառավարություն և ՀՀ ազգային ժողով:

Ինչ վերաբերում է Հարկային օրենսգրքի ուսումնասիրությանը, ապա հաշվի առնելով նախագծի կարևոր նշանակությունը գործարարների շահերի և ընդհանրապես, հարկ վճարողների իրավունքների պաշտպանության հարցում, ուսումնասիրությունը վերաբերել է հարկային օրենսդրության ոլորտում առկա վիճակին, Հարկային օրենսգրքի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների գործընթացին, դրա վերաբերյալ հանրության և մասնագիտական շրջանակներում առկա մտահոգություններին, ինչպես նաև ներկայացվել են կոնկրետ առաջարկներ այդ գործընթացի կազմակերպման վերաբերյալ:

Նշվածից բացի, ուսումնասիրության մեջ անդրադարձ է կատարվել նաև նախագծի կոնկրետ կարգավորումներին, որոնց վերաբերյալ հիմնական նկատառումները հետևյալն են.

1. Նախագծով առաջարկվում է ավելացնել 120001-1000000 ՀՀ դրամ աշխատավարձի համար նախատեսված եկամտային հարկը՝ 26-ից դարձնելով 28 տոկոս: Այսկերպ միջին աշխատավարձ ստացող անձանց համար ավելանում է

եկամտային հարկը, և արդյունքում, բնակչության զգալի մասի համար հարկային բեռը ոչ թե թեթևանում է, այլ ընդհակառակը՝ ավելանում:

2. Նախագիծը սահմանում է, որ շրջանառության հարկ վճարող կարող է համարվել այն առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, ում նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության և այլ եկամուտների հանրագումարը չի գերազանցել 40 մլն. ՀՀ դրամը (...): Սահմանված 40 մլն. ՀՀ դրամը գերազանցելու դեպքում առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը կհարկվեն ավելացված արժեքի հարկով: Նշվածի կապակցությամբ, առաջարկվել է վերանայել շրջանառության հարկի կիրառման նախագծով առաջարկվող շեմի իջեցումը, քանի որ նախագծով առաջարկվող տարբերակն, ըստ էության, հետընթաց է թե՛ գործող կարգավորումների, թե՛ մինչև 2014 թվականը գործող օրենսդրության համատեքստում:

3. Նախագծի համաձայն՝ հարկային իրավախախտման համար հարկ վճարողները կամ հարկային գործակալները հարկային պատասխանատվության են ենթարկվում բացառապես Հարկային օրենսգրքով և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված հիմքերով և կարգով: Այնինչ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առկա են մի շարք համանման իրավախախտումներ, որոնց դեպքում կիրառվում է վարչական պատասխանատվություն: Առաջարկվել է հարկային իրավախախտման համար հարկ վճարողների կամ հարկային գործակալների հարկային պատասխանատվությունը սահմանել այնպես, որ բացառվի հարկային և վարչական պատասխանատվության ենթակա որևէ իրավասուբյեկտի՝ իր իրավական կարգավիճակով պայմանավորված հանգամանքներով կրկնակի պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը:

2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ուսումնասիրել է նաև համայնքների խոշորացման գործընթացը: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իր իրավասության սահմաններում իրականացվել է իրավական համակողմանի վերլուծություն: Իբրև վերլուծության աղբյուր՝ հիմք են ընդունվել ինչպես այս ոլորտի օրենսդրական կարգավորումները, դրանց գործնական իրացման պրակտիկան, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցների մասնագիտական հրապարակումներն ու քննարկումները, բնակիչների մտահոգությունները: Հաշվի են առնվել նաև ՀՀ ազգային ժողովի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պարզաբանումները: Վերլուծվել են միջազգային չափանիշներն ու արտասահմանյան երկրների համապատասխան փորձը:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից վերլուծությունն իրականացվել է հետևյալ հիմնական ուղղություններով՝ հաշվի առնելով Պաշտպանի իրավական կարգավիճակի ծավալները՝

- համայնքների խոշորացման էությունը և դրան առաջադրվող պահանջները միջազգային չափանիշների ու փորձի տեսանկյունից.

- Հայաստանում համայնքների խոշորացման գործընթացի էությունը և դրա իրավաչափության ապահովման պահանջները.

- համայնքների խոշորացման գործընթացին հասարակության մասնակցության և տեղեկացված լինելու, նրա կարծիքը լսելու իրավունքների իրացման ապահովումը:

2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փորձագիտական կարծիքին ներկայացված հիմնարար նախագծերից են «Պրոբացիայի մասին», «Պրոբացիայի պետական ծառայության մասին» ՀՀ օրենքների նախագծերը, ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագիծը, «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագիծը (լրամշակված տարբերակ) և այլն:

2016 թվականի ընթացքում ՀՀ սահմանադրական դատարանում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մշտական ներկայացուցիչը ստացել է 11 գործ:

Պաշտպանի գործունեությունն արագ արձագանքման ոլորտում

Սարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրվեց, որ իր լիազորությունների շրջանակում Պաշտպանն օգտվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց և ներկայացուցիչների մոտ անհետաձգելի ընդունելության իրավունքից: Արագ արձագանքման շրջանակներում Պաշտպանի պահանջի դեպքում սույն մասում նշված մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք և ներկայացուցիչները պարտավոր են Պաշտպանին կամ նրա ներկայացուցիչներին տրամադրել անհապաղ աջակցություն:

Արագ արձագանքման գործառույթի շրջանակում այցերը կարող են կատարվել բանավոր կամ գրավոր բողոքների, այդ թվում՝ թեժ գծին ստացած ահազանգերի հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ՝ հիմք ընդունելով, ասենք, զանգվածային լրատվամիջոցների, հասարակական ու միջազգային կազմակերպությունների հաղորդումները:

Գործունեության ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ արդյունավետ համագործակցության արդյունքում ձևավորվել է կայուն պրակտիկա, երբ արագ արձագանքումների մի մասն իրականացվում են առանց այցելություններ իրականացնելու՝ հեռախոսակապի միջոցով: Այս կերպ իրականացվող արագ արձագանքումներն արդյունավետ են հատկապես հեռավոր բնակավայրերում, որտեղ առկա չեն Պաշտպանի տարածքային ստորաբաժանումներ, և այցեր կատարելն արդյունավետ չէ: Օրինակ՝ քաղաքացին բողոքում է, որ անվճար բուժօգնություն ստանալու իր հերթը հետաձգվում է: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը կապ է հաստատում իրավասու պետական մարմնի հետ, ստանում բանավոր

պարզաբանումներ, արդյունքում լուծվում է քաղաքացու բարձրացրած խնդիրը: Այս կերպ հաճախ արագ արձագանքումներ են իրականացվել նաև փաստաբաններին ուստիկանության բաժիններ մուտք գործելուն խոչընդոտելու դեպքում:

Արագ արձագանքում իրականացնելու վերաբերյալ տեղեկությունների մեծ մասը 2016 թվականի ընթացքում ստացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գիծ հեռախոսահամարների միջոցով, որոնք հասանելի են շուրջօրյա: Աշխատանքային ժամերին՝ ժամը 09:00-ից մինչև 18:00-ն ահազանգերն ընդունվում են 116 անվճար և 096-116-100 բջջային հեռախոսահամարներով, իսկ ոչ աշխատանքային ժամերին՝ ժամը 18:00-ից մինչև ժամը 09:00-ն և ոչ աշխատանքային օրերին 096-116-100 հեռախոսահամարով (116 անվճար հեռախոսահամարը նույնպես վերահասցեագրվում է բջջային հեռախոսահամարին):

2016 թվականի ընթացքում ներդրվել է թեժ գծի՝ 116 անվճար հեռախոսահամարին, ստացվող զանգերը ձայնագրելու համակարգ:

2016 թվականի ընթացքում արագ արձագանքման այցեր իրականացվել են ուստիկանության բաժիններ, ձերբակալված անձանց պահման վայրեր, քրեակատարողական հիմնարկներ, հավաքների անցկացման վայրեր, հոգեբուժական հաստատություններ, գորակոչիկներին փորձաքննության ենթարկող բժշկական հանձնաժողովների նիստեր և այլ վայրեր:

Պաշտպանի գործունեությունը զինձառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում

2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Մահմանադրությամբ ամրագրվեց ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մեկ միասնական ինստիտուտ, որը, ի թիվս այլ հարցերի, իրականացնում է նաև զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարության իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և իրավունքի գերակայության տնօրինության 2015 թվականի հոկտեմբերի 26-ի համատեղ կարծիքում նշվում է, որ պետք է Հայաստանի Հանրապետությունը ձեռնպահ մնա օմբուդսմենական նոր հաստատություններ ավելացնելուց, եթե մարդու իրավունքների կամ հիմնարար ազատությունների պաշտպանության համար խիստ անհրաժեշտություն չէ: Ըստ այդ կարծիքի՝ այդ մարմինների ավելացումը կարող է անհատներին հանգեցնել շփոթության իրենց հասանելի պաշտպանության հնարավորությունների առումով:

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների և ազատությունների կամ «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ վարքականոններով» սահմանված «Համազգեստով քաղաքացու» պաշտպանությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից մեկն է: Պաշտպանի աշխատակազմի գործունեության լայն ընդգրկվածությունը և

տարեցտարի զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների կողմից բանավոր և գրավոր բողոքների քանակի աճը վկայում են Պաշտպանի աշխատակազմում առանձին և մասնագիտացված ստորաբաժանման ստեղծման անհրաժեշտության մասին: Ոլորտում Պաշտպանի աշխատակազմի զգալի ընդգրկվածությունն արտահայտվում է զորամասեր, կարգապահական գումարտակներ, քննչական մեկուսարաններ, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովներ, զինկոմիսարիատներ այցելությունների և այլն: Միաժամանակ, վերջին տարիներին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առավել մեծ ուշադրություն է դարձվում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը:

Պաշտպանի գործունեությունը մարդու իրավունքների կրթության ոլորտում

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Պաշտպանը կարող է իրականացնել իր աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ: Նշված կարգավորումը համարվում է ռազմավարական կարևորություն ունեցող ուղղություններից:

2016 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի և գործընկեր տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվել են զգալի թվով դասընթացներ՝ դրանց միաժամանակ ներգրավելով թե՛ պետական մարմինների, թե՛ հասարակական կազմակերպությունների, թե՛ առանձին դեպքերում լրատվամիջոցների ներկայացուցիչների: Օրինակ՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ համատեղ կազմակերպվել է լրագրողների իրավական վերապատրաստման երկօրյա ծրագիր, որի ընթացքում հիմնականում քննարկվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված այն չափանիշները, որոնք կիրառվում են լրագրողին հավաքի իրականացման վայրից բերման ենթարկելիս: Անդրադարձ է կատարվել նաև ազատությունից զրկման պահը ճիշտ որոշելու հարցի կարևորությանը և ըստ այդմ, ազատությունից զրկված անձի՝ իր իրավունքներից օգտվելու երաշխիքներին:

Մեկ այլ դեպքում, օրինակ, 2016 թվականին Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության համագործակցությամբ «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դասավանդողների վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները: Դասընթացներին մասնակցած ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները հրավիրվել են անցկացնել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության

ծառայողների վերապատրաստումները 2017 թվականի առաջին եռամսյակի ընթացքում:

Ընդլայնելով մարդու իրավունքների կրթության ոլորտում Պաշտպանի գործունեությունը՝ 2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը համագործակցության հուշագրեր է ստորգրել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի հետ:

Պաշտպանի գործունեությունը միջազգային համագործակցության ոլորտում

Միջազգային համագործակցության ոլորտում կարևորագույն նշանակություն ունեն ծրագրերը միջազգային կազմակերպությունների հետ:

2016 թվականի ընթացքում նախաձեռնվել են ծրագրեր Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF), ՄԱԿ ՓԳՀ-ի Հայաստանյան գրասենյակի (UNHCR), Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ և այլն: Դրանք ուղղված են ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացման, այնպես էլ Հայաստանում մարդու իրավունքների միջազգային չափանիշների առավել արդյունավետ ներդրմանն ապահովմանը:

Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրի իրականացման հիմնական նպատակներից են փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության ոլորտում Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրավիճակի վերլուծության իրականացումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում են այցեր ազատությունից զրկման այն վայրեր, որտեղ պահվում են փախստականներ կամ ապաստան հայցող անձինք: Նախատեսվում է նաև իրականացնել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության մերժման որոշումների ուսումնասիրություն:

Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվում է «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ընդլայնումը զինված ուժերում» ծրագիրը, որն ուղղված է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմների ներդրմանը: Այն նպաստելու է զինված ուժերում դաժան վերաբերմունքի կանխարգելմանը՝ համապատասխան օրենսդրության ուսումնասիրության, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման միջոցով: Այդ ծրագրով նախատեսվում է նաև ակտիվ համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է նաև մարդու իրավունքների միջազգային չափանիշներով և միջազգային կազմակերպությունների կողմից մշակված լավագույն փորձով: Ուստի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ հանդիսանում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևորագույն ուղղություններից

մեկը: Ավելի, հաշվի առնելով նաև մի շարք դեպքերում անհրաժեշտություն է առաջանում համագործակցել այլ երկրների մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների հետ, համագործակցության երաշխիքներ են սահմանվել վերջիններիս հետ ևս:

Մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականին ակտիվ համագործակցել է ԵԱՀԿ- երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների, Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային և իրավապաշտպան կազմակերպությունների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության թափանցիկությունը և աշխատանքը քաղաքացիական հասարակության հետ

Կարևորելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ 2016 թվականին լայնածավալ աշխատանքներ են տարվել լրատվամիջոցների հետ: Ավելին, 2016 թվականին Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ՝ գործարկվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական [«www.ombuds.am»](http://www.ombuds.am) կայքը, որը պատրաստվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Կայքի հիմնական նպատակն է հանրության շրջանում Մարդու իրավունքների պաշտպանի դերի և գործունեության վերաբերյալ իրազեկության բարձրացումը, ինչպես նաև տեղեկատվության առավել թափանցիկ ու մատչելի ներկայացումը: Կայքը հազեցած է ժամանակակից տեխնիկական լուծումներով և հարմարեցված է նաև երեխաների համար: Այն պարունակում է տվյալներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքի, կառուցվածքային ստորաբաժանումների և կատարած աշխատանքների, ինչպես նաև աշխատակիցների վերաբերյալ: Կայքը պարունակում է պարբերաբար թարմացվող վիճակագրական տվյալներ:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատության առաքելությունն է նաև աշխատանքը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Մարդու իրավունքների պաշտպանն այն ինստիտուտն է, որը մեկ տանիքի տակ միավորում է պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին: Կարևորելով աշխատանքի այս առանձնահատկությունը՝ 2016 թվականին լայնածավալ աշխատանքներ են տարվել հասարակական կազմակերպությունների հետ ինչպես կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների պաշտպանության, խոշտանգումների կանխարգելման,¹ այնպես էլ՝ այլ ոլորտներում:


2016 թվականի դեկտեմբերին տեղի է ունեցել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Խոշտանգումների կանխարգելման փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստ, որին մասնակցել են նաև ներկայացուցիչներ ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունից, ՀՀ գլխավոր

¹ Մանրամասն տե՛ս «Կանանց իրավունքներ», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» և «Երեխաների իրավունքներ» բաժիններում:

դատախազությունից, ՀՀ քննչական կոմիտեից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունից, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպություններից: Նիստի ընթացքում ներկայացվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի լիազորությունների իրականացման ընթացքում վեր հանված մի շարք օրենսդրական խնդիրներ և դրանց լուծման մեխանիզմներ:


ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ²

2016 թվականի գրավոր և բանավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ պետական մարմինների




² Վիճակագրությունը ներկայացված է 01.03.2016-31.12.2016թթ. համար:

2016 թվականի գրավոր և բանավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ վարչատարածքային միավորների




- Երևան - 2590
- Շիրակի մարզ - 279
- Լոռու մարզ - 224
- Արմավիրի մարզ - 177
- Գեղարքունիքի մարզ - 171
- Կոտայքի մարզ - 165
- Արարատի մարզ - 120
- Սյունիքի մարզ - 65
- Տավուշի մարզ - 57
- Արագածոտնի մարզ - 42
- Վայոց ձորի մարզ - 21


2016 թվականի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված գրավոր և բանավոր դիմում-բողոքների վիճակագրական տվյալներ




2016 թվականի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի այցերի վիճակագրական տվյալներ



2016 թվականի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քննարկված բողոքներով և արագ արձագանքմամբ դրական լուծում ստացված գործերի վիճակագրական տվյալներ



Զինձառայողների կամ նրանց ընտանիքների անդամների կողմից հասցեագրված գրավոր և բանավոր բողոքներ



ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Սոցիալ տնտեսական իրավունքների պահպանությունը և սոցիալական աջակցությունը յուրաքանչյուր սոցիալական պետության հիմնասյուններից է: ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուրի՝ օրենքին համապատասխան մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքը: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը, բնակարանային շինարարության խթանումը, բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը, հաշմանդամության կանխարգելման, բուժման, հաշմանդամություն ունեցող անձանց առողջության վերականգնման ծրագրերի իրականացումը, հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը, սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանումը:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս 1993 թվականի սեպտեմբերի 13-ին վավերացրել է «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագիրը: Այդուհանդերձ, դեռևս ՀՀ կողմից չի վավերացվել նշված դաշնագրին կից լրացուցիչ արձանագրությունը, որի 2-րդ հոդվածն այն վավերացրած պետության իրավասության ներքո գտնվող անձանց հնարավորություն է ընձեռում պետության կողմից իրենց տնտեսական, սոցիալական կամ մշակութային իրավունքների խախտման դեպքում հաղորդում ներկայացնել ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեին:

Վերոնշյալ լրացուցիչ արձանագրության նպատակահարմարության հարցի քննարկումը և ՀՀ կառավարություն համապատասխան առաջարկություն ներկայացնելը, որպես միջոցառում, նախատեսված էր նաև ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 101-րդ կետով: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ թե՛ վերջինս, թե՛ ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարությունները արձանագրության վավերացումը համարում են ոչ նպատակահարմար:

Չնայած առկա սահմանադրական երաշխիքներին և ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին՝ 2016 թվականին անձանց սոցիալ-տնտեսական իրավունքների լիարժեք իրացումն ապահովելու կապակցությամբ արձանագրվել են խնդիրներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից դիմումների քննության, միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից խնդիրների բարձրաձայնման արդյունքում մարդու սոցիալական ապահովության իրավունքի իրականացման համատեքստում վեր են հանվել պետության կողմից իրականացված սոցիալական քաղաքականության խնդիրներ, որոնք վերաբերել են անձանց կենսաթոշակային ապահովությանը և սոցիալական աջակցությանը:

1. Կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հնարավորության սահմանափակումներ

ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորություն

Հրշեջ ծառայության մի խումբ նախկին աշխատակիցներ գրկված են ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորությունից՝ «ԱՊՀ մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրում (Համաձայնագիր) արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայողների վերաբերյալ համապատասխան նշումի բացակայության պատճառով: Սույն խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայվել է դեռևս 2014 թվականից:

Վերջիններս եղել են ՀՀ ներքին գործերի նախարարության հրշեջ պահպանության վարչության համակարգի աշխատակիցներ, այնուհետև, ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի N 1142-Ն որոշման համաձայն՝ պետական հակահրդեհային ծառայության են անցել ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունում: Զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռքբերելուց հետո հաշվառվել են ՀՀ զինկոմիսարիատի սոցիալական բաժնում, սակայն հետագայում ձեռք բերելով Ռուսաստանի Դաշնությունում ապրելու իրավունք և ՀՀ-ում դադարեցնելով կենսաթոշակային գործն՝ այն տեղափոխել են ՌԴ:

Արդյունքում, Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմնի կողմից մերժվել է վերջիններիս զինվորական կենսաթոշակի հաշվառման կանգնեցնելը՝ Համաձայնագրում ՀՀ ՆԳՆ հրշեջ պահպանության վարչության հրշեջ ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորության մասին նշման բացակայության պատճառով:

ՌԴ պաշտպանության նախարարի 1993 թվականի փետրվարի 12-ի թիվ 4468-1 և ԱՊՀ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 10-ի որոշումների համաձայն՝ ԱՊՀ երկրների զինծառայողները կարող են իրենց կենսաթոշակներն օրինական կարգով ձևակերպել և ստանալ ԱՊՀ ցանկացած պետությունում, այդ թվում նաև ՌԴ-ում:

2015 թվականին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը դիմել է իրավասու պետական մարմիններին՝ Համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով, սակայն խնդիրը վերջնական լուծում չի ստացել: Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ գործող համաձայնագրերում³ անհրաժեշտ դրույթների նախատեսման շուրջ ԱՊՀ մասնակից երկրների ղեկավարների կողմից համաձայնություն ձեռք բերելու պարագայում նախարարությունը կմշակի և սահմանված կարգով կներկայացնի համապատասխան արձանագրության նախագիծ: Ըստ այդմ, խնդիրը դեռևս մնում է չլուծված՝ դառնալով վերոգրյալ անձանց սոցիալական ապահովության իրավունքի խախտման պատճառ:

Ուստի անհրաժեշտ է ԱՊՀ համապատասխան համաձայնագրում կատարել փոփոխություններ՝ ՀՀ նախկին ՆԳՆ հրշեջ պահպանության վարչության հրշեջ ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորությունն ապահովելու համար:

Մասնակի կենսաթոշակ նշանակելու խնդիրներ

2016 թվականի ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում բարձրացվել է նաև մասնակի կենսաթոշակ նշանակելն այն հիմնավորմամբ մերժելու հարցը, երբ անձի զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ անձն աշխատել է ներառված չեն ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 6 հավելվածում: Խնդիրն այն է, որ նշված ցանկում թվարկվում են համապատասխան կազմակերպություններ, մասնագիտություններ և պաշտոններ, որոնց համար ձեռքբերված մասնագիտական աշխատանքային ստաժը համարվում է մասնակի կենսաթոշակի իրավունք տվող, բայց նշված ցանկն ամբողջական չէ, և մի շարք մասնագիտություններ դուրս են մնացել դրանից:

Օրինակ՝ ըստ Պաշտպանին ներկայացված դիմումի՝ քաղաքացին 1982 թվականին ընդունվել է աշխատանքի գիշերօթիկ դպրոցում որպես քիմիայի ուսուցչուհի: 1989 թվականին դպրոցը վերակազմավորվել է, որտեղ դիմում ներկայացրած անձը շարունակել է կատարել նույն աշխատանքը, մասնավորապես դասավանդել է քիմիա՝ հանրակրթական դպրոցների համար նախատեսված ծրագրով և դասագրքերով: Քաղաքացուն մերժվել է մասնակի կենսաթոշակի նշանակումն այն հիմնավորմամբ, որ մասնակի կենսաթոշակի իրավունք տրվում է միայն դպրոցի վերակազմակերպումից հետո աշխատող մարզիչ-մանկավարժին և մարզիչին:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ դիմումի համաձայն՝ անձն իրեն մասնակի կենսաթոշակ նշանակելու խնդրանքով 2014 թվականի դեկտեմբերի 11-ին դիմել է

³ 1992 թվականի մայիսի 15-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին» և 1993 թվականի դեկտեմբերի 24-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ՆԳ մարմինների աշխատակիցների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրեր:

կենսաթոշակային մարմնին և ստացել է մերժում այն հիմքով, որ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված ցանկի՝ պրոֆեսիոնալ տեխնիկական ուսումնարանում «արտադրական ուսուցման վարպետ» մասնագիտությունը մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություն և պաշտոն չէ: Այդ անձը մահացել է 2015 թվականի հունվարի 7-ին, ինչի պատճառով վերոնշյալ վարչական ակտը չի բողոքարկվել: Մասնակի կենսաթոշակի նշանակումը մերժելու վարչական ակտ ընդունելու արդյունքում անձը ձեռք չի բերել կենսաթոշակի իրավունք, ինչի հետևանքով վերջինիս մահվան դեպքում կինը ձեռք չի բերել ամուսնու մահվան դեպքում թաղման նպաստ ստանալու իրավունք:

Միատեսակ փաստական հանգամանքներով (նույն կազմակերպությունում և նույն մասնագիտությամբ աշխատած) մեկ այլ անձ կենսաթոշակային մարմնի կողմից մասնակի կենսաթոշակի նշանակումը մերժելու որոշումը վիճարկել է դատական կարգով: Արդյունքում՝ դատարանը 2015 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՎԴ/2704/05/15 վճռով բավարարել է հայցը և հաստատված է համարել այն հանգամանքը, որ պրոֆտեխնիկական ուսումնարանի արտադրական ուսուցման վարպետը հանդիսանում է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման թիվ 6 հավելվածի ցանկի 5-րդ կետում ընդգրկված տեխնիկումների, միջնակարգ (միջին) մասնագիտական ուսումնական հաստատությունների, քոլեջների, այլ տեսակի պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության դպրոցների և ուսումնարանների մանկավարժ, ինչն էլ հանդիսանում է մանկավարժական գործունեության տեսակ:

Խնդրի կապակցությամբ հատկանշական է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որը թիվ ՎԴ2/0584/05/13 վարչական գործով 2015 թվականի հուլիսի 17-ին կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ֆիզիկական անձի՝ մասնակի աշխատանքային կենսաթոշակ նշանակելու դիմումի առթիվ հարուցված վարչական վարույթի ընթացքում կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ պարզելու դիմում ներկայացրած ֆիզիկական անձի մոտ մասնակի կենսաթոշակ ստանալու համար անհրաժեշտ՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված բոլոր պարտադիր պայմանների ու պահանջների առկայությունը կամ բացակայությունը:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ համապատասխան ժամանակահատվածում գործող իրավանորմերի համաձայն՝ անձը չի ունեցել մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող 12 օրացուցային տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ: Ըստ այդմ, վերջինս կենսաթոշակառու չի հանդիսացել և վերը նշված դրույթներով պայմանավորված՝ մահվան դեպքում թաղման նպաստը և մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու հիմքեր չեն եղել: Միաժամանակ՝ ըստ նախարարության պարզաբանման ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 1082-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները համապատասխան որոշման ընդունմամբ

հաստատված ցանկից բացակայել է արտադրական ուսուցման վարպետ (վարպետ-դաստիարակ, վարպետ-դասատու) պաշտոնը:

Հարկ է ընդգծել, սակայն, որ անկախ նրանից, թե արդյոք կոնկրետ մասնագիտությունը կամ պաշտոնը ներառված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված ցանկում, անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում իրականացնել հարուցված վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում՝ պարզելու այդ վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր, այդ թվում՝ դիմումատուի օգտին առկա հանգամանքները:

Խնդրի լուծման նպատակով ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 1082-Ն որոշմամբ սահմանվել է, որ մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպչի, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների գծով տնօրենի (դիրեկտորի) տեղակալների (փոխտնօրենների), կազմակերպիչների, արտադրական ուսուցման վարպետի (վարպետ-դաստիարակի, վարպետ-դասատուի) մասնագիտություններով և պաշտոններում աշխատած ժամանակահատվածները մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական ստաժում հաշվառվում են (մասնակի կենսաթոշակը նշանակվում կամ վերահաշվարկվում են) 2016 թվականի հոկտեմբերի 1-ին կամ դրանից հետո ներկայացված դիմումների հիման վրա: Այնուամենայնիվ, դեռևս առկա են բազմաթիվ քաղաքացիներ, որոնց պաշտոնները և մասնագիտությունները ներառված չեն վերոնշյալ ցանկում, սակայն վերջիններիս փաստացի կատարել են մանկավարժական աշխատանք:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2016 թվականի ընթացքում մասնակի կենսաթոշակ է նշանակվել 1516 անձի, նույն ժամանակահատվածում 129 անձի մերժվել է մասնակի կենսաթոշակ նշանակելը: Այնուամենայնիվ, առանձին վիճակագրություն չի վարվում անձի զբաղեցրած պաշտոնը կամ այն կազմակերպությունը, որտեղ անձն աշխատել է, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված՝ կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով մասնակի աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում ներառված չլինելու հիմքով մերժումների համար:

Դրա հետ մեկտեղ, քննարկվող որոշման մեջ կատարված փոփոխություններից հետո կարգավորում չեն ստացել այն դեպքերը, երբ քաղաքացին, համապատասխանելով մասնակի կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու համար «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր նախապայմաններին, մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը դիմել է նշված կենսաթոշակը ստանալու համար, սակայն կենսաթոշակ նշանակելը մերժվել է՝ վերոնշյալ ցանկում վերջինիս մասնագիտության, պաշտոնի կամ կազմակերպության բացակայության պատճառով: Սահմանվել է միայն, որ 2016 թվականի հոկտեմբերի 1-ից

մինչև 2017 թվականի մարտի 1-ը դիմելու (գրավոր դիմում ներկայացնելու) դեպքում մասնակի կենսաթոշակը նշանակվում է (մասնակի կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է) 2016 թվականի հոկտեմբերի 1-ից, բայց ոչ շուտ, քան մասնակի կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրվանից:

Հաշվի առնելով վերոնշյալ վերլուծությունը՝ անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

- 1. մասնակի կենսաթոշակ նշանակելու համար ներկայացված յուրաքանչյուր դիմումի դեպքում իրականացնել վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում՝ պարզելու այդ վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր, այդ թվում՝ դիմումատուի օգտին առկա հանգամանքները,*
- 2. իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա կատարելագործել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված ցանկը,*
- 3. որպես բարելավող դրույթ՝ հետադարձ ուժ տալ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման թիվ 6 Հավելվածով հաստատված ցանկում ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 20-ի N 1082-Ն որոշմամբ լրացված պաշտոնները սահմանող դրույթներին:*

Երկքաղաքացիություն ունեցող անձանց տարիքային աշխատանքային կենսաթոշակի խնդիրներ

2016 թվականի ընթացքում ստացվել են նաև դիմում-բողոքներ երկքաղաքացիություն ունեցող անձանց տարիքային աշխատանքային կենսաթոշակ չնշանակելու վերաբերյալ: Մասնավորապես, ըստ Պաշտպանին հասցեագրված դիմումի՝ անձն, ով երկքաղաքացի է, դիմել է Սոցիալական ապահովության տարածքային բաժին իրեն տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու հարցով և ներկայացրել երկքաղաքացի լինելու մասին համապատասխան հայտարարություն: Ըստ դիմումատուի՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումն օրենքով սահմանված կարգով դիմումն ընդունելուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, չի կայացրել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված համապատասխան որոշումներից մեկը (նշանակել կենսաթոշակ. նշանակել կենսաթոշակ և տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին կամ մերժել կենսաթոշակ նշանակելը): Փոխարենը՝ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը հարցում է կատարել Ռուսաստանի Դաշնության կենսաթոշակային հիմնադրամ՝ քաղաքացուն կենսաթոշակ նշանակված չլինելու կամ նշանակված լինելու մասին փաստաթուղթ ստանալու համար:

Կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշումը կայացվել է քաղաքացու կողմից համապատասխան դիմումը ներկայացնելուց շուրջ 4 ամիս անց այն հիմքով, որ ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար: Կենսաթոշակի նշանակման մերժումը պատճառաբանվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված թիվ 10 հավելվածի 4-րդ կետով նախատեսված՝ որպես ՀՀ երկքաղաքացի ՌԴ-ում կենսաթոշակ նշանակված չլինելու կամ կենսաթոշակ նշանակված լինելու մասին փաստաթուղթ չներկայացնելու հանգամանքով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՌԴ կենսաթոշակային հիմնադրամն անձին տեղեկացրել է, որ պահանջվում է ՌԴ-ում կենսաթոշակ նշանակված լինելու և վճարվելու փաստը ստուգելու համար ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու մասին հարցում: Ըստ քաղաքացու՝ Սոցիալական ապահովության տարածքային բաժնից ՌԴ կենսաթոշակային հիմնադրամից ՌԴ-ում իրեն կենսաթոշակ նշանակված չլինելու կամ կենսաթոշակ նշանակված լինելու մասին տեղեկանք ստացվելուց հետո առաջարկել են ներկայացնել դիմում՝ կենսաթոշակ նշանակելու հարցը քննարկելու համար: Արդյունքում կենսաթոշակն էլ նշանակվել է դիմելու օրվանից ամիսներ անց:

Նշված գործով կայացվել է «Մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու և այն վերացնելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկ ներկայացնելու մասին» որոշում:

Արդյունքում, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շրջանառության մեջ է դրել և հետագայում ընդունել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում,⁴ որում կանոնակարգվել են նաև խնդրո առարկա լուծումները: Մասնավորապես՝ նախատեսվել է, որ համաձայնագրի մասնակից պետությունում⁵ ՀՀ երկքաղաքացուն կենսաթոշակ նշանակած չլինելու կամ կենսաթոշակ նշանակված լինելու մասին փաստաթուղթ չներկայացնելու և այդ հիմքով կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացնելուց հետո համապատասխան հարցումն իրավասու մարմին է ուղարկում կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը: Եթե ստացված պատասխանի համաձայն՝

⁴ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 20 հոկտեմբերի 2016 թվականի N 1082-Ն որոշում:

⁵ 1992 թվականի մարտի 13-ի «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին», 1992 թվականի մայիսի 15-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» և 1993 թվականի դեկտեմբերի 24-ի «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի մարմինների աշխատակիցների կենսաթոշակային ապահովման և պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրերի մասնակից պետություններ:

անձին համաձայնագրի մասնակից պետությունում կենսաթոշակ չի նշանակվել, ապա անկախ կենսաթոշակատուի կողմից կրկին կենսաթոշակ նշանակելու (վճարելու) դիմում ներկայացնելու հանգամանքից, կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը հարցման պատասխանը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, անձին կենսաթոշակ է նշանակում: Ընդ որում, այս դեպքում կենսաթոշակ նշանակելու (վճարելու) համար դիմելու օր է համարվում դիմումը ներկայացնելու օրը, եթե հարցման պատասխանը ստացվել է հարցումը կատարելու ամսվան հաջորդող 12 ամսվա ընթացքում կամ հարցման պատասխանը ստացվելու օրը, եթե հարցման պատասխանը ստացվել է հարցումը կատարելու ամսվան հաջորդող 12-րդ ամսվանից հետո:

2. Սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակում աշխատավայրում դժբախտ պատահարների, հիվանդության դեպքում

2016 թվականի ընթացքում լուծում չի տրվել 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո լուծարված կազմակերպություններում աշխատանքի ժամանակ դժբախտ պատահարների, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման խնդրին:

Մասնավորապես, «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օղակների» հասարակական կազմակերպության 58 անդամները 2006 թվականից առ այսօր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմումներով բարձրաձայնում են, որ 2004 թվականին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրենք զրկվել են աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքից:

Ոլորտը կարգավորող իրավական ակտերի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1094-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի N 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետը, որի համաձայն՝ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: Տվյալ փոփոխության արդյունքում փոխհատուցում ստանալու երաշխիքը վերացվել է այն դեպքերի համար, երբ պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:

ՀՀ կառավարությունը 2009 թվականի հուլիսի 23-ին ընդունել է «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» N 914-Ն որոշումը: Նշված որոշմամբ, սակայն սահմանվել է միայն

դրա ընդունումից հետո սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը: Արդյունքում լուծում չի տրվել մինչ այդ իրավաբանական անձանց գործունեության դադարեցման դեպքում պարտավորությունների կատարման հարցին: Լուծում չեն ստացել նաև այն դեպքերը, երբ կազմակերպության լուծարման կամ անվճարունակության դեպքում կապիտալացված գումարները չեն բավարարում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման համար:

Մինչդեռ, «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի կոնվենցիայի⁶ 11-րդ հոդվածի համաձայն՝ ազգային օրենսդրությունը, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, նախատեսում է այնպիսի դրույթներ, որոնք գործատուի կամ ապահովագրողի անվճարունակության դեպքում բոլոր հանգամանքներում առավել համարժեք կերպով կապահովեն փոխհատուցման վճարումը պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց:

Քննարկվող խնդրի վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Կոնվենցիաների և հանձնարարականների կիրառման գնահատման փորձագիտական կոմիտեն ՀՀ կողմից վերոնշյալ կոնվենցիայի 11-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ իր՝ 2015 թվականի դիտարկումներում նշել է հետևյալը. «Ի պատասխան նախորդ դիտարկմանը, որը վերաբերում էր արտադրական դժբախտ պատահարների շուրջ 800 զոհերի փոխհատուցման բացակայությանը, որոնք առաջ են եկել 2004-ից 2009 թվականների ընթացքում՝ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի N 1094-Ն որոշման ընդունումից հետո, Կառավարությունը հղում չի կատարում այն օրենսդրական դրույթներին, որոնք կիրառվում են այն իրավաբանական անձանց լուծարման կամ սնանկացման դեպքում, որոնք պատասխանատու են կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման համար, այնուամենայնիվ, կցելով 2014 թվականի հուլիսի 25-ի ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի նամակը, որում նշվում է, որ պետության կողմից նշված խնդրի վերաբերյալ դեռևս ոչ մի միջոց չի ձեռնարկվել, Կոմիտեն մեկ անգամ ևս խնդրում է կառավարությանը նշել, թե ինչպիսի կիրառություն է ունենում Կոնվենցիայի այս դրույթը վերոնշյալ դեպքերում:»:

2011 թվականի ընթացքում մշակվել է «ՀՀ-ում արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության ներդրման» հայեցակարգ, որը դեռևս չի ընդունվել: Միաժամանակ, «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992 թվականի կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները: Այնուամենայնիվ, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

⁶ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 17-ին:

նախարարության տվյալների՝ ՀՀ կառավարությունը ձեռնպահ է մնում երաշխիքային հաստատությունների միջոցով աշխատողների պահանջների բավարարման մեխանիզմների ներդրումից՝ պատճառաբանելով, որ երաշխիքային հաստատությունների ստեղծումը գործատուների ֆինանսական բեռի ավելացման պատճառ կդառնա, քանի որ գործատուները պետք է որոշակի մասհանումներ կատարեն երաշխիքային հաստատություններին: Այսպիսով, դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու կարգի բացակայության արդյունքում մի շարք քաղաքացիներ, որոնց գործատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո, զրկվում են փոխհատուցումը ստանալու իրավունքից:

Ուստի անհրաժեշտ է՝

1. 2004 թվականից հետո լուծարված կամ սնանկ ճանաչված իրավաբանական անձանց, այդ թվում՝ «Հայկական Ավիատոլիներ» ՓԲԸ-ի աշխատակիցներին տրամադրել աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում,

2. սահմանել աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը (դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների դեպքում) հատուցելու հստակ կարգ՝ գործատու կազմակերպության լուծարված լինելու դեպքում:

3. Սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակումներ մայրության, բազմազավակության, մահվան դեպքերում

Երեխայի խնամքի նպաստ

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում բարձրացվել են նաև երեխայի խնամքի նպաստը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը, թաղման նպաստը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային բաժինների կողմից չվճարելու վերաբերյալ խնդիրներ:

Բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ Սոցիալական ապահովության պետական ծառայության Արտաշատի տարածքային բաժնի աշխատակիցներն իր երրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստն արդեն 6 ամիս է չեն տրամադրում: Մինչդեռ, լիազոր մարմինը պարտավոր է տվյալ ամսվա վճարման ցուցակը կամ բանկային հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին տրամադրելու օրվան հաջորդող բանկային օրվանից ոչ ուշ քան կի հաշվին փոխանցել երեխայի ծննդյան միանվագ նպաստի ուղղակի վճարվող գումարների՝ վճարման ենթակա ամբողջ գումարը:⁷ 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակում և վճարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական

⁷ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշում, Հավելված N 3՝ Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) պայմանագիր, բաժին 3, կետ 5, ենթակետ 2:

հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը՝ իր տարածքային բաժինների միջոցով⁸: Ըստ իրավասու մարմնի պարզաբանման՝ ծրագրային խնդիր է եղել, և հաջորդ ամիս երրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը կփոխանցվի քաղաքացու հաշվեհամարին:

Մեկ այլ դեպքում քաղաքացին տեղեկացրել է, որ մոտ երեք ամիս առաջ դիմում է ներկայացրել Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Շենգավիթի տարածքային բաժին, որպեսզի իրեն տրամադրվի մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ, սակայն սահմանված ժամկետում այն չի տրամադրվել: Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի առանձին գործառույթներ համակարգող իրավախորհրդատուն հայտնել է, որ քաղաքացու ներկայացրած տվյալներում առկա է անհամապատասխանություն՝ սոցիալական ապահովության քարտի պատճենը չի համապատասխանում նրա գործատուի մոտ առկա քարտի տվյալներին (կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացին ներկայացրել էր օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերը): «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված «հավաստիության կանխավարկած» սկզբունքի համաձայն՝ եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: Պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման արդյունքում հարցը դրական լուծում է ստացել և քաղաքացին ստացել է երեխայի խնամքի նպաստը, այդ թվում՝ մինչ այդ պահը չստացված գումարները:

Այսպիսով՝ անհրաժեշտ է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ուժեղացնել վերահսկողությունը Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի տարածքային բաժինների նկատմամբ՝ ապահովելու վերջիններիս կողմից քաղաքացիների դիմումների պատշաճ քննությունը և օրենքով սահմանված ժամկետներում լուծում տալը:

Պաշտպանին հասցեագրած դիմում-բողոքներում մի շարք ՀՀ քաղաքացիներ բարձրացրել են Արցախի Հանրապետությունում աշխատելու հետևանքով իրենց երեխայի խնամքի նպաստ չնշանակելու և չվճարելու խնդիրը: Մասնավորապես, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստանալու համար քաղաքացիները դիմել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ստացել պատասխան առ այն, որ ՀՀ-ում մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու վերաբերյալ տեղեկատվական բազայում բացակայության պատճառով ՀՀ-ում մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ վճարել հնարավոր չէ, քանի որ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ խնամքի նպաստ նշանակելու համար հիմք են հանդիսանում «Եկամտային հարկի և սոցիալական վճարի

⁸ ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշում, կետ 1, ենթակետ 4:

անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեղեկատվական բազայի տվյալները ծնողի՝ խնամքի արձակուրդում գտնվելու վերաբերյալ:

Բարձրացված հարցի կապակցությամբ դիմումների քննարկման շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ Արցախի Հանրապետությունում գրանցված գործատուի մոտ աշխատող՝ խնամքի արձակուրդում գտնվող անձին (եթե նա հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով) նպաստ նշանակելու կապակցությամբ առկա խնդիրները լուծելու նպատակով մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների կարծիքին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որն ընդունվելուց հետո դիմումատուներին կնշանակվի և կվճարվի խնամքի նպաստ: Նշյալ նախագիծը ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 966-Ն որոշմամբ ընդունվել և մտել է ուժի մեջ:

ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 966-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների համաձայն՝ խնամքի նպաստը նշանակվում է նաև Արցախի Հանրապետությունում գրանցված գործատուի մոտ աշխատող՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողին, եթե նա և իր երեխան բնակչության պետական ռեգիստրում հաշվառված են ՀՀ բնակության վայրի հասցեով, և ԼՂՀ-ում երեխայի ծնողներին խնամքի նպաստ չի նշանակվել: Ընդ որում, նպաստ նշանակելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստանում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայությունը:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը համապատասխան հարցումներ է ուղարկել (ուղարկում) ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրությամբ նշված, ինչպես նաև սոցիալական ապահովության պետական ծառայություն դիմած այլ անձանց իրավունքների իրացումն ապահովելու նպատակով:

4. Սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակումներ սոցիալական աջակցության բնագավառում

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանների զեկույցներում մշտապես բաժրաձայնվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առկա խնդիրների, այդ թվում՝ ընտանիքի անապահովության միավորի հաշվարկման բանաձևի թերությունների, ինչպես նաև Համակարգում առկա ոչ բավարար վարչարարության իրականացման մասին: Գործող Համակարգը Հայաստանում կիրառվում է ավելի քան 15 տարի և չնայած դրանում կատարված

շարունակական ճշգրտումների, այն արդեն որոշակիորեն հնացել է, իսկ Համակարգի առանձին մասնակիցներ գտել են սողանցքներ՝ սահմանափակումները շրջանցելու և համակարգին ադապտացվելու համար⁹: Միաժամանակ, պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության միջոցները բավարար չեն երաշխավորելու համապատասխան կենսամակարդակ, այդ թվում՝ թոշակատուների և գործազուրկների համար¹⁰: Սոցիալապես անապահով ընտանիքները մեծ կախվածություն ունեն պետության կողմից տրամադրվող սոցիալական տրանսֆերտների, այդ թվում՝ ընտանեկան և սոցիալական նպաստի և այլ տեսակի օգնությունից: Արդյունքում, այդ ընտանիքներին նպաստների վճարման դադարեցումը կհանգեցնի նրանց շրջանում աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակի զգալի աճի¹¹:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ 2016 թվականի դրությամբ ՀՀ-ում յուրաքանչյուր 100 մարդկանցից 30-ն աղքատ է, իսկ նրանցից 2-ը՝ ծայրահեղ աղքատ:¹² Սա նշանակում է, որ ՀՀ-ում յուրաքանչյուր 100 մարդկանցից 30-ն ունի սոցիալական աջակցության կարիք: «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» բյուջետային ծրագրի (ԸԿԲՆ ծրագիր)¹³ գնահատում» հետազոտության (Հետազոտություն)¹⁴ հեղինակները գտնում են, որ ծրագրի հասցեականության բարձրացումը գործնականում շատ դժվար է իրականացնել՝ հաշվի առնելով ստվերային տնտեսության, եկամուտները թաքցնելու և հասարակության վերաբերմունքի և վարքագծի մի շարք դրսևորումներ: Ըստ հետազոտության՝ կիրառվող Համակարգը պրոգրեսիվ է, սակայն չափազանց մեծ է Համակարգում և՛ «ընդգրկման սխալը», և՛ «չընդգրկման սխալը»: Մասնավորապես, ընդգրկման սխալը շատ աղքատների համար կազմում է 75 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատների համար՝ 95 տոկոս: Սա նշանակում է, որ ԸԿԲՆ ծրագրի փաստացի շահառուների 75 տոկոսը շատ աղքատ չէ, իսկ 95 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ չէ: Ծրագրում ընդգրկվածների մեծամասնությունը ոչ աղքատ են կամ չեն հանդիսանում ծրագրի իրական շահառուներ: Ընդգրկման սխալը մեծ է մարզային քաղաքներում և փոքր՝ Երևանում: Չընդգրկման սխալը շատ աղքատների համար կազմում է 63 տոկոս,

⁹ http://hkdepo.am/i/file/FPB_Evaluation_Report_Arm.Final.pdf

¹⁰ Նույնիսկ «Սոցիալական գործակիցների» համակարգի (the system of “vulnerability ratios”) առկայությամբ, սոցիալական աջակցությունը բավարար չի եղել՝ հոգալու աղքատության մեջ ապրող ընտանիքների կարիքները, իսկ նպաստների չափը նույնպես անբավարար է, <http://bit.ly/1wWxfrM>

¹¹ http://armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdf

¹² Հայաստանի Հանրապետության բնութագիրը ըստ 100 մարդու (տնային տնտեսության և այլ) հաշվով հաշվարկված որոշ ցուցանիշների, http://armstat.am/file/article/sv_12_16a_6200.pdf

¹³ «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագիրը ԸԿԲՆ ծրագիրը սոցիալական պաշտպանության, մասնավորապես, անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառում շարունակաբար իրականացվող պետական բյուջետային ծրագիր է: Այս բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակը, ըստ 2016-2018 թվականների ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի, բնակչության առանձին անապահով սոցիալական խմբերի կենսամակարդակի բարձրացումը և աղքատության նվազեցումն է:

¹⁴ http://hkdepo.am/i/file/FPB_Evaluation_Report_Arm.Final.pdf

իսկ միայն ծայրահեղ աղքատների համար՝ 56 տոկոս: Այսինքն՝ շատ աղքատների 63 տոկոսը և ծայրահեղ աղքատների 56 տոկոսը չի օգտվում ԸԿԲՆ ծրագրից: Չընդգրկման սխալը մեծ է Երևանում և փոքր է գյուղերում: Միաժամանակ, ըստ Հետազոտության հեղինակների ԸԿԲՆ ծրագրի արդյունավետության այս պատկերը պայմանավորված է նաև ըստ մարզերի ներդրվող միջոցների (կամ նպաստառու ընտանիքների քանակի) և աղքատության ցուցանիշների միջև անհամապատասխանությամբ: Մասնավորապես, Երևանում ԸԿԲՆ ծրագրի ծածկույթը կամ փաստացի նպաստառուների քանակն էապես փոքր է աղքատների քանակի համեմատ: Գեղարքունիքի և Լոռու մարզերում փաստացի նպաստառուների քանակը (հատկացված միջոցները) համեմատության մեջ ամենամեծն են: Մինչդեռ՝ առավել մեծ թվով աղքատները և ծայրահեղ աղքատները Շիրակի մարզում են: Ուշագրավ է, որ Տավուշի մարզը համեմատաբար առավել քիչ միջոցներ ստացող մարզերի թվում է, մինչդեռ՝ ծայրահեղ աղքատության զսպման առումով ԸԿԲՆ ծրագիրն այս մարզում արդյունավետներից է¹⁵:

Այն, որ առկա է խնդիր քննարկվող ոլորտում, վկայում են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքները: Մասնավորապես, վերջիններիս ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ շահառու են հատկապես անօթևան, տարեց, միայնակ քաղաքացիները, որոնք հաշվառման և բնակության պատճառով չեն ընդգրկվում անապահովության համակարգում, մասնավորապես վերջիններս ստիպված են լինում պարբերաբար փոխել բնակության վայրը, չունեն մշտական բնակության վայր, արդյունքում սահմանված կարգին համապատասխան չեն ընդգրկվում անապահովության համակարգում: Նույն խնդիրը ի հայտ է գալիս, երբ նման քաղաքացիները ձմռան ամիսներին ստիպված են լինում փոխել բնակության վայրը և արդյունքում զրկվում է նպաստի իրավունքից:

Միաժամանակ, համաձայն 2016 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված դիմումներից մեկի՝ քաղաքացին տեղեկացրել է, որ բազմիցս դիմել է Սոցիալական աջակցության Էրեբունու տարածքային բաժին իրեն սոցիալական նպաստ նշանակելու խնդրանքով, սակայն մերժվել է անապահովության գնահատման միավորը ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից ցածր լինելու պատճառաբանությամբ և առաջարկվել դիմում ներկայացնել եռամսյակային հրատապ օգնություն ստանալու համար: Քաղաքացու պնդմամբ՝ անապահովության միավորը սխալ է հաշվարկվել, ինչի արդյունքում ինքը զրկվել է նպաստ ստանալու իրավունքից: Երևանի քաղաքապետարանի պարզաբանումների համաձայն՝ վերանայվել է քաղաքացու ընտանիքի անապահովության գնահատման միավորի վերաբերյալ խնդիրը, ինչի արդյունքում ընտանիքը ձեռք է բերել սոցիալական նպաստի իրավունք: Տվյալ դեպքում պատշաճ վարչարարություն իրականացվել է միայն Պաշտպանի միջամտության արդյունքում:

Ընտանեկան և սոցիալական նպաստի ծրագրի հասցեականության մեծացման

¹⁵ Տ՛ես նույն տեղում:

նպատակով անհրաժեշտ է իրականացնել ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, որը պետք է հիմնված լինի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների, նշված ոլորտում վարչարարության բարելավման և տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստման, ինչպես նաև բնակչությանն իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման վրա:

Ընտանիքի անապահովության գնահատման համակարգին առնչվող չարաշահումների ռիսկը բխում է նաև նրանից, որ այդ գործընթացներում մեծ է մարդկային գործոնը, ինչը հաճախ հանգեցնում է տարատեսակ չարաշահումների և կոռուպցիոն ռիսկերի: Պաշտպանին ուղղված մի շարք դիմում-բողոքներում քաղաքացիները բարձրաձայնել են նաև այն խնդիրը, որ Համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների աշխատակիցներն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում իրենց հաշվառելու համար գումար են պահանջում, ինչը նշված տարածքային կենտրոնների գործունեության նկատմամբ ոչ պատշաճ վերահսկողության արդյունք է:

Մասնավորապես, տարածքային կենտրոնի կողմից ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) համար անձի դիմում-հայտարարագիրն ընդունվելուց հետո դիմողի բնակության վայրը սպասարկող աշխատողը կատարում է տնային այցելություն՝ ուսումնասիրելու դիմողի ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, կազմում է արձանագրություն, որից հետո եզրակացություն է ներկայացնում առաջարկությամբ՝ ընտանիքին սոցիալապես անապահով և նպաստառության ենթակա կամ բարեկեցիկ ճանաչելու մասին:¹⁶ Այդուհանդերձ, սուբյեկտիվ գործոնը կարող է շատ մեծ դեր ունենալ Համակարգում ընդգրկման համար: Հետևաբար, ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ սոցիալական ծառայության տարածքային մարմինների գնահատականները պետք է լինեն խիստ օբյեկտիվ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրական գործառույթներից է¹⁷ սոցիալապես անապահով ընտանիքների, առանձին սոցիալական խմբերի սոցիալական պաշտպանության և հասցեական օգնության պետական ծրագրերի մշակումը, իրականացումը, համակարգումը և մշտադիտարկումը, այնուամենայնիվ, Համակարգում առկա մեծաքանակ խնդիրները վկայում են, որ նշված գործառույթը լիարժեք չի իրականացվում: Մասնավորապես, համակարգը թափանցիկ չէ, ընտանիքների անապահովության գնահատումն իրականացվում է ինքնաշխատ

¹⁶ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշում, Հավելված N2, Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվելու (փաստագրվելու) կարգ, բաժին 3:

¹⁷ ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման 1-ին Հավելվածով հաստատված՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրություն, բաժին 2, կետ 8, ենթակետ «իդ»:

եղանակով՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում ներառված տվյալների հիման վրա: Միայն կիրառողներն են կարողանում իրականացնել անապահովության միավորի հաշվարկման գործընթացը՝ օգտագործելով ճշգրտման գործակիցներ:

Հաշվի առնելով վերոնշյալ վերլուծությունն՝ անհրաժեշտ է՝

- 1. բարձրացնել ընտանիքների անապահովության համակարգի հասցեականությունը,*
- 2. վեր հանել և կանխել տարածքային կենտրոնների գործունեության խնդիրները՝ վերջիններիս նկատմամբ վերահսկողության բարձրացման միջոցով:*

5. Սոցիալական աջակցության շրջանակներում տրամադրվող սոցիալական ծառայություններին առնչվող խնդիրներ

2016 թվականի ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում քաղաքացիները բարձրաձայնել են սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող բնափրային օգնությանն առնչվող խնդիրներ: Մասնավորապես, դիմումների վերլուծությունը ցույց է տալիս, որ բնափրային օգնության ծրագրի շրջանակներում օգնություն (սնունդ, հագուստ) տրամադրելու գործընթացներում առկա են խնդիրներ, ինչպես նաև բացակայում են լիազոր մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասությունները բնափրային օգնության ծրագրի շրջանակներում տրամադրվող օգնության որակի փաստացի վերահսկողության հարցում:

Քաղաքացիներն օրինակ, դիմել են Պաշտպանին բնափրային օգնության շրջանակներում իրենց տրամադրված հագուստի և սննդի պատշաճ որակի բացակայության կապակցությամբ: Նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ քաղաքացիներին տրամադրվող նշված օգնությունը չի իրականացվել պետական ծրագրի շրջանակներում, այն ստացվել է նախարարության հետ համագործակցող բարեգործական կազմակերպությունների կողմից և բաշխվել նախարարություն դիմած սոցիալապես անապահով ընտանիքներին: Արդյունքում տարբեր ժամանակահատվածներում և տարբեր կազմակերպությունների կողմից ստացված սննդի և հագուստի որակը տարբերվում է միմյանցից և սոցիալապես անապահով քաղաքացիներին հասկացվում է այն օգնությունը, որն այդ պահին առկա է, իսկ բարեգործական կազմակերպությունների կողմից տրամադրվող սննդի որակի վերաբերյալ նախարարությունում առկա են համապատասխան փաստաթղթեր:

Ստացվում է, որ նախարարությունում առկա են տրամադրվող սննդի որակի վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, սակայն որքանով է սննդի իրական որակը համապատասխանում փաստաթղթերի տվյալներին, նախարարությունը չի տիրապետում:

Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը Լիազորած պետական

մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններում, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններում իրականացնում է պետական վերահսկողություն սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ:

ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 25-ի «Բնափրային օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 958-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 984-Ն որոշմամբ նախատեսվել է միջոցառումների խումբ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց աջակցելու նպատակով, սակայն նշված որոշմամբ՝ լիազոր մարմնին վերապահված չէ համապատասխան լիազորություն փաստացի ստուգելու սննդի, հագուստի և այլնի որակը, ինչն առաջացնում է ոլորտում չարաշահումներ:

Հաշվի առնելով վերոնշյալ վերլուծությունն՝ անհրաժեշտ է ապահովել վերահսկողությունը բնափրային օգնության տրամադրման շրջանակներում տրամադրվող հագուստի և սննդի փաստացի որակի նկատմամբ:

6. Սոցիալական աջակցության շրջանակներում բնակելի տարածության իրավունքի ապահովման խնդիր

Դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում ընդգծել էր ՀՀ-ում երեխաների սոցիալական աջակցության անբավարարության խնդիրը և առաջարկել պետությանն աջակցել մանկատան շրջանավարտներին կրթության, աշխատանք գտնելու և բնակարանային ապահովության հարցերում¹⁸: Այնուամենայնիվ, մանկատան շրջանավարտները կարող է տարիներ սպասեն հերթացուցակներում՝ օրենքով իրենց հասանելիք բնակարանները ստանալու համար:

ՀՀ կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 30-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում հաշվառված են եղել 567 անձ (443-ը՝ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներ): 443 մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին մինչև 2012 թվականի հոկտեմբեր ամիսը հատկացվել են բնակարաններ: Այնուհետև, ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 10-ի N 588-Ն որոշման համաձայն՝ որպես սոցիալական բնակարանային ֆոնդ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն են հատկացվել ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի թիվ 25, 33 և 34 շենքերը (59 բնակարանով): 59 շահառուների հատկացվել է բնակարան, որոնցից 25-ը՝ մանկական խնամակալական

¹⁸ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

կազմակերպությունների շրջանավարտների:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 1012-Ն որոշման համաձայն՝ որպես սոցիալական բնակարանային ֆոնդ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է հանձնվել Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղու 3/14 հասցեում գտնվող ուսումնասարտադրական շենքը, որը վերակառուցվել և հիմնանորոգվել է (շենքն ունի 45 բնակարան): 45 բնակարաններից 17-ը հանձնվել է մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին: Իսկ, համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 1166-Ա և 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1260-Ա որոշումների, Սպիտակ քաղաքի «Վարպետաց» թաղամասում 9 բնակելի տներից 8-ը, Մարալիկ քաղաքի Շիրազի փողոցի N 26 և 27 բնակելի շենքերի 30 բնակարաններից 9-ը ևս հատկացվել են մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին:

Խնդրահարույց է այն, որ մինչ օրս ստացված բազմաթիվ բնակարաններ, բավարար կենցաղային պայմանների բացակայության պատճառով, պիտանի չեն բնակության համար: Մի շարք դեպքերում էլ մանկական խնամակալական կազմակերպությունների նախկին սաներն իրենք են հրաժարվել մարզերում իրենց հատկացված բնակարաններից՝ պատճառաբանելով, որ այնտեղ պայմաններ չկան աշխատելու և սեփական ապրուստը հոգալու համար:

Միաժամանակ՝ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներից հերթացուցակում են գտնվում դեռևս 254 անձինք, որոնց բնակարանային հարցը կլուծվի ազատ կացարանների առկայության կամ նոր շենքերի հատկացման դեպքում: Արդյունքում, պետության տրամադրած աջակցությունը վերջիններիս համար բավարար երաշխիքներ չի ապահովում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

- 1. ավելացնել ֆինանսական միջոցները՝ ապահովելու մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտների բնակելի տարածության իրավունքը,*
- 2. վերահսկողություն իրականացնել տրամադրվող բնակելի տարածությունների կենցաղային բավարար պայմանների ապահովման ուղղությամբ,*
- 3. նախքան բնակարանի տրամադրումը ուսումնասիրել վերջինիս տեղակայման վայրում մանկատան շրջանավարտների համար առկա աշխատանքի հնարավորությունները:*

7. Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման գործընթացում առաջացած խնդիրներ

2016 թվականի ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներով դարձյալ բարձրացվել է 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին տարբեր պատճառներով բնակարան չհատկացնելու խնդիրը, ինչը կարող է խոչընդոտել իրենց մի շարք իրավունքների իրականացմանը:

ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1337-Ն որոշումներով հաստատված կարգերի համաձայն՝ համապատասխան համայնքների ղեկավարների կողմից հաստատված ցուցակներում հաշվառված ընտանիքներից՝ 2009-2016 թվականների ընթացքում, աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի (Ծրագիր) շահառու է ճանաչվել 5381 ընտանիք: Նշված ընտանիքներից 2008-2015 թվականների ընթացքում լուծվել է 4441-ի բնակարանային խնդիրը: 2016 թվականի տարեսկզբի դրությամբ բնակարանային պայմանների բարելավման կարիք են ունեցել Ծրագրի շահառու ճանաչված 940 ընտանիքներ:

ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի համաձայն՝ 2016 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսված 1,849.500 մլն. դրամ միջոցների հաշվին լուծվել է 287 ընտանիքի բնակարանային խնդիր: 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ դեռևս լուծման կարիք ունի մոտ 653 ընտանիքի բնակարանային խնդիր:

Միաժամանակ, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 560.0 մլն. ՀՀ դրամ՝ մոտ 100 ընտանիքի բնակարանային խնդիրների լուծման համար: Հատկացված միջոցների հաշվին նախատեսվում է ավարտին հասցնել Գյումրի քաղաքում իրականացվող ծրագիրը՝ մոտ 90 ընտանիքի Վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցության տրամադրմամբ, ինչպես նաև լուծել ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի գյուղական բնակավայրերում ու Մալիտակ քաղաքում բնակապահովման իրենց իրավունքը վերականգնած 4 ընտանիքի բնակարանային խնդիր:

Արդյունքում, դեռևս լուծման կարիք կունենա ծրագրի շահառու ճանաչված, սակայն Ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները չբարելավված 553 ընտանիքի բնակարանային խնդիր, որի ամբողջական լուծումը նախատեսվում է 2018 թվականի ընթացքում:

Միաժամանակ, 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում բարձրացվել են ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշմանը հետադարձ ուժ տալու արդյունքում անձանց իրավական վիճակի վատթարացման և հաշվառման մեջ գտնվող անձի՝ հաշվառման մեջ մնալու իրավունքը կորցնելու հետևանքով նրա հետ միասին հաշվառման վերցված նրա ընտանիքի անդամներին բնակարան չտրամադրելու վերաբերյալ խնդիրներ:

Մասնավորապես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքներից մեկով ներկայացվել է, որ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքը 10 անձով հաշվառված բնակվել է չորս սենյականոց բնակարանում, որը քանդվել է երկրաշարժի հետևանքով: Ընտանիքի 4 անձին հատկացվել է բնակարան, իսկ ընտանիքի մնացած 5 անդամը հաշվառվել են երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում 3 սենյականոց բնակարան ստանալու համար, ինչը հավաստվում է Գյումրու քաղաքապետարանից ստացված գրությամբ: Հետագայում, դիմումատուները տեղեկացվել են, որ 5 անձից բաղկացած ընտանիքին

հասանելիք սենյակների թիվը փոփոխվել է, մասնավորապես՝ ընտանիքը հաշվառվել է 2008 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ հաստատված Գյումրու քաղաքապետարանի երկրաչափի հետևանքով անօթևան մնացած մեկ սենյականոց բնակարանային փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող ընտանիքների հերթացուցակում:

Վերոգրյալի կապակցությամբ Գյումրու քաղաքապետարանից ստացվել է տեղեկատվություն այն մասին, որ ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշմամբ հաստատված կանոնակարգի 16-րդ կետի՝ բնակելի տարածությունները քաղաքացիներին հատկացվում են նույն կետով սահմանված նորմաների սահմաններում, սակայն վարձակալի և նրա ընտանիքի անդամների կողմից նախկինում զբաղեցրած բնակարանի սենյակների թվից ոչ ավելի: Մինչդեռ ընտանիքի մնացած 5 անդամը հաշվառվել են երեք սենյականոց բնակարանային հերթացուցակում դեռևս 1995 թվականից, երբ գործում էր Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի և արհեստակցական միությունների հայկական հանրապետական խորհրդի 1989 թվականի հուլիսի 25-ի N 371 որոշումը, որի համաձայն՝ բնակելի տարածությունները քաղաքացիներին հատկացվում էին Հայկական ԽՍՀ բնակարանային օրենսգրքի 41 հոդվածով սահմանված նորմաների սահմաններում, սակայն մեկ մարդուն յոթ ու կես քառակուսի մետրից ոչ պակաս բնակելի տարածություն:

Բնակելի տարածությունը հատկացվում էր հետևյալ հաշվարկից՝ մեկսենյականոց բնակարանը՝ միննույն սեռի կամ տարբեր սեռի մեկ-երկու մարդուց բաղկացած ընտանիքին, եթե երեխան իննը տարեկանից փոքր է, ինչպես նաև ամուսիններին. երկու սենյականոց բնակարանը՝ իննը տարեկանից մեծ տարբեր սեռի երկու մարդուց (բացի ամուսիններից) և երեք մարդուց բաղկացած ընտանիքին. երեք սենյականոց բնակարանը՝ չորս-հինգ մարդուց բաղկացած ընտանիքին և չորս սենյականոց բնակարանը՝ վեց-յոթ մարդուց բաղկացած ընտանիքին: Մեկից ավելի բնակարանի հատկացումն արգելվում էր այն ընտանիքներին, որոնք բաղկացած են ութից պակաս մարդուց: Իսկ ութ և ավելի մարդուց բաղկացած ընտանիքներին մեկից ավելի բնակարան հատկացնելու հարցը յուրաքանչյուր առանձին դեպքում լուծվում էր պատգամավորների տեղական խորհրդի գործադիր կոմիտեի կողմից: Ընտանիքին մեկից ավելի բնակարան հատկացնելիս հնարավորության դեպքում դրանք առանձնացվում էին միննույն մուտքում, միննույն հարկում:

Փաստորեն, ներկայումս դիմումատուի բնակարանային հարցերի նկատմամբ կիրառվում է ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշումը, որի արդյունքում անձի իրավական վիճակը վատթարանում է:

Մինչդեռ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետադարձ ուժ չի կարող տրվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ խստացնող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության

կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:

Մեկ այլ դիմում-բողոքով ներկայացվել է, որ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքին բնակարան չի հատկացվում այն պատճառաբանությամբ, որ ընտանիքի անդամների մի մասը հրաժարվում է ազատել 1992 թվականին ժամանակավորապես հատկացված բնակարանը: Այդ նույն բնակարանը 2008 թվականին Գյումրու քաղաքապետի կողմից օգտագործման իրավունքով հատկացվել է ընտանիքի այն անդամներին, ովքեր հրաժարվում են ազատել բնակարանը:

ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ կետի համաձայն՝ բնակարան արտահերթ ստանալու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիություն ունեցող այն քաղաքացիները և նրանց ընտանիքի անդամները, որոնց կացարանները (բազմաբնակարան շենքի բնակարանը) երկրաշարժի հետևանքով քանդվել կամ բնակվելու համար դարձել են ոչ պիտանի: Իսկ նշված կարգի 17-րդ կետի համաձայն՝ բնակարան ստացող քաղաքացին և նրա ընտանիքի բոլոր անդամները պարտավոր են գրավոր ստանձնել պարտավորություն բնակարանի հատկացումից հետո տասն օրվա ընթացքում իրենց կողմից զբաղեցված ժամանակավոր կացարանը կամ ոչ հիմնական շինությունն ազատելու մասին: Նման պարտավորություն ստանձնած քաղաքացու ստորագրությունը վավերացնում է համայնքի ղեկավարը:

Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության պարզաբանումների¹⁹ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով ներկայումս պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շրջանակներում երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած անձինք և նրանց ընտանիքի անդամները բնակարանի հատկացման պահին դիտարկվում են որպես մեկ ընտանիք:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 11-րդ կետի համաձայն՝ եթե հաշվառման մեջ գտնվող քաղաքացին մշտական բնակության է մեկնել այլ վայր, մահացել է կամ այլ հիմքերով կորցրել է հաշվառման մեջ մնալու իրավունքը, ապա նրա հետ միասին հաշվառման վերցված նրա ընտանիքի անդամների համար պահպանվում է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, եթե չեն վերացել տվյալ ընտանիքը բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող համարվելու հիմքերը:

Ընտանիքի այն անդամներն, ովքեր հրաժարվում են ազատել տվյալ բնակարանը, պարտավոր չեն գրավոր ստանձնել պարտավորություն բնակարանն ազատելու մասին, քանի որ տվյալ բնակարանն այդ անձանց համար չի հանդիսանում ժամանակավոր կացարան: Այդ բնակարանը հատկացվել է իրենց Գյումրու քաղաքապետի որոշմամբ

¹⁹ ՀՀ Նախագահի 2016 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ ՆՀ-1091-Ն հրամանագրի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի:

օգտագործման իրավունքով: Արդյունքում, տվյալ անձանց բնակարանային պայմանները բարելավվել են, ինչի հետևանքով կորցրել են հաշվառման մեջ մնալու իրենց իրավունքը:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չեն «բնակարանային պայմանների բարելավում» և «Ժամանակավոր կացարան» հասկացությունները: Այդ իսկ պատճառով հստակ չէ, թե քաղաքապետի կողմից օգտագործման իրավունքով տրամադրված բնակարանը ժամանակավոր կացարան համարվում է, թե՛ ոչ: Գործնականում, որպես ժամանակավոր կացարան դիտվում են տնակները: Եթե օգտագործման իրավունքով հատկացված բնակելի տարածությունը չի դիտվում որպես ժամանակավոր կացարան, առկա չէ իրավական կարգավորում տրամադրված բնակարանը՝ քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավում համարելու վերաբերյալ: Բնակարանային պայմանների բարելավման հետ կապված ևս առկա չէ հստակ կարգավորում, քանի որ իրավական ակտը չի մանրամասնում «բնակարանային պայմանների բարելավում» հասկացությունը: Արդյունքում, տարբեր հանգամանքներ դիտվում են որպես բնակարանային պայմանների բարելավում, օրինակ՝ զավակների համար՝ ծնողների կողմից բնակարան ձեռք բերելը, ընտանիքի որևէ անդամի կողմից բնակարան գնելը, սեփականության իրավունքով կիսակառույց շինություն ունենալը և այլն: Վերոնշյալ հասկացությունների սահմանված լինելու պարագայում, հստակ կլինեք, թե հնարավոր է արդյոք օգտագործման իրավունքով տրամադրված բնակարանը դիտել որպես բնակարանային պայմանների բարելավում, թե՛ ժամանակավոր կացարան:

Այսպիսով, երկրաշարժի հետևանքով բնակարան կորցրած անձանց և նրանց ընտանիքի անդամներին բնակարանի հատկացման պահին որպես մեկ ընտանիք դիտարկելու, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող ընտանիքի որոշ անդամների կողմից հաշվառման մեջ մնալու իրավունքը կորցնելու դեպքում (այս պարագայում բնակարանային պայմանների բարելավման արդյունքում), նրանց հետ միասին հաշվառման վերցված նրանց ընտանիքի մյուս անդամները պահպանում են հաշվառման մեջ գտնվելու իրավունքը: Այսինքն, գրավոր պարտավորություն բնակարանն (ժամանակավոր կացարանը) ազատելու մասին պետք է ստանձնեն հաշվառման մեջ մնացած մյուս անդամները, քանի որ նրանց հաշվառման մեջ մնալու իրավունքը պահպանվում է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- 1. ավելացնել աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին արտահերթ հատկացման ենթակա բնակարաններին ուղղված ֆինանսական միջոցները՝ ապահովելու երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակելի տարածություն ունենալու իրավունքը,*
- 2. ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի N 432 Կառավարության որոշմամբ հստակեցնել «բնակարանային պայմանների բարելավում» և «Ժամանակավոր կացարան»*

հասկացությունները:

ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անձի՝ սեփականության իրավունքը վերջինիս հիմնական իրավունքներից է, որը երաշխավորված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ և թե՛ ՀՀ միջազգային: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը: Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքն ամրագրված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով:

2016 թվականին արձանագրված սեփականության իրավունքի սահմանափակման մի շարք դեպքերի վերաբերյալ ահազանգերը և Պաշտպանին ուղղված դիմում-բողոքները վկայում են, որ ոլորտում ձեռնարկված քայլերը բավարար չեն սեփականության իրավունքի լիարժեք պաշտպանություն ապահովելու համար:

1. Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում սեփականության իրավունքի սահմանափակման դեպքեր

2016 թվականի ընթացքում ստացվել են դիմում-բողոքներ, որոնք վերաբերում են պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված և մի շարք ընկերություններին 2007 թվականից սկսած օտարված բնակելի տարածքների նախկին բնակիչներին փոխհատուցում չտրամադրելու մասին: Մինչդեռ, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց պետք է տրվի նախնական համարժեք փոխհատուցում գումարային տեսքով: Մասնավորապես, այդ ընկերությունների և համապատասխան տարածքներում նախկինում բնակվող անձանց միջև կնքվել են իրացված տարածքների փոխարեն կառուցվելիք բազմաբնակարան շենքերում բնակարաններ տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր: Մինչ օրս, սակայն չեն տրամադրվել ոչ՝ բնակարանները և ոչ՝ էլ՝ համարժեք փոխհատուցումները, քանի որ օրենքով որպես նախնական համարժեք փոխհատուցում նախատեսված է միայն գումարային փոխհատուցումը, իսկ համապատասխան ընկերությունները տարածքների բոլոր նախկին սեփականատերերի հետ կնքել են օտարված տարածքների փոխարեն կառուցվող շենքերում բնակարաններ տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր, ինչի կապակցությամբ օրենքում որևէ դրույթ սահմանված չէ:

Հարցի կապակցությամբ առկա է նաև օրենսդրական խնդիր: Պաշտպանի կողմից դեռևս 2014 թվականին բարձրացվել է այն խնդիրը, որ ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումները լիարժեքորեն չեն երաշխավորում սեփականատիրոջ իրավունքների և շահերի պաշտպանությունը հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում: Մասնավորապես, 2014 թվականին

իրականացված օրենսդրական փոփոխությունների և լրացումների արդյունքում սահմանվել է, որ եթե օտարվում է սեփականության մի մասը, ապա սեփականատերն իրավունք ունի պահանջել նաև սեփականության չօտարված մասի օտարում, եթե գույքի չօտարվող մասը օտարվող մասի համեմատությամբ աննշան է²⁰: Այնուհանդերձ, գտնում ենք, որ «աննշան» եզրույթը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից և արդյունքում կարող է հայեցողական մեկնաբանության տեղիք տալ: Բարձրացված հարցն արտացոլված էր ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 303-Ն որոշման Հավելվածով հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրի 103-րդ կետում, որի առնչությամբ 2014 թվականի երկրորդ կիսամյակային հաշվետվության շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից համապատասխան առաջարկներ²¹ են ներկայացվել ՀՀ կառավարություն, սակայն խնդիրը 2016 թվականի ընթացքում լուծում չի ստացել:

ՀՀ Սահմանադրական դատարանը դեռևս իր` 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՄԴՈ-753 որոշման մեջ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, հայտնել է դիրքորոշում, համաձայն որի իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի, որպեսզի իրավունքի սուբյեկտները համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում:²²

Միաժամանակ, մի շարք այլ դիմում բողոքներ են ստացվել Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի հյուսիս-հարավ մայրուղու հարևանությամբ գտնվող տների բնակիչներից, ովքեր բողոքում են, որ կառուցվող մայրուղուն հարակից որոշ բնակելի տարածքներ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 990-Ն և 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1256-Ն որոշումների ուժով` ճանաչվել են բացառիկ` գերակա

²⁰ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, 21.06.2014, ՀՕ-105-Ն:

²¹-Կիրառել օտարվող գույքի դիմաց փոխհատուցման Գերմանիայի փորձը, համաձայն որի փոխհատուցումը պետք է լինի այնպիսի չափով, որ հնարավորություն ընձեռնի սեփականատիրոջը ձեռք բերել նույնպիսի տեսակի և որակի գույք, ինչպես նաև ներառի սեփականատիրոջ բոլոր հավելյալ ծախսերը, որոնք նա կատարել է միանման այլ գույք ձեռք բերելիս:

- Կիրառել օտարվող գույքի դիմաց փոխհատուցման Էստոնիային փորձը, որի դեպքում անշարժ գույքի օտարման համար վճարը պետք է ծածկի անշարժ գույքի, գույքի հետ օտարված պիտանելիքների և մասերի արժեքը, ինչպես նաև սեփականատիրոջը օտարման արդյունքում պատճառված վնասները:

²² Սանդեյ Թայմս ընդդեմ Միացյալ Թագավորության (The Sunday Times v. The United Kingdom) գործով վճիռ, 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49:

հանրային շահ և ընդգրկվել են հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի կառուցման հետ կապված իրացման ենթակա տարածքների կազմի մեջ, սակայն կոնկրետ իրենց բնակելի տարածքները չեն ներառվել, որի հետևանքով իրենք կրել և շարունակաբար կրում են գույքային վնասներ, այն է՝ բնակելի տները դարձել են 4-րդ աստիճանի վթարային և բնակության համար ոչ պիտանի:

Ըստ դիմումատուների՝ շինարարական աշխատանքներն իրականացվել են իրենց տներից շատ մոտ հեռավորության վրա, կիրառվել է ծանր տեխնիկա, որի արդյունքում իրենց պատճառվել են լուրջ գույքային վնասներ: Մինչդեռ, հաշվի չառնելով վերոնշյալ հանգամանքները՝ դիմումատուների բնակելի տները չեն ընդգրկվել իրացման ենթակա տարածքների կազմի մեջ այն դեպքում, երբ վերջիններս ի սկզբանե մասնակցել են խնդրի կապակցությամբ կազմակերպված քննարկումներին և ստացել համապատասխան փաստաթղթեր (գրություններ): Ըստ այդմ, դիմումատուները պահանջել են իրենց տները ևս ընդգրկել իրացման ենթակա տարածքների կազմի մեջ կամ տալ համարժեք փոխհատուցում: Մինչդեռ, ըստ Երևանի քաղաքապետարանի, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շինություններին պատճառված վնասները հիմնականում պայմանավորված չեն կատարվող շինարարական աշխատանքներով:

Նմանօրինակ խնդիրները կանխելու և վերջիններիս լուծում տալու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները շինարարության իրականացման ամբողջ ընթացքում անընդմեջ կատարեն շինարարության հնարավոր ազդեցության աստիճանի վերաբերյալ ուսումնասիրություններ, ինչպես նաև ապահովվի շինարարության ավարտից հետո վարչական մարմնի հաշվին համապատասխան փորձաքննության կատարումը, որի արդյունքում բնակիչներին կտրամադրվի հիմնավոր և պատճառաբանված եզրակացություն, ինչը կհավաստի, որ շինության վթարային լինելը պայմանավորված չէ իրականացվող շինարարությամբ:

Մի շարք դիմումներով բարձրացվել է այն համակարգային խնդիրը, որ կոռպերատիվ հիմունքներով բնակարանային շենք կառուցելու և համապատասխան բնակարաններ հատկացնելու նպատակով անձանց կողմից կատարվել են համապատասխան կանխավճարային մուծումներ, սակայն Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկման հետևանքով կառուցվելիք շենքերը մնացել են կիսակառույց:

ՀՀ կառավարության կողմից 2000 թվականին ընդունված «Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոռպերատիվների փայտերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայտերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության և տրամադրման կարգը հաստատելու մասին» N 432-Ն որոշման համաձայն՝ նշված շենքերի կառուցման ավարտի համար նախատեսվել էր տրամադրել համապատասխան դրամական օգնություն, ինչը սակայն դեռևս չի տրամադրվել:

Բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 03.07.2014 թվականի նիստում ընդունված ՈՀայաստանի Հանրապետության 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

որոշման նախագծով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների նպատակով միջոցներ չեն նախատեսվել:

Միաժամանակ, 2016 թվականի Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներով բարձրաձայնվել են Երևան քաղաքում ինքնակամ շինարարության դեպքերի կապակցությամբ անձանց սեփականությանը վնաս պատճառվելու հարցեր:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված կոլեկտիվ դիմումի համաձայն՝ քաղաքացիների բնակության շենքերի բակում 2016 թվականի ապրիլի 21-ից իրականացվում են ինքնակամ շինության կառուցման շինարարական աշխատանքներ: Ըստ դիմումատուների՝ նշված շինությունը խոչընդոտում է արևի լույսի ներթափանցմանը բնակարաններ, կառուցվում է հանրային սեփականություն հանդիսացող կանաչապատ տարածքում, որտեղ գտնվում է շենքերի բնակիչների կողմից նախկինում կառուցված զրուցատաղավար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը²³:

Միաժամանակ, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը, Երևանում՝ Երևան քաղաքի քաղաքապետը, վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Պաշտպանի միջնորդությամբ Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից ձեռնարկված համապատասխան միջոցների արդյունքում նշված շենքերի հարակից տարածքում կառուցված մետաղական տաղավարն ապամոնտաժվել է և տարածքը բերվել է նախկին տեսքի:

Հաշվի առնելով վերոնշյալ վերլուծությունն՝ անհրաժեշտ է՝

1. *«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարել և որպես համարժեք փոխհատուցում ներառել նաև բնակարանների տրամադրման տեսքով փոխհատուցման վերաբերյալ դրույթ՝ վերջինիս տալով նաև հետադարձ ուժ,*

²³ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, 188-րդ հոդված:

2. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինարարության իրականացման ամբողջ ընթացքում անընդմեջ կատարել շինարարությամբ հնարավոր ազդեցության աստիճանի վերաբերյալ ուսումնասիրություններ,
3. ապահովել շինարարության ավարտից հետո վարչական մարմնի հաշվին համապատասխան փորձաքննության կատարումը, որի արդյունքում բնակիչներին կտրամադրվի հիմնավոր և պատճառաբանված եզրակացություն, ինչը կհավաստի, որ շինության վթարային լինելը պայմանավորված չէ իրականացվող շինարարությամբ,
4. փոփոխություն կատարել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում՝ հստակեցնելով «աննշան» եզրույթը,
5. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատշաճ և հետևողական իրականացնել ինքնակամ շինարարության դեպքերի կանխարգելում, կասեցում և դրանց հետևանքների վերացում:

2. Անձի սեփականությունը հանդիսացող ավտոմեքենան առանց օրինական հիմքերի հատուկ պահպանվող տարածք տեղափոխելու դեպքեր

2016 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է դիմում-բողոքներ և ահազանգեր առ այն, որ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության (այսուհետ՝ Ճանապարհային ոստիկանություն) ծառայողներն, առանց բավարար հիմքերի ներկայացման, քաղաքացիների ավտոմեքենաները տեղափոխում են հատուկ պահպանվող տարածք: Ըստ Ճանապարհային ոստիկանության՝ ավտոմեքենան հատուկ պահպանվող տարածք է տեղափոխվել դիմապակու մզեցվածությունը ստուգելու համար: Մեկ այլ բողոքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ անձին պատկանող երկու ավտոմեքենաները տեղափոխվել են հատուկ պահպանվող տարածք, քանի որ բողոքներ են եղել առ այն, որ նշված վայրում վարորդները պարբերաբար գերազանցում են թույլատրված արագությունը:

Հարկ է ընդգծել, որ տրանսպորտային միջոցները հատուկ պահպանվող տարածք բերման ենթարկելու և արգելանքի տակ դնելու հիմքերը սահմանված են «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 18¹-րդ հոդվածներով (այդ դեպքերից են օրինակ՝ ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոցը վարելը, տրանսպորտային միջոցն առանց վարորդական վկայականի վարելը և այլն), որտեղ բացակայում են վերը նկարագրված դեպքերում (դիմապակու մզեցվածությունը ստուգելու անհրաժեշտություն, պարբերաբար թույլատրված արագության գերազանցում) մեքենան հատուկ պահպանվող տարածք տեղափոխելու հիմքերը: Արդյունքում անձինք զրկվել են իրենց սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաներն օգտագործելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք օրենքով չնախատեսված դեպքերում տրանսպորտային միջոցները հատուկ պահպանվող տարածք տեղափոխելը բացառելու

նպատակով ուժեղացնել հսկողությունը Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից օրենքի պահանջների կատարման նկատմամբ:

3. Անձանց դրամական միջոցների վրա արգելանք դնելու հետ կապված խնդիրներ

2016 թվականին արձանագրվել են անձանց սեփականությունը հանդիսացող գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա անհիմն արգելանք դնելու, ինչպես նաև անձանց պատշաճ կերպով չծանուցելու դեպքեր: Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն) հարկադիր կատարողը կատարողական վարույթի շրջանակներում դուրս է եկել կատարողական թերթի պահանջների շրջանակից և վտարմանն ուղղված կատարողական գործողությունները կատարել է ոչ միայն պարտապանի, այլ նաև վերջինիս հետ համատեղ բնակվող ընտանիքի մյուս անդամների նկատմամբ: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը: Մինչդեռ վերոնշյալ դեպքում ընտանիքի անդամների անունները կատարողական թերթում նշված չեն եղել:

Մեկ այլ դեպքով, չնայած նրա, որ ընդհանուր իրավասության դատարանի կողմից անհատ ձեռնարկատիրոջը պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշում է կայացվել, Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից արգելանք է դրվել նաև վերջինիս որպես ֆիզիկական անձի պատկանող գույքի և դրամական միջոցների վրա:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմումի քննությունից պարզ է դարձել, որ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հարուցված կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձում է տարածվել անձի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի վրա: Մինչդեռ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ կատարողական թերթով բռնագանձում չի կարող տարածվել այն դրամական գումարների վրա, որոնք վճարվում են հաշմանդամություն ունեցող անձանց: Չնայած դիմումի քննարկման արդյունքում քաղաքացու դրամական միջոցների վրա կիրառված արգելանքը հանվել է, սակայն որոշ ժամանակ անց Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից կրկին կիրառվել է արգելանք վերջինիս հաշմանդամության զինվորական կենսաթոշակի վրա:

Հարցը Պաշտպանի միջնորդությամբ ստացել է դրական լուծում և անձի հաշվեհամարը ներառվել է այն հաշվեհամարների թվում, որոնցից ստացվող

գումարների վրա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի համաձայն բռնագանձում չի տարածվում: Ստացվում է, որ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից նշված գործիքի օգտագործմամբ (քաղաքացու հաշվեհամարը ներառել այն հաշվեհամարների թվում, որոնց վրա բռնագանձում չի տարածվում) հնարավոր էր քայլեր ձեռնարկել և կանխել օրենքի խախտմամբ քաղաքացու հաշմանդամության զինվորական կենսաթոշակի վրա արգելանք դնելու դեպքերը, սակայն նշված քայլերը ձեռնարկվել են միայն 2017 թվականի ընթացքում:

Իրավասու մարմինների վերոնշյալ գործողությունների արդյունքում անձինք զրկվել են իրենց սեփականության օգտագործման իրավունքից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք օրենքով չնախատեսված դեպքերում՝ անձի դրամական միջոցների վրա արգելանք դնելու դեպքերը բացառելու նպատակով՝ ուժեղացնել հսկողությունը Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչների կողմից օրենքի պահանջների կատարման նկատմամբ:

4. Ճանապարհային երթևեկության կանոնի խախտման դեպքում տուգանքը տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ուղարկելու խնդիր

2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է բարձրաձայնել, որ օրենսդրական կարգավորումների բացակայության արդյունքում պայմանագրային հիմունքներով ժամանակավոր անհատույց օգտագործման հանձնված սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող ավտոմեքենաների օգտագործմամբ թույլ տրված վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացված որոշումները, որոնք կազմվում են տեսանկարահանող սարքերի արձանագրած տեսանյութերի հիման վրա, չեն ուղարկվում այն ֆիզիկական անձանց, ովքեր փաստացի տիրապետում և օգտագործում են ավտոմեքենան:

Այսպես, 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի փոփոխությունների արդյունքում (ՀՕ-178), օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվեց, որ այն դեպքերում, երբ ճանապարհային երթևեկության կանոնի խախտումն ամրագրվել է տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով, ապա սույն օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվությունը կրում է տրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե տրանսպորտային միջոցը հանդիսանում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ սեփականություն, ապա՝ համապատասխանաբար իրավաբանական անձի ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերը, եթե չեն ապացուցում, որ խախտումը կատարել է այլ անձ: Ստացվում է, որ անկախ այն հանգամանքից, որ ավտոմեքենան պայմանագրով կարող է օգտագործման տրվել մեկ այլ անձի և տարիներ շարունակ շահագործվել, տուգանքները ուղարկվում են սեփականատիրոջը:

Միաժամանակ, «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով

հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե իրավախախտումը կատարվել է պետական (պետական մարմին, պետական կառավարչական հիմնարկ, պետական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային կառավարչական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպությանն ամրացված (պատկանող) տրանսպորտային միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների, ապա վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու նպատակով վարչական մարմինը, իրավախախտման հատկանիշները պարզելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, գրավոր հարցում է կատարում համապատասխան կազմակերպությանը (հարցումը կարող է ուղարկվել նաև կազմակերպության պաշտոնական էլեկտրոնային փոստին): Մտացվում է, որ հարցը կարգավորված է պետական և համայնքային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցների համար, սակայն կարգավորված չէ ոչ պետական իրավաբանական անձանց համար:

Հարկ է ընդգծել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 608-րդ հոդվածով սահմանված է, որ վարձակալության կարող են հանձնվել, ի թիվս այլնի, նաև տրանսպորտային միջոցները: Գույքից օգտվելը կապված է տիրապետման հետ, որովհետև առանց դրա, որպես կանոն, օգտագործման իրավունքը չի կարող իրականացվել: Այդ իրավունքը, տիրապետման իրավունքի նման, սովորաբար պատկանում է գույքի սեփականատիրոջը, բայց օգտագործման իրավունքը կարող է իրականացնել նաև ոչ սեփականատերը: Օրինակ՝ գույքային վարձակալության պայմանագրով վարձակալը ոչ միայն տիրապետում, այլև օգտագործում է ուրիշի գույքը²⁴:

Այսպիսով, նշված իրավական ակտերի ուսումնասիրությունից և վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ պայմանագրային հիմունքներով ժամանակավոր անհատույց օգտագործման հանձնված սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող ավտոմեքենաներով թույլ տրված վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացված որոշումները սեփականատեր չհանդիսացող, սակայն ավտոմեքենան փաստացի տիրապետող և օգտագործող ֆիզիկական անձին չուղարկելը օրենսդրական բացի հետևանք է: Ըստ Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ գործող իրավակարգավորումները բավարար են արդյունավետ վարչարարություն իրականացնելու համար և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով անձի կողմից բավարար ապացույցների ներկայացման պարագայում վարչական ակտը կվերահասցեագրվի համապատասխան անձին: Սակայն խնդիրն այն չէ, որ սեփականատերը կոնկրետ

²⁴ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» գիտագործնական ժողովածու (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010 թվական, 1086 էջ), <http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>, էջ 361:

դեպքով հնարավորություն է ունենում ապացուցելու խախտումն այլ անձի կողմից կատարելը, այլ այն, որ երկարաժամկետ վարձակալության դեպքերում հավելյալ ծանրաբեռնվածություն է դրվում մեքենայի սեփականատիրոջ վրա՝ յուրաքանչյուր խախտման դեպքով ապացուցելու այն այլ անձի կողմից կատարելու փաստը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ վերլուծությունը՝ առաջարկում ենք կատարել օրենսդրական փոփոխություններ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ կայացված որոշումները՝ անմիջապես տրանսպորտային միջոցը փաստացի տիրապետողին և օգտագործողին ուղարկելու (օրինակ՝ համապատասխան պայմանագիր, ինչպես նաև սեփականատիրոջ կողմից համապատասխան դիմում ներկայացրած լինելու դեպքում) հնարավորությունը սահմանելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության և աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքային իրավունքները, հանդիսանալով անձի հիմնական իրավունքներ և ունենալով օրենսդրական պաշտպանության երաշխիքներ, մի շարք դեպքերում խախտվում են այդ թվում նաև իրավասու մարմինների բացակայության, ինչպես նաև անձանց՝ այդ իրավունքների պաշտպանության մեխանիզմների մասին իրազեկման պակասի հետևանքով: Հայաստանում աշխատանքային իրավունքների պաշտպանությունը կարևորագույն խնդիրներից է: Հաշվի առնելով երկրում սոցիալ-տնտեսական վիճակն՝ աշխատողներն աշխատանքը չկորցնելու համար որոշ դեպքերում ստիպված են լինում համակերպվել իրենց իրավունքների հնարավոր ոտնահարումների հետ:

1. Աշխատանքային իրավունքների պահպանումը վերահսկող արտադատական մարմնի բացակայության և աշխատանքային իրավունքների խախտումների կանխարգելման խնդիր

2016 թվականին ևս արձանագրվել են գործատուների կողմից աշխատանքային իրավունքների խախտումների դեպքեր: Մասնավորապես, արձանագրվել են աշխատակիցներին արտաժամյա և գիշերային աշխատանքի, հանգստյան և ոչ աշխատանքային օրերին կատարված աշխատանքի համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չափով չվարձատրելու, չգործածված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցումները սխալ հաշվարկելու, հղիության և ծննդաբերություն արձակուրդի դրամական հատուցումները չտրամադրելու, աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուի կողմից թերի վերջնահաշվարկ կատարելու, աշխատանքային պայմանագրի լուծման մասին աշխատակիցներին պատշաճ չձանուցելու, աշխատակիցներին անհիմն կարգապահական տույժերի ենթարկելու, աշխատանքային գրքույկը, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակն օրենքով սահմանված կարգով գործատուի կողմից աշխատողին չհանձնելու, աշխատանքային պայմանագրից բխող իր պարտավորությունները գործատուի կողմից չկատարելու և աշխատակիցների աշխատավարձը չվճարելու դեպքեր: Շարունակում է արդիական մնալ նաև գործատուի կողմից աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում նվազագույն ամսական աշխատավարձ գրանցելը՝ եկամտային հարկի վճարումից ազատվելու նպատակով: Բացի այդ, բազմաթիվ են աշխատողների հետ աշխատանքային պայմանագիր չկնքելու դեպքերի վերաբերյալ ահազանգերը կամ բանավոր բողոքները:

2016 թվականի ընթացքում աշխատանքային իրավունքների խախտման վերաբերյալ Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներից առանձնացվել են ՀՀ

աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածի համատեքստում քննարկված հետևյալ բողոքները.

Բողոքներից մեկի համաձայն՝ պետական վերահսկողության ներքո գործող կազմակերպությունում աշխատող անձը հրաժարվել է յուրաքանչյուր ամիս իր կողմից ստացվող աշխատավարձից կատարել վճարումներ կազմակերպության ղեկավարությանը, ինչի արդյունքում իր նկատմամբ իրականացվել են հետապնդումներ և ճնշումներ: Ըստ ներկայացված տեղեկատվության՝ վերոգրյալի արդյունքում աշխատողի կողմից իր աշխատանքային իրավունքների պաշտպանության միջոցներն իրացնելու հետևանքով գործատուի կողմից ճնշումները սաստկացել են, խախտվել են անձի աշխատանքի արդար պայմանների, անվտանգ և առողջարար աշխատանքային պայմանների, ինչպես նաև պատշաճ կենսամակարդակի համար բավարար արդար վարձատրության ու արժանապատիվ վերաբերմունքի իրավունքները: Մասնավորապես, աշխատողն անհիմն կերպով ենթարկվել է կարգապահական տույժի, վերջինիս պաշտոնն իջեցվել է, աշխատավարձը նշանակվել է կենսապահովման նվազագույն գամբյուղի 50 տոկոսի չափով, տեղափոխվել է մեկուսի աշխատասենյակ, որը չի ջեռուցվել, ինչպես նաև մյուս աշխատակիցներին արգելվել է շփվել վերջինիս հետ, իսկ վերը նշված պահանջը չկատարելու արդյունքում աշխատակիցներն ենթարկվել են կարգապահական տույժի:

Այսպիսով, անձի պնդմամբ՝ իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելու արդյունքում տեղի է ունեցել վիկտիմիզացիա, այսինքն՝ դիմողի նկատմամբ բացասական հետևանքներ առաջացնող գործողություն և անգործություն, որը կատարվել է միայն այն պատճառով, որ անձն իր իրավունքները պաշտպանելիս դիմել է իրավական պաշտպանության որևէ միջոցի և ներկայացրել է խախտումների մասին տեղեկատվություն իրավասու պետական կամ այլ մարմիններ: Ավելին, պետական իրավասու մարմնի կողմից խախտումների վերաբերյալ Պաշտպանի ներկայացրած դիրքորոշումները չեն ընդունվել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրված մեկ այլ դիմումի համաձայն՝ անձը 1999 թվականից աշխատում է դպրոցում որպես պահակ, օրական՝ 17:00-08:30 ժամանակահատվածով, տարիներ շարունակ աշխատել է առանց հանգստի, վերջինիս երբևէ չի տրամադրվել արձակուրդ, մշտապես ներգրավվել է աշխատանքի հանգստյան օրերին և ոչ աշխատանքային՝ տոնական ու հիշատակի օրերին, իսկ հանգստյան օրերին իր աշխատաժամանակի տևողությունը կազմել է 24 ժամ: Ըստ դիմումատուի՝ վերջինս նույն դպրոցում աշխատում է նաև որպես հնոցապան 0,5 դրույքաչափով, սակայն ամբողջ աշխատանքն ինքն է կատարում, մինչդեռ, բացի իրենից ձևակերպված են ևս 4 հնոցապան, ովքեր աշխատանքի չեն ներկայանում, սակայն աշխատավարձ են ստանում: Հարցի կապակցությամբ Պաշտպանի միջամտության արդյունքում Երևանի քաղաքապետարանից հավաստիացրել են, որ դպրոցի տնօրենը ենթարկվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժի, իսկ գրությամբ նշված փաստերի առնչությամբ կատարվում են ուսումնասիրություններ:

Մեկ այլ դեպքով, անձը տեղեկացրել է, որ 2015 թվականի հոկտեմբեր ամսից

գտնվում է հղիության և ծննդաբերության արձակուրդում, սակայն արձակուրդի գումարը չի ստացել: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչին գործատու ընկերությունից հայտնել են, որ ընկերությունն ունի ֆինանսական խնդիրներ, և այդ պատճառով մինչ այժմ հնարավոր չի եղել արձակուրդի համար սահմանված գումարը վճարել՝ նշելով, որ Պաշտպանի կողմից հարցի բարձրաձայնման օրը համապատասխան գումարը կփոխանցվի քաղաքացու հաշվեհամարին:

Աշխատանքային իրավունքների խախտման նկարագրված դեպքերը և դրանց չհաստատվելու հանգամանքը պայմանավորված են նաև աշխատանքային օրենսդրության նորմերի պահպանման նկատմամբ պետական վերահսկողության անարդյունավետությամբ, ինչպես նաև աշխատանքային իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ գործատուների և աշխատողների իրազեկման լայնածավալ միջոցառումների բացակայությամբ: Ավելին, նշված դեպքերը ցույց են տալիս աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ հսկողության պակասը, որն ուղղված կլինի այդ դեպքերի կանխմանը:

Դեռևս 2015 թվականին իրականացված «Հարկադիր աշխատանքը և աշխատանքային թրաֆիքինգը Հայաստանում» փորձնական հետազոտության²⁵ մեջ նշվում է, որ դիտարկված աշխատանքների միայն կեսից քիչ ավելին (51,3 տոկոսը կամ 241 աշխատանք) է իրականացվել և (կամ) իրականացվում աշխատանքային պայմանագրով: Մնացած 229 աշխատանքները (48,7 տոկոս) կատարվել և (կամ) կատարվում են բանավոր պայմանավորվածության հիման վրա, այսինքն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային պայմանագրի բացակայությամբ:

Թե՛ վերոնշյալ ուսումնասիրությունը, թե՛ Պաշտպանին ուղղված դիմումների քննությունը ցույց է տալիս, որ աշխատանքային իրավունքների խախտումները չեն կանխվում հենց ոլորտում հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայության պատճառով:

2013 թվականին ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման արդյունքում վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչության:²⁶ Միաժամանակ, 2014 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվել և 2015 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու և «Աշխատանքի պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել 2004 թվականի նոյեմբերի 9-ի ՀՀ

²⁵ <http://www.osce.org/hy/yerevan/212566?download=true>

²⁶ ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշում:

աշխատանքային օրենսգրքի 34-րդ հոդվածը: Նշված հոդվածը սահմանում էր, որ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու վերահսկողությունն իրականացվում էր Աշխատանքի պետական տեսչության կողմից (ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչությունը ՀՀ աշխատանքի պետական տեսչության իրավահաջորդն է²⁷):

Նշված փոփոխության արդյունքում ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչությունը 2015 թվականի հունվարի 9-ից լիազորված է իրականացնելու միայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն, իսկ նշված լիազորություններից դուրս աշխատանքային իրավունքների հետ առնչվող խնդիրների կապակցությամբ հնարավոր է դիմել միայն դատարան:

Հարկ է ընդգծել, որ 2016 թվականի հունիսին ԱՄՆ պետդեպարտամենտի «Մարդկանց թրաֆիքինգը» զեկույցում, նշվում է, որ ՀՀ-ում 2015 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում կասեցվել է Աշխատանքի պետական տեսչության հիմնական գործառույթների մեծ մասը, ըստ այդմ՝ տեսուչները չեն կարողացել իրականացնել պարբերական ստուգումներ և դրանով իսկ ի վիճակի չեն եղել բացահայտել հարկադիր աշխատանքի ցուցիչներ:

Հայաստանի Հանրապետությունը 2004 թվականի դեկտեմբերի 17-ին վավերացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 կոնվենցիան: Կոնվենցիայի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են արդյունաբերական և առևտրի ձեռնարկություններում ստեղծել աշխատանքի տեսչության համակարգ, որը կոչված է ապահովելու աշխատանքի ընթացքում աշխատողների աշխատանքային պայմաններին ու պաշտպանությանը վերաբերող իրավանորմերի կիրառումը, ինչպիսին են աշխատանքային օրվա տևողության, աշխատավարձի, անվտանգության, առողջապահության և բարեկեցության դրույթները, երեխաների և երիտասարդների աշխատանքին առնչվող դրույթները և գործող իրավական դրույթներով չկարգավորված թերությունների ու չարաշահումների մասին իրավասու մարմնին տեղեկացնելը:²⁸ Ավելին, նշված կոնվենցիայի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների վերահսկման լիազոր մարմինը կազմակերպական առումով պետք է ստեղծվի կենտրոնական մարմիններին կից, նրանց հսկողության ներքո, մինչդեռ նոր

²⁷ ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշում:

²⁸ «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» ԱՄԿ թիվ 81 կոնվենցիա, հոդվածներ 1-3:

տեսչությունը կենտրոնական մարմնի կարգավիճակից իջել է և դարձել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ստորաբաժանում:

Աշխատանքային իրավունքների արտադատական պաշտպանության մեխանիզմներդնելու վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են, որ ՀՀ-ում իրականացվող տեսչական բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է ստեղծել տեսչական մարմիններ: Տեսչական բարեփոխումների ծրագիրը մեկնարկել է դեռ 2009 թվականին:²⁹ Միաժամանակ, ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի «ՀՀ-ում նոր տեսչական համակարգին անցնելու ծրագիրը հաստատելու մասին» N 632-Ն որոշմամբ սահմանվել է, որ 2015 թվականին կստեղծվեն առնվազն 3 նոր տեսչական մարմիններ, իսկ 2016 և 2017 թվականներին նոր տեսչական մարմինները կստեղծվեն ՀՀ վարչապետին կից տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի որոշմամբ սահմանված քանակով և հերթականությամբ: Այնուհանդերձ, ծրագրի արդյունքները դեռևս ակնառու չեն, ուստի պարզ չէ, թե տեսչական բարեփոխումների իրականացման արդյունքում կստեղծվի արդյոք ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ աշխատանքային իրավունքների պաշտպանության արտադատական մարմին, թե՛ ոչ: Արդյունքում, ՀՀ-ում անձանց աշխատանքային իրավունքների համակարգային խախտման խնդիրը շարունակում է չլուծված մնալ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի իրավասու մարմին (արտադատական), որին վերապահված կլինի աշխատանքի պայմանների, աշխատողների աշխատանքային ազատությունների և իրավունքների պահպանման ու պաշտպանության ապահովման, աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերի խախտումների վերացման ու կանխարգելման նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասություն:

2. Գործադուլի իրավունքի սահմանափակման խնդիր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել է նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության մեկ այլ հիմնարար երաշխիքի՝ գործադուլի իրավունքի սահմանափակված լինելու խնդիրը, ինչը նաև օրենսդրական թերի կարգավորումների արդյունք է:

ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողներն իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Գործադուլի իրականացման կարգը սահմանվում է օրենքով: Գործադուլի իրավունքը կարող է սահմանափակվել միայն

²⁹ ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1135 - Ն որոշում:

օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ աշխատողները կարող են իրականացնել իրենց գործադուլի իրավունքը միայն *կոլեկտիվ աշխատանքային վեճի* առկայության դեպքում,³⁰ ինչը խոչընդոտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ աշխատողի գործադուլի իրավունքի իրացմանը: ՀՀ սահմանադրական դատարանը, աշխատողների գործադուլի իրավունքը մեկնաբանելիս, արտահայտել է դիրքորոշում առ այն, որ վերջինս առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին:³¹

Կոլեկտիվ աշխատանքային վեճով չպայմանավորված գործադուլի կազմակերպման օրենսդրորեն կարգավորված չլինելու հարցի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացվել է տեղեկություն առ այն, որ նկատի ունենալով, որ վերջինս ընդգրկում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների լայն շրջանակ, ունի համապարփակ և համաձայնեցված մոտեցումների կարիք, անհրաժեշտ է այլ օրենսդրական կարգավորումների շրջանակներում տալ համապատասխան լուծումներ:

Ստացվում է, որ օրենսդրական թերի կարգավորման արդյունքում, աշխատողները, կարող են իրականացնել իրենց գործադուլի իրավունքը միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայության դեպքում, մինչդեռ նշվածը կարող է գործադուլի միջոցով՝ սոցիալական և տնտեսական աշխատանքային շահերի պաշտպանության երաշխիքի սահմանափակման պատճառ դառնալ, ինչը խնդրահարույց է ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ ՀՀ միջազգային պարտավորությունների տեսանկյունից:³²

Հաշվի առնելով վերոգրյալն ու ի կատարում սահմանադրական նորմի՝ առաջարկում ենք մշակել և ընդունել գործադուլի իրականացման կարգ սահմանող օրենքի նախագիծ՝ առանց սահմանափակելու գործադուլի իրավունքը կոլեկտիվ վեճի առկայության հետ:

3. Գործազրկություն և դրան առնչվող այլ խնդիրներ

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածը՝ որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակ, ի թիվս այլնի, սահմանում է բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը: Այնուամենայնիվ, 2016 թվականին զբաղվածության

³⁰ ՀՀ աշխատանքային օրենսգրքի, հոդված 73, մաս 1:

³¹ ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՍԴՈ-677 որոշում:

³² «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր», հոդված 8, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, մաս 2, հոդված 6:

խթանման ոլորտում պետության կողմից իրականացված ծրագրերը չեն նպաստել գործազրկության ընդհանուր մակարդակի կրճատմանը: Ի հավելումն, ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածով նախատեսվում է նաև յուրաքանչյուրի՝ գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունքը: Մինչդեռ, 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով վերացվեց գործազրկության նպաստի ինստիտուտը, որը փոխարինվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի Զբաղվածության գործակալության կողմից իրականացվող «ակտիվ» ծրագրերով:³³

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Զբաղվածության պետական գործակալության՝ 2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ գրանցված գործազուրկների թիվը կազմել է 80.492, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 4,5 տոկոսով: Հարկ է նշել, որ գրանցված գործազուրկներից 53.088-ը կանայք են, 19.078-ը՝ երիտասարդներ, իսկ 29.747-ը՝ գյուղաբնակներ:³⁴ Միաժամանակ, տվյալ վիճակագրությունը չի արտահայտում երկրում գործազրկության իրական մակարդակը, քանի որ «գործազուրկ» կարգավիճակը պայմանավորված է պետական լիազորված մարմնում հաշվառված լինելու հանգամանքով: Դեռևս 2014 թվականին խնդրին է անդրադարձել նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ մտահոգություն հայտնելով, թե ՀՀ-ում առկա գործազրկության բարձր մակարդակի, թե բազմաթիվ փաստացի գործազուրկ անձանց գործազրկության պաշտոնական վիճակագրության մեջ արտացոլված չլինելու վերաբերյալ:³⁵

Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերում ընդգրկված անձանց թվաքանակը 2016 թվականի ընթացքում կազմել է 5086 մարդ, որոնցից 3768-ը՝ կին, 1318-ը՝ տղամարդ, իսկ 1878-ը՝ 16-29 տարեկան անձինք:³⁶ ՀՀ մարզերից երիտասարդների շրջանում ամենաբարձր գործազրկության մակարդակ գրանցվել է Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերում՝ համապատասխանաբար 4068, 2586 և 2082 մարդ:³⁷

Միաժամանակ, բազմաթիվ քաղաքացիներ դժգոհություն են հայտնում առ այն, որ տարիներ շարունակ գրանցված լինելով Զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոններում, որևէ անգամ աշխատանքի առաջարկ չեն ստացել, որպես պատճառ նշվել է, մասնավորապես, նման մասնագիտությամբ աշխատանքի բացակայությունը կամ աշխատանք փնտրող անձի տարիքը: Ընդ որում, 2016 թվականի

³³ Աշխատանք փնտրողների վերապատրաստում, աշխատանք փնտրելու ծախսերի փոխհատուցում, աշխատանքային տոնավաճառներ և այլն:

³⁴ http://armstat.am/file/article/sv_12_16a_141.pdf

³⁵ <http://tbinternet.ohchr.org/layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2FARM%2FCO%2F2-3&Lang=en>

³⁶ http://armstat.am/file/article/sv_12_16a_141.pdf

³⁷ http://armstat.am/file/article/sv_12_16a_141.pdf

դեկտեմբեր ամսվա դրությամբ պաշտոնապես գրանցված գործազուրկ անձանցից 29.858-ն արդեն 1-ից 3 տարի է ինչ աշխատանք են փնտրում, իսկ 23.727-ը՝ 3 տարուց ավելի:³⁸ Արդյունքում, նշված անձինք չեն օգտվել ոչ նախարարության կողմից իրականացվող «ակտիվ» ծրագրերից և ոչ էլ ապահովվել է վերջիններիս՝ գործազրկության, աշխատանքը կորցնելու դեպքերում սահմանադրորեն երաշխավորված սոցիալական ապահովության իրավունքը:

ՀՀ Մահմանադրությամբ ամրագրված «սոցիալական ապահովություն», «սոցիալական պետություն» եզրույթները ենթադրում են նաև պետության կողմից գործազրկության նպաստի տրամադրման պարտավորություն: Ըստ այդմ, գործազրկության նպաստի վերացումը հակասում է սոցիալական պետության սկզբունքներին և չի բխում ՀՀ միջազգային պարտավորություններից:

ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ «բացի լիարժեք, արդյունավետ և ազատորեն ընտրված զբաղվածության խթանումից (...) աշխատանքը կորցնելու դեպքում անձին պետք է վճարվի համապատասխան գործազրկության նպաստ»: ³⁹

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ գործազրկության նպաստի վերաիմաստավորման տեսանկյունից առավելապես բնութագրական է գործազուրկների համար նախատեսված զբաղվածության պետական ծառայության միջնորդությամբ հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրման նոր ծրագիրը: Այս ծրագիրն օբյեկտիվորեն նպատակաուղղված է աշխատաշուկայում անմրցունակ անձի համար աշխատանք փնտրելու սկզբնական փուլում անհրաժեշտ նվազագույն ծախսերը կատարելու հնարավորության ընձեռնանը (երեք ամիս տևողությամբ, ամսական՝ առավելագույնը ինը այցելություն, յուրաքանչյուր այցելության համար՝ երկու հազար ՀՀ դրամի չափով դրամական աջակցություն): Մասնավորապես, նշված դրամական աջակցությունը տրամադրվում է գործազուրկ անձին ակտիվ աշխատանք փնտրելու նպատակով՝ որպես տրանսպորտային կամ համապատասխան այլ ծախսերի որոշակի փոխհատուցում: Նշյալ ծրագրի ամրագրումը՝ որպես զբաղվածության պետական կարգավորման գործիք, չի կարող նաև ամբողջությամբ ապահովել այս գծով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները՝ հավելելով, որ վերջինս հնարավոր կլինի ամբողջությամբ իրացնել Հայաստանում գործազրկությունից սոցիալական ապահովագրության համակարգի ներդրմամբ՝ որպես սոցիալական հինգ հիմնական ռիսկերից մեկի:

Այս առումով, «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան» ստորագրած ԵԽ անդամ պետություններում բացակայում են նպատակային գործազրկության

³⁸ http://armstat.am/file/article/sv_12_16a_141.pdf

³⁹ Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանություն,

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E/C.12/GC/19&Lang=en

նպաստներ: Գործազրկության նպաստն ընդհանուր բնույթի է և ուղղված է գործազուրկ անձանց ապրուստի նվազագույն կարիքների բավարարմանը: Բացառություն է կազմում Վրաստանը, որտեղ, 2006 թվականի վերացվել է գործազրկության նպաստի ինստիտուտը՝ զբաղվածության ակտիվ քաղաքականության անցնելու պատճառաբանությամբ: Նշվածի կապակցությամբ, սակայն Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն 2013 թվականի Եզրակացությունում հստակ նշել է, որ Վրաստանում սոցիալական պաշտպանության համակարգը չի ապահովում գործազրկության վտանգից պաշտպանություն, ուստի հակասում է Խարտիայի պահանջներին:⁴⁰ Մեկ այլ դեպքում Բուլղարիայի կողմից Խարտիայի կիրառման վերաբերյալ 2009 թվականի Եզրակացություններում Կոմիտեն նշել է, որ սոցիալական ապահովության նպաստները, այդ թվում նաև գործազրկության նպաստն անձի եկամուտը փոխարինող դրամական միջոցներ են:⁴¹

Միաժամանակ, Աշխատանքի միջազգային կազմակերպության փաստաթղթերում հստակ արձանագրվում է, որ սոցիալական ապահովության համակարգը (social protection floors), այդ թվում՝ գործազրկության նպաստը ապրուստի համար անհրաժեշտ հիմնական եկամտային երաշխիքներ են⁴² առնվազն պետության կողմից սահմանված նվազագույն շեմի շրջանակներում: Միաժամանակ, «Գործազրկության նպաստի համակարգերի վերաբերյալ» ԱՄԿ 2000 թվականի առաջարկություններում նույնպես հստակ շեշտվում է, որ պետությունում գործազրկության նպաստի չափը պետք է բավարարի ապրուստի համար անհրաժեշտ նվազագույն ծախսերը:⁴³

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հատկանշական է համարել նաև Հայաստանի կողմից Խարտիայի կիրառման վերաբերյալ կոմիտեի 2012 թվականի Եզրակացությունը՝ 2011 թվականի գեկույցի շրջանակներում: Մասնավորապես, կոմիտեն եզրակացրել է, որ Հայաստանում, որպես զբաղվածության պետական կարգավորման բարեփոխումների առանցքային նպատակադրում, անհրաժեշտ է էապես բարելավել ակտիվ ծրագրերում ներգրավված շահառուների, ինչպես նաև այդ ծրագրերին հատկացվող պետական միջոցների ցուցանիշները:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ակտիվ ծրագրերում ներգրավված շահառուների, ինչպես նաև այդ ծրագրերին հատկացվող պետական միջոցների ցուցանիշների բարելավումը երբևիցե չի կարող փոխարինել գործազրկության դեպքում անձին տրամադրվող սոցիալական ապահովության միջոցներին, քանի որ Կոմիտեն մեկնաբանելով ՀՀ-ի համար պարտադիր իրավաբանական ուժ ունեցող Խարտիայի իրավական բովանդակությունը, գործազրկության նպաստի տրամադրումը դիտարկել է

⁴⁰ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/conclusions/State/Georgia2013_en.pdf

⁴¹ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/conclusions/State/Bulgaria2009_en.pdf

⁴² [http://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:R202, http://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C10](http://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:R202,http://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO::P12100_ILO_CODE:C10)

⁴³ <http://www.legco.gov.hk/yr99-00/english/sec/library/e14.pdf>

որպես Խարտիայով ՀՀ ստանձնած պարտավորություն:⁴⁴

Հաշվի առնելով վերոգրյալ վերլուծությունն՝ անհրաժեշտ է՝

- 1. վերհանել գործազրկության իրական մակարդակը,*
- 2. բարձրացնել Ջրադրվածության պետական գործակալության գրասենյակների գործունեության, զբաղվածության խթանման պետական ծրագրերի արդյունավետությունն ու հասցեականությունը,*
- 3. ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան վերականգնել պետության կողմից գործազուրկ անձանց տրամադրվող գործազրկության նպաստի ինստիտուտը:*

⁴⁴ Տվյալ զեկույցում արձանագրվել է, որ Խարտիայի իմաստով սոցիալական ապահովության իրավունքը ենթադրում է պետության կողմից այնպիսի սոցիալական ապահովության համակարգի ներդրում, որը կպաշտպանի ավանդական ռիսկերից՝ հետևաբար, նախատեսելով նաև անձանց գործազրկության նպաստի տրամադրումը,

http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը: Ավելին, Սահմանադրության 38-րդ հոդվածը, որպես անձի հիմնական իրավունք սահմանում է կրթության իրավունքը: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո կրթության իրավունքը վերահաստատվել է մի շարք միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիան (1960թ.)⁴⁵, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիան⁴⁶ (1965թ.), «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագիրը⁴⁷ (1966թ.), «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան⁴⁸ (1979թ.), «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան (1989թ.)⁴⁹, «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիան⁵⁰ (1990թ.) և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան⁵¹ (2006թ.): Կրթության իրավունքը սահմանվել է նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության մի շարք կոնվենցիաներում, ինչպես նաև միջազգային հումանիտար իրավունքի շրջանակներում և բազմաթիվ տարածաշրջանային պայմանագրերում:

Նշված պայմանագրերի մի մասն ընդհանրական են սահմանում կրթության իրավունքը, իսկ մյուսներն անդրադառնում են հատուկ խմբերի: Մասնավորապես՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիան և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագիրը սահմանում են կրթության իրավունքի համընդհանուր իրականացումը, իսկ թվարկված այլ միջազգային փաստաթղթերը պաշտպանում են խոցելի խմբերի (երեխաների, կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների և միգրանտների) իրավունքը կամ հատուկ համատեքստ ունեն, ինչպիսիք կարող է լինել, օրինակ՝ կրթությունը զինված հակամարտության ժամանակ կամ կրթությունը և երեխաների աշխատանքը:

1. Կրթության իրավունքի սահմանափակումը կրթությունից դուրս մնալու հետևանքով

⁴⁵ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 5-ից:

⁴⁶ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1993թ. հունիսի 23-ից:

⁴⁷ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 13-ից:

⁴⁸ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հոկտեմբերի 13-ից:

⁴⁹ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 22-ից:

⁵⁰ Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2013 թվականի սեպտեմբերի 26-ից:

⁵¹ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերի 22-ին:

Տարբեր տարիների ընթացքում մի շարք միջազգային և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների կողմից բարձրաձայնվում է կրթությունից դուրս մնալու հետևանքով երեխաների կրթության իրավունքի խախտման խնդիրը: Հարցը կրում է համակարգային բնույթ, որի պատճառներն են թե՛ օրենսդրական թերի կարգավորումները, թե՛ գործնական խնդիրները:

Կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ հստակ և միասնական վիճակագրական տվյալներ առկա չեն: Մասնավորապես՝ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2016 թվականի զեկույցի համաձայն՝ 2015-2016 ուսումնական տարվա սկզբին Հայաստանում հանրակրթությունից դուրս է մնացել 302 երեխա:⁵² Հատկանշական է, որ միայն Լոռու մարզում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը դեռևս 2014-2015 թվականներին փորձնական ծրագրի իրականացման արդյունքում հայտնաբերել է կրթությունից դուրս մնացած 228 երեխա:⁵³ Ավելին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից կատարված աշխատող երեխաներին վերաբերող հետազոտությամբ⁵⁴ նշվում է կրթությունից դուրս մնացած 8 հազարից ավելի երեխաների մասին:

Երեխայի կրթությունից դուրս մնալու պատճառները տարբեր են՝ վատ սոցիալական պայմանները, երեխայի հաշմանդամությունը, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ոչ պատշաճ արձագանքը, երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելը, իսկ առանձին էթնիկ խմբերի դեպքում՝ անգամ երեխաների վաղ ամուսնությունը:

Ընտանիքների սոցիալական վատ վիճակով պայմանավորված արձանագրվել է երեխայի կրթությունից դուրս մնալու 191 դեպք, իսկ 87 դեպքում ծնողները երեխային թույլ չեն տվել հաճախել դպրոց:⁵⁵ Ավելին, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից անցկացված «Մանկական աղքատությունը Հայաստանում. Ազգային բազմակի և համընկնող խոցելիություն» 2016 թվականի արդյունքները ցույց են տալիս, որ 3-5 տարեկան երեխաների շրջանում սոցիալական անապահովությունն աճում է մինչև 53 տոկոս, քանի որ Հայաստանում 3-5 տարեկան երեխաների կեսից ավելին չի օգտվում վաղ կրթության որևէ ձևից: Նշված վերլուծության 3-րդ խումբը 15-17 տարեկան դեռահասներն են, որոնց 12 տոկոսը դուրս է մնում կրթությունից:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2016 թվականի զեկույցի համաձայն՝ 2015-2016 ուսումնական տարվա սկզբին հաշմանդամություն ունենալու պատճառով Հայաստանում հանրակրթությունից դուրս է մնացել 16 երեխա:⁵⁶ 2014-2015 թվականների ուսումնական տարվա սկզբին 244 երեխայից 12-ի հանրակրթությունից դուրս մնալու

⁵² http://www.armstat.am/file/article/poverty_2016a_4.pdf

⁵³ <http://www.lragir.am/index/arm/0/society/view/145416>

⁵⁴ http://armstat.am/file/article/national_child_labour_survey_in_armenia_report_-_web_version.pdf

⁵⁵ http://www.armstat.am/file/article/poverty_2016a_4.pdf

⁵⁶ http://www.armstat.am/file/article/poverty_2016a_4.pdf

պատճառն եղել է հաշմանդամություն ունենալը: Սակայն ոլորտի ներկայացուցիչների պնդմամբ՝ կրթությունից դուրս մնացած հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը հրապարակվածից ավելին է, հատկապես՝ մարզերում ու գյուղական համայնքներում:⁵⁷

Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ 2015-2016 ուսումնական տարում դպրոցից հեռացած (ուսումն անավարտ թողած) սովորողների ընդհանուր թվաքանակը կազմում է 260 երեխա, որից 93-ն աղջիկ է: Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ երեխաների կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառը սոցիալական վատ պայմաններն են (174 աշակերտ), ապա՝ ծնողների չթույլատրելու հանգամանքը (61 աշակերտ):

Դպրոցից դուրս մնացած երեխաների կամ պարտադիր կրթություն չստացողների թվի վերաբերյալ հավաստի և իրական տվյալների ձեռքբերման առումով դժվարություն է առաջացնում նախ այն, որ օրենսդրությամբ տրված չէ «կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացության սահմանումը: Բացի այդ, խնդիրն այն է, որ Հայաստանում դպրոցից դուրս մնացած երեխաներին հետևելու և ուղղորդելու գործող համակարգ գոյություն չունի:⁵⁸

Ավելին, հաճախ դպրոցում հաշվառված երեխաների թիվը կարող է հաճախող երեխաների թվից ավել լինել: Խնդրի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում:⁵⁹ Պատճառը շարունակում է մնալ այն, որ հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով, ուստի ուսուցիչները հաճախ աշակերտների բացակայություններն օբյեկտիվորեն չեն գրանցում:⁶⁰ Նույն խնդիրն առկա է նաև ներառական և հատուկ դպրոցներում, հատկապես հաշվի առնելով այն, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցը ստանում է 3-4 անգամ ավել ֆինանսավորում, քան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների համար:⁶¹

Արդյունքում վտանգվում է երեխայի՝ կրթություն ստանալու իրավունքի իրացումը: Խնդրի լուծման կապակցությամբ իրավասու մարմինների կողմից իրականացվել են որոշ միջոցառումներ:

Մասնավորապես՝ դեռևս 2015 թվականի հուլիսի 31-ին ՀՀ կառավարություն և ՄԱԿ-ի միջև համաձայնեցված Զարգացման աջակցության 2016-2020 թվականների ծրագրով անդրադարձ է կատարվել նշված խնդրին և նախատեսվել է ներդնել

⁵⁷ <http://disabilityinfo.am/12650/>

⁵⁸ <http://www.unicef.am/am/articles/education>

⁵⁹ ՄԱԿ-ի՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի՝ Հայաստանի 5-6-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2016 թվականի նոյեմբերի 18, կետ 22 և 36, <http://www.refworld.org/pdfid/583863b34.pdf>

⁶⁰ Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան, <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>

⁶¹ Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան, <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>

միջճյուղային այնպիսի մեխանիզմներ և ռազմավարություններ, որոնք հնարավորություն կտան հայտնաբերել և աջակցել դպրոց չհաճախող և ռիսկային խմբում ընդգրկված երեխաներին⁶²: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ համաձայն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և ՀՀ կրթության և գիտության նախարարության միջև ստորագրված համաձայնագրի՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը իրականացնում է «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում» կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման ենթահամակարգի էլեկտրոնային ծրագրի ստեղծման և Լոռու մարզում դրա փորձարկման աշխատանքներ: Նախատեսվում է կրթությունից դուրս մնացած երեխաների ծրագրային հաշվառումը Լոռու մարզում սկսել 2017 թվականի ապրիլ ամսից:

Այնուամենայնիվ, վերոնշյալ տվյալները և վերլուծությունը վկայում են այն մասին, որ առ այսօր Հայաստանում կրթությունից դուրս մնացած երեխաներին հետևելու և ուղղորդելու գործող համակարգ գոյություն չունի:

Հաշվի առնելով վերագրյալն՝ անհրաժեշտ է՝

- 1. ամրագրել «կրթությունից դուրս մնացած երեխա» հասկացությունը,*
- 2. ստեղծել և ներդնել կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման մեխանիզմ,*
- 3. վարել միասնական և սեզրեզացված վիճակագրություն:*

2. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ հանրակրթական ուսումնական հաստատություններում անօրինական դրամահավաքի, ինչպես նաև տնօրենների կողմից իրենց իրավասությունների չարաշահման հետևանքով

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում բարձրաձայնվել է մի շարք հանրակրթական ուսումնական հաստատություններում անօրինականությունների դեպքերի, մասնավորապես՝ անօրինական դրամահավաքի, տնօրենների կողմից իրենց իրավասությունների չարաշահման դեպքերի վերաբերյալ, ինչի կապակցությամբ 2016 թվականին ևս արձանագրվել են դեպքեր:

Այսպես, 2016 թվականին մամուլի հրապարակումներով ահազանգվել է անօրինական դրամահավաքի վերաբերյալ: Ըստ առկա տեղեկությունների՝ դպրոցում գումար է հավաքվել, օրինակ, դպրոցի արտաքին տեսքի ձևավորման համար:⁶³ 2016 թվականին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը նույնպես ահազանգել է Երևան քաղաքի դպրոցներում իրականացվող անօրինական դրամահավաքի վերաբերյալ: Ըստ կազմակերպության

⁶² <http://www.un.am/up/file/Armenia%20-%20UNDAF%202016-2020%20-%20ARM.pdf>

⁶³ <http://hetq.am/arm/news/73231/alaverdu-tiv-12-dprocum-dramahavaq-e-irakanacvum-tsoxkomiteneri-nakhagahneri-mijocov.html/>, http://asekose.am/hy_ARM/news/8/213693-past-eq-ouzoum--or-dprocneroum-dramahavaq-en-irakanacnoum-xndrem.html, http://www.asparez.am/dramahavaq_shiraki_dprocnerum-hy/#.WI7q8FN97Gg, <http://www.civilnet.am/news/2016/05/24/illegal-fundraising-corruption-school/293650>

ստացած տեղեկությունների՝ դրամահավաքը կազմակերպվել է գումարը տնօրենին փոխանցելու, ինչպես նաև քննական առարկաների վերաբերյալ նույն դպրոցի ուսուցիչների մոտ նախապատրաստվելու նպատակով:⁶⁴ Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ նման դեպքերը կանխելու և բացառելու նպատակով շրջաբերական նամակ է ուղարկվել ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ ուսումնական հաստատություններին, Երևանի քաղաքապետարան և մարզպետարաններ:

Համանման դեպքերի վերաբերյալ ահազանգեր են ստացվել նաև մի շարք մարզային դպրոցներից: Մասնավորապես՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանում 2016 թվականին ստացվել է 6 բողոք դպրոցների տնօրենների գործունեության վերաբերյալ, որոնցից մեկը հիմնավորվել է և դպրոցի տնօրենի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ: ՀՀ Արմավիրի մարզում 2016 թվականի ընթացքում մարզային ենթակայությամբ գործող 9 դպրոցի վերաբերյալ ստացված բողոքներից 2-ը հիմնավորվել են, որոնց արդյունքում ուսուցչի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ: ՀՀ Շիրակի մարզպետարանը 2016 թվականի ընթացքում դիմում-բողոքներ է ստացել մարզային ենթակայության մի քանի դպրոցների տնօրենների կողմից թույլ տրված անօրինական գործողությունների վերաբերյալ, որի արդյունքում մարզպետի համապատասխան որոշումներով որոշ դպրոցների տնօրեններ ենթարկվել են վարչական պատասխանատվության: Ըստ Երևանի քաղաքապետարանի և մի շարք մարզպետարանների տվյալների՝ վերջիններս ևս ստացել են նման դեպքերի վերաբերյալ բողոքներ, որոնք, սակայն չեն հիմնավորվել: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների կամ այլ աշխատակիցների կողմից թույլ տրված ոչ օրինական գործողությունների վերաբերյալ 2016 թվականին ՀՀ քննչական կոմիտեում ստացվել է 6 հաղորդում, որոնց հիմա վրա հարուցվել են քրեական գործեր:

Համանման դեպքերը կանխելու նպատակով 2016 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարը դիմել է մարզպետներին և Երևանի քաղաքապետին՝ առաջարկելով ուսումնական տարվա մեկնարկին ընդառաջ համապատասխան քայլեր ձեռնարկել՝ հանրային դժգոհություն հարուցող երևույթները դպրոցներում բացառելու նպատակով:⁶⁵ Ավելին, Երևանի քաղաքապետը ևս քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության և հանրակրթության վարչություններին, ինչպես նաև 12 վարչական շրջանների ղեկավարներին հանձնարարել է հատուկ խստացված հսկողություն սահմանել՝ քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում և մանկապարտեզներում Ամանորի առթիվ դրամահավաքության հնարավոր դեպքերը բացառելու նպատակով:⁶⁶

⁶⁴ <http://transparency.am/files/news/1463746112-0-238886.pdf>

⁶⁵ <http://yerkirmedia.am/social/kgm-dramahavaq-mkrtchyan/>

⁶⁶ <http://iravaban.net/146438.html>

Զնայած վերոնշյալ ձեռնարկված քայլերին՝ այնուամենայնիվ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրին արմատական լուծում տրված չէ, ինչի արդյունքում վտանգվում է երեխայի՝ կրթություն ստանալու իրավունքը: Նշված խնդիրներն ուղղակիորեն անդրադառնում են կրթության իրավունքի իրականացման վրա՝ խոչընդոտներ ստեղծելով վերջինիս արդյունավետ իրացման համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. *մանրամասն ուսումնասիրել նման դեպքերի առաջացման հիմքերը և պատճառները,*
2. *ուժեղացնել դպրոցներում անօրինականության դեպքերի հայտնաբերման և կանխարգելման մեխանիզմները:*

3. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ կապված հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ

Հանրապետության որոշ հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա շենքային և գույքային անբավարար պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ կապված մի շարք խնդիրների առկայության արդյունքում խախտվում է երեխաների կրթության իրավունքը: Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի տարեկան զեկույցներում:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային անբավարար պայմանների մասին 2016 թվականին բարձրաձայնել են Սյունիքի մարզից Պաշտպանի աշխատակազմ այցելած մի խումբ աշակերտներ: Ըստ տրամադրած տվյալների՝ դպրոցի տանիքից եղանակային պայմաններով պայմանավորված ջուր է հոսում դասասենյակ, իսկ որոշ դպրոցներում շենքի վթարայնության աստիճանով պայմանավորված վտանգավոր է դասապրոցեսի անցկացումը: Տեղեկություններ են տրամադրվել նաև դպրոցների սանհանգույցների անբավարար վիճակի մասին:

Դպրոցներում շենքային անբարեկարգ պայմանների մասին անդրադարձ է կատարվել նաև մամուլում տեղ գտած մի շարք հրապարակումներում: Այսպես, Արագածոտնի մարզի Վարդենիս գյուղի դպրոցում ուսուցիչներն ու աշակերտները դասադուլ էին հայտարարել՝ չցանկանալով դասապրոցեսն անցկացնել 4-րդ կարգի վթարային շենքում:⁶⁷ Նման խնդիր է առաջացել նաև Արմավիրի մարզի Պտղունք գյուղի դպրոցում,⁶⁸ իսկ Շիրակի մարզի Քարաբերդ համայնքի միջնակարգ դպրոցում չկան դասապրոցեսն անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններ:⁶⁹

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տեղեկությունների՝ ընդհանուր առմամբ մարզային հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմաններն անբավարար են դասընթացի

⁶⁷ <http://hetq.am/arm/news/71160/dasadul-vardenis-gyuxi-vtarayin-dprocum.html>

⁶⁸ <https://news.am/arm/news/348901.html>

⁶⁹ http://www.asparez.am/news-hy/qaraberd-hamaynq-dproc_hy/

կազմակերպման համար: ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030թթ. ծրագիրը հաստատելու մասին» N 757-Ն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմվել է սեյսմիկ անվտանգության տեսակետից խոցելի ուսումնական հաստատությունների ցանկ, որտեղ ընդգրկված են 423 ուսումնական հաստատություն:

Խնդրի լուծման կապակցությամբ վարկային ծրագրերի շրջանակներում ուսումնասիրված և ընտրված անհետաձգելի հիմնանորոգման կարիք ունեցող թվով 20 ավագ դպրոցից 5-ում 2016 թվականին սկսվել են հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև պատրաստվել են թվով 12 ավագ դպրոցի շենքերի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթեր: Պետբյուջեի միջոցներով հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել 2 ավագ դպրոցում, 1 վարժարանում, 1 ուսումնարանում և 1 քոլեջում:⁷⁰

Տրամադրած տեղեկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձեռնարկված քայլերը չեն կարող բավարար լինել, քանի որ որոշ մարզերում ուսումնական հաստատությունների ճնշող մեծամասնությունը ենթակա է վերանորոգման, սակայն 2016 թվականի ընթացքում իրականացվել են վերանորոգման եզակի աշխատանքներ (օրինակ՝ ըստ ՀՀ Տավուշի մարզպետարանի տվյալների՝ Տավուշի մարզի նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների մոտ 90 տոկոսի շենքային պայմանները ենթակա է բարելավման, սակայն 2016 թվականի ընթացքում վերանորոգվել է միայն Թեղուտի միջնակարգ դպրոցը: ՀՀ Վայոց ձորի մարզում 2016 թվականի ընթացքում դպրոցների հիմնանորոգում և տարածքների բարեկարգում չի իրականացվել, սակայն հիմնանորոգման ենթակա են 12 հանրակրթական ուսումնական հաստատություն, իսկ Սյունիքի մարզի վերանորոգման ենթակա հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններից 11-ը ենթակա են վերանորոգման: Ավելին, Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թվով 58 դպրոցի շենքային պայմաններ ենթակա են բարելավման, սակայն 2016 թվականին միայն 3. Լեփսիուսի անվան թիվ 88 դպրոցն է հիմնանորոգվել):

Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում բարձրացվել է նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցման խնդիրը, որի առկայության մասին 2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ևս ստացել է ահազանգեր: Մասնավորապես՝ Սյունիքի մարզից մի խումբ աշակերտներ Պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել են, որ անկախ բնակլիմայական պայմաններից իրենց դպրոցներում ջեռուցումը միացվում է նոյեմբերի 1-ից, ինչի պատճառով դպրոցում չի ապահովվել անհրաժեշտ ջերմային ռեժիմ, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում դասապրոցեսի և աշակերտների առողջության վրա:

Խնդիրն այն է, որ ընդունված պրակտիկա է դպրոցը ջեռուցել սկսած նոյեմբերի 1-

⁷⁰ <http://edu.am/index.php/am/news/view/6420>

ից, ինչը սակայն օրենսդրությամբ պարտադիր պահանջ չէ: Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.III.4.2. սանիտարական կանոնները հաստատելու մասին» N 82 հրամանի համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցումն իրականացնելիս, ելնելով կլիմայական պայմաններից, դասասենյակում անհրաժեշտ է ապահովել նվազագույնը +17°C և առավելագույնը +20°C ջերմաստիճան: Նշված հրամանով որևէ ամրագրում (այդ թվում՝ սահմանափակում) առկա չէ հանրակրթական ուսումնական հաստատությունը ջեռուցելու ժամանակի վերաբերյալ: Չնայած նշված օրենսդրական կարգավորմանը՝ աշակերտների կողմից մատնանշված խնդիրները վկայում են գործնական խնդիրների մասին:

Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ ուսումնական հաստատություններում կոմունալ վատ պայմանների արդյունքում դասապրոցեսի խաթարման դեպքերը եզակի են: Նախարարության կողմից քննարկվել և կարգավորվել է դասապրոցեսի խաթարման մեկ դեպք, երկու դեպք է գրանցվել հանրակրթական դպրոցներում ջեռուցման ժամանակավոր դժվարությունների վերաբերյալ: Իսկ ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալների՝ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում հանրակրթական ուսումնական հաստատություններում անհրաժեշտ ջերմային ռեժիմ չապահովելու վերաբերյալ բողոքները ստացվել են էլեկտրական սալիկներով ջեռուցվող դպրոցներում սովորող երեխաների մի շարք ծնողներից: ՀՀ Գեղարքունիքի մարզում 2016 թվականի ընթացքում 7 ուսումնական հաստատության ջեռուցման վերաբերյալ եղել են բողոքներ:

Խնդրի կանխարգելման ուղղությամբ Կրթության ազգային ինստիտուտի կողմից պարբերաբար, այդ թվում՝ 2016 թվականի ընթացքում, իրականացվում են սովորողների առողջության պահպանմանն ուղղված հանրակրթական դպրոցների տնօրենների տեղակալների, ինչպես նաև մանկավարժական համակազմի վերապատրաստման դասընթացներ, որոնց նյութերում ընդգրկված են ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանով հաստատված «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման սանիտարական կանոններ N2.III.3-2»-ի վերաբերյալ թեմաներ: Սակայն հաշվի առնելով աշակերտների կողմից բարձրաձայնված խնդիրները՝ անհրաժեշտ է նշել, որ ձեռնարկված քայլերը բավարար կերպով չեն ապահովում խնդրի լուծումը:

Այսպիսով, դպրոցների անբարեկարգ շենքային պայմանները, ջեռուցման հետ կապված խնդիրները անհարմարություններ են առաջացնում դասապրոցեսի պատշաճ կազմակերպման համար, ինչից կարող է էապես տուժել ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրավունքի իրացումը: Հասկանալի է, որ ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեն նույնպես ընդգծել է խնդրի առկայությունը (հատուկ նշելով թե՛ շենքային և գույքային անբարեկարգ պայմանների, թե՛ ջեռուցման հետ կապված խնդիրները) ու հորդորել պետությանը ներդրումներ կատարել

դպրոցների ենթակառուցվածքների բարելավման նպատակով:⁷¹ Նման առաջարկ է արել նաև ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ ընդգծելով ուսումնական հաստատությունների բարելավման համար հատկացված ֆինանսական միջոցների առավել արդյունավետ կերպով օգտագործման անհրաժեշտությունը:⁷²

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- 1. ավելացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների բարելավման համար հատկացվող ֆինանսական միջոցները,*
- 2. ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարումը:*

4. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ կապված հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության ապահովման հետ

Ըստ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված տեղեկությունների՝ հանրապետության մի շարք հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա են սննդի անվտանգության հետ կապված խնդիրներ, որը կարող է վնասել երեխայի առողջության պահպանման և կրթության իրավունքի իրացմանը: Սույն խնդրի մասին բարձրաձայնվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում: Խնդրին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեն:⁷³

Խնդիրն այն է, որ մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների սննդի կետերում վաճառվում է օրենսդրությամբ արգելված սնունդ, օրինակ՝ գազավորված ըմպելիքներ, չիպսեր, ապխտած կամ կիսաապխտած մսամթերք, սուրճ և այլն: Մինչդեռ, տվյալ սննդատեսակների վաճառքն ուսումնական հաստատություններում արգելվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-

⁷¹ ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14, <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

⁷² ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 2-3-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmIbEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkguQgxwB0Dv54x9D%2FtTVTKqVIVcgKieaWt6S0CJmSRHd2YbUGKIROrDzjo9z47iNYCZgmYgy27A6%2F5Jw0ZBjn01vpNcA>

⁷³ ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14, <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 32-Ն հրամանի 26-րդ կետով: Ավելին, մի շարք սննդատեսակներ չունեն արտադրության և պիտանիության ժամկետների, ինչպես նաև բաղադրության վերաբերյալ նշումներ, ինչն ուղղակիորեն չի համապատասխանում «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին:

Վերոնշյալ խնդիրներն արձանագրվել են նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից: Օրինակ՝ ՀՀ Կոտայքի մարզում սննդի վաճառքի կազմակերպման ընթացքում որոշ դպրոցներում թույլ են տրվել խախտումներ, ինչի արդյունքում երկու դպրոցի տնօրենների նկատմամբ, որպես կարգապահական տույժ, կիրառվել է նկատողություն:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի 48-րդ կետի՝ ուսումնական հաստատության ղեկավարը սննդի կազմակերպման և դրանում սովորողներին լիարժեք ընդգրկելու պատասխանատու անձն է: Ավելին, ըստ նույն հրամանի՝ ուսումնական հաստատությունում սովորողների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաստատության ղեկավարի կողմից ապահովվում են՝ սանիտարական կանոնների առկայությունը, սանիտարական կանոնների կատարման ապահովումը և այլն:

ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերը սահմանելու, «ՀՀ պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2179-Ն որոշմամբ հաստատված պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ հաստատության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը և հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ իրավասությունների, մարզպետը վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը:

Ըստ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հանրակրթության բնագավառում տարածքային կառավարման մարմինը և Երևանի քաղաքապետը՝ ի թիվս այլ իրավասությունների, վերահսկում է ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած

նորմատիվ ակտերի կատարումը:

Ուստի, վերոնշյալ իրավական ակտերով սահմանված իրավասու պետական մարմինները պետք է ապահովեն հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպումը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջների պահպանմամբ:

5. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ նախադպրոցական կրթական հաստատություններում

Առ այսօր լուծում չեն ստացել որոշ վայրերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայության կամ առկայության դեպքում դրանց գերծանրաբեռնվածության հետ կապված խնդիրները: Արդյունքում երեխաները զրկվում են նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից:

Համաձայն «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական տարիքի երեխաներն ունեն նախադպրոցական կրթություն ստանալու հավասար իրավունքներ: Մինչդեռ, ըստ վիճակագրական տվյալների՝ դեռևս 2015 թվականին հանրապետությունում նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածությունը (0-5 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 28.6 տոկոս, քաղաքային բնակավայրերում՝ 35.7 տոկոս, իսկ գյուղականում՝ 16.6 տոկոս: 2015 թվականին հանրապետությունում նախադպրոցական հաստատություններում 3-5 տարեկանների ընդգրկվածությունը կազմել է 51.4 տոկոս:⁷⁴ Որպես օրինակ կարելի է նշել ՀՀ Շիրակի մարզի Փոքր Մանթաշի մանկապարտեզը, որի գործունեությունը դադարեցվել է 2015 թվականի դեկտեմբերից, ինչպես նաև Գետք համայնքը, որը ևս մանկապարտեզ չունի:⁷⁵

Թեև ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ կառավարության 2015 թվականի N 111-Ն որոշմամբ սահմանված նախադպրոցական կրթության հասանելիության ընդլայնման նպատակով «Նախադպրոցական կրթության զարգացման 2016-2025 թվականների ռազմավարական ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն պետք է ներկայացվեր 2015 թվականին, սակայն այն դեռևս չի ընդունվել:

Խնդրին լուծում տալու կապակցությամբ ձեռնարկվել են որոշ միջոցառումներ: «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել է «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ծրագիրը: «Կրթության բարելավում» վարկային նոր ծրագրի

⁷⁴ http://www.armstat.am/file/article/poverty_2016a_4.pdf

⁷⁵ <http://www.a1plus.am/1442344.html>

շրջանակներում ՀՀ մարզերում հիմնվել է 30 նախակրթարան՝ շուրջ 600 երեխայի ընդգրկմամբ:⁷⁶ Կրթության զարգացման պետական նոր 2016-2025 թվականների ծրագրում նախադպրոցական կրթությունը բոլոր երեխաներին հասանելի լինելու հարցը ևս ներառված է: ՀՀ կրթության և գիտության նախարարության տեղեկությունների համաձայն՝ նախադպրոցական կրթության մեջ ընդգրկված են 5214 երեխաներ: 2015-2016 ուսումնական տարում ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատությունների ավագ խմբերում (5-6 տարեկաններ) սաների ընդգրկվածության թիվը կազմել է 31345, ինչը հանրապետությունում բնակվող 5-6 տարեկանների ընդհանուր թվի՝ 44313-ի՝ 71 տոկոսն է: 2015 թվականի նոյեմբերի 1-ից գործարկվել է քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում երեխաների հերթագրման և հաճախելիության հաշվառման էլեկտրոնային համակարգ: Ավելին, ըստ քաղաքապետարանի՝ «Մանկապարտեզ-հերթագրում» էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումից հետո կանոնակարգվել է երեխաների հերթագրման և ընդունելության գործընթացը, ինչը վերահսկվում է համապատասխան ստորաբաժանումների կողմից:

Մեկ այլ խնդիր է արձանագրվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին 2016 թվականին հասցեագրված դիմումների քննության արդյունքում: Մասնավորապես՝ Երևան քաղաքի նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատություններից մեկում ավարտական հանդեսից հետո երեխային արգելել են հաճախել հաստատություն՝ պատճառաբանելով, որ երեխան ավարտական հանդեսից հետո մանկապարտեզ հաճախելու իրավունք չունի: Քաղաքապետարանի պարզաբանումների արդյունքում պարզվել է նաև, որ մանկապարտեզի ավագ խմբերի երեխաներն ավարտական հանդեսներից հետո հրաժեշտ են տալիս մանկապարտեզին և համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված «Նախադպրոցական կրթական համալիր ծրագրի»՝ ուսումնական տարին ավարտելուց հետո երեխան իրավունք ունի դուրս գրվել նախադպրոցական ուսումնական հաստատությունից և պատրաստվել դպրոցին: Քաղաքապետարանի ներկայացրած պարզաբանումներից ակնհայտ է, որ երեխան *իրավունք ունի դուրս գրվել* նախադպրոցական ուսումնական հաստատությունից, սակայն պարզ չէ, թե ինչ իրավական հիմունքներով է արգելվում իրականացնել երեխայի կրթության իրավունքը այն դեպքում, երբ երեխայի ծնողները ցանկանում են շարունակել իրենց երեխայի նախադպրոցական կրթությունը մինչ երեխայի՝ առաջին դասարան հաճախելը:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է՝

- 1. ավելացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը,*
- 2. բացառել ավարտական հանդեսից հետո երեխային՝ նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատությունից հաճախելու իրավունքը սահմանափակելու կամ արգելելու պրակտիկան:*

⁷⁶ <http://edu.am/index.php/am/news/view/6420>

6. Կրթության իրավունքի իրացման սահմանափակումներ կապված ԲՈՒՀ-երում ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության խնդրի հետ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գեկույցներում բարձրաձայնվել է ԲՈՒՀ-երում ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության խնդիրը: Տարիների ընթացքում որոշ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդներ դրանց անդամների գերակշռող մասի՝ որևէ քաղաքական կուսակցության անդամակցելու հանգամանքով պայմանավորված, ձեռք են բերել քաղաքական ուղղվածություն և խնդիրներ են ստեղծել ԲՈՒՀ-երում ակադեմիական ազատության պահպանմանը: Վերջիններս ուխորհրդով իրենց վերապահված լիազորությունները հաճախ օգտագործում են ԲՈՒՀ-ում կուսակցական քարոզչության, կուսակցական շահերի պաշտպանության նպատակով:

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասի՝ ուսանողական խորհուրդն ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին է: Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական խորհրդի կանոնադրությունը հաստատվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից (այն է՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 1999 թվականի «Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը վերապահելու մասին» N 719 որոշման), որի համաձայն՝ խորհրդի անդամներն ընտրվում են տվյալ ԲՈՒՀ-երի ուսանողների կողմից և ներկայացնում են ուսանողների շահերը:

ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, որին անդամակցում է նաև Հայաստանը, պարտավորեցնում է պետությանը բոլորի համար հավասարապես մատչելի կազմակերպել բարձրագույն կրթություն:⁷⁷ Մինևույն ժամանակ, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի համոզմամբ ուսումնական հաստատությունների համեմատ ԲՈՒՀ-ի դասախոսները և ուսանողներն ավելի խոցելի են քաղաքական և այլ ճնշումների նկատմամբ, որոնք կարող են սպառնալ իրենց գիտական և ակադեմիական ազատությանը, ինչն անհրաժեշտ է կրթության իրավունքի լիարժեք իրացման համար:⁷⁸ Ավելին, ԲՈՒՀ-ի ինքնավարության ապահովման և ազատ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով ԲՈՒՀ-երում ակադեմիական ազատության ապահովման պահանջը նախատեսվում է նաև կրթական համակարգի բարեփոխման Բոլոնյան գործընթացով, որին 2005 թվականից միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

«2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների գործունեության և երկրում

⁷⁷ ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր, 3-րդ հոդված, http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf

⁷⁸ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն N13, 1999, <http://www.refworld.org/docid/4538838c22.html>

մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» տարեկան զեկույցի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարության պարզաբանումների համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 46-րդ հոդվածը՝ առ այն, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություն ստեղծելու, որևէ կուսակցության անդամագրվելու իրավունք և ոչ ոքի չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության, նախարարությունն իրավասու չէ արգելել որևէ ուսանողի անդամագրվելու որևէ կուսակցության և զբաղվել կուսակցական գործունեությամբ ուսումնական գործընթացից հետո: Ըստ նախարարության՝ «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի շրջանակներում կքննարկվի նաև ուսանողական խորհուրդների ընտրությունների համակարգի բարելավման խնդիրը: Այնուամենայնիվ, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ԲՈՒՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրությունը հաստատվում է նախարարության կողմից: Ըստ այդմ՝ նախարարությունը, օրենսդրական համապատասխան փոփոխություններ նախաձեռնելով, կարող է ապահովել ուսխորհուրդների անկողմնակալ գործունեությունը: Բնականաբար, ուսանողին որևէ կուսակցության անդամագրվելու արգելք երբևէ չի կարող սահմանվել, այդուհանդերձ, անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռնարկել կանխելու ուսխորհուրդների՝ տարբեր կուսակցությունների կողմից քաղաքական նպատակներով օգտագործումը:

Հաշվի առնելով վերոնշյալն՝ անհրաժեշտ է նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ և այլ միջոցներ ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների գործունեության անկողմնակալության ապահովման և վերջիններիս անդամներին քաղաքական ազդեցությունից զերծ պահելու ուղղությամբ:

7. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը հանրակրթական ուսումնական հաստատություններում

Կրոնական և ազգային փոքրամասնությունների երեխաների հետ իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի ժամանակ ուսուցիչների կողմից, երբեմն պարտադրվում են ծիսական գործողություններ, օրինակ՝ աղոթք անել կամ խաչակնքվել, ինչը հակասում է որոշ անձանց կրոնական համոզմունքներին:⁷⁹ Նշված խնդրի կապակցությամբ դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն առաջարկել է Հայաստանին վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ արտացոլելով երեխաների կրոնի ազատությունը:⁸⁰ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը», սակայն այդ պահանջի շրջանցման համար հիմքեր են ստեղծվել նույն հոդվածի 8-րդ կետում՝ սահմանելով, որ կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ

⁷⁹http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Field_Study_Rights_of_Children_arm.pdf

⁸⁰http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en

օրենքով սահմանված դեպքերի, որից ելնելով՝ նման հարցերը կարգավորվում են
«Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու
հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով:⁸¹

⁸¹ <http://armhels.com/wp-content/uploads/2016/01/Ditord-2016-01Armenian.pdf>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սոցիալապես անապահով անձանց՝ մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու խոչընդոտների վերացման խնդիրը շարունակաբար բարձրաձայնվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում: Խնդիրն այն է, որ սոցիալապես անապահով անձանց համար առ այսօր ներդրված չէ մշակութային կյանքից օգտվելու համար նախատեսված զեղչային համակարգ: Մասնավորապես՝ առկա չեն զեղչեր թանգարանների, թատրոնների, մշակութային կոթողների և այլ վայրերի այցելության համար:

«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի⁸² 15-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուր մարդու՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը: Համաձայն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի թիվ 21⁸³ Ընդհանուր մեկնաբանության՝ մարդու իրավունքների անբաժանելի մասն են կազմում մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, ի թիվս այլ իրավունքների՝ վերջինս ևս համընդհանուր է, անբաժանելի և փոխկապակցված: Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի ամբողջական ընդունումն ու խթանումը կարևոր է մարդու արժանապատվության պահպանման և բազմազան ու բազմամշակութային աշխարհում անհատների ու համայնքների միջև դրական հասարակական փոխգործակցության համար:

Մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը սահմանված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (հոդված 27), որը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ համայնքի մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու իրավունքը: Միջազգային այլ փաստաթղթերը սահմանում են մշակութային կյանքին մասնակցության իրավունքի հավասարությունը,⁸⁴ սոցիալ և մշակութային կյանքի բոլոր ասպարեզներին մասնակցության իրավունքը,⁸⁵ մշակութային և ստեղծագործական կյանքին ամբողջական մասնակցության իրավունքը,⁸⁶ մշակութային կյանքի մատչելիության և մասնակցության իրավունքը,⁸⁷ այլ անձանց հետ հավասար պայմաններում մշակութային կյանքի մասնակցության իրավունքը⁸⁸ և

⁸² ՀՀ-ն միացել է 1993 թվականի հունիսի 9-ից:

⁸³ <http://www.refworld.org/docid/4ed35bae2.html>

⁸⁴ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիա, 5-րդ հոդված, (ե) կետ, 6-րդ ենթակետ:

⁸⁵ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 13-րդ հոդված, (գ) կետ:

⁸⁶ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, 31-րդ հոդված, 2-րդ մաս:

⁸⁷ «Բոլոր աշխատող միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիա, 43-րդ հոդված, 1-ին մաս, (է) կետ:

⁸⁸ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, 30-րդ հոդված, 1-ին մաս:

մի շարք այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են կարևոր դրույթներ անձի մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրականացման վերաբերյալ:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի թիվ 21 Ընդհանուր մեկնաբանությունում⁸⁹ մշակութային կյանքին մասնակցության իրավունքը բնութագրվում է որպես ազատություն, և այս իրավունքի ապահովման համար մասնակից պետություններից պահանջվում է նաև դրական քայլեր՝ ուղղված մասնակցության նախադրյալների, մշակութային կյանքի խթանմանը, ինչպես նաև մշակութային կոթողների մատչելիության և պահպանման ապահովմանը:

1. Մշակութային արժեքների հասանելիությունը հասարակության խոցելի խմբերի՝ սոցիալապես անապահով անձանց համար

Ընդհանուր մեկնաբանությունում հատուկ անդրադարձ է կատարվել հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց՝ կանանց, երեխաներին, միգրանտներին և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչներին, որոնց շարքում առանձնացվել են անապահով անձիք: Մասնավորապես՝ նշվում է, որ պետք է հաշվի առնել, որ աղքատությունը լրջորեն սահմանափակում է անձի՝ մշակութային կյանքի բոլոր ասպարեզներին հավասար պայմաններում մասնակցության, հասանելիության և նպաստման իրավունքը և, ամենակարևորը, խստորեն վնասում է ապագայի հանդեպ նրանց ունեցած իդեալը և նրանց կարողությունը՝ վայելել իրենց սեփական մշակույթը: Անապահով անձանց շրջանում ընդհանուր տարածված անգործության մի զգացում կա, որն իրենց ներկայիս կարգավիճակի հետևանք է:⁹⁰

Մշակույթը՝ որպես հասարակական արդյունք, պետք է համընդհանուր հասանելի լինի՝ հիմնված հավասարության, խտրականության բացառման և մասնակցության սկզբունքների վրա: Այդ իսկ պատճառով, իրականացնելով ՄԱԿ-ի՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուր մարդու՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, պետությունը պետք է հստակ մեխանիզմներ ձեռնարկի անապահով անձանց և նրանց համայնքների մշակութային կյանքին մասնակցության իրավունքի իրականացման և դրա բավարար պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:⁹¹

Հասարակության անապահով և խոցելի խմբերի համար վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգի ներդրումը ներառված է նաև ՀՀ կառավարության՝ 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշմամբ հաստատված

⁸⁹ <http://www.refworld.org/docid/4ed35bae2.html>

⁹⁰ Տե՛ս E/C.12/2001/10, կետ 5:

⁹¹ Տե՛ս E/C.12/2001/10, կետ 14:

մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում: ՀՀ մշակույթի նախարարության տրամադրած տեղեկությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ հասարակության անապահով խմբերի համար թանգարաններում և գրադարաններում շարունակում են տրամադրվող որոշակի արտոնություններն ուղղակիորեն նախատեսված չեն հենց սոցիալապես անապահով անձանց համար:

Մասնավորապես, ըստ ՀՀ մշակույթի նախարարության՝ սոցիալապես անապահով անձանց մշակութային կյանքին լիարժեք մասնակցելու հնարավորությունն ապահովելու համար 2016 թվականի ընթացքում ՀՀ մշակույթի նախարարության համակարգի թանգարաններում իրականացվել են դպրոցական տարիքի երեխաների, ուսանողների և կենսաթոշակառուների համար սահմանված մշտական այցելության տոմսի արժեքի արտոնությունից օգտվելու գեղչեր, իսկ բոլոր այցելուների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը սահմանված է անվճար այցելության օր: 2016 թվականին Թանգարանների միջազգային օրվա, «Թանգարանների գիշեր», «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների շրջանակներում թանգարանները բոլոր այցելուներին ընդունել են անվճար սկզբունքով:

Ավելին, Հայաստանի պատմության թանգարանում կրթական ծրագրերի շրջանակներում տարբեր թեմաներով դասախոսություններ են կարդացվել դպրոցականների, սահմանամերձ շրջանների երեխաների և Հայոց բանակի զինվորների համար: ՀՀ մշակույթի նախարարության համակարգի գրադարաններում հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով անձանց համար բոլոր տեսակի ծառայություններն անվճար են:

Վերոնշյալ միջոցառումներն, այսուամենայնիվ, չեն կարող ապահովել խնդրի համակարգային լուծում: Նախ, նշված քայլերն ուղղված չեն վերոհիշյալ խոցելի խմբի՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրացման ապահովմանը, ավելին, նշված արտոնությունները սահմանվել են 2009 թվականի հրամանով, ինչը, չհամարվելով բարձրացված խնդրի լուծում, իր 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշմամբ հաստատված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրերում ընդգրկել է նաև հասարակության անապահով և խոցելի խմբերի համար վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու գեղչերի համակարգի ներդրումը:

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N 113-Ն որոշումը չեղյալ ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի սեպտեմբերի 11-ի N 1298-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2007 թվականի

դեկտեմբերի 27-ի N 1581-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մշակույթի նախարարության կանոնադրության համաձայն՝ մշակույթի և տեղեկատվության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը մշակում ու իրականացնում է ՀՀ մշակույթի նախարարությունը: Ուստի, հանդիսանալով ոլորտում պատասխանատու մարմին, ՀՀ մշակույթի նախարարությունն իր իրավասության սահմաններում պետք է հստակ քայլեր ձեռնարկի անապահով անձանց մշակութային կյանքին մասնակցելու իրավունքների իրականացման ապահովման և պաշտպանության ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է սահմանել զեղչեր և այլ արտոնություններ սոցիալապես անապահով անձանց՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի լիարժեք իրացման ապահովման համար:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքին համապատասխան առողջության պահպանման իրավունքը: Ավելին, ըստ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը: «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը: Այնուհանդերձ ոլորտում առկա խնդիրները խոչընդոտում են առողջության պահպանման իրավունքի լիարժեք ապահովմանը:

1. Բուժաշխատողների կողմից պացիենտների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքեր

Չնայած օրենսդրորեն ամրագրված կարգավորումներին, այնուամենայնիվ, 2016 թվականի ընթացքում ևս արձանագրվել են բուժաշխատողների կողմից անձի նկատմամբ վերջինիս առողջական կամ այլ դրությամբ պայմանավորված (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, ինչպես նաև Հեպատիտ B և C-ով ապրող) խտրական և անհարգալից վերաբերմունքի դեպքեր:

Խնդիրն այն է, որ որոշ բուժաշխատողներ ապատեղեկացված են կամ ոչ լիարժեք տեղեկություններ ունեն որոշ հիվանդությունների տարածման ուղիների վերաբերյալ, ինչի պատճառով էլ խուսափում են պացիենտներին բուժօգնություն տրամադրելուց կամ դա կատարում են ոչ պատշաճ կերպով:⁹² Ավելին, դեռևս 2015 թվականին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» շրջանակներում այցեր են կատարվել ՀՀ մի շարք բժշկական հաստատություններ: Այցերի ընթացքում պարզ է դարձել, որ բուժանձնակազմում գրեթե բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու առանձնահատուկ հմտությունների տիրապետող մասնագետներ⁹³:

Խնդրին անդրադարձ է կատարվել նաև միջազգային կազմակերպությունների

⁹² <http://ngngo.net/am/hiv-5/>

⁹³ Մանրամասն տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց» բաժնում:

կողմից: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոմիտեն 2016 թվականին ներկայացրած Եզրափակիչ դիտարկումներում ընդգծել է, որ Հայաստանում շարունակվել են արձանագրվել բուժաշխատողների կողմից հաշմանդամություն ունեցող կանանց կամ ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ով ապրող կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքի դեպքեր:⁹⁴

Նման վերաբերմունքի առկայության արդյունքում մի շարք անձինք չեն ստացել պատշաճ բժշկական օգնություն և չեն կարողացել օգտվել բժշկական ծառայություններից: ՀՀ Սահմանադրության՝ «Առողջության պահպանման իրավունքն» ամրագրող 85-րդ հոդվածն ավելի մանրամասն կարգավորում է ստացել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Ավելին, նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝ արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

Վերոնշյալ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են ապահովել հոգատար և հարգալից վերաբերմունք պացիենտների նկատմամբ: Ըստ ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուժաշխատողներն իրենց շփումներում պացիենտների հետ արդեն իսկ պարտավոր են լինել նրբանկատ և պահպանեն էթիկական նորմեր, ապա որևէ լրացուցիչ կրթություն հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփումներում վարվելակերպի առանձնահատկություններ ուսուցանելու վերաբերյալ չի իրականացվում:

Վերոնշյալ դիրքորոշումը խնդրահարույց է միջազգային չափանիշների, ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների, ինչպես նաև խոցելի խմբերին պատկանող անձանց՝ առողջության պահպանման իրավունքի պաշտպանության տեսանկյունից⁹⁵:

Առողջության պահպանության իրավունքն ունի որոշակի բաղկացուցիչներ, որոնցից են հավասարությունը և առանց խտրականության բուժսպասարկում ստանալը: Ավելին, խտրականության արգելքը մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներից և բուժօգնության բարձր մակարդակի ապահովման հիմնարար բաղկացուցիչն է:⁹⁶

Նշված իրավունքների պաշտպանության երաշխիքներ են ամրագրված նաև մի

⁹⁴ 2016 թվական, նոյեմբերի 18 «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոմիտենցիայի՝ ՀՀ կողմից կատարման մասին հինգերորդ և վեցերորդ համատեղ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, կետ 26:

⁹⁵ Մանրամասն տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց» բաժնում:

⁹⁶ <http://www.ohchr.org/Documents/Publications/Factsheet31.pdf>

շարք միջազգային փաստաթղթերով: «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ դաշնագրով հռչակված իրավունքներն իրականացվեն առանց որևէ խտրականության, այն է՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ծննդի կամ այլ հանգամանքի բերումով: Այսինքն՝ ՀՀ-ն, վավերացնելով դաշնագիրը, պարտավորվել է ապահովել դաշնագրով ամրագրված առողջության պահպանման իրավունքի՝ առանց խտրականության ապահովումը: Համանման կարգավորումներ են ամրագրված նաև ՀՀ կողմից վավերացված այլ միջազգային փաստաթղթերով:⁹⁷

Հաշվի առնելով վերոնշյալը և այն, որ ՀՀ առողջապահության նախարարության նպատակներից և խնդիրներից են՝ առողջապահության բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու դրա իրականացման ապահովումը, ինչպես նաև առողջապահության բնագավառում մարդու իրավունքների պահպանումն ու պաշտպանությունը՝ անհրաժեշտ է՝

1. մշակել համապատասխան ձեռնարկ որոշակի խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, ՄԻԱՎ/ՉԻԱՀ, Հեպատիտ B, C և այլ հիմքով խտրականության արժանացող անձանց) հետ բուժաշխատողների աշխատելու վերաբերյալ,

2. ավելացնել համապատասխան դասընթացների թիվը (դիպլոմային և հետդիպլոմային)՝ բուժաշխատողների տարբեր հիվանդությունների տարածման ուղիների և անվտանգության միջոցների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար:

2. Պալիատիվ բուժօգնություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս 2014 թվականից բարձրաձայնվել է պալիատիվ բժշկական օգնության ներդրման անհրաժեշտության և այդ գործընթացի խնդիրների մասին: Խնդիրն այն է, որ դեռևս ավարտված չէ պալիատիվ խնամքի ներդրման գործընթացը, ինչի հետևանքով դրա կարիքն ունեցող մի շարք անձինք անցնում են ցավի և տառապանքի միջով:

Դեռևս 2011 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բարձր մակարդակով տեղի ունեցած հանդիպման ժամանակ մշակված քաղաքական հռչակագրով պետություններն ընդգծել են պալիատիվ խնամքի ներդրման անհրաժեշտությունը:⁹⁸ Հայաստանում պալիատիվ բժշկական օգնության ներդրման անհրաժեշտության և այդ գործընթացի ձգձգման խնդրի մասին բարձրաձայնում են բազմաթիվ բուժաշխատողներ, իրավապաշտպաններ և միջազգային կառույցներ^{99,100}: Մասնավորապես «Հյուսան

⁹⁷ Օրինակ՝ «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիա (5-րդ հոդված):

⁹⁸ <http://apps.who.int/iris/bitstream/10665/250584/1/9789241565417-eng.pdf?ua=1>

⁹⁹ http://www.hrw.org/sites/default/files/wr2014_web_0.pdf

Ռայթս Վոչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպությունը նշում է, որ պալիատիվ խնամքի տրամադրման գործընթացը Հայաստանում հակասում է Առողջապահության միջազգային կազմակերպության հանձնարարականներին:

Այսպես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պալիատիվ բժշկական օգնությունը կյանքին վտանգ սպառնացող կամ անբուժելի հիվանդություն ունեցող պացիենտի և նրա ընտանիքի կյանքի որակի բարելավմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը նպատակ ունի մեղմել պացիենտի ցավը, տառապանքը և հիվանդության հետ կապված ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, հոգևոր և այլ խնդիրներ՝ դրանք վաղ հայտնաբերելու, գնահատելու և անհրաժեշտ միջամտություններ իրականացնելու միջոցով: Ավելին, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը: Ընդ որում՝ պալիատիվ խնամքը պետք է հասանելի լինի թե՛ մեծահասակների և թե՛ երեխաների համար:¹⁰¹

Հայաստանում գործում է օֆիոդային/հոգեներգործող դեղորայքի նշանակման և ստացման բարդ և ժամանակատար ընթացակարգ, ինչն իր հերթին խոչընդոտում է հիվանդներին ստանալ պալիատիվ խնամք: «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ցուցակներում ներառված թմրամիջոցները և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը բժշկական նպատակներով բաց են թողնվում դեղատոմսերով: Ավելին, նույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմինը սահմանում է բժշկական նպատակներով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործման կարգն ու պայմանները: ՀՀ առողջապահության նախարարության 2002 թվականի փետրվարի 26-ի «ՀՀ տարածքում դեղատոմսերի դուրս գրման և դեղերի բաց թողնման կարգը հաստատելու մասին» թիվ 100 հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետությունում դեղատոմսերի դուրս գրման և դեղերի բաց թողնման կարգի 5-րդ կետի համաձայն՝ թմրադեղերն ամբուլատոր հիվանդների համար դուրս են գրվում ՀՀ կառավարության 14.08.2001 թ. N 759 որոշմամբ հաստատված N 1 դեղատոմսային ձևաթղթերով: Դեղատոմսը պետք է գրված լինի բժշկի ձեռքով, պարզ ընթեռնելի՝ վերջինիս ստորագրությամբ և կնիքով հաստատված, որը վավերացվում է հաստատության դրոշմակնիքով, դեղատոմսի համար կնիքով, պետք է հաստատվի տնօրենի կամ բուժգծով տեղակալի ստորագրությամբ ու կլոր կնիքով: Ստացվում է, որ փաստաթուղթը պետք է պարունակի չորս տարբեր կնիքներ:

Ավելին, չնայած նրան, որ մորֆինը ապահով, ոչ թանկ և արդյունավետ դեղամիջոց է, որով հնարավոր է թեթևացնել մի շարք հիվանդություններից առաջացող

¹⁰⁰ <https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/armenia>

¹⁰¹ <http://www.who.int/mediacentre/factsheets/fs402/en/>

ցավերը՝ Հայաստանում մորֆինի և վերջինիս այլընտրանքային միջոցների քանակը չի բավարարում դրա կարիքն ունեցող բոլոր հիվանդներին¹⁰²:

Միաժամանակ, դեռևս առկա չեն մեխանիզմներ տնային պայմաններում պալիատիվ խնամք ստանալու համար, որի ընթացքում, օրինակ, որոշակի ծառայություններ կմատուցվեն պացիենտներին և նրանց խնամողներին:

Նախարարության կողմից 2016 թվականին ՀՀ կառավարություն է ներկայացվել «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարությանն ու պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարության 2017-2019 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որն ընդունվել է 2017 թվականի փետրվարին: Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի տրամադրման կարգը պալիատիվ խնամքի շրջանակներում պարզեցնելու նպատակով միջոցառումների նշված ծրագրով նախատեսվել է պալիատիվ խնամքի շրջանակներում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի տրամադրման ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործում: Համապատասխան մասնագետներին վերապատրաստելու նպատակով նախատեսվել է պալիատիվ բժշկական օգնություն իրականացնող անձնակազմի ուսուցման նպատակով բարձրագույն և հետբուհական մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ կրթական ծրագրերում պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման բաղադրիչի ներառում: Նախատեսվել է նաև արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բժշկական հաստատություններում պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման մեխանիզմների ձևավորում և ներդրում, ինչպես նաև այլ միջոցառումներ:

Այնուամենայնիվ, 2016 թվականին պալիատիվ խնամքը ներդրված չի եղել, ինչի հետևանքով քաղաքացիները հնարավորություն չեն ունեցել ստանալու համապատասխան բուժօգնություն:

3. Բժշկական գաղտնիքի պատշաճ ապահովման վերաբերյալ խնդիրներ

Առողջության պահպանման իրավունքի հիմնարար տարրերից է անձի առողջության մասին տեղեկատվության գաղտնիությունը: Միջազգային չափանիշների համաձայն՝ բժշկական գաղտնիքի պահպանությունը պացիենտի հիմնական իրավունքներից է:¹⁰³ ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Ավելին, անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ: «Բնակչության բժշկական

¹⁰² Տես՝ նույն տեղում:

¹⁰³ <http://www.who.int/genomics/public/patientrights/en/>

օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջել իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում: Ավելին, նույն օրենքի 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ բուժաշխատողները պարտավոր են պահպանել բժշկական գաղտնիքը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Այնուամենայնիվ, 2016 թվականի ընթացքում շարունակվել են գրանցվել դեպքեր, երբ, չնայած օրենսդրության պահանջին, բժիշկների կողմից չի պահպանվել պացիենտի բժշկական գաղտնիքը: Նշվածի արդյունքում քաղաքացիները (հատկապես առավել խոցելի խմբերի ներկայացուցիչները) կաշկանդված են լինում դիմելու բուժաշխատողների օգնությանը: Պատճառը թե՛ գործնական խնդիրներն են, թե՛ օրենսդրական բավարար և արդյունավետ կարգավորումների բացակայությունը:

2015 թվականին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» արդյունքում պարզվել են բժշկական գաղտնիքի տարածման և չպահպանման բազմաթիվ դեպքեր: Այսպես, նշված հետազոտության ընթացքում այցեր են կատարվել ՀՀ մի շարք բժշկական հաստատություններ, որտեղ իրականացված հարցազրույցների ընթացքում պարզվել է, որ պացիենտների՝ գաղտնիության հիմունքով խորհրդատվություն ստանալու իրավունքը երբեմն խախտվում է: Առողջապահության բնագավառի աշխատողների և ՀԿ-ների ներկայացուցիչների հետ հարցազրույցներից պարզ է դարձել, որ գյուղական վայրերում կանայք նախընտրում են հղիության արհեստական ընդհատում կատարել այնպիսի բուժհաստատություններում, որոնք հեռու են իրենց բնակավայրերից: Ինչպես նկարագրել է հարցվողներից մեկը՝ իր նախածննդյան խորհրդատվության ընթացքում առնվազն 3-4 այլ հղի կանայք են ներկա եղել բժշկի սենյակում, ովքեր հստակ կարող էին լսել իր խոսակցությունը բժշկի հետ: Ավելին, հարցազրույցի բոլոր մասնակիցները (բժիշկներ, մայրեր) նշում էին, որ հետծննդյան շրջանում, օրինակ, խորհրդատվությունը տրամադրվում է մի քանի պացիենտի միաժամանակ՝ ընդհանուր հիվանդասենյակներում:

Ինչ վերաբերում է օրենսդրական կարգավորումներին, ապա «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով ամրագրված չէ բժշկական գաղտնիքի սահմանումը, տրված չեն այն սուբյեկտները, ում կարող է փոխանցվել բժշկական գաղտնիքը, ինչպես նաև այդ տեղեկատվության մշակման և փոխանցման կարգի առանձնահատկությունները: Օրենսդրորեն սահմանված չեն նաև պատասխանատվության հստակ մեխանիզմներ բժշկական գաղտնիքի՝ ապօրինի տարածման համար: Խնդրի լուծման կապակցությամբ 2016 թվականին ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որտեղ կարգավորում են

ստանում վերոնշյալ հարցերը: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից նախագծի վերաբերյալ ներկայացվել են մի շարք առաջարկներ, որոնց ճնշող մեծամասնությունն ընդունվել և կարգավորում է ստացել նախագծի լրամշակված տարբերակում: Նախագիծը, սակայն 2016 թվականին չի ընդունվել:

Հարցի առնչությամբ առկա են նաև գործնական խնդիրներ: Որոշ դեպքերում թե՛ պացիենտները, թե՛ բուժաշխատողները տեղեկացված չեն լինում բժշկական գաղտնիքի պահպանման կարևորության և իրենց իրավունքների մասին:

Հաշվի առնելով վերոշարադրյալն՝ անհրաժեշտ է՝

- 1. հնարավորինս սեղմ ժամկետում հավանություն տալ բժշկական գաղտնիքը սահմանող, վերջինիս մշակման և տարածման վերաբերյալ կարգավորումներ պարունակող 2016 թվականին մշակված և շրջանառված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագծին,*
- 2. լրատվության միջոցներով, տեղեկատվական այլ աղբյուրներով պացիենտներին իրազեկել բժշկական գաղտնիքի պահպանման կարևորության և վերջինիս պահպանման իրավական կարգավորումների մասին,*
- 3. համապատասխան որակավորման դասընթացների միջոցով բուժաշխատողներին իրազեկել բժշկական գաղտնիքի պահպանման կարևորության և վերջինիս պահպանման իրավական կարգավորումների մասին:*

4. «Մանկական ուղեղային կաթված» ախտորոշմամբ երեխաներին առողջարանային ուղեգիր տրամադրելու գործընթացի ոչ պատշաճ և անբավարար ապահովման հետ կապված խնդիր

Քաղաքացին Պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ որդու մոտ ախտորոշվել է բնածին մանկական ուղեղային կաթված: Որդու առողջարանային բուժումը նախորդ տարի կազմակերպվել է «Արարատ» մոր և մանկան առողջարանում, իսկ իր՝ որպես խնամակալի սննդի և կացարանային ծախսերն ապահովվել են պետության կողմից: Ընտանիքն ընդգրկված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է ընտանեկան նպաստ: Քաղաքացին տեղեկացրել է, որ ցանկանում է, որ որդու առողջարանային բուժումը կազմակերպվի «Արարատ» մոր և մանկան առողջարանում, իսկ իր՝ որպես խնամակալի սննդի և կացարանային ծախսերը ապահովվեն պետության կողմից:

ՀՀ Լոռու մարզպետարանի պարզաբանումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ Լոռու մարզում ներկայումս միայն «Մանկական ուղեղային կաթված» ախտորոշմամբ հաշվառված են 146 երեխաներ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2016 թվականին ՀՀ Լոռու մարզին հատկացվել են 8/6 ուղեգրեր (8 երեխա և 6 խնամակալ): Հաշվի առնելով Լոռու մարզում հաշմանդամություն ունեցող երեխաների մեծ թվաքանակը և մարզին հատկացված ուղեգրերի փոքր քանակը՝ ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից որոշում է կայացվել առաջնահերթությունը տալ նախկինում առողջարանային բուժում չստացած

հաշմանդամություն ունեցող երեխաներին:

ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 1-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» N 70-Ն հրամանի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում մինչև 7 տարեկան և սոցիալապես առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված երեխաների առողջարանային բուժումը պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կազմակերպվում է բժշկական օգնության տվյալ տեսակի իրականացման համար ՀՀ առողջապահության նախարարության հետ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մատուցման պայմանագիր ունեցող բժշկական կազմակերպություններում:

Փաստորեն, նույն հրամանով սահմանվում է երկու պայմաններ, որոնց առկայության դեպքում կարող է կազմակերպվել երեխայի առողջարանային բուժումը պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից նախկինում առողջարանային բուժում չստացած հաշմանդամություն ունեցող երեխաներին առաջնահերթության որոշման իրավաչափության, ինչպես նաև առողջարանային բուժման կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող (մասնավորապես՝ մանկական ուղեղային կաթվածով) երեխաների թվաքանակի և առողջարանային բուժման ուղեգրերի թվի անհամապատասխանության հարցի կապակցությամբ Պաշտպանի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն, որին ի պատասխան՝ տեղեկացրել են, որ առողջարանային բուժման կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող (մասնավորապես՝ մանկական ուղեղային կաթվածով) երեխաների թվաքանակի և առողջարանային բուժման ուղեգրերի թվի անհամապատասխանությունը հաշվի առնելով՝ ՀՀ առողջապահության նախարարությունը կկազմակերպի քննարկում 2013 թվականի նոյեմբերի 1-ի N 70-Ն հրամանով հաստատված չափորոշչում նախկինում առողջարանում բուժում չստացած երեխաների համար առաջնահերթություններ սահմանելու վերաբերյալ՝ նպատակ ունենալով ապահովել վերջիններիս առողջարանային բուժում ստանալու իրավունքը:

Այսպիսով, վերոհիշյալ հրամանում առաջնահերթությունների ոչ հստակ սահմանման, ինչպես նաև տրամադրվող առողջարանային ուղեգրերի թվաքանակը և փաստացի առողջարանային բուժման կարիք ունեցող հաշմանդամություն ունեցող երեխաների թվաքանակի տարբերության հետևանքով ոլորտում առաջանում էր կամայական ու անվերահսկելի մոտեցում:

Արդյունքում, ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված և ՀՀ արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում ստացած «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N 70-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» 2016 թվականի

դեկտեմբերի 1-ի N43-Ն հրամանով սահմանվել են առաջնահերթություններ՝ առողջարանային բուժման ուղեգրերի բաշխումը կազմակերպելու համար: Այն է՝ պետական պատվերի շրջանակներում մեկ երեխային առողջարանային բուժման ուղեգիր կարող է տրամադրվել ոչ ավելի, քան օրացուցային տարին մեկ անգամ: Ուղեգրերի տրամադրման գործընթացում կիրառվում է առաջնահերթության սկզբունքը, ըստ որի՝ նախապատվությունը տրվում է նախկինում առողջարանային բուժում չստացած հաշմանդամություն ունեցող երեխաներին, իսկ նախկինում առողջարանային բուժում չստացած հաշմանդամություն ունեցող երեխաների բացակայության դեպքում՝ բաշխմանը նախորդող օրացուցային տարվա ընթացքում առողջարանային բուժում չստացած հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Այս պարագայում էլ, առաջնահերթությունների սահմանման անհրաժեշտություն է առաջանում բաշխմանը նախորդող օրացուցային տարվա ընթացքում առողջարանային բուժում ստացած հաշմանդամություն ունեցող երեխաների միջև առողջարանային բուժման ուղեգիր տրամադրելու նախապատվության տրման համար:

Ուստի, անհրաժեշտ է փոփոխություն կատարել ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի նոյեմբերի 1-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» N 70-Ն հրամանում՝ նախատեսելով այնպիսի կարգավորումներ, որոնցով կապահովեն առողջարանային բուժման կարիք ունեցող երեխաներին անհրաժեշտ քանակով ուղեգրի տրամադրումը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Յուրաքանչյուր անձի՝ տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածում, որի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Այնուհանդերձ, 2016 թվականին սույն իրավունքի ապահովման կապակցությամբ գրանցվել են մի շարք խնդիրներ:

1. Տնտեսվարող սուբյեկտների հարկային պարտավորությունների ապահովմանն ուղղված քրեաիրավական գործիքների կիրառումը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս նախորդ տարիների գործունեությունն ամփոփող զեկույցներում բարձրաձայնվել է հարկեր վճարելուց խուսափելու դեպքերի առթիվ քրեական գործ հարուցելու և այդպիսով անուղղակիորեն հարկ վճարողների վրա ճնշում գործադրելով՝ ենթադրյալ չվճարված հարկերը վճարելուն պարտավորեցնելու հետ կապված խնդիրը¹⁰⁴:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումներում հիմնականում բարձրացվել է քրեական գործերի հարուցման և այնուհետև ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի՝ քրեական օրենքով արգելված մի շարք արարքների, այդ թվում՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքում անձին քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմի ոչ իրավաչափ կիրառման խնդիրը:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված խնդիրն ուսումնասիրության առարկա է դարձել ինչպես հարկային պարտավորությունների պատշաճ ապահովման ոլորտում պետական (քրեական) քաղաքականության ընդհանուր սկզբունքների, այնպես էլ օրենսդրական դաշտի թերությունների վերհանման ճանապարհով:

Ազատ շուկայական տնտեսության պայմաններում տնտեսվարող սուբյեկտների՝ հարկերի, տուրքերի ու այլ պարտադիր վճարումների ժամանակին և ճշգրիտ հաշվարկման ու վճարման պարտավորությունների ապահովումը ենթադրում է ճկուն պետական քաղաքականություն: Նման պայմաններում պետությունը պետք է մշակի այս խնդրի իրավական կարգավորման այնպիսի համակարգ, որը կապահովի հանրային (պետական բյուջեի ձևավորում) և մասնավոր (տնտեսվարող սուբյեկտներ) իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռություն: Պետության կողմից այս ոլորտում, այդ թվում՝

¹⁰⁴ Տե՛ս, մասնավորապես, 2015 թվականի ընթացքում «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, էջեր 176-178:

քրեական քաղաքականության շրջանակներում գործադրվող իրավական միջոցները, մասնավորապես՝ հարկեր վճարելուց խուսափելու համար պատասխանատվության նախատեսումն ի վերջո ուղղված են պետական բյուջեի ամբողջական ձևավորման կարևորագույն խնդրի լուծմանը:

Օրենսդիրը, որպես հանցագործություն նախատեսելով հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելը, նպատակ է հետապնդում ապահովել տնտեսական գործունեության ոլորտում օրինականությունը, տնտեսվարող սուբյեկտների և պետության ֆինանսական շահերի պաշտպանությունը: Միաժամանակ, տնտեսության ոլորտում պետության քրեական քաղաքականությունը պետք է առավելապես ունենա կանխարգելիչ, այլ ոչ թե պատժիչ ուղղվածություն: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հարկային հարաբերություններին, որտեղ պետությունը առավել շահագրգռված է հարկերն օրենքով նախատեսված չափերով և ժամկետներում պետական բյուջե մուծելու, քան հարկային օրենսդրության խախտման համար անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը նույնպես վկայում է, որ պետության նկատմամբ հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարումն անմիջապես քրեաիրավական հարթություն տեղափոխելն ընդունելի չէ: Եվրոպական մի շարք երկրների օրենսդրական ակտեր նախատեսում են հարկային պարտավորությունների կատարման ապահովմանն ուղղված հարկային մարմինների կողմից ծանուցման ընթացակարգ:

Այսպիսով, հարկային պարտավորությունների պատշաճ կատարմանն ուղղված քրեաիրավական նորմերը չի կարելի դիտարկել այլ իրավակարգավորումներից կտրված. դրանք անհրաժեշտ է մեկնաբանել հարկային օրենսդրության հետ համակարգային միասնության մեջ՝ հաշվի առնելով քննարկվող ոլորտում պետական քաղաքականության առաջնահերթությունները: Կարևոր է նաև քրեական քաղաքականության հարցում կանխարգելիչ, այլ ոչ թե պատժիչ նպատակի գերակայության սկզբունքի արմատավորումը, ինչի մասին է վկայում ժամանակակից միջազգային փորձը:

Քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմի՝ իբրև հարկեր վճարելու պարտավորության ապահովմանն ուղղված գործիքի լայն կիրառության խնդիրը, կարծում ենք, ոչ միայն իրավակիրառման, այլև օրենսդրական ոչ լիարժեք կարգավորումների հարթությունում է: Մասնավորապես, օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասում հարկեր վճարելուց խուսափելու հանցակազմն ամրագրված է որպես «հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չներկայացնելու կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով, որը կատարվել է խոշոր չափերով»:

Հանցակազմի օրենսդրական նման ձևակերպումը խնդիրներ է առաջացնում նշված հանցագործության ավարտման պահի հստակ սահմանման հետ կապված:

Միանշանակ չէ, թե արդյոք Քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում առկա «հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարումներ վճարելուց խուսափել» արտահայտությունը կարելի է մեկնաբանել որպես հարկեր չվճարելուն համարժեք: Այս առումով, պետք է նկատի ունենալ, որ հարկային օրենսդրությամբ հարկային հաշվետվություն ներկայացնելու և հարկը վճարելու ժամկետները կարող են չհամընկնել: Իսկ այդպիսի կարգավորման պայմաններում Քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածով նախատեսված արարքի ավարտման պահը, մեր համոզմամբ, պետք է կապել օրենքով նախատեսված ժամկետում հարկերի փաստացի չվճարման, այլ ոչ թե հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր ինքնին չներկայացնելու հետ:

Վերոգրյալից գատ, քննարկման կարիք ունի նաև այն, թե ինչ նշանակություն ունի «չարամտորեն» եզրույթը ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի դիսպոզիցիայի մեկնաբանության և կիրառության հարցում:

Չարամտությունն ինքնին գնահատողական հասկացություն է, և նորմատիվ ակտերով նախատեսված չեն այն ձևական հատկանիշները, որոնցով կարող է բնութագրվել այս հասկացությունը: Նախատեսված չեն նաև այն դեպքերը, թե երբ օրենքով պահանջվող փաստաթղթերը չներկայացնելը կարելի է գնահատել «չարամիտ»: Այդուհանդերձ, պետք է քննարկվող հանցակազմի համար կոնկրետացնել դրա դրսևորման որոշակի ձևերն ու հատկանիշները՝ նկատի առնելով այս ոլորտում պետության քաղաքականության ուղղվածությունը, այն է՝ օրենքով պահպանվող արժեքների և ֆինանսական իրավաչափ շահերի պաշտպանության առաջնահերթությունը:

Դրանից բացի, պետք է նկատի ունենալ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում նմանատիպ արարքների (մասնավորապես, 170.6-րդ հոդված՝ «Հարկային մարմիններ տեղեկությունները սահմանված ժամկետում չհաղորդելը կամ սխալ տեղեկություններ հաղորդելը», 170.3-րդ հոդված՝ «Հարկերը, տուրքերը և օրենքով սահմանված պարտադիր այլ վճարումները ժամանակին չվճարելը») առկայությունը քրեական օրենսդրության հետ համեմատության համատեքստում վկայում է ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի իմաստով փաստաթղթերը չարամտորեն չներկայացնելու եղանակով, ասենք, հարկեր չվճարելու համար անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս առավել բարձր չափանիշների կիրառման անհրաժեշտության մասին: Սրանով հանդերձ, առաջնահերթ նշանակություն է ստանում այն, թե որ դեպքերում օրենքով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելը կամ ոչ ամբողջական, խեղաթյուրված տվյալներ ներկայացնելը կարող է գնահատվել որպես չարամտորեն:

Ավելին, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի ստուգման արդյունքների ամփոփման կարգին առնչվող 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ պարբերության համաձայն. «Ստուգող մարմնի պաշտոնատար անձը ստուգման ակտի հիման վրա, օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, տնտեսվարող սուբյեկտին տալիս է հանձնարարականներ

(կարգադրագրեր) բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ՝ սահմանելով ժամկետներ դրանց վերցման համար:» Այսինքն՝ օրենսդիրը տնտեսվարողին տվել է իրավասու մարմնի բացահայտած խախտումները կամ թերությունները այդ մարմնի սահմանած ժամկետում վերացնելու հնարավորություն: Նման պայմաններում, ստացվում է՝ իրավասու մարմնի հանձնարարականներում կամ կարգադրագրերում սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում է, որ տնտեսվարող սուբյեկտի արարքում պետք է առաջ գան հարկեր, տուրքեր չվճարելու կամ պարտադիր այլ վճարումներ չկատարելու հանցակազմի հատկանիշներ: Հակառակ մեկնաբանման պարագայում կիմաստագրկվի հարկային մարմնի՝ տնտեսվարող սուբյեկտին բացահայտված խախտումները և թերությունները վերացնելու մասին ծանուցելու պոզիտիվ պարտականությունը և միաժամանակ, կեննգափոխվի «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի մեջբերված իրավադրույթի նորմատիվ արժեքը՝ թույլ չտալով օրենսդրական կարգավորումների համակարգային որևէ մեկնաբանություն:

Եթե հարկատուն առաջին անգամ ներկայացրել է ոչ ամբողջական տեղեկատվություն կամ ոչ բոլոր փաստաթղթերն ըստ հավուր պատշաճի, ապա դա համարել «չարամտություն» և հաշվի չառնել, որ դա կարող է հարկային բարդ օրենսդրության ու դրանով պահանջվող փաստաթղթերի շրջանակի չիմացության կամ ոչ լիարժեք իմացության արդյունք լինել, ու արարքն անմիջապես տեղափոխել քրեաիրավական հարթություն, չի կարելի արդարացված համարել:

Այսինքն՝ սահմանված ժամկետում օրենքով պահանջվող փաստաթղթերը նախազգուշացվելուց հետո չներկայացնելու կամ ոչ ամբողջական ներկայացնելու կամ ներառված տվյալները չուղղելու ու չհստակեցնելու պարագայում միայն հարկատուի արարքը կարող է գնահատվել քրեորեն հետապնդելի, քանի որ վերջինս նույնիսկ սեփական խախտումներն ու թերությունները վեր հանելուց, դրանց վերացման նախազգուշացումից ու պահանջից հետո չի կատարել իր հարկային պարտավորությունները:

Հետևաբար, կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ հարկեր վճարելուց խուսափելու համար պատասխանատվություն ամրագրող դրույթը հստակեցման կարիք ունի՝ իրավական որոշակիության ապահովման, ինչպես նաև քննարկվող արարքների համար վարչական և քրեական պատասխանատվության շրջանակների հստակեցման անհրաժեշտությամբ պայմանավորված:

Բավարար իրավական որոշակիություն չունեցող օրենսդրական կարգավորումների պայմաններում փաստորեն ձևավորվել է խնդրահարույց պրակտիկա, որով քրեական գործի հարուցմամբ քրեական օրենքի սպառնալիքի, ինչպես նաև քրեական գործով վարույթի շրջանակներում դատավարական հարկադրանքի միջոցների (մասնավորապես՝ կալանքի) կիրառման հնարավորության ռիսկերի պայմաններում անձը համաձայնում է կատարել իր ենթադրյալ չկատարված հարկային պարտավորությունները՝ Քրեական օրենսգրքի խնդրո առարկա խրախուսական նորմի կիրառությամբ ազատվելով քրեական

պատասխանատվությունից:

Ավելին, հարկեր վճարելուց խուսափելու դեպքերի առթիվ քրեական գործով վարույթի նախաձեռնման՝ որպես հարկային պարտավորությունների կատարումն ապահովող լծակի գործադրման պրակտիկայի մասին վկայում են նաև պաշտոնական վիճակագրական ցուցանիշները: Այսպես, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հայտնած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության կողմից 2016 թվականին հարուցված 60 և վարույթ ընդունված 386 քրեական գործերից 135 քրեական գործերի նախաքննությունն ավարտվել է և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան 16 քրեական գործի շրջանակներում և քրեական գործի վարույթը կասեցվել է 18 գործով: Փաստորեն, հարուցված 446 քրեական գործերից միայն 16-ն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան: Ընդ որում, նմանատիպ պատկեր է արձանագրվել նաև նախորդ տարիներին: Համեմատության համար նշենք, որ Կոմիտեի տվյալների համաձայն՝ 2014 թվականին հարուցվել և վարույթ է ընդունվել թվով 723 քրեական գործ, որից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել միայն 37-ը, իսկ 2015 թվականին հարուցվել և վարույթ է ընդունվել թվով 688 քրեական գործ, որից քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան 34 քրեական գործի շրջանակներում:

Արդյունքում, ստացվում է, որ հարկ վճարողն ենթադրյալ չվճարված հարկերը, այդ թվում՝ հաշվարկված տույժերն ու տուգանքները վճարելու պատրաստակամություն է հայտնում ոչ թե իր արարքի հակաիրավականության գիտակցման արդյունքում, այլ հնարավոր անբարենպաստ հետևանքների առաջացման մտավախությունից ելնելով՝ առանց արարքի հակաիրավականության ապացուցման պատշաճ ընթացակարգի: Այսպիսի պրակտիկան ոչ միայն խոչընդոտում է անձի՝ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոցների իրացմանը, այլև ի վերջո հանգեցնում է սահմանադրորեն երաշխավորված սնտեսական գործունեության ազատության և սնտեսական մրցակցության չարդարացված սահմանափակումների:

Ելնելով վերոգրյալից՝ տնտեսվարող սուբյեկտների համար իրավական որոշակիության ապահովման, ինչպես նաև քրեական գործերի հարուցման՝ իբրև հարկային պարտավորությունների կատարումն ապահովող լծակի գործադրման պրակտիկայի վերացման ուղղությամբ առաջարկում ենք նախատեսել օրենսդրական արդյունավետ կառուցակարգեր, այդ թվում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի դիսպոզիցիայի հստակեցման ճանապարհով:

2. Դեղորայքի ոլորտում պետական գնումների խնդիրներ

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում մշտապես բարձրաձայնվել է պետական գնումների ընթացքում նվազագույն գնային առաջարկին տրվող նախապատվության սկզբունքի ռիսկերի մասին: Տվյալ խնդիրն առավել արդիական է, մասնավորապես, պետության կարիքների համար ձեռքբերվող դեղորայքի

ուրտում, ինչի կապակցությամբ քաղաքացիներից պարբերաբար ստացվում են դիմում-բողոքներ: Խնդրի մասին նշվել է նաև ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի շրջանակներում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հանրային հետազոտություն Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ» զեկույցում: Մասնավորապես՝ հետազոտության ընթացքում կատարված հարցազրույցների ընթացքում բուժաշխատակիցները նշել են, որ հիվանդանոցները, որպես կանոն, ստանում են ամենաեժան դեղամիջոցները, ինչն անհանգստություն է առաջացնում իրենց շրջանում: Խնդրի վերաբերյալ 2016 թվականին բարձրաձայնել է նաև «Հոգեկան առողջության վերականգնման հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը:¹⁰⁵

Նշված հարցի կարգավորման նպատակով սահմանվել են երաշխիքներ: Մասնավորապես՝ մատակարարվելիք ապրանքների ցածր որակի հետ կապված հնարավոր ռիսկերից խուսափելու նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 105-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման N 1 հավելվածի փոփոխությամբ պարտադիր է դարձվել ապրանքների գնման դեպքում մասնակիցների կողմից հայտերով տեխնիկական բնութագրերի ներկայացումը և պատվիրատուի կողմից դրանց՝ իրենց կարիքի նկատմամբ համարժեքության գնահատումը և ներառումը կնքվելիք պայմանագրերում: Ավելին, ապրանքների գնման դեպքում պարտադիր է դարձել որակի սերտիֆիկատի առկայությունը և գործարանային փաթեթավորումը: Պատվիրատուի պահանջներին չբավարարող ապրանքների մատակարարման հնարավոր ռիսկերից խուսափելու նպատակով մասնակիցներից կարող են պահանջվել նաև մատակարարվելիք ապրանքի նմուշները:

Սակայն խնդիրն այն է, որ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները խնդիրներ են առաջացնում պատվիրատուների համար, որի արդյունքում որոշում կայացնելիս գրեթե միշտ նախապատվությունը տրվում է ցածր գին ունեցող ապրանքին:

ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները: Համաձայն նշված որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի՝ դեղերի գնումների պլանում գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը ձեռք բերվող դեղին ներկայացվող՝ ի թիվս այլ պահանջների, պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն, որ դեղի անվանումը նշելիս գրվում են դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ

¹⁰⁵ <https://168.am/2016/12/09/727412.html>

բաղադրատարրերի անվանումները: Եթե ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) առկա են նույն բաղադրատարրերով դեղի այլ գրանցված տարբերակներ, ապա դեղի գնման տեխնիկական բնութագիրը կազմվում է այնպես, որ բացառվի որևէ գրանցված տարբերակի մրցույթին չմասնակցելու հավանականությունը, և ապահովվի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստր): Խնդրին այն է, որ այս դեպքում էլ սահմանափակում է պատվիրատուների կողմից առավել մանրամասն տեխնիկական բնութագիր կազմելու հնարավորությունը:

Նշված չափորոշիչն համապատասխան՝ դեղերի գնման տեխնիկական բնութագրի կազմման արդյունքում, դեղի անվանումը նշելիս, գրվում են դեղի միջազգային համընդհանուր (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումները՝ հնարավորություն տալով մրցույթի մասնակից դառնալ ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) գրանցված մի շարք դեղորայքի ներկայացուցչական կազմակերպությունների, որոնց ներկայացրած դեղամիջոցները պատվիրատուի համար նախընտրելի չեն՝ հաշվի առնելով դրանց կողմնակի կամ այլ ազդեցությունը: Ավելին, երբ երկու առաջարկվող դեղերը համապատասխանում են տեխնիկական բնութագրերին որակի սահմանված չափանիշներին, նախապատվությունը տրվում է ցածր գին ունեցող դեղերին: Արդյունքում կարող է գնվել ավելի ցածր արդյունավետություն, ավելի շատ կողմնակի ազդեցություն ունեցող դեղ:

Մինչդեռ, առևտրի համաշխարհային կազմակերպության վերանայված համաձայնագրի XV հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիր է կնքում այն մատակարարի հետ, որը, ըստ նրա, կարող է կատարել պայմանագրի պայմանները և որը բացառապես ծանուցումներում և գնման գործընթացի փաստաթղթերում սահմանված գնահատման չափանիշների հիման վրա ներկայացրել է՝ առավել շահավետ հայտը *կամ նվազագույն գինը, այն դեպքում, երբ գինը միակ չափանիշն է*: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ պատվիրատուն ստանում է հայտ, *որում առաջարկվող ապրանքի գինը, նկատի ունենալով ներկայացված մյուս հայտերում առաջարկված գները, ընդունվածից խիստ ցածր է*, ապա վերջինս կարող է ճշտել, թե արդյոք տվյալ հայտը համապատասխանում է մասնակցության պայմաններին և արդյոք տվյալ մասնակիցը ի վիճակի է կատարելու պայմանագրի պայմանները:

Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2014/24/EC դիրեկտիվի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չխախտելով ներպետական օրենսդրությունը, կանոնակարգերը կամ վարչական կարգավորումները, մատակարարվող ապրանքների գինը կամ ծառայությունների համար վարձատրությունը որոշելիս՝ պատվիրատուն պետք է դիտարկի *տնտեսապես ամենաշահավետ* հայտով հանրային պայմանագրի կնքումը: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատվիրատուի տեսանկյունից տնտեսապես ամենաշահավետ առաջարկը պետք է որոշվի՝ հիմք ընդունելով գինը կամ արժեքը, կիրառելով ծախս-արդյունավետություն մոտեցումը (cost-

effectiveness approach), ինչպես օրինակ՝ 68-րդ հոդվածի իմաստով՝ կյանքի ցիկլի արժեքը, և նման առաջարկը կարող է հիմնվել գնի և որակի լավագույն համադրության վրա, ինչը, կախված տվյալ պայմանագրի առարկայից, պետք է գնահատվի որակական, բնապահպանական և/կամ սոցիալական հանգամանքներով պայմանավորված չափանիշներով: Արժեքի տարրը կարող է նաև ֆիքսված գնի կամ արժեքի տեսք ունենալ, որի հիման վրա մասնակիցները կմրցակցեն միայն որակի չափանիշի շուրջ: Անդամ պետությունները կարող են պահանջ սահմանել, որ պատվիրատուն չօգտագործի գինը՝ որպես միակ չափանիշ կամ կարող են սահմանափակել միայն այդ չափանիշի կիրառումը որոշակի խմբերի պատվիրատուների կամ առանձին տեսակի պայմանագրերի համար:

Այսինքն՝ միջազգային փաստաթղթերը նախատեսում են առանձնահատուկ կարգավորումներ, որոնք թույլ կտան գնել առավել արդյունավետ և որակյալ ապրանքը՝ այն համադրելով գնի հետ:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների՝ հարցի լուծման նպատակով 2015 թվականի սեպտեմբերին ՀՀ կառավարություն է ներկայացրել «Առողջապահական ծառայությունների ոչ մրցակցային եղանակով գնումների իրականացման չափորոշիչները և առողջապահական ծառայությունների մրցակցային եղանակով գնումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, սակայն վերջինս 2016 թվականին չի ընդունվել:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է փոփոխել ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշումը՝ սահմանելով ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման առավել արդյունավետ չափորոշիչներ:

3. Հարկային օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նույն արարքի կատարման համար կրկնակի պատասխանատվության միջոցների սահմանման խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բազմիցս բարձրաձայնվել է այն խնդիրը, որ հարկային օրենսդրությունն ու այլ իրավական ակտերը նույն արարքի կատարման համար պատասխանատվության միջոցներ են սահմանում, ինչը հանգեցնում է անձի՝ կրկնակի պատասխանատվության ենթարկվելու վտանգին, իսկ հարկային օրենսդրությամբ սահմանված պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոցները չեն բխում օրենսդրության էությունից:

Այսպես, մի շարք անձինք Մարդու իրավունքների պաշտպանին հայտնել են, որ իրավակիրառ պրակտիկայում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված դրույթն առաջացնում է խնդիրներ: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանվում է, որ հարկային

մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում նշված օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի մեծ ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավելի մեծ ցույց տված վնասի 20 տոկոսի չափով: Խնդիրն այն է, որ գործնականում նշված դրույթը կիրառվել է՝ անտեսելով այն հանգամանքը, որ վնասը ավել մեծ ցույց տալու հետևանքով հնարավոր է հարկային նվազեցում տեղի չունենա, այսինքն՝ պետությանը և հասարակությանը չի հասցվել գույքային վնաս: ՀՀ սահմանադրական դատարանն իր 2014 թվականի փետրվարի 18-ի թիվ ՍԴՌ-1139 որոշմամբ հստակ դիրքորոշում է հայտնել, որ հարկային պատասխանատվության նպատակը պետությանը և հասարակությանը հասցված գույքային վնասի հատուցումն է, իսկ համեմատության համար Վարչական իրավախախտումներ վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության նպատակը վարչական իրավախախտում կատարած անձին ուղղելն է և ինչպես իրավախախտողի, այնպես էլ՝ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը կանխելն է:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանված դրույթը պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոց է, ուստի՝ տույժ նշանակելիս պետք է հաշվի առնել կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Վերջիններս, սակայն վիճարկվող դրույթում բացակայում է:

Տնտեսավարող սուբյեկտը հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում կարող է պատասխանատվության ենթարկվել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն՝ հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պակաս հաշվարկված հարկերի գումարի 10 տոկոսի չափով՝ համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի: Ավելին, հաշվապահական հաշվառումից բացի՝ օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի կամ հաշվարկի կամ հաշվետվության կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել հարկի նվազեցում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև քսանհինգապատիկի չափով՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169¹ հոդվածի:

Հատկանշական է, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վերոնշյալ երկու դրույթներով կարևորվում է պետությանը վճարվող հարկի նվազումը: Փաստորեն, տնտեսավարող

սուբյեկտի մոտ շահութահարկի հաշվարկում սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի մեծ ցույց տալու դեպքում անձը կարող է պատասխանատվության ենթարկվել և «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով: Այսպիսով, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության դրույթի կիրառման արդյունքում տնտեսավարողը գործնականում կարող է կրկնակի պատասխանատվության ենթարկվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքով (եթե գործողությամբ նվազել է պետությանը վճարվող հարկի գումարը) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (որպես պատժիչ բնույթ կրող պատասխանատվություն):

Ստացվում է, որ տվյալ դրույթի կիրառման արդյունքում խախտվում է ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածում ամրագրված՝ անձի՝ միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության չենթարկելու սկզբունքը, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսվում է պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոց, ինչի սահմանադրականության վիճարկման նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2014 թվականի նոյեմբերի 13-ին դիմել էր ՀՀ սահմանադրական դատարան: 2015 թվականի ապրիլի 28-ին ՀՀ սահմանադրական դատարանը՝ իր թիվ ՄԴՈ-1203 որոշմամբ, նշել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված վեճի առարկա դրույթը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ վնասի ոչ ճիշտ հաշվարկը հանգեցնում է շահութահարկի գծով պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման: ՀՀ սահմանադրական դատարանը հայտնել է հստակ դիրքորոշում, որ իրավակիրառ պրակտիկայում տվյալ դրույթը չի կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ նույն արարքի համար առաջանա կրկնակի պատասխանատվություն, տուգանք նշանակվի և գանձվի՝ այն պարագայում, երբ տարբեր պատճառներով ավելի մեծ ցույց տրված վնասը չի հանգեցրել հարկային պարտավորությունների չկատարման:

ՀՀ սահմանադրական դատարանը հայտնել է նաև, որ այս մոտեցումը պետք է որդեգրվի նաև հինգ տարվա ընթացքում փոխանցվող վնասի հաշվարկման դեպքում: Իսկ իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներից չի բխում այն մոտեցումը, երբ նախապես տուգանք կարող է սահմանվել և հաշվարկվել ենթադրյալ (հնարավոր) խախտումների համար: Սահմանադրական դատարանը հայտնել է, որ իր սույն իրավական դիրքորոշումները համակարգային ձևով իրենց իրացումը պետք է գտնեն ինչպես «Շահութահարկի մասին», այնպես էլ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքներում:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը, դիտարկելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, իր՝ 2014 թվականի փետրվարի 18-ի թիվ ՄԴՈ-1139 որոշմամբ անդրադարձել է հարկային իրավախախտման դեպքում պատասխանատվության հարցին: Մասնավորապես՝ դատարանը նշել է, որ հարկային պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած անձը ցանկության դեպքում կարող է կամովին վերականգնել իր գործողությունների (անգործության) հետևանքով հասցրած վնասը՝

մինչև դրա հարկադիր (դատական կարգով) կատարումն ապահովելը: Ելնելով վերոգրյալից՝ կարելի է եզրակացնել, որ հարկային իրավախախտման դեպքում կարևորվում է ոչ թե հարկ վճարողին պատասխանատվության ենթարկելը, այլ պետությանը և հասարակությանը հասցված գույքային վնասի հատուցումը:

Հարցը կարգավորում չի ստացել նաև ՀՀ հարկային օրենսգրքի շրջանակներում: Խնդիրն այն է, որ ՀՀ հարկային օրենսգրքի¹⁰⁶ 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ, որն այլ սկզբունքների թվում հիմնված է նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի վրա: Այս սկզբունքը նշանակում է, որ հարկ վճարողները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի և վճարների վերաբերյալ ՀՀ օրենքների պահանջների խախտման համար անխուսափելիորեն ենթարկվելու են պատասխանատվության անկախ այն հանգամանքից, որ օրինակ՝ անձը ցանկանում է կամովին վերականգնել իր կողմից հասցված վնասը:

Հաշվի առնելով վերագրյալը՝ անհրաժեշտ է՝

- 1. օրենսգրքում նախատեսել հարկ վճարողներին պատասխանատվությունից ազատելու հնարավորությունը սահմանող դեպքեր,*
- 2. մշակել օրենսդրական փոփոխություններ՝ հարկային օրենսդրության մեջ պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոցները փոխելու նպատակով,*
- 3. բացառել անձին միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության ենթարկելու դրույթները:*

4. Ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսազերծման խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում բարձրաձայնվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի մաքսային մարմնի կողմից ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսազերծումն անհիմն մերժելու, մերժման պատճառները հայտարարատուին գրավոր չներկայացնելու, ինչպես նաև այդ որոշման բողոքարկման հետ կապված գործնականում ծագող մի շարք խնդիրների վերաբերյալ:

2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված մի շարք դիմում-բողոքներում անձինք հայտնել են, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացումը մերժվել է՝ առանց որևէ հիմնավոր պատճառ ներկայացնելու: Հիմնականում խնդիրները կապված են տրանսպորտային միջոցների՝ իրենց ձեռքբերման գնով չմաքսազերծելու պրակտիկայի հետ: Որպես քննարկվող մեթոդի կիրառմամբ մաքսազերծման մերժման պատճառաբանություն՝ նշվել է փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների առկայությունը, ինչպես

¹⁰⁶ Ուժի մեջ է մտնելու 2018 թվականի հունվարի 1-ից՝ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի

նաև ներկայացված փաստաթղթերի արժանահավատության վերաբերյալ մաքսային մարմնի ունեցած կասկածները:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային մաքսային մարմինները մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման վերաբերյալ մինչև վերջնական որոշում ընդունելը, բայց ոչ ուշ, քան նշված օրենքի 78-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը հայտարարատուի կողմից ներկայացվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարատուին գրավոր ներկայացնում են գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները և առաջարկում են հայտարարատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնց քննության արդյունքում, նշյալ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում են որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ կամ ընդունում են հայտարարատուի ներկայացրած մաքսային արժեքը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ տվյալներով՝ 2016 թվականի ընթացքում 1032.1 միլիարդ դրամի արժողությամբ ներմուծվող ապրանքներից 669.2 միլիարդ դրամի ներմուծումների նկատմամբ կիրառվել է մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդը, որը կազմում է ընդհանուր մաքսազերծված ապրանքների արժեքի 64.8 տոկոսը: Միաժամանակ, ըստ կոմիտեի՝ մաքսային արժեքի որոշման մեթոդներից՝ նույնական ապրանքների գործարքի գնի մեթոդը կիրառվել է ընդհանուր մաքսազերծված ապրանքների արժեքի 16.8 տոկոսի նկատմամբ: Մաքսազերծված ապրանքների արժեքի մնացած 18.4 տոկոսի նկատմամբ կիրառվել են մաքսային արժեքի որոշման մյուս երեք մեթոդները:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկությունների՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազանգերի կենտրոնը ստացել է ապրանքի՝ մաքսային արժեքը որոշելիս, գործարքի գնի մեթոդը չկիրառելու վերաբերյալ 14 բողոք: Դրանցից 10-ի դեպքերում համապատասխան փաստաթղթերը մաքսային մարմին ներկայացնելուց հետո կիրառվել է մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդը: Մնացած 4 դեպքում անհրաժեշտ փաստաթղթեր չեն ներկայացվել:

2016 թվականի ընթացքում ապրանքի մաքսային արժեքը որոշելիս գործարքի գնի մեթոդը չկիրառելու վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով է ներկայացվել 2 դիմում-գանգատ, որից 1-ը մերժվել է, իսկ մյուսը՝ բավարարվել մասնակի: Վերջինիս համաձայն՝ որոշվել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ԱՄՄՁՄ մաքսատան պետի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված թիվ 18 որոշումը և մաքսային ձևակերպումներն իրականացնել համաձայն մաքսային արժեքի նույն ապրանքների գործարքի գնի մեթոդի որոշման:

Քննարկվող խնդրի համատեքստում հատկանշական է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշումը, որտեղ դատարանը,

անդրադառնալով ՀՀ մաքսային օրենսգրքի¹⁰⁷ (2014 թվականի դեկտեմբերի 2-ի դրությամբ գործող) համանման կարգավորումներին, հայտնել է դիրքորոշում, որի համաձայն՝ մաքսազերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից, մինչդեռ, գործնականում հակառակ պատկերն է:

Ներկայումս ապրանքների մաքսային արժեքի որոշման և հայտարարագրման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Մաքսային միության մաքսային օրենսգրքով, «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով, 2008 թվականի հունվարի 25-ին ընդունված «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրով, «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման, հսկողության և ճշգրտման կարգերի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի N 376 որոշմամբ: Ըստ 2008 թվականի հունվարի 25-ին ընդունված «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագրի՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի որոշման համար առավելագույն հնարավոր չափով հիմք պետք է ծառայի այդ ապրանքների հետ կատարվող գործարքի արժեքը, այսինքն՝ ներմուծվող ապրանքների հետ կատարվող գործարքի արժեքի մեթոդը: Այն դեպքում, եթե ներմուծվող ապրանքների արժեքն այդ ապրանքների հետ կատարվող գործարքի գնի հիման վրա հնարավոր չէ որոշել, ապա ապրանքների մաքսային արժեքը որոշվում է հիշյալ համաձայնագրով սահմանված մյուս մեթոդներին համապատասխան՝ ըստ հերթականության:

Խնդրի լուծման կապակցությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր: Մասնավորապես՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ներդրվել է ներմուծվող ավտոմեքենաների գնահատման նոր մոտեցում, որի համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են անմիջապես ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը համացանցից դուրս բերել իրենց հայտարարագրած արժեքը հիմնավորող տեղեկություններ և ստանալ մաքսային մարմնի համաձայնությունը:¹⁰⁸

Այնուամենայնիվ, խնդիրը դեռևս համակարգային առումով լուծված չէ, ուստի *անհրաժեշտ է՝*

- 1. ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման միջոցով ապահովել անհիմն պատճառներով գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացման մեթոդական բացառումը,*
- 2. ապահովել քաղաքացիների համար մաքսային մարմնի կայացրած որոշումների բողոքարկման մատչելիությունը:*

¹⁰⁷ Օրենսգիրքն ուժը կորցրել է «Մաքսային կարգավորման մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի N ՀՕ-241-Ն ՀՀ օրենքով 2015 թվականին հունվարի 2-ին:

¹⁰⁸ http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOOfficialNews&nid=3199

5. Ֆիզիկական անձանցից ԱԱՀ գանձելու դեպքեր

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում բարձրաձայնվել է և 2016 թվականին շարունակվում է արդիական մնալ հարկային մարմնի կողմից ֆիզիկական անձանցից ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարում կատարելու պահանջի վերաբերյալ խնդիրը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ բողոքները պայմանավորված են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթները տարատեսակ մեկնաբանելու և արդյունքում դրանց ոչ միատեսակ կիրառությամբ:

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետի «բ» ենթակետի՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ վերջինիս սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Հարկային մարմնի աշխատակիցներն առաջնորդվում են այն դիրքորոշմամբ, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում «օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» դրույթը վերաբերում է երկրորդ և ավելի թվով անգամ գույքի օտարմանը: Օրենքի նման մեկնաբանությամբ ԱԱՀ պետք է գանձվի նաև այն դեպքերում, երբ օտարվող գույքի երկու միավորից երկրորդն է ձեռք բերվել օտարմանը նախորդող մեկ օրացուցային տարին գերազանցող ժամանակահատվածում: Նորմի այսպիսի մեկնաբանման և կիրառման հետևանքով առաջանում է այնպիսի իրավիճակ, երբ նույն տեսակի երկու միավոր գույքի օտարումը, կախված օտարման գործարքների հաջորդականությունից, մի դեպքում կհարկվի ԱԱՀ-ով, իսկ մյուս դեպքում՝ ոչ:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Վերոնշյալն ամրապնդում է այն տեսակետը, որ ապրանքների մատակարարում պետք է համարվի, և հետևաբար, ԱԱՀ հարկվի միմիայն մեկ տարվա ընթացքում գույքի երկու և ավելի միավորների այնպիսի հատուցելի օտարումը, որն իրականացվել է գույքի բոլոր միավորների ձեռքբերմանը հաջորդող մեկ տարվա

Ժամանակահատվածում:

Խնդրի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել՝ նշելով, որ վերջինս կարևոր նշանակություն կունենա նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար: Այսպես, թիվ ՎԴ/4109/05/14 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 2-ի որոշման համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքը համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք՝ մի շարք պայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ եթե գործարքը բավարարում է նշված բոլոր պայմաններին, ապա այն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում է ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք, իսկ եթե նշված պայմաններից որևէ մեկը բացակայում է, ապա գործարքը չի կարող համարվել ապրանքի մատակարարում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից որդեգրած մոտեցման համաձայն՝ ապրանքի մատակարարում համարվում են մեկ օրացուցային տարվա ընթացքում նույն տեսակի գույքի օտարման երկրորդ և հետագա գործարքները, եթե օտարվող գույքը ձեռք է բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը քննարկել է հետևյալ հնարավոր իրավիճակները. այսպես, եթե անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում իրականացրել է նույն տեսակի գույքի օտարման երկու գործարք, որոնցից առաջինով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, իսկ երկրորդ գործարքով օտարել է այն գույքը, որը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, ապա, ըստ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի վերը նշված կարգավորման՝ օտարման երկրորդ գործարքը դիտարկվում է որպես ապրանքի մատակարարում, հետևաբար նաև՝ ԱԱՀ-ով հարկվող գործարք: Այն դեպքում, սակայն, երբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը մեկ օրացուցային տարվա ընթացքում առաջին գործարքով օտարում է այն գույքը, որը ձեռք է բերել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ երկրորդ գործարքով՝ այն գույքը, որը ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարուց ավելի վաղ, ապա օրենսդրի որդեգրած մոտեցման համաձայն՝ այս իրավիճակում երկրորդ գործարքը չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում: Ընդ որում, նման պայմաններում առաջին գործարքը նույնպես չի կարող դիտարկվել որպես ապրանքի մատակարարում, քանի որ քննարկվող իրավակարգավորման համաձայն՝ ապրանքի մատակարարում է երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը բխում է օրենսդրի կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությունում առկա «եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» արտահայտության տառացի մեկնաբանությունից, որում օրենսդիրն օգտագործել է «տվյալ գույքի»

արտահայտությունը՝ նկատի ունենալով քննարկվող գործարքով օտարվող գույքը, այլ ոչ թե նույն օրացուցային տարվա ընթացքում նախկինում օտարված գույքը: Այսպիսով, մեկ օրացուցային տարվա ընթացքում երկրորդ և հաջորդող նույն տեսակի գույքի օտարման գործարքն ապրանքի մատակարարում որակելու համար այդ գույքի ձեռքբերման և օտարման գործարքների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ տարին՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է ձեռք բերվել տվյալ օրացուցային տարում առաջինն օտարված գույքը:

Խրախուսելի է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային արտոնությունների փաթեթի նախաձեռնությամբ հանդես գալը, որի արդյունքում 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերին համապատասխան ապրանքի մատակարարում համարվող գործարքներ իրականացրած՝ մինչև այդ օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանների համար գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորություններ ունեցող ֆիզիկական անձինք ազատվում են այդ գործարքների համար հաշվարկված և չվճարված տույժերի և տուգանքների վճարումից, եթե օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում կամ մինչև օրենքն ուժի մեջ մտնելը կատարել են հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկացմամբ՝ քաղաքացիների կողմից ԱԱՀ-ի մասով հարկվող գործարքներով առաջացած հարկային պարտավորությունների գանձման հետ կապված կա շուրջ 250 դատական վարույթ: Մասնավորապես՝ ընդհանուր առմամբ մայր գումարի չափը կազմում է շուրջ 3.8 միլիարդ դրամ, իսկ հաշվարկված տույժը՝ 680 միլիոն դրամ, տուգանքը՝ 1.290 միլիարդ դրամ: 4-5 ամսվա ընթացքում ԱԱՀ-ից բխող գործարքների մասով քաղաքացիների կողմից ներկայացվել են ճշտված հաշվարկ-հաշվետվություններ՝ շուրջ 1 միլիարդ դրամի չափով: «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունման պայմաններում այդ հաշվետվություններում արտացոլված շուրջ 550 միլիոն դրամի չափով տույժ-տուգանքները նույնպես կազատվեն վճարումից: Ընդ որում՝ շուրջ 200 միլիոն դրամի չափով արդեն իսկ կատարվել են մայր գումարի վճարումներ:¹⁰⁹

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթի պատշաճ մեկնաբանությունը և կիրառումը՝ բացառելով ԱԱՀ վճարումներ կատարելու ոչ իրավաչափ պահանջի ներկայացումը:

6. Գույքահարկի գանձման անհիմն պահանջների ներկայացման դեպքեր

¹⁰⁹ http://www.taxservice.am/MD_News.aspx?ntname=MDOOfficialNews&nid=3166

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված մի շարք դիմումներով բարձրացվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկանքների համաձայն՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի գույքահարկի (2008-2016 թվականների համար) հարկային պարտավորությունների առաջադրման հարցը, մինչդեռ խախտումները հայտնաբերվել են 2015-2016 թվականներին:

2012 թվականի մարտի 21-ին ընդունված և 2012 թվականի ապրիլի 28-ին ուժի մեջ մտած ««Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-96-Ն և ««Գույքահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-94-Ն օրենքների համաձայն՝ խախտման հայտնաբերման եռամյա ժամկետն երկարաձգվել է և սահմանվել 10 տարի, միաժամանակ նշված օրենքներում դրանց հետադարձ ուժի մասին դրույթներ չեն նախատեսվել:

Խնդիրն այն է, որ մինչև 2012 թվականի ««Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-96-Ն օրենքի ընդունումը գործող դրույթի համաձայն՝ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չէին կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել էր այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ: Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ մինչև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտի ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա տարածվում են մինչև փոփոխությունները կամ լրացումներն ուժի մեջ մտնելը գործող նորմերը, եթե սույն օրենքով կամ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մինչև 2012 թվականը գույքահարկի գծով խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող 3 տարին լրանալուց հետո, իսկ նշված դեպքերում խախտումը հայտնաբերվել է 2015-2016 թվականներին, հետևաբար մինչև 2012 թվականը հաշվարկված գույքահարկը և համապատասխան տույժերը բռնագանձման ենթակա չեն:

Դիմումներով բարձրացված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է տվյալ ժամանակահատվածում գործող խմբագրությամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, հետևաբար գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վճարման պահանջներ ներկայացնելիս պետք է չառաջադրել մինչև 2012 թվականը

հաշվարկված գույքահարկի, հողի հարկի և դրանց չվճարման արդյունքում համապատասխան տույժերի մասով պահանջներ, քանի որ դրանք հայտնաբերվել են 2015-2016 թվականներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի համապատասխան դրույթի պատշաճ մեկնաբանությունը և կիրառումը՝ բացառելով գույքահարկի վճարում կատարելու ոչ իրավաչափ պահանջի ներկայացումը:

ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Կարծիքի արտահայտման և խոսքի ազատությունը

Կարծիքի արտահայտման և խոսքի ազատության ամուր պաշտպանվածությունը կարևորագույն նշանակություն ունի ժողովրդավարական հասարակության համար: Այս հարցին անմիջականորեն առնչվում է լրատվության միջոցների ու լրագրողների աշխատանքի դերն ու նշանակությունը, նրանց ազատ գործունեության երաշխավորումը:

Այս առումով, 2016 թվականի ընթացքում լրատվական աշխատանքի ապահովման տեսանկյունից պետք է համարել 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների ընթացքում լրագրողների օրինական գործունեության խոչընդոտման դեպքերը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից մանրմասն ուսումնասիրվել են բոլոր բանավոր ու գրավոր բողոքները, ինչպես նաև հրապարակումները: Կատարվել է նաև տեղանքի ուսումնասիրություն մի շարք վայրերում, օրինակ, Սարի թաղի այն հատվածում, որտեղ տեղի ունեցան բախումներ ցուցարարների և ոստիկանների միջև, որի ընթացքում տուժեցին լրագրողներ: Հավաքվել և ուսումնասիրվել են ականատեսների հայտարարություններ, ՋԼՄ-ների լրատվական նյութեր, սոցիալական ցանցերի հրապարակումներ, մարդու իրավունքների տեղական և միջազգային կառույցների, հանրային գործիչների, դիվանագիտական կազմակերպությունների, պետական մարմինների բազմաթիվ հայտարարություններ և ուսումնասիրություններ: Այս ուսումնասիրությունների արդյունքները համապարփակ կերպով ներկայացված են 2016 թվականի հուլիսյան իրադարձություններին վերաբերող՝ Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցում:

Մույն տարեկան հաղորդման շրջանակում միայն հարկ է նշել, որ ըստ հավաքագրված փաստերի, նշված օրերի ընթացքում կոպտորեն խախտվել են «Azatutyun.am», «Alplus.am», «Panorama.am», «Lragir.am», «Armlur.am», «Panarmenian.net», «PAN-Photo», «1in.am», «NewsPress.am», «Հայկական ժամանակ» լրատվական ծառայությունների, ինչպես նաև «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվականի և «LifeNews» ռուսական լրատվամիջոցի լրագրողների և օպերատորների իրավունքները: Լրագրողների նկատմամբ գործադրվել է նաև բռնություն:

Վերը նշված գործողությունները լրագրողական ազատության անօրինական միջամտություն են: Որևէ օրենքով արգելված չէ լրագրողի կողմից հանրային միջավայրում ոստիկանական գործողությունների տեսակարահանումը, քանզի դրանով լրագրողը իրականացնում է հանրային նշանակության կարևոր գործառույթ՝ տարածում է տեղեկատվություն հանրությանը հուզող դեպքերի վերաբերյալ, իսկ հանրությունն իր հերթին ունի նման տեղեկատվություն ստանալու իրավունք:

Լրագրողը չպետք է նաև ներգրավվի որպես վկա այն իրադարձությունների,

դեպքերի կապակցությամբ, որոնք լուսաբանել է: Այս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը արտահայտել է դիրքորոշում այն դեպքերի առնչությամբ, երբ լրագրողները ներգրավվել են որպես վկա իրենց աղբյուրների բացահայտման առնչությամբ՝ նշելով, որ միայն այնպիսի խիստ բացառիկ հանգամանքներում, ինչպիսին են անձի կյանքի պաշտպանության, ծանր (առանձնապես ծանր) հանցագործությունը կանխելու կամ ծանր (առանձնապես ծանր) հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու նպատակները^[1] կարող են արդարացված լինել լրագրողին որպես վկա ներգրավելը, հակառակ դեպքում լրջորեն վտանգվում է լրատվամիջոցների տեղեկություններ տարածելու ազատությունը, որն էլ իր հերթին ազդում է հանրային նշանակություն ունեցող տեղեկությունների ազատ հոսքի վրա: Եթե լրագրողը բերման է ենթարկվել հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիման վրա, ապա անօրինական է նրան որպես վկա ներգրավելը:

Հուլիսյան իրադարձությունների օրերին մի շարք լրագրողական միություններ և իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ հանդես եկան լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելը դատապարտող հայտարարություններով: Հուլիսի 30-ին տեղի ունեցավ լրագրողների բողոքի ակցիա Ազատության հրապարակում, որին մասնակցեց նաև Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը՝ որպես բողոքին համերաշխության նշան:

Իրականում, լրագրողի նկատմամբ ապօրինի գործողություն կատարող ցանկացած անձ պետք է ենթարկվի պատասխանատվության խիստ միջոցների, ինչն այդ դեպքում կունենա նաև կանխարգելիչ նշանակություն: Որևէ պատճառ չի կարող արդարացնել մասնագիտական գործունեություն իրականացնող լրագրողի նկատմամբ բռնությունը:

Հուլիսյան իրադարձությունները վեր հանեցին մեկ հիմնարար խնդիր ևս: Խոսքը վերաբերում էր սոցիալական ցանցերում աստեղության տարածմանն ու բռնության քարոզչության աննախադեպ բռնկմանը: Այս վիճակին, իհարկե, զգալիորեն նպաստեցին նաև Ոստիկանության կողմից թույլ տրվող խախտումները:

Սոցիալական ցանցերում և հատկապես «Ֆեյսբուք» ցանցի միջոցով արվում էին զենքով հարցեր լուծելու բացահայտ կոչեր: Ոստիկանության կողմից թույլ տրվող խախտումների վերաբերյալ տեղեկություններին զուգահեռ, հասարակության որոշ խմբերի կողմից շարունակվում էր Ոստիկանության և ընդհանրապես պետական ինստիտուտների նկատմամբ աստեղության խոսքն ու բռնության, այդ թվում՝ զենքի միջոցով հարցեր լուծելու անթույլատրելի կոչերը: Կյանքից զրկված ոստիկանների օրինակով սոցիալական ցանցերում տարածվում էին բռնությունն ու իրավունքից դուրս գործելը խրախուսող կոչեր՝ զուգորդված ռասիստական բնույթի համեմատություններով: Ակնհայտորեն անտեսվում էր հասարակության այն հատվածի

[1] ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1234 որոշում: Տե՛ս դատական ակտի եզրափակիչ մասը՝ կետ 1:

մասնավոր և ընտանեկան կյանքը, ում դեմ ուղղված էր ատելությունը՝ այդ ամենը ներկայացնելով ակնհայտ քսենոֆոբիայի տարածման լույսի ներքո:

Նկարագրված վիճակը մարդու իրավունքների ու հասարակությունում հանդուրժողականության ապահովման տեսանկյունից անթույլատրելի էր: Ուստի պետք է ձեռնարկել բոլոր ջանքերը դրանք հետագայում թույլ չտալու համար (խոսքի ազատության պաշտպանվածության, լրագրողների դերի ու սոցիալական ցանցերում ատելության ու բռնության քարոզչության մասին մանրամասն խոսվում է 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցում):

2. Բավարար կերպով կանոնակարգված չէ էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների՝ ցերեկային ժամերին ցուցադրման սահմանափակումները

Շարունակվում են անընդհատ ստացվել բողոքներ ցերեկային ժամերին սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող, անչափահասների զարգացման վրա բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների՝ ցերեկային ժամերին հեռարձակման մասին: Հարցին անդրադարձել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը՝ իր 2013-2015 թվականների տարեկան զեկույցներում:

Խնդիրն այն է, որ նման հաղորդումները բացասական են ազդում հասարակության հատկապես խոցելի խմբերի՝ երեխաների զարգացման վրա և հանդիսանում են երեխաների իրավունքների խախտում: Այսպես, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 17-րդ հոդվածն ամրագրում է, որ պետություններն ապահովում են երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանն ու նրա ֆիզիկական և հոգեկան առողջ զարգացմանն ուղղված տեղեկատվության ու նյութերի մատչելիությունը և խրախուսում երեխայի բարեկեցությանը վնասող տեղեկատվությունից և նյութերից երեխային պաշտպանելու համապատասխան ուղենիշների զարգացումը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն: Նույն մասով սահմանվում է, որ նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանվում են օրենքով: Ստացվում է, որ օրենսդրորեն պետք է սահմանվեն այն չափորոշիչները, որոնցով պետք է գնահատվեն հեռարձակվող հաղորդումները և գնահատվեն վերոնշյալ ժամերին հեռարձակվելու համար: Նշված չափորոշիչներն արդեն իսկ սահմանված են Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի

(Հանձնաժողով) 2010 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ¹¹⁰, սակայն անհրաժեշտ է վերջիններս ամրագրել համապատասխան օրենքում:

Թեև Հանձնաժողովը չի կարող հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, այնուամենայնիվ, որպես ոլորտի լիազոր մարմին, կարող է համապատասխան մարմինների միջոցով և համատեղ իրականացնել անհրաժեշտ օրենսդրական նախագծերի մշակում, ինչի վերաբերյալ Պաշտպանի գեկույցներում Հանձնաժողովին ներկայացվել են համապատասխան առաջարկներ:

Այնուամենայնիվ, ըստ Հանձնաժողովի տեղեկացրել են, որ Հանձնաժողովը օրենսդրական նախաձեռնության իրավունք չունի, նա մասնակցություն է ունենում իր գործունեության հետ կապված իրավական ակտերի նախագծերի մշակման և քննարկման աշխատանքներին՝ ներկայացնելով իր առարկությունները և առաջարկները: Օրենսդրական նախաձեռնությամբ օժտված մարմինների կողմից Հանձնաժողովի գործունեության ոլորտը կարգավորող օրենքների նախագծերի մշակման ընթացքում Հանձնաժողովը ներկայացրել է իր առաջարկությունները: Ավելին, նշվել է նաև, որ 2016 թվականի ընթացքում Հանձնաժողովում այս հարցի կապակցությամբ բողոքներ չեն ներկայացվել:

Ուստի, անհրաժեշտ է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝ սահմանելով էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները կամ նշված օրենքում ամրագրել, որ վերջիններիս սահմանվում են իրավասու մարմնի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտով:

3. Մինչ օրս չեն վերացվել ազգային փոքրամասնությունների լեզուներով Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումների եթերաժամի օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները

Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների եթերաժամի համար օրենսդրությամբ սահմանված են սահմանափակումներ, ինչը խնդրահարույց է միջազգային չափանիշների տեսանկյունից: Մասնավորապես, ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար առավելագույն եթերային ժամանակի սահմանումը խնդրահարույց է փոքրամասնությունների համար լրատվամիջոցների համընդհանուր հասանելիության ապահովման տեսանկյունից և անհարկի սահմանափակում է նրանց մուտքը հանրային լրատվամիջոցներ: Խնդրի մասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել է տարիներ շարունակ և առ այսօր լուծում չի ստացել:

¹¹⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56607>

Այսպես, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «դ.» ենթակետով սահմանվում է, որ Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է եթերային ժամանակ տրամադրել ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար, ընդ որում՝ այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է *գերազանցի* հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված «Տեղեկատվական հասարակությունում հանրային լրատվամիջոցների նպատակի մասին» թիվ (2007)3 հանձնարարականի համաձայն՝ պետությունները պետք է տեխնոլոգիական տարաբնույթ միջոցներով ապահովեն հանրային լրատվամիջոցների համընդհանուր հասանելիությունը բոլոր անհատներին և հասարակության խմբերին, այդ թվում՝ փոքրամասնություններին և խոցելի խմբերին¹¹¹:

Ավելին, ՀՀ-ի կողմից վավերացված 1995 թվականի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսում է, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիք ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը: Ավելին, համաձայն Կոնվենցիայի՝ լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չպետք է ենթարկվեն խտրականության¹¹²:

Հավելենք նաև, որ տվյալ օրենսդրական խնդրին անդրադարձ է կատարվել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, որտեղ, մասնավորապես նշվել է, որ օրենքի նշյալ դրույթը սահմանափակում է ազգային փոքրամասնությունների լեզուներով հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումները և անհրաժեշտ է երաշխավորել փոքրամասնության լեզվով հեռարձակման նվազագույն ժամանակահատվածը¹¹³, ինչը ենթադրում է նաև գործող օրենսդրությամբ փոքրամասնությունների լեզվով հեռուստառադիոհաղորդումների ընդհանուր ժամաքանակից որոշակի ժամաքանակը չգերազանցելու պահանջի վերացում:

Ուստի, անհրաժեշտ է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի «դ.» ենթակետում կատարել համապատասխան փոփոխություններ՝ վերացնելով Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների էթերաժամի

¹¹¹ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2007)3 «Հանրային լրատվամիջոցների դերը տեղեկատվական հասարակությունում» հանձնարարական, կետ v, <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1089759>

¹¹² <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178>

¹¹³ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԵԽ 2012 թվականի բանաձև, http://www.gov.am/u_files/file/kron/Resolution.pdf, http://www.gov.am/u_files/file/kron/Opinion.pdf

սահմանափակումները՝ սահմանելով նվազագույն եթերաժամանակ:

4. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին Բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու հարցը կանոնակարգված չլինելու խնդիր

2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով անձը տեղեկացրել է, որ Կապանի քաղաքապետարանի պաշտոնական կայքէջում տեղադրված իր ամուսնու հաշվառման հասցեի վերաբերյալ տվյալները տարբերվում են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրամադրված՝ նույն անձի հաշվառման հասցեի վերաբերյալ տեղեկատվական տվյալներից:

Նշվածի կապակցությամբ ըստ Կապանի քաղաքապետարանի պարզաբանումների՝ Կապանի քաղաքապետարանի համակարգչային շտեմարանը ներբեռնվել է 2008 թվականի տվյալներով և տրամադրված է եղել ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից: Սյունիքի մարզպետարանի կողմից քաղաքապետարանին տրամադրված Կապան քաղաքային համայնքի բնակչության ռեգիստրի տվյալները տեխնիկական պատճառներով հնարավոր չէ ներբեռնել համակարգչային շտեմարան, ուստի Կապանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի տեղեկատվությունը չի ներառում 2008 թվականից հետո արված փոփոխությունները (հաշվառումից հանման կամ նոր հասցեում հաշվառման վերցվելու հետ կապված):

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 214-Ա որոշման համաձայն՝ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալները ստանում են ՀՀ համապատասխան մարզպետարաններից: Ռեգիստրը յուրաքանչյուր կիսամյակից հետո 5-րդ աշխատանքային օրը մարզպետարանին է տրամադրում յուրաքանչյուր համայնքի ռեգիստրում հաշվետու ժամանակաշրջանում հաշվառված անձանց, ինչպես նաև յուրաքանչյուր համայնքի ռեգիստրի հաշվառումից հանված անձանց մասին համապատասխան տվյալները: Նշված որոշմամբ սահմանված տվյալները, ըստ համայնքների, համապատասխան մարզպետարաններին տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը՝ էլեկտրոնային կրիչներով:

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության պարզաբանումների՝ տեղական ինքնակառավարման մարմիններին Բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու գործընթացը կանոնակարգելու նպատակով՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը 2013 թվականին նախաձեռնել էր ՀՀ կառավարության համապատասխան որոշման մշակման աշխատանքները: Արդյունքում, ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի

տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 2014 թվականի մարտի 6-ին:

Այնուհետև, 2015 թվականի մայիսի 18-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում «Անհատական տվյալների մասին» ՀՀ 2002 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-422-Ն օրենքը: Ոստի, անհրաժեշտություն է առաջացել մշակել ՀՀ կառավարության նոր որոշում, որը կրի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներից, սակայն նշված որոշումը դեռևս չի ընդունվել: Արդյունքում համայնքապետարանների և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության անձի՝ հաշվառման վայրի վերաբերյալ տիրապետած տվյալները միմյանցից տարբերվում են՝ պրակտիկայում առաջացնելով մի շարք խնդիրներ:

Ըստ ներկայացված տեղեկության՝ նախարարությունը ձեռնամուխ էր եղել մշակելու ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը կրի «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Մասնավորապես, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է, որ «Էլեկտրոնային տեղեկատվական համակարգի միջոցով անձնական տվյալների փոխանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Սակայն նույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ «Սույն օրենքի 7-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից»:

Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ նախարարության կողմից մշակվել էր «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով սահմանվում էր համապատասխան հղումը, այն է՝ գործող օրենքի 29-րդ հոդվածում կատարված լրացմամբ սահմանվում է, որ «Մինչև 2019 թվականի հունվարի 1-ը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև անձնական տվյալների փոխանցման կարգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով»: Այդ օրինագիծը ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվեց 2016 թվականի հունիսի 17-ին: ՀՀ կառավարության քննարկմանը կներկայացվի «Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ տրամադրելու կարգը հաստատելու» և «ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 214-Ս որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի ընդունմամբ մարզպետարաններին և տեղական ինքնակառավարման մարմիններին բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու հարցը կկանոնավորվի և կկրի պարբերական բնույթ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ՀՀ տարածքային կառավարման և

*զարգացման նախարարության կողմից օրենսդրորեն կարգավորել
մարզպետարաններին և տեղական ինքնակառավարման մարմիններին Բնակչության
պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգից տվյալներ ստանալու խնդիրը:*

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

1. «Փաստացի քրեական հետապնդման» իրականացման ոչ իրավաչափ պրակտիկան

2016 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են քաղաքացիների բողոքներ, որոնք վերաբերում են քրեական գործով վարույթի շրջանակներում անձի արդար դատաքննության իրավունքը խաթարող, այսպես կոչված, «փաստացի քրեական հետապնդման» ոչ իրավաչափ պրակտիկային: Այդ բողոքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հիմնականում քաղաքացիների համար խնդրահարույց է այն, որ վերջիններս, հարցաքննվելով որպես վկա, այնուհետև միևնույն գործով վարույթի շրջանակներում ներգրավվում են որպես մեղադրյալ:

Հարկ է նկատի ունենալ, որ անձի՝ միևնույն քրեական գործով վարույթի շրջանակներում կարգավիճակի փոփոխությունն ինքնին խնդրահարույց չէ, եթե վարույթն իրականացնող մարմնի կողմից քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման, այդ թվում՝ անձին հարցաքննելու ընթացքում ապահովվել են վերջինիս՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու համարժեք դատավարական երաշխիքները:

Այսպես, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի համաձայն՝

«Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»:

Սահմանադրական դրույթի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ անձի՝ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի իրացման շրջանակները կանխորոշվել են՝ պայմանավորված սուբյեկտային կազմով (ազգակցական կապի առկայությունը) և ակնկալվող տեղեկության բնույթի վերաբերյալ ողջամիտ ենթադրությամբ:

Միևնույն ժամանակ, ինքնամերկացման պարտականությունից ազատ լինելու յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքի երաշխավորման պայմաններում Սահմանադրության 67-րդ հոդվածն ամրագրում է հանցագործության համար մեղադրվողի՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ, 63-րդ և 65-րդ հոդվածների կարգավորումների ուժով քրեական հետապնդման ենթարկվող անձի պաշտպանության իրավունքի շրջանակներում երաշխավորվում է լռելու, այսինքն՝ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքն առանց որևէ նախապայմանի:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները

միջազգայնորեն ճանաչված սկզբունքներ են, որոնք հանդիսանում են 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի անկյունաքարը: Դրանց իմաստը կայանում է, մասնավորապես, իշխանությունների կողմից կիրառվող անօրինական հարկադրանքից մեղադրյալին պաշտպանելու մեջ՝ թույլ տալով խուսափել դատական սխալներից և երաշխավորել 6-րդ հոդվածի պահանջների կատարումը: Իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, մասնավորապես, նախատեսում է, որ դատախազությունը մեղադրյալի դեմ հարուցված քրեական գործն ապացուցելիս չպետք է դիմի այնպիսի ապացույցների օգնությանը, որոնք ձեռք են բերվել հարկադրանքի և մեղադրյալի կամքն անտեսելու ճանապարհով¹¹⁴:

Դատարանը, անդրադառնալով արդար դատաքննության իրավունքի երաշխավորման շրջանակներին, մասնավորապես, նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով «մեղադրանքը» բնորոշվում է իբրև «իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցում հանցագործություն կատարած լինելու կասկածանքի առկայության մասին», ինչպես նաև «իրավիճակ, երբ կասկածյալի նկատմամբ էական ազդեցություն է գործադրվել»¹¹⁵:

Ավելին, անդրադառնալով առաջադրվող մեղադրանքի բնույթի և պատճառների մասին անձին ժամանակին և հանգամանորեն տեղեկացնելու պահանջին՝ Դատարանն ընդգծել է, որ *«մեղադրվող»* և *«քրեական մեղադրանք»* եզրույթներն ունեն ինքնավար հասկացություն և պետք է մեկնաբանվեն ոչ այնքան ֆորմալ, որքան օբյեկտիվ իրականության հաշվառմամբ: Այս համատեքստում Դատարանն արձանագրել է, որ մեղադրանքը ենթադրում է ոչ միայն հանցագործություն կատարած լինելու կասկածանքի առկայության մասին պաշտոնական հայտարարություն, այլև *ցանկացած միջոց, որն էականորեն ազդում է կասկածյալի կարգավիճակի վրա*¹¹⁶:

ՄԱԿ-Ի գլխավոր ասամբլեայի 1988 թվականի դեկտեմբերի 9-ի 43/173 բանաձևով հաստատված՝ որևէ ձևով ձերբակալվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի 21-րդ սկզբունքի համաձայն՝

¹¹⁴ St 'u, մասնավորապես, Գաֆգենն ընդդեմ Գերմանիայի (Gäfgen v. Germany) գործով վճիռը, գանգատ թիվ 22978/05, կետ 94, Ջայչենկոն ընդդեմ Ռուսաստանի (Aleksandr Zaichenko v. Russia) գործով վճիռը, գանգատ թիվ 39660/02, կետ 38, Ֆունկեն ընդդեմ Ֆրանսիայի (Funke v. France) գործով վճիռը, գանգատ թիվ 10828/84, կետ 44, Ջոն Մուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (John Murray v. the United Kingdom) գործով վճիռը, գանգատ թիվ 18731/91, կետ 45, Սաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության (Saunders v. the United Kingdom) գործով վճիռը, գանգատ թիվ 19187/91, կետ 68, Հինեյն ու Մակգուինեսն ընդդեմ Իռլանդիայի (Heaney and McGuinness v. Ireland) գործով վճիռը, գանգատ թիվ 34720/97, կետ 40:

¹¹⁵ St 'u Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium) գործով վճիռը, գանգատ թիվ 6903/75, կետ 46, and Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany), գանգատ թիվ 8130/78, կետ 73, Mcfarlane v. Ireland, գանգատ թիվ 31333/06, կետ 143:

¹¹⁶ St 'u Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany), գործով վճիռը նույն տեղում, Քասսն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Casse v. Luxembourg) գործով վճիռը, գանգատ թիվ 40327/02, կետ 71, Գեստոսոն ընդդեմ Իսպանիայի (Gestoso v. Spain) գործով որոշումը, գանգատ թիվ 39519/98:

Արգելվում է չարաշահել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձի վիճակը՝ նրան խոստովանության կամ որևէ այլ ինքնամերկացման կամ ցանկացած այլ անձի դեմ ցուցմունքներ տալ հարկադրելու նպատակով¹¹⁷:

Այսպիսով, խնդիրը դիտարկելով անձի արդար դատաքնության իրավունքի և դրա անքակտելի մաս հանդիսացող՝ անձի լռելու իրավունքի երաշխավորման համատեքստում՝ հարկ է նկատել, որ Եվրոպական դատարանի կողմից կիրառվող երկու ինքնուրույն՝ «լռություն պահպանելու» և «ինքնամերկացման պարտականությունից ազատ լինելու» հասկացությունների՝ ներպետական օրենսդրական կարգավորումներով բացահայտվող բովանդակային ծավալները տարբեր են: Հետևաբար, անձի դատավարական կարգավիճակով պայմանավորված՝ այդ իմունիտետներից օգտվելու օրենսդրական երաշխիքները ևս նույնական չեն:

Այլ կերպ ասած, փաստացի քրեական հետապնդման խնդիրն առաջ է գալիս, երբ անձը ֆորմալ առումով հարցաքննվում է որպես վկա (տուժող)՝ ունենալով ցուցմունք տալու պարտականություն այն պարագայում, երբ վարույթն իրականացնող մարմնի մոտ արդեն իսկ առկա է վերջինիս կողմից հանցագործություն կատարած լինելու կասկածանք:

Միննույն ժամանակ, հարկ է նկատել, որ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքը համարժեք իրավական երաշխիքների ապահովմամբ «փաստացի քրեական հետապնդման» կանխմանն ուղղված օրենսդրական արդյունավետ կառուցակարգեր չի նախատեսում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ և 64-րդ հոդվածներով ամրագրված՝ կասկածյալի և մեղադրյալի օրենսդրական բնորոշումից բխում է, որ անձը համապատասխան դատավարական կարգավիճակ, հետևաբար նաև օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանությունն իրականացնելու իրավունք է ձեռք բերում քրեական հետապնդման մարմնի կողմից դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ անձին մեղադրանք առաջադրելու դեպքերում¹¹⁸:

Ինչ վերաբերում է այս հարցում իրավաչափ իրավակիրառ պրակտիկայի ապահովմանն ուղղված ձեռնարկված միջոցառումներին, հարկ է նկատել, որ 2015 թվականի ընթացքում ՀՀ դատարանների կողմից կայացված արդարացման դատավճիռների ուսումնասիրության արդյունքների քննարկման արդյունքում ՀՀ

¹¹⁷ <http://www.osce.org/hy/yerevan/74924?download=true>

¹¹⁸ Այս առումով, օրինակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 97-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք *inter alia* ձեռք են բերվել մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու: Բացի այդ, նախագծի 110-րդ հոդվածն ամրագրում է, որ ձերբակալված անձը ձերբակալման որոշումը ստանալու պահից, իսկ եթե օրենքով սահմանված ժամկետում այն չի հանձնվել, ապա իրեն ազատությունից փաստացի զրկելուց հետո վեց ժամը լրանալու պահից ձեռք է բերում սույն օրենսգրքով մեղադրյալի համար նախատեսված բոլոր վերաբերելի իրավունքները և պարտականությունները: Մինչև մեղադրյալի վերաբերելի իրավունքները ձեռք բերելը ձերբակալված անձն ունի նվազագույն իրավունքներ, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունք, http://www.parliament.am/draft_docs5/K-084lr_19102016.pdf

դատախազության կոլեգիան 2016 թվականի դեկտեմբերի 16-ի նիստում արձանագրել է, որ անձի կողմից հանցանք կատարելու մասին վկայող այնպիսի փաստական տվյալների առկայության դեպքում, երբ վերջինիս մասնակցությամբ կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողությունները կվկայեն վարույթն իրականացնող մարմնի համոզմունքն առ այն, որ նա, հնարավոր է, հանցանք է կատարել, պետք է ապահովել, որ վերջինս ստանա համապատասխան դատավարական կարգավիճակ:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ կարելի է պնդել, որ անկախ անձի՝ քրեադատավարական օրենքի իմաստով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելուց՝ վերջինս պետք է օգտվի քրեական հետապնդման ներքո գտնվող անձի վերաբերելի բոլոր իրավունքներից այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները (որոշումները) հիմք են տալիս ողջամտորեն ենթադրելու, որ առկա է տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածանք:

Ուստի, գործնականում պետք է ապահովել, որ բոլոր այն դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմնի մոտ առկա է անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածանք, անձն օգտվի քրեադատավարական օրենքով նախատեսված համարժեք երաշխիքներից: Իրավաչափ իրավակիրառ պրակտիկայի ապահովման նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել «փաստացի քրեական հետապնդման» կանխմանն ուղղված արդյունավետ կառուցակարգեր:

2. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու ոչ իրավաչափ պրակտիկան

Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ առ այն, որ անձը սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՄԷԿՏ) համակարգով իր ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման մասին տեղեկացվում է միայն այն ժամանակ, երբ փաստացի առնչվում է կիրառված արգելքի հետ, այսինքն՝ երբ ցանկանում է դուրս գալ երկրից:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննության առնված մի շարք դեպքերում կասկածյալի (մեղադրյալի)՝ ՄԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը չէր հանվել՝ չնայած նրան, որ վերջինիս նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացված է եղել: Ավելին, դեպքեր են արձանագրվել, երբ այդպիսի սահմանափակումը երկար ժամանակ պահպանվել էր կարճված քրեական գործի, անգամ անձի կողմից դատարանի դատավճռով սահմանված պատիժը կրած լինելու կամ անձի նկատմամբ դատարանի կողմից արդարացման դատավճիռ կայացնելու և ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացված լինելու պայմաններում:

Արձանագրվել է նաև դեպք, երբ քաղաքացին դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին՝ տեղեկացնելով, որ դատարանի դատավճռով իր նկատմամբ որպես

պատիժ նշանակվել է տուգանք, և դատավճիռը սահմանված կարգով օրինական ուժի մեջ է մտել, սակայն Բագրատաշենի անցակետում իրեն արգելել են երկրից դուրս գալ, քանի որ պարզվել է, որ վերը նշված սահմանափակումը դեռևս չի վերացվել:

Խնդրի կապակցությամբ քրեական հետապնդման մարմնից պատասխան է ստացվել, որ տվյալ իրավիճակում քննիչն իրավասու չէ վերացնել քաղաքացու նկատմամբ կիրառված՝ երկրից դուրս գալու սահմանափակումը, քանի որ գործը ուղարկվել է դատարան, և այդ հարցը պետք է լուծվեր վերջնական դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելով: Չնայած դրան, քաղաքացու նկատմամբ կիրառված սահմանափակումը վերացվել է՝ քրեական հետապնդման մարմնի կողմից հեռախոսազանգի միջոցով ոստիկանությանը դատարանի դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելու մասին տեղեկացնելու արդյունքում:

Անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակմանն ուղղված պետական մարմինների գործողությունների իրավաչափությունը գնահատելու, ինչպես նաև առկա օրենսդրական և իրավակիրառման հետ կապված խնդիրները վեր հանելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի համակողմանի ուսումնասիրության առարկա են դարձել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ապահովման սահմանադրաիրավական հիմքերն ու միջազգային իրավական սկզբունքները, արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը, ոլորտի ներպետական օրենսդրական կարգավորումների որոշակիությունն ու կանխատեսելիությունը: Արդյունքում, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել են օրենսդրական հստակ կառուցակարգերի բացակայության հետ կապված այն խնդիրները, որոնք և կանխորոշում են քննարկվող հարցի կապակցությամբ ոչ իրավաչափ իրավակիրառ պրակտիկան: Այսպես, իրավական եզրահանգումները հիմնականում հանգում են հետևյալին՝

- *Քրեական դատավարության կամ դրա առանձին փուլերի խնդիրների իրագործմանն ուղղված վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն, այդ թվում՝ դատավարական կարգավիճակ ունեցող անձի անձնագիրը վերցնելը, պետք է իրավական հիմք ունենա հենց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:* Միայն այսպիսի լուծումը կապահովի անձի անձնագիրը վերցնելու հետ կապված խնդրո առարկա կարգավորումների՝ «օրենքի որակ» չափանիշից բխող որոշակիություն ու կանխատեսելիություն նախևառաջ այն անձի համար, ում նկատմամբ կիրառվում է դատավարական ներգործության միջոցը: Վերջիններս էլ իրենց հերթին կանխորոշվում են նրանով, թե որքանով են այդ կարգավորումներն ընդգրկվում անձի իրավունքների և ազատությունների սահմանափակման՝ քրեադատավարական օրենքով ամրագրված ընթացակարգերի, մասնավորապես՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի սահմաններում:

- Ազատությունից զրկելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս անձի անձնագիրը վերցնելու իրավաչափությունը կարող է ապահովվել միայն *օրենքի մակարդակում որոշակի և կանխատեսելի ընթացակարգերի սահմանման և անձի*

իրավունքների սահմանափակման համաչափության կանոնների կիրառման ճանապարհով:

- ՄԷԿՏ համակարգի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտման հիմքում ընկած են ոչ միայն այդպիսի սահմանափակումների կիրառման *ոչ կանխատեսելիությունը կամ թափանցիկությունը*, այլև այդ *սահմանափակումները վերացնելու կառուցակարգերի բացակայությունը:*

- Անձի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման վերացման հետ կապված ընթացակարգային այսպիսի անորոշությունը պրակտիկայում հանգեցրել է այնպիսի իրավիճակների, երբ ՄԷԿՏ համակարգով անձի նկատմամբ այդպիսի սահմանափակումը դրա հիմքերի բացակայության պայմաններում շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ անձը փաստացի չի բախվում այդ խնդրին: *Մտացվում է, որ անձի նկատմամբ երկրից դուրս գալու այդպիսի սահմանափակումը գործնականում կարող է տևել անգամ տարիներ՝ անկախ այդպիսի սահմանափակում կիրառելու սկզբնական նպատակի իրագործված լինելու հանգամանքից:* Անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին այդպիսի շարունակական միջամտությունը ոչ միայն հակասում է այդ իրավունքի իրացման միջազգային և սահմանադրական մոտեցումներին, այլև գործնական բարդություններ է առաջացնում: Հարկ է նկատի ունենալ, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված այդպիսի բովանդակությամբ դիմումների կապակցությամբ ձեռնարկված քայլերի արդյունքում անձի նկատմամբ հանրապետությունից դուրս գալու արգելքը վերացվում է ոչ թե օրենսդրորեն ամրագրված ընթացակարգերի կիրառմամբ, այլ օրինակ՝ քննիչի գրության կամ «խնդրանքի» հիման վրա:

- Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման շրջանակներում անձի անձնագիրը վերցնելու, ինչպես նաև հանրապետությունից դուրս գալու արգելք սահմանելու հետ կապված օրենսդրական կարգավորումները¹¹⁹ *այնքանով, որքանով ապահովված չէ քրեադատավարական օրենսդրության հետ դրանց օրգանական փոխկապակցվածությունն ու համապատասխանությունը, չեն բխում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի դատավարական բովանդակությունից ու սահմաններից, չեն բավարարում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի, ինչպես նաև իրավական որոշակիության պահանջները:*

¹¹⁹Տե՛ս, մասնավորապես, «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ կառավարության 1998 թվականի 25 դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» N 821 որոշման 19-րդ կետը, ՀՀ կառավարության 2006 թվականի 22 հունիսի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» N 884-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի թ) ենթակետը:

3. Քրեական գործով վարույթի շրջանակներում վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելու և վերջիններիս նկատմամբ հանրապետությունից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան

Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման շրջանակներում արձանագրվել են դեպքեր, երբ քրեական գործով որպես վկա հանդես եկող քաղաքացու անձնագիրը քրեական հետապնդման մարմնի կողմից վերցվել է, և քննչական բաժնում հրաժարվել են վերադարձնել վերջինիս անձնագիրը: Չնայած քննչական բաժնում դիմում ներկայացնելուց հետո քաղաքացուն վերադարձրել են անձնագիրը, սակայն քննիչները հայտնել են, որ վերջինս չի կարող ՀՀ-ից բացակայել:

Անգամ արձանագրվել են անձի անձնագիրը «խնդրելու» և վերցնելու մի շարք դեպքեր նյութերի նախապատրաստության, այսինքն՝ հարուցված քրեական գործի բացակայության պայմաններում, երբ անձը դեռևս չունի դատավարական որևէ կարգավիճակ:

Քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց նկատմամբ ՄԷԿՏ համակարգով վերջիններիս ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման խնդրի առնչությամբ արձանագրվել է դեպք, երբ քրեական գործով որպես տուժող ճանաչված քաղաքացին «Զվարթնոց» օդանավակայանից ցանկացել է մեկնել արտերկիր, սակայն արգելանքի է վերցվել, և ժամեր շարունակ պահվել է Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնում: Անձի նկատմամբ այդպիսի սահմանափակում կիրառելու հիմքերը ներկայացնելու հարցմանն ի պատասխան՝ քրեական հետապնդման մարմնի կողմից նշվել է, որ այդպիսի սահմանափակում կիրառվել է, քանի որ տուժողն ունի մի քանի անձնագիր, և հնարավոր է հետագայում նրա քրեադատավարական կարգավիճակը փոխվի:

Մեկ այլ գործով պարզվել է, որ քաղաքացին ցանկացել է մեկնել Վրաստանի Հանրապետություն, սակայն հայ-վրացական սահմանին վերջինիս տարել են ոստիկանական բաժանմունք, որտեղ մի քանի ժամ մնալուց հետո պարզվել է, որ ինքը քրեական գործով ներգրավված է եղել որպես վկա, և քննիչի որոշմամբ սահմանային վերահսկողության միջոցով սահմանափակվել է իր՝ ազատ տեղաշարժվելու (երկրից դուրս գալու) իրավունքը: Անձի նկատմամբ այդպիսի սահմանափակում կիրառելու հիմքերը ներկայացնելու հարցմանն ի պատասխան՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից ընդամենը նշվել է, որ թեև վերջինս քրեական գործին ներգրավված է եղել որպես վկա, սակայն բավարար հիմքեր եղել են այդ ժամանակ նրա նկատմամբ սահմանափակում կիրառելու համար:

Սրա հետ կապված, քրեական հետապնդում իրականացնող մարմիններից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած պաշտոնական պարզաբանումների համաձայն՝ քաղաքացիներին հնարավորություն չի տրվել դուրս գալ ՀՀ սահմաններից այն հիմնավորմամբ, որ վերջիններիս վերաբերյալ սահմանային

կետերին տրվել է, այսպես կոչված, իրազեկում: Ավելին, ըստ այդ պարզաբանումների՝ նման սահմանափակման կիրառման համար հիմք է հանդիսացել ոչ թե անձի՝ վկայի դատավարական կարգավիճակ ունենալը, այլ վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ կասկածանքի առկայությունը, այսինքն՝ փաստացի քրեական հետապնդում իրականացնելը: Ընդ որում, իբրև հիմնավորում՝ վկայակոչվում են Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում բացահայտված *«քրեական մեղադրանք» ինքնավար հասկացության չափանիշները՝ ակնհայտ ձևափոխելով այդ չափանիշների էությունը և հաշվի չառնելով, որ դրանք իրականում ուղղված են փաստացի քրեական հետապնդման ներքո գտնվող անձանց երաշխիքներ ապահովելուն, այլ ոչ թե նրանց իրավունքները սահմանափակելուն*¹²⁰:

Խնդրի առնչությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել են հետևյալ իրավական եզրահանգումները՝

- Քրեադատավարական օրենքով վկայի՝ այլ վայր չմեկնելու և իր գտնվելու վայրի մասին քրեական հետապնդման մարմնին տեղեկացնելու պարտականության ապահովումը հանգեցրել է այնպիսի ոչ իրավաչափ իրավակիրառմանը, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից վերցվում են քրեական գործող վարույթում վկայի կամ տուժողի կարգավիճակ ունեցող անձանց անձնագրերը՝ այդպիսի դատավարական որևէ կառուցակարգի բացակայության պայմաններում.

- Քրեադատավարական օրենսդրության կարգավորումներից չբխող ոչ իրավաչափ պրակտիկա է ձևավորվել նաև ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող, ինչպես նաև քրեադատավարական որևէ կարգավիճակ չունեցող անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքն առանց որևէ իրավական հիմքերի սահմանափակելով.

- Քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց նկատմամբ այդպիսի սահմանափակումների կիրառման պրակտիկան, անգամ եթե այն վարույթի մասնակցի դատավարական պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, *օրինական և հիմնավորված կարող է լինել միայն, եթե այդ նպատակի իրագործմանն ուղղված ընթացակարգն ունի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:*

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքին միջամտություն ենթադրող իրավական ընթացակարգերի կիրառման, մասնավորապես անձանց անձնագրերը վերցնելու և ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ հանրապետությունից դուրս գալու հնարավորության սահմանափակման ոչ իրավաչափ կայուն պրակտիկա է ձևավորվել: Հաշվի առնելով, որ այդպիսի ոչ իրավաչափ իրավակիրառումը մեծամասամբ պայմանավորված է առկա օրենսդրական անկատար կարգավորումներով՝ խնդրի համակարգային լուծման նպատակով ՀՀ

¹²⁰ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս էջեր 126-129:

մարդու իրավունքների պաշտպանն իրականացրած դիտարկումների և վերլուծության արդյունքներով դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ինչպես հարցը կարգավորող օրենսդրական դրույթները՝ իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջների համատեքստում, այնպես էլ ձևավորված իրավակիրառ պրակտիկան¹²¹:

4. Քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի գործողությունների հետևանքով առանց հսկողության մնացած անչափահասների կամ անաշխատունակ անձանց խնամքի պատշաճ կազմակերպման հետ կապված խնդիրները

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձին արգելանքի վերցնելու արդյունքում վերջինիս հոգածության ներքո գտնվող անչափահասների և անաշխատունակ անձանց խնամքի իրավունքի լիարժեք ապահովման հետ կապված խնդիրները բարձրաձայնվել են դեռևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ նախորդ տարիների գործունեությունն ամփոփող զեկույցներում¹²²:

2016 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննարկման առարկա են դարձել վերոնշյալ խնդրին առնչվող քաղաքացիների բողոքները:

Այսպես, խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի քննարկման շրջանակներում պարզվել է, որ վեց անչափահաս երեխաներ ունեցող մայրը վատառողջ լինելու, ինչպես նաև երեխաների խնամքով և դաստիարակությամբ զբաղվելու պատճառով չի աշխատում, իսկ հայրը քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ և վերջինիս նկատմամբ որպես

¹²¹ Հարկ է նկատել, որ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման նմանատիպ դեպքերի կանխման նպատակով 2016 թվականի հոկտեմբերի 3-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ՀՀ դատախազության ստորաբաժանումների ղեկավարներին տրվել է հանձնարարական, որ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ «ստորագրություն չհեռանալու մասին» տեսակի խափանման միջոցը վերացվելու դեպքում, հետևել, որ որոշման մասին անհապաղ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման միջոցով գրավոր տեղեկացվի ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգին՝ կասկածյալի կամ մեղադրյալի ազատ տեղաշարժվելու արգելքը վերացնելու համար:

Մինևույն ժամանակ, կարծում ենք, որ անգամ հանձնարարականի պահանջների հետևողական պահպանման պարագայում խնդրի լիարժեք լուծում չի ապահովվում:

¹²² Տե՛ս, մասնավորապես, 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 12-13:

խափանման միջոց է ընտրվել կալանքը, ինչի հետևանքով վեց անչափահաս երեխաները մնացել են առանց գոյատևման միջոցների:

Մեղադրյալի պաշտպանը խնդրի կապակցությամբ միջնորդություն է ներկայացրել քրեական գործի վարույթն իրականացնող մարմնին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածով նախատեսված կարգով ապահովել ծնողին արգելանքի վերցնելու հետևանքով առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների մնացած անչափահասների խնամքի իրավունքը: Միջնորդության հիման վրա քրեական վարույթն իրականացնող մարմինը խնդրել է Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին հանձնարարել ստուգել մեղադրյալին արգելանքի վերցնելուց հետո նրա վեց անչափահաս երեխաների՝ առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների մնալու հանգամանքը և անհրաժեշտության դեպքում կազմակերպել անչափահասների հսկողությունը, խնամքն ու սոցիալական օգնությունը: Մակայն նշված իրավանորմի կիրառումը լիարժեք չի ապահովվել:

Տվյալ բողոքի քննարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ կատարված աշխատանքի արդյունքում սոցիալական աշխատողի կողմից այց է կատարվել մեղադրյալի ընտանիք, անչափահասների հետ հանդիպման ընթացքում իրականացվել է կարիքների առաջնային գնահատում, ըստ որի համատեղ դուրս են բերել մի քանի կարևոր հիմնախնդիրներ, որոնց լուծումը անհապաղ է:

Դրանց հիման վրա իրականացված միջոցառումների արդյունքում կազմակերպվել է երեխաների ընդգրկումը կրթական հաստատություններ վերջիններիս ուսումը շարունակելու նպատակով, դպրոց հաճախող բոլոր երեխաներին տրամադրվել են դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ, ամառային և ձմեռային հագուստ, կոշիկներ: Մասնագիտական կողմնորոշման խնդիր ունեցող երեխան գրանցվել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի զբաղվածության կենտրոն, որտեղ պարբերաբար մասնագիտական կողմնորոշման դասընթացներ են իրականացվում:

Թեև ներկայացված բողոքի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ձեռնարկված քայլերի ու միջազգային կազմակերպությունների ներգրավվածության արդյունքում քաղաքացու բարձրաձայնած խնդրին տրվել է դրական լուծում, այդուհանդերձ հարկ է արձանագրել, որ խնամքի ապահովման՝ որպես պետության պոզիտիվ պարտականության լիարժեք իրացումը նախևառաջ ենթադրում է ոլորտը կարգավորող՝ *բավարար որոշակիություն ունեցող օրենսդրական ընթացակարգերի նախատեսում, ինչպես նաև պատասխանատու մարմինների փոխհամաձայնեցված գործողությունների և պատասխանատվության հստակության ապահովում:*

Պետության այս պարտականությունն իր ամրագրումն է ստացել միջազգային մի շարք փաստաթղթերում: Մասնավորապես, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1988 թվականի դեկտեմբերի 9-ի 43/173 բանաձևով հաստատված՝ որևէ ձևով ձեռքբերվող կամ կալանավորվող անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուի 31-րդ սկզբունքն ամրագրում է, որ համապատասխան իշխանությունները միջոցներ են

ձեռնարկում, ազգային օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում օգնություն ապահովել ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող անձանց ընտանիքների անդամներին, որոնք գտնվում են նրանց խնամքի տակ, հատկապես անչափահաս անձանց, և առանձնակի ուշադրություն են դարձնում առանց հսկողության մնացած երեխաների պատշաճ խնամակալությանը¹²³:

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված՝ երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի 48-րդ կետն ամրագրում է, որ երբ երեխայի միակ կամ հիմնական խնամողը կալանավորման կամ դատապարտվելու արդյունքում ազատությունից զրկվում է, հնարավորության դեպքերում ազատությունից զրկելու հետ չկապված միջոցներ կամ պատիժներ պետք է կիրառվեն՝ երեխայի լավագույն շահի հաշվառմամբ: Պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն ապահովելու, որ արգելանքի վերցված ծնողների հետ բնակվող երեխաները ստանում են պատշաճ խնամք և պաշտպանություն՝ երաշխավորելով վերջիններիս՝ իբրև ազատ անձանց կարգավիճակը և ներգրավվածությունը հասարակության գործունեությանը¹²⁴:

Անդրադառնալով քրեական գործով վարույթի շրջանակներում անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակմամբ պայմանավորված՝ անչափահաս երեխաների և անաշխատունակ անձանց խնամքի ապահովման ներպետական իրավական ընթացակարգերին՝ հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք:

Երեխայի իրավունքներն ամրագրող՝ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են:*

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձին արգելանքի վերցնելու հետևանքով վերջինիս հոգածության տակ գտնվող անչափահաս կամ անաշխատունակ անձանց խնամքի ապահովման պարտականությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի ուժով կրում է վարույթն իրականացնող մարմինը: Միննույն ժամանակ, վերոնշյալ հոդվածով ամրագրվում է, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությունները՝ կազմակերպելու վերոհիշյալ անձանց հսկողությունը, խնամքը և սոցիալական օգնության պետական կազմակերպությունում կամ բժշկական հաստատությունում անաշխատունակ անձանց ժամանակավոր

¹²³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=18507>

¹²⁴ Տե՛ս ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված՝ երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցը (Resolution adopted by the General Assembly [on the report of the Third Committee (A/64/434)] 64/142. Guidelines for the Alternative Care of Children) https://www.unicef.org/protection/alternative_care_Guidelines-English.pdf

տեղավորումը պարտադիր են խնամակալության և հոգաբարձության մարմնի, ինչպես նաև նշված կազմակերպությունների և հաստատությունների ղեկավարների համար:

Այսպես, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է, որ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք անչափահաս կամ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին»:

Մինևույն ժամանակ, մինչև երեխայի տեղավորման հարցի վերջնական լուծումը վերջինիս իրավունքների և շահերի պաշտպանության, այդ թվում՝ խնամքի լիարժեք ապահովման պարտականությունը կրում են նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: Այսպես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-ն որոշմամբ¹²⁵ ամրագրված է.

«15. Խնամակալության և հոգաբարձության մարմինն ապահովում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը՝ մինչև նրա տեղավորման հարցի վերջնական լուծումը (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելը կամ խնամատար ընտանիքում տեղավորելը, կամ կենսաբանական ընտանիք վերադառնալը, կամ որդեգրումը, կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը):

16. Երեխայի կյանքի պայմանների հետազոտությունից հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 13-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում խնամակալության և հոգաբարձության մարմինը Հայաստանի Հանրապետության մարզպետարան (իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարան) է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը

7) ծնողների կամ նրանցից յուրաքանչյուրի կամ միակ ծնողի՝

(...)

ե. նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու կամ պատիժը ազատազրկման ձևով կրելու դեպքում՝ դրա մասին իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանքը,

19. Հայաստանի Հանրապետության մարզպետարանի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, սույն կարգի 16-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո՝

¹²⁵ Տե՛ս ՀՀ կառավարության 25 սեպտեմբերի 2015 թվականի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշումը:

1) եօրոյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 962-Ն որոշմամբ սահմանած կարգով *կազմակերպում է երեխայի տարածքային հաշվառումը՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա*։

2) *յոթնօրյա ժամկետում իրականացնում է երեխայի կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, կատարում է սույն կարգի 16-րդ կետով նախատեսված փաստաթղթերի, ինչպես նաև գործակալության նախնական եզրակացության լրիվ, օբյեկտիվ ու համակողմանի ուսումնասիրություն և ստացված փաստաթղթերի ու տեղեկատվության համադրման, վերլուծության արդյունքում կազմում է եզրակացություն (երկու օրինակից)՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու (բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունելու կամ խնամատար ընտանիքում տեղավորելու կամ կենսաբանական ընտանիք վերադարձնելու, կամ որդեգրման հանձնելու կամ խնամակալ, կամ հոգաբարձու նշանակելու նպատակահարմարության) մասին»։*

Իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-ն որոշմամբ հաստատված՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգի և չափորոշիչների 7-րդ կետի համաձայն՝ երեխայի խնամքի կազմակերպման գործում ներգրավված սուբյեկտները (*խնամակալության և հոգաբարձության մարմինները, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումները, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները կամ բաժինները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այդ գործընթացում ներգրավված այլ մարմիններն ու կազմակերպությունները*) երեխայի այլընտրանքային խնամքի կազմակերպման հարցը քննարկելիս, առաջին հերթին ուսումնասիրում են երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում (երեխայի վերադարձը կենսաբանական ընտանիք) կազմակերպելու հնարավորությունը, իսկ դրա անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում դիտարկում են այլընտրանքային խնամքի կազմակերպման բոլոր հնարավոր տեսակները՝ նախապատվությունը տալով երեխայի խնամքի՝ ընտանեկանին մոտ տեսակներին...»¹²⁶։

Բացի այդ, Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային

¹²⁶ Տե՛ս ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 551-ն որոշմամբ հաստատված Հավելվածը։

ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատող ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի N 279-Ն հրամանի¹²⁷ համաձայն՝ քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումների աշխատողների պարտականություններից է, ի թիվս այլնի, *կալանավորված անձի և դատապարտյալի խնամքի տակ եղած անչափահաս երեխաների և այլ անաշխատունակ անձանց խնամքի կազմակերպման նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, մանկատների և ծերերի համար նախատեսված հաստատությունների հետ համագործակցության ապահովումը:*

Մեջբերված օրենսդրական կարգավորումների համակարգային ուսումնասիրությունից թերևս կարելի է եզրակացնել, որ քրեական գործով վարույթի շրջանակներում անչափահասների և անաշխատունակ անձանց խնամքի ապահովմանն ուղղված ընթացակարգերը սահմանված են, ինստիտուցիոնալ առումով որոշակիորեն հստակեցված են խնամքի կազմակերպման գործընթացին ներգրավված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության շրջանակները:¹²⁸

Մինչդեռ, 2016 թվականի ընթացքում ևս քննարկվող խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմումների առկայությունը փաստում է, որ խնամքի ապահովման գործընթացը պատշաճ չի կազմակերպվում:

Հետաքրքրական է, որ խնամքի ապահովմանն ուղղված ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից մատնանշվել է հենց նույն՝ վեց անչափահաս երեխաների խնամքի ապահովման դեպքը: Ընդ որում, Գլխավոր դատախազության կողմից ևս չի հերքվել, որ երեխաների անհրաժեշտ խնամքն ապահովվել է հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում:

Ասվածի հիման վրա, կարելի է եզրակացնել, որ առանց խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև անաշխատունակ անձանց սոցիալական ապահովության՝ պետության առջև դրված խնդիրը կարող է լիարժեք իրագործվել միայն գործընթացին մասնակցող բոլոր մարմինների արդյունավետ և հետևողական փոխգործակցության և բարեխղճության սկզբունքների կենսագործմամբ:

Առաջարկ. գործնականում ապահովել, որ քրեական գործով վարույթի շրջանակներում առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների մնացած անչափահասները և անաշխատունակ անձինք ապահովվեն անհրաժեշտ խնամքով՝

¹²⁷ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի թիվ 44-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 279-Ն հրամանը:

¹²⁸ 2015 թվականի տարեկան հաղորդման մեջ ներկայացվել էր առաջարկ՝ օրենսդրորեն սահմանել հստակ մեխանիզմներ, որոնց առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է արդյունավետ ապահովել անձի խնամքը և գոյատևման միջոցների տրամադրումը:

դրա համար պատասխանատու բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհամաձայնեցված գործողությունների միջոցով:

5. Հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանման հարցը

Օրենքով նախատեսված ժամկետների չպահպանման հետ կապված խնդիրները: Համապատասխան օրենսդրական կառուցակարգերի նախատեսմանն ուղղված ձեռնարկված միջոցառումները

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Խնդրի առնչությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին դեռևս նախորդ տարիների զեկույցներում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ խախտվել է հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ օրենքով նախատեսված տասնօրյա ժամկետը: Մասնավորապես, 2015 թվականի ընթացքում նմանատիպ խնդրով Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել բազմաթիվ բողոքներ, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է, որ օրենսդրական պահանջի խախտումը մեծամասամբ պայմանավորված է եղել հետաքննության մարմնի կամ քննիչի կողմից նշանակված փորձաքննությունների արդյունքների ուշացմամբ:

Հարկ է նշել, որ 2016 թվականի ընթացքում հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար սահմանված ժամկետի խախտման վերաբերյալ դիմումներ Մարդու իրավունքների պաշտպանին չեն ներկայացվել:

Խնդրի լուծմանն ուղղված օրենսդրական կառուցակարգեր նախատեսելու առումով որպես առաջընթաց քայլ հարկ է արձանագրել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2016 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՕ-214-Ն օրենքի կարգավորումները, որոնցով սահմանվել է նշված ժամկետի երկարացման ընթացակարգ: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստանալ նշանակված փորձաքննության եզրակացությունը և առանց այդ փորձաքննության եզրակացությունը ստանալու հնարավոր չէ լուծել հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու հարցը, ապա հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա նշված ժամկետը հսկող դատախազի որոշմամբ կարող է երկարացվել ևս մինչև 20 օր ժամկետով:

6. Քաղաքացիների՝ հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության դրսևորման պրակտիկան

Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման վերաբերյալ, ինչպես նախորդ տարիների ընթացքում, այնպես էլ 2016 թվականին բողոքներ (ահազանգեր) են ստացվել, որ Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության մասին հաղորդումները քննարկվելիս ոչ բոլոր դեպքերում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի ուժով կայացման ենթակա որոշումներից որևէ մեկը, ինչը հանգեցրել է քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը:

Այսպես, օրինակ, քաղաքացին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած ահազանգով տեղեկացրել է, որ իր տան բակից կատարվել է գողություն, ինքը ՀՀ ոստիկանություն ցանկացել է հաղորդում տալ, սակայն այնտեղ նրան ասել են, որ ճանաչում են գողությունը կատարողին, կգրուցեն վերջինիս հետ և այդ մասին կտեղեկացնեն իրեն՝ իր հաղորդմանը պատշաճ ընթացք չտալով:

Բողոքների քննարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուսումնասիրության առարկա են դարձել քրեական գործ հարուցելու պետական մարմինների պարտականության՝ քրեադատավարական պահանջի կենսագործմանն ուղղված կազմակերպական ընթացակարգերը: Այլ կերպ ասած, խնդրի համակարգային ուսումնասիրության անհրաժեշտությամբ պայմանավորված՝ վերլուծվել են ոչ միայն առկա օրենսդրական կարգավորումները, այլև գործնականում իրավասու պետական մարմնի կողմից հաղորդումը ընդունելու, գրանցելու և ստուգելու գործընթացը:

Այսպես, հանցագործությունների մասին քաղաքացիների հաղորդումները սկզբնապես գրանցվում են աշխատանքային մատյաններում: Այնուհետև, իրականացվում են, այսպես կոչված, ստուգողական գործողություններ, որոնց արդյունքներով էլ կա՝ մ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներին համապատասխան հաղորդմանն ընթացք է տրվում, կա՝ մ դրա քննարկումն ավարտվում է «եզրակացության» կազմմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/354 համատեղ հրամանի պահանջները¹²⁹:

¹²⁹ Հարկ է նկատել, որ վերը նշված հրամանի՝ որպես նորմատիվ իրավական ակտի պետական գրանցում չի ապահովվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ներկայում ՀՀ ոստիկանության կողմից մշակվել է «Հանցագործությունների, վարչական իրավախախտումների և պատահարների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, որի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել են մի շարք սկզբունքային նկատառումներ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների ապահովման տեսանկյունից:

Քրեական գործով վարույթի նախաձեռնման՝ քրեադատավարական կարգավորումները

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն. «Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը սահմանում է. «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ «Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) քրեական գործ հարուցելու մասին.
- 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.
- 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին»:

Վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային պրակտիկան

Վերոնշյալ քրեադատավարական դրույթների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը է. Կարապետյանի գործով որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին« որ «(...) Հանցագործության մասին հաղորդումը՝ որպես քրեական գործ հարուցելու առիթ, իրենից ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի գրավոր կամ բանավոր դիմումը քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ կոնկրետ հանցագործության տարբեր պարունակող նախապատրաստվող կամ կատարված հանցագործության մասին տեղեկատվությամբ:

Առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն:

Քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Միայն այս դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու որոշում ընդունելու համար: Այսինքն՝ *քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը:* (...)» (տե՛ս Էմմա Կարապետյանի գործով Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը):

Այնուհետև, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ *հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդումը՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին կամ դատախազին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով քրեական գործ հարուցելու առիթ է, հետևաբար այդպիսի հաղորդման առկայությունն ինքնին առաջ է բերում քրեադատավարական իրավահարաբերություններ՝ կապված գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության հետ:*

Այսպիսով, մեջբերված իրավական դիրքորոշումներից աներկիմաստ բխում է, որ հաղորդումը, որով տեղեկություններ են ներկայացվում քրեական օրենքով արգելված որևէ արարքի վերաբերյալ, ինքնին բավարար է քրեադատավարական հարաբերությունների, հետևաբար՝ քրեական դատավարության օրենքի պահանջների պահպանման՝ պետական իրավասու մարմինների պարտականությունների առաջացման համար:

Այնուհետև անդրադառնալով հաղորդման՝ որպես քրեական գործ հարուցելու առիթին ներկայացվող բովանդակային պահանջներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին: Վերոգրյալը, սակայն, չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար: Գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու պարտականությունը քրեական գործի հարուցման փուլում կրում են հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և հանրային-իրավական պարտավորություններին համապատասխան: Այս փուլում վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, հակառակ դեպքում՝ որոշում կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանականություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր: Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ քննարկված չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ

կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը»:

Դատարանի վերոնշյալ հստակ իրավական գնահատականների հաշվառմամբ՝ միանշանակ կարելի պնդել, որ հաղորդումների քննարկման և լուծման դատավարական ընթացակարգի նախաձեռնումը պայմանավորված է ոչ թե հանցագործության մասին ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման արդյունքներով, այլ դրա վերաբերելիության նախնական ստուգմամբ, այսինքն՝ այն եզրահանգմամբ, որ ներկայացված հաղորդման մեջ առկա են տվյալներ, որոնք կարող են որևէ կերպ առնչվել քրեական օրենքով արգելված արարքին:

Այս առումով, կարծում ենք, որ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողությունը, դրա հիման վրա ընթացակարգ նախաձեռնելու առումով, պետք է սահմանափակվի միայն ներկայացված տեղեկության՝ ենթադրյալ հանցագործության հետ հնարավոր կապի ստուգմամբ՝ առանց իրավական գնահատական տալու դրանց ճշմարտացիությանն ու հիմնավորվածությանը:

Ավելին, գործնականում ոստիկանության կողմից իրականացվող այսպես կոչված «ստուգողական գործողությունները» ոչ այլ ինչ են, քան հաղորդումների քննարկման և լուծման՝ քրեադատավարական օրենքով նախատեսված գործընթաց, որը պետք է ավարտվի քրեադատավարական օրենքի պահանջներին բավարարող եզրափակիչ ակտով՝ որոշմամբ:

Մինչդեռ, պետք է արձանագրել գործող իրավակիրառ պրակտիկայի ոչ իրավաչափությունը նաև այն առումով, որ հաղորդումներին հետագա ընթացք չտալու դեպքում պետական մարմնի կողմից կայացվում է ոչ թե քրեադատավարական պահանջներին բավարարող և պարտադիր դատախազական հսկողության առարկա՝ Քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշում, այլ գրություն կամ այսպես կոչված եզրակացություն, որոնք իբրև քրեական հետապնդման մարմնի պատճառաբանությունները, եզրահանգումները կամ իրականացրած գործողությունների արդյունքներն արտացոլող դատավարական ակտեր՝ օրենսգրքով առհասարակ նախատեսված չեն:

Խնդրի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական գնահատականներն ու քրեադատավարական պահանջների բովանդակային հստակեցմանն ուղղված եզրահանգումները, կարծում ենք, օրենքի միատեսակ կիրառության ապահովման տեսանկյունից բավարար չափով որոշակի են: Եվ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները Վճռաբեկ դատարանի կողմից տրված իրավամեկնաբանման պայմաններում պետք է անվերապահորեն կիրառվեն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման հենց սկզբնական փուլից:

Առաջարկ. հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումները քննարկելիս անվերապահորեն ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումները:

7. Վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական գործով վարույթի կարճման համար մեղադրյալի՝ նոտարական կարգով հաստատված համաձայնության տրամադրման պահանջի ներկայացում

Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման շրջանակներում արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանը դիմում է ներկայացրել քննչական բաժին իր պաշտպանյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով դադարեցնելու վերաբերյալ՝ կցելով նաև իր պաշտպանյալի կողմից ստորագրված հայտարարությունն այն մասին, որ վերջինս չի առարկում իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումն այդ հիմքով դադարեցնելու դեմ: Սակայն դիմումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալը պետք է անձամբ հայտնի նման դիրքորոշում, ինչը մեղադրյալի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմին անձամբ չներկայանալու դեպքում կարող է հավաստվել միայն նոտարական կարգով հաստատված համաձայնությամբ: Այսինքն՝ այն դեպքում, երբ նոտարը հաստատել է, որ հայտարարությունը տվել և այդ հայտարարությունը ստորագրել է կոնկրետ անձը՝ մեղադրյալը:

Նոտարական կարգով հաստատված համաձայնությունն պահանջելը մեկնաբանվել է ուղղված որպես հենց մեղադրյալի օրինական շահերի ապահովմանը՝ նկատի ունենալով, որ այս հիմքով անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում կայացնելու դեպքում ոչ թե փաստվում է նրա անմեղությունը, այլ վերջինիս մեղավորության հարցը մնում է չլուծված, այսինքն՝ անձը ձեռք չի բերում արդարացվածի կարգավիճակ՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով:

Տվյալ դեպքում հաշվի չի առնվել նաև այն հանգամանքը, որ մեղադրյալն առաջին կարգի հաշմանդամ է, բացակայում է Հայաստանի Հանրապետությունից, երկար տարիներ գտնվել է հետախուզման մեջ և չունի վավերական անձնագիր, որի պատճառով օբյեկտիվորեն անհնարին է ներկայացնել նոտարական կարգով հաստատված համաձայնություն:

Բարձրացված խնդիրը մեղադրյալի իրավունքների ապահովման հարթությունում դիտարկելով՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել են հետևյալ իրավական եզրահանգումները՝

- քրեական գործով վարույթի շրջանակներում անձի համաձայնությունը՝ որպես վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով վարույթի կարճման կամ քրեական հետապնդման դադարեցման անհրաժեշտ նախապայման դիտարկելն ու վարույթն իրականացնող մարմնի՝ անձի դիրքորոշումը պարզելու պարտականության սահմանումը կոչված են ապահովելու վերջինիս արդար դատաքննության իրավունքն ու անմեղության կանխավարկածի անշեղ պահպանումը:

- Անձի իրավունքների պաշտպանության այս նույն տրամաբանությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների¹³⁰ համատեքստում քրեադատավարական դրույթի «եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը»՝ որպես քննարկվող հիմքով քրեական հետապնդման դադարացումը բացառող հանգամանքի օրենսդրական պահանջի բովանդակային ապահովումը ենթադրում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ հավաստիանալու, որ հենց այն անձն է տվել իր համաձայնությունը, ում նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում պետք է կայացվի, և այդպիսի համաձայնությունը տրվել է կամովին՝ դրա բոլոր իրավական հետևանքների գիտակցմամբ: Միննույն ժամանակ, այդպիսի համաձայնությունը ստանալու օրենսդրական պահանջը չի կանխորոշում դրա իրավաչափության ապահովման կոնկրետ եղանակները:

Այս առումով, ընդունելի է, որ օրինակ, անձի կողմից վարույթն իրականացնող մարմին անձամբ ներկայանալն ու այդպիսի համաձայնության գրավոր ձևակերպումը կարող են հանդես գալ իբրև անձի կամաարտահայտության պատշաճ ամրագրում: Նույն կերպ, հետախուզման մեջ գտնվող անձի տված համաձայնությունը՝ անձի ինքնության մեջ հավաստիանալու առումով, կարող է ապահովվել նոտարական վավերացմամբ: Այդուհանդերձ, անձի դիրքորոշումը ճշտելու և ըստ այդմ գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու իրավաչափությունը կարող է ապահովվել նաև այլ երաշխիքների պահպանմամբ՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները:

Անդրադառնալով խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված կոնկրետ բողոքներից մեկին՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի՝ քրեական գործով վարույթին ներկայացվածությունն ու մասնակցությունը ապահովված են եղել վերջինիս պաշտպանի միջոցով:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ «Իր իրավավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ սույն օրենսգրքով իրավասու մարմնի որոշումը»: Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանն իրավունք չունի կատարել պաշտպանյալի շահերին հակասող որևէ գործողություն: Պաշտպանը չի կարող հակառակ պաշտպանյալի դիրքորոշման՝ ընդունել դեպքի հետ նրա առնչությունը և մեղավորությունը դրա կատարման մեջ»:

¹³⁰ Տե՛ս, ի թիվս այլնի, Անահիտ Հայկի Սաղաթելյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 որոշումը, Սիրաժ Ղամբարյանի և այլոց գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵՇԴ/0055/01/11 որոշումը:

Քրեադատավարական օրենքի պահանջների պահպանմամբ քրեական գործով վարույթին պաշտպանի ներգրավումը, պաշտպանի՝ որպես իր պաշտպանյալի շահերը ներկայացնելու և նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող սուբյեկտի մասնակցության դատավարական կարգավորումները հիմք են տալիս պնդելու, որ անձը կարող է իր պաշտպանության իրավունքն իրացնել նաև միջնորդավորված ձևով՝ պաշտպանի միջոցով ներկայացված լինելու և իր դիրքորոշումն այդպիսով արտահայտելու եղանակով: Այլ կերպ ասած, պաշտպանի՝ որպես իր պաշտպանյալի իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնող և ըստ այդմ էլ վերջինիս դիրքորոշմամբ կաշկանդված դատավարության սուբյեկտի գործողությունները պետք է դիտարկվեն իբրև անձի՝ իր իրավունքների և օրինական շահերի միջնորդավորված պաշտպանություն: Տվյալ դեպքում, մեղադրյալի ստորագրությամբ վավերացված լիազորագրի հիման վրա վերջինիս պաշտպանությունը ստանձնելու նպատակով ներգրավվել է պաշտպան, որպիսի փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ գոնե այդ փուլում վարույթն իրականացնող մարմնի մոտ ողջամիտ կասկածներ չեն առաջացել անձի կամահայտնության և պաշտպանի ներգրավման իրավաչափության վերաբերյալ: Հետևաբար, որպես անձի պաշտպանության իրավունքի իրացում դիտարկվել և ապահովվել է պաշտպանի մասնակցությունը քրեական գործի քննությանը:

Այս առումով, հարկ է նշել, որ անձի՝ նոտարական վավերացմամբ համաձայնություն տալուց հրաժարվելու դրդապատճառները ևս հիմք չեն տալիս վարույթն իրականացնող մարմնին ողջամիտ կասկածներ ունենալու, թե արդյոք այդպիսի համաձայնությունը տրվում է մեղադրյալի կողմից: Բանն այն է, որ ինչպես երևում է Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքի ուսումնասիրությունից, մեղադրյալը երկար տարիներ հետախուզման մեջ գտնվելու պատճառով հնարավորություն չի ունեցել ձեռք բերել նոր անձնագիր, իսկ ներկայում անձնագիր ձեռք բերելուն խոչընդոտում է վերջինիս առողջական վիճակը:

Փաստորեն ստացվում է, որ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու համար անձի համաձայնության պարտադիրությունը՝ որպես վերջինիս իրավունքների ապահովման երաշխիք, տվյալ դեպքում վեր է ածվում անձի համար լրացուցիչ դժվարություններ առաջացնող պահանջի՝ խոչընդոտելով վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն՝ օրենքով նախատեսված այդպիսի հիմքերի առկայության պայմաններում:

8. Փաստաբանի՝ քրեական գործով վարույթին որպես պաշտպան ներգրավելու համար նոտարական կարգով հաստատված լիազորագրի տրամադրման պահանջի ոչ իրավաչափությունը

Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման շրջանակներում արձանագրվել է դեպք, երբ փաստաբանը դիմել է քրեական վարույթն իրականացնող մարմնին իրեն քրեական գործով պաշտպան

ներգրավելու վերաբերյալ՝ կցելով նաև հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի կողմից իրեն տրված լիազորագրի բնօրինակը: Մակայն քրեական վարույթն իրականացնող մարմինը մերժել է իրեն քրեական գործով պաշտպան ներգրավելը՝ նշելով, որ դրան հնարավոր կլինի անդրադառնալ միայն մեղադրյալի կողմից նոտարական կարգով հաստատված լիազորագիր և դիմում ներկայացնելու դեպքում: Տվյալ բողոքի քննարկման շրջանակներում մեղադրյալի կողմից չի ներկայացվել նոտարական կարգով հաստատված լիազորագիր, սակայն Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում դիմումատուն ներգրավվել է որպես պաշտպան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ՝ նրա պաշտպանությունը ստանձնելու պահից: Օրենսգրքի 71-րդ հոդվածի համաձայն՝ «Իր իրավավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ սույն օրենսգրքով իրավասու մարմնի որոշումը»:

Թեև խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքներում բարձրացված հարցը լուծվել է և առանց հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի կողմից նոտարական կարգով հաստատված լիազորագիր ներկայացնելու փաստաբանը քրեական գործով ներգրավվել է որպես պաշտպան, այնուամենայնիվ խնդիրը մտահոգիչ է, քանի որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվող ահազանգերն ու դիմում-բողոքները վկայում են այն մասին, որ նշված խնդրի կապակցությամբ քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից չի ցուցաբերվում միասնական մոտեցում, այսինքն՝ չարդարացված հայեցողությամբ որոշ դեպքերում պահանջվում է նոտարական կարգով հաստատված լիազորագիր, իսկ որոշ դեպքերում՝ չի պահանջվում: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված դիմում-բողոքների արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ առանց նոտարական կարգով հաստատման լիազորագիր պահանջելու փաստաբանը քրեական գործով ներգրավվել է որպես հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի պաշտպան:

Ավելին, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից պաշտպանի իրավավիճակը հաստատելու համար կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթի նոտարական կարգով հաստատման պահանջի դեպքերի հետ կապված՝ ՀՀ քննչական կոմիտեի կողմից նշվել է, որ արձանագրվել են դեպքեր, երբ քրեական գործերով հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի անունից փաստաբանի միջոցով դիմում է ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին: Տվյալ ստորագրության իսկությունն ու մեղադրյալի կամաարտահայտությունը պարզելու

նպատակով պահանջվել է ներկայացնել դիմումը մեղադրյալի կողմից ներկայացնելու պատշաճ հիմնավորում:

Կարծում ենք, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու իրավաչափության հարցը պետք է դիտարկել անձի արդար դատաքննության իրավունքի երաշխավորման, մասնավորապես՝ պաշտպան ունենալու իրավունքի ապահովման տեսանկյունից:

Անձի պաշտպանության իրավունքը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է: Բացի այդ, այն հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով երաշխավորված «զենքերի հավասարության» և ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված մրցակցության սկզբունքների ապահովման կարևորագույն երաշխիք¹³¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությամբ՝ իրավական եզրահանգումներ ներկայացնել՝ կապված անձի պաշտպանության իրավունքի, այդ թվում՝ պաշտպանի ժամանակին ներգրավվածության ապահովման ուղղությամբ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունները: Այս համատեքստում քննարկման առարկա պետք է դառնան քրեական հետապնդման մարմինների կողմից անձի պաշտպանության իրավունքի իրացումը կախվածության մեջ դնող պահանջների ներկայացման իրավաչափությունը:

Ի վերջո, քրեական գործով վարույթի շրջանակներում անձի պաշտպանության իրավունքը կանխորոշող դատավարական պահանջների, մասնավորապես՝ անձի համաձայնության ամրագրման փաստաթղթային ձևին անդրադարձել է ՀՀ վճռաբեկ դատարանը Ք. Փաշինյանի գործով 2016 թվականի մարտի 30-ին կայացված նախադեպային որոշմամբ: Դատարանը քրեադատավարական օրենքի կարգավորումների ուսումնասիրության արդյունքում, մասնավորապես, արձանագրել է, որ մեղադրյալի (դատապարտյալի) պաշտպանի դատավարական իրավավիճակը հաստատելու համար քրեադատավարական օրենսդրությունը սահմանել է ներկայացվելիք փաստաթղթերի սպառիչ շրջանակ, այն է՝

- անձը հաստատող փաստաթուղթ,
- փաստաբանի արտոնագիր,
- պաշտպանյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային

հաստատում կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշումը:

Դատարանը նաև արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում պաշտպանյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատման ձևին և բովանդակությանը վերաբերող վավերապայմաններ, այդ թվում՝ նոտարական վավերացման պահանջ: Այդպիսի վավերապայմաններ նախատեսված չեն նաև համապատասխան

¹³¹ Տե՛ս Նորիկ Մեդրակի Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 26-ի թիվ ՀՅՔԲԴ/0153/01/08 որոշում, 25-րդ կետ:

իրավահարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերում, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքներում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել, համաձայն որի՝ *պաշտպանի իրավավիճակը հաստատելու համար պաշտպանյալի հաստատումը բովանդակային առումով պետք է պարունակի մեղադրյալի (դատապարտյալի) համաձայնությունը կոնկրետ փաստաբանի կողմից իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու մասին, իսկ ձևական առումով պետք է ունենա փաստաթղթային ձևակերպում և հաստատված լինի մեղադրյալի (դատապարտյալի) ստորագրությամբ: Նշված պահանջներին համապատասխանող փաստաթուղթը վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է գնահատվի որպես պաշտպանյալի կողմից տրված պատշաճ հաստատում, հակառակ դեպքում կիսախտվեն ինչպես օրինականության սկզբունքը, այնպես էլ մեղադրյալի (դատապարտյալի) իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:*

Կատարված իրավական վերլուծության արդյունքներով՝ կարելի է եզրահանգել, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից վարույթի մասնավոր մասնակցին ուղղված ցանկացած պահանջ պետք է նախատեսված լինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներում կամ առնվազն բխեցվի այդ կարգավորումների էությունից: Ավելին, կարծում ենք, որ այդպիսի պահանջին ներկայացվող օրինականության չափանիշն ավելի է խստանում, եթե այդ պահանջի իրացմամբ կախվածության մեջ է դրվում անձի պաշտպանության հիմնարար իրավունքը:

Հետևաբար, վարույթն իրականացնող մարմնի բոլոր գործողությունները, այդ թվում՝ անձին պաշտպանով ապահովելու դատավարական պարտականության մասով, պետք է համապատասխանեն քրեադատավարական օրենքի պահանջներին, ինչպես նաև պրակտիկայի միասնականության ապահովմանն ուղղված ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական եզրահանգումներին:

9. Անձին՝ որպես առանց հարգելի պատճառի քննության չներկայացող դատավարության մասնակցին բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը՝ վերջինիս սահմանված ժամկետում ծանուցագիրը հանձնած չլինելու պայմաններում

2016 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել են մի շարք բանավոր բողոքներ, որ հարցաքննության կանչելու մասին ծանուցագիրը կասկածյալին, մեղադրյալին, տուժողին կամ վկային չհանձնած՝ վերջիններս՝ որպես առանց հարգելի պատճառի քննության չներկայացող դատավարության մասնակից, բերման են ենթարկվել քրեական վարույթն իրականացնող մարմին:

Բողոքներից մեկում քաղաքացին, մասնավորապես, նշել է, որ ինքը հարցաքննության կանչվելու մասին ծանուցագիր չի ստացել, սակայն իրեն բերման են ենթարկել: Հետագայում՝ բերման ենթարկվելուց հետո 1-2 օր ուշացումով, ծանուցագիրը

փոստային առաքմամբ հանձնվել է իրեն:

Բողոքներ են ստացվել նաև այն մասին, որ քննիչը հարցաքննության է կանչել հեռախոսագանգի միջոցով և քաղաքացիները ցանկացել են տեղեկանալ, արդյոք այդ եղանակով հարցաքննության կանչելը իրավաչափ է, և արդյոք իրենք այդպիսի դեպքերում պարտավոր են ներկայանալ վարույթն իրականացնող մարմին:

Մեկ այլ դեպքում անձին ներկայացված ծանուցագրում նշված չի եղել, թե ինչ դատավարական կարգավիճակով է վերջինս կանչվել հարցաքննության:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ հարցաքննության կանչելու կարգն ամրագրող 205-րդ հոդվածի համաձայն.

«1. Վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով: Ծանուցագրում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները:

2. Ծանուցագիրը կանչվող անձին հանձնվում է ստորագրությամբ կամ փոխանցվում է կապի միջոցներով: Նրա ժամանակավոր բացակայության դեպքում ծանուցագիրը հանձնվում է կանչվողի ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկին, հարևաններին, համատիրությանը (բնակարանային շահագործման կազմակերպությանը) կամ փոխանցվում է նրան աշխատանքի կամ ուսման վայրի վարչակազմի միջոցով:

3. Հարցաքննության կանչված անձը պարտավոր է քննիչին ներկայանալ նշանակված ժամկետում կամ նրան նախապես իրազեկել չներկայանալու պատճառները: Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում հարցաքննության կանչված անձը կարող է բերման ենթարկվել սույն օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված հիմքով, իսկ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կարող են կիրառվել նաև սույն օրենսգրքով նախատեսված դատավարական հարկադրանքի այլ միջոցներ: (...):»:

Բերման ենթարկելու հասկացությունն ու կիրառման ընթացակարգը իրենց ամրագրումն են ստացել օրենսգրքի 153-րդ հոդվածում, որի համաձայն՝

«1. Բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելն է՝ նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ:

2. Բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա: Նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին: (...):»:

Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ծանուցման հետ կապված դատավարական կարգավորումների ուսումնասիրությունից բխում է, որ նախ, վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում: Մինչդեռ, բերման ենթարկելը՝ որպես անձի իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ զուգորդվող դատավարական հարկադրանքի միջոց, կարող է ուղղված լինել նաև բերման ենթարկվողի՝ օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների մասնակցության ապահովմանը:

Ավելին, օրենսգրքի 153-րդ հոդվածի՝ անձին բերման ենթարկելու հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշման պատճառաբանվածության պահանջը ենթադրում է, որ այդպիսի որոշում կարող է կայացվել միայն *վարույթն իրականացնող մարմնի կողմից անձի պատշաճ ծանուցման և նշանակված ժամկետում ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին անձի կողմից չտեղեկացնելու դեպքում*:

Մինևույն ժամանակ, վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անհրաժեշտության մասին անձին *ծանուցելու պատշաճությունն իր հերթին պետք է կանխորոշվի ոչ միայն ծանուցագրին անձին հանձնելու փաստով, այլև դրա ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ, ինչպես նաև ծանուցագրին այնպիսի ողջամիտ ժամկետում հանձնելով, որ անձը ժամանակին ներկայանալու կամ չներկայանալու պատճառների մասին հայտնելու հնարավորություն ունենա*:

Ավելին, քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ծանուցման՝ որպես դատավարական գործողություններին վերջինիս մասնակցության ապահովմանն ուղղված ընթացակարգի պատշաճությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննարկման առարկա է դարձել անձի արդար դատաքննության իրավունքի երաշխավորման շրջանակներում: Մասնավորապես, Գուսակն ընդդեմ Ռուսաստանի գործով Դատարանն արձանագրել է, որ արդարադատության իրականացման շահերից ելնելով՝ դատավարության կողմը դատական նիստի մասին պետք է ծանուցվի այնպես, որ ոչ միայն ունենա նիստի անցկացման ժամի և վայրի վերաբերյալ տեղեկանալու հնարավորություն, այլև իր գործը նախապատրաստելու և դատական նիստին մասնակցելու բավարար ժամանակ: Ծանուցագրի պաշտոնական ուղարկումն առանց որևէ համոզմունքի, որ այն անձին կհանձնվի ժամանակին, չի կարող համարվել պատշաճ ծանուցում¹³²:

Ընդ որում, հարկ է նկատել, որ բանավոր հարցաքննության կանչվելու պրակտիկայի ոչ իրավաչափությունը կանխորոշվում է օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «*ծանուցագիր*» *եզրույթով և դրա բովանդակությանը ներկայացվող*

¹³² Տե՛ս Գուսակն ընդդեմ Ռուսաստանի (Gusak v. Russia) գործով վճիռը, գանգատ թիվ 28956/05, կետ 27:

պահանջներով պայմանավորված՝ միայն գրավոր ձևով անձին ծանուցելու դատավարական պահանջով: Միննույն ժամանակ, վարույթ իրականացնող մարմին ներկայանալու ծանուցագիրն անձին ժամանակին հանձնելու, վերջինիս կողմից այդ ծանուցագիրը ստացած լինելու և հետևաբար նաև չներկայանալու պատճառների մեջ հավաստիանալու դատավարական որևէ կարգավորում նախատեսված չէ:

Առաջարկ. անձի պատշաճ ծանուցման և վերջինիս բերման ենթարկելու որոշման իրավաչափության ապահովման նպատակով քրեադատավարական օրենքով հստակ կանոնակարգել քրեական գործով վարույթի շրջանակներում ծանուցման հետ կապված հարաբերությունները՝ օրենսդրական ամրագրման ենթարկելով պատշաճ ծանուցման եղանակները, ժամկետները և այլն:

10. Ազատությունից զրկված անձի իրավունքների երաշխավորման և գործնական ապահովման հետ կապված խնդիրները

Անձնական ազատության իրավունքի երաշխավորման հետ կապված միանգամից անհրաժեշտ է նշել, որ 2016 թվականի հուլիսին Ոստիկանության կողմից թույլ տված խախտումները մանրամասն վերլուծված են և կներկայացվեն Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցում: Մույն տարեկան հաղորդման շրջանակներում հակիրճ ներկայացվում են արձանագրված հիմնական հարցերը, որոնք հնարավորություն կտան պատկերացում կազմելու համակարգային խնդիրների էության մասին:

Ըստ այդմ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերում են Ոստիկանության բաժիններ կամ այլ իրավապահ մարմիններ առանց հիմքերի պարզաբանման բերման ենթարկելուն: Արձանագրվել են բողոքներ և ահազանգեր, որոնց հիման վրա ձեռնարկված քայլերի արդյունքում պարզվել է, որ թեև քաղաքացիները կամովին են ներկայացել ոստիկանության բաժին, սակայն ժամեր շարունակ պահվել են այնտեղ և դուրս գալու հնարավորություն չեն ունեցել: Այս դեպքերը նույնպես պետք է համարվեն ազատությունից զրկում և այդ անձինք պետք է օժտվեն անհրաժեշտ իրավունքներով ու դրանք ապահովող երաշխիքներով: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ բերման ենթարկվողին հիմքերը պարզաբանելու փոխարեն պարզապես հղում է արվում Ոստիկանության լրատվական ծառայության հայտարարություններին: Սա չի կարող ընդունելի լինել և բերման ենթարկվողին հիմքերը պարզաբանելու առումով պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը հիմք է տալիս արձանագրելու, որ անձանց ոստիկանության բաժին «հրավիրելու» և վերջիններիս՝ ազատությունից փաստացի զրկմամբ պայմանավորված իրավունքները չապահովելու արատավոր պրակտիկան իրավապահ մարմինների կողմից արդարացվում է նաև այն հիմնավորմամբ, որ անձին բերման ենթարկելու մասին որոշում չի կայացվել, քանի որ նրան հրավիրել են բաժին

օպերատիվ միջոցառում իրականացնելու շրջանակներում: Այս հիմնավորումը չի կարող ընդունելի լինել, իսկ նման պրակտիկան պետք է պարզապես բացառել:

Ասվածի հաշվառմամբ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտի լիազորության իրացմամբ վերջինս ՀՀ սահմանադրական դատարան դիմում է ներկայացրել՝ իրավական վերլուծության ենթարկելով անձի անձնական ազատության իրավունքի երաշխավորման միջազգային իրավական չափանիշները, սահմանադրաիրավական հիմունքները, գործող օրենսդրական կառուցակարգերի լիարժեքությունը, ըստ այդմ վիճարկելով օրենսդրական մի շարք դրույթների և ձևավորված իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականությունը:

Մասնավորապես, կատարված վերլուծության արդյունքները հանգում են հետևյալին.

«Ազատությունից զրկման» գաղափարի՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական մոտեցումներին համահունչ բովանդակային ընդգրկումը

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), պարզելու համար՝ արդյոք անձի ձերբակալումը կամ կալանավորումը կարող է Կոնվենցիայի իմաստով որակվել «ազատությունից զրկել», նախևառաջ ուսումնասիրում է ազատությունից զրկելու բնույթը, ազատությունից զրկելու օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Օբյեկտիվ կողմը ներառում է ազատությունից զրկման վայրը և պահման ժամանակը, սուբյեկտիվ կողմը՝ անձի համաձայնությունը¹³³:

- Եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ ազատությունից զրկելու ամենատարածված դեպքերից է, երբ իրավապահ մարմինը, ուժի գործադրմամբ կամ առանց դրա, անձին արգելում է լքել իր գտնվելու վայրը կամ պահանջում է իր հետ գնալ մեկ այլ վայր կամ անձը ստիպված է հետևել ոստիկանի կամքին: «Ազատությունից զրկել» է համարվում նաև անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և հեռանալն արգելելը¹³⁴ կամ օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը, նույնիսկ, եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման¹³⁵: Եվրոպական դատարանը Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում «ազատությունից զրկել» է որակել նույնիսկ դիմումատուին ոստիկանության բաժին տեղափոխելը և այնտեղ շուրջ 45 րոպե պահելը¹³⁶:

- Եվրոպական դատարանը Դե Ուալդը, Ումսը և Վերսիպն ընդդեմ Բելգիայի գործով կայացված վճռում նշել է, որ ազատությունից զրկված լինելու փաստի գիտակցումն այս հարցում որոշիչ չէ: Որոշիչ է միայն այն հանգամանքը, որ անձն այլևս

¹³³ http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf, էջ 5-7

¹³⁴ Տե՛ս Գիլլանն ու Քուինթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillan & Quinton v. the United Kingdom) գործով վճիռը, գանգատ թիվ 4158/05, կետ 57:

¹³⁵ [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf), էջ 17-18

¹³⁶ Տե՛ս Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով վճիռը, գանգատ թիվ 30194/09, կետ 49:

չի կարող լքել իր գտնվելու վայրը¹³⁷: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ «գտնվելու վայրը» չի վերաբերում միայն խցին. դա կարող է լինել ցանկացած վայր, այդ թվում նաև՝ տրանսպորտային միջոց¹³⁸:

- Սրա հետ կապված, հարկ է նկատի ունենալ, որ անձն ազատությունից զրկվածի կարգավիճակ է ձեռք բերում անգամ այն դեպքերում, երբ կամովին ներկայանալով ոստիկանություն՝ վերջինս հնարավորություն չի ունենում լքել այն: Ուշագրավ է, որ ահազանգերի մեծամասամբ դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությանն են դիմել ազատությունից զրկված անձանց հարազատները՝ ժամեր շարունակ որևէ տեղեկություն չունենալու պատճառով: Այս փաստն ինքնին հիմք է տալիս ողջամտորեն ենթադրելու, որ անգամ ոստիկանության բաժին կամովին ներկայանալու պարագայում անձի ազատ գործելու, մասնավորապես իր գտնվելու վայրի մասին իր հարազատներին տեղյակ պահելու հնարավորությունը սահմանափակված է եղել:

- Անձի անձնական ազատության իրավունքը երաշխավորող Սահմանադրության 27-րդ հոդվածի իրավական բովանդակությունը պետք է բացահայտվի՝ որպես ելակետ ընդունելով Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթները և դրա մեկնաբանությունները Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում այն բանի հաշվառմամբ, որ Սահմանադրության 27-րդ հոդվածի դրույթները ոչ միայն համահունչ են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթներին, այլև, ըստ էության, գրեթե նույնությամբ կրկնում են դրանք:

- Այսպիսով, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի տառից, դրա երաշխիքային բովանդակությունը բացահայտող Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից, ինչպես նաև Սահմանադրության 27-րդ հոդվածի կարգավորումներից կարելի է եզրակացնել, որ անձի անձնական ազատության իրավունքին ցանկացած միջամտություն, անկախ դրա իրականացման՝ օրենքով նախատեսված հիմքերից և ընթացակարգերից, պետք է ենթադրի իրավունքի սահմանափակման բնույթին ու աստիճանին համարժեք իրավական երաշխիքների տրամադրում:

- Կատարված վերլուծության արդյունքներով պետք է արձանագրել այն սկզբունքային մոտեցումը, ըստ որի՝ անձն ազատությունից զրկվելու փաստի ուժով՝ անկախ վարութային առանձնահատկություններից (քրեական, վարչական), ֆորմալ ընթացակարգերի առկայությունից կամ բացակայությունից, օպերատիվ միջոցառումների իրականացումից, պետք է ապահովվի իրավունքների՝ սահմանադրությամբ և միջազգային իրավական նորմերով երաշխավորված իրավունքների նվազագույն ծավալով:

¹³⁷ Տե՛ս Դե Ուալդը, Ումսը և Վերսիպյան ընդդեմ Բելգիայի (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) գործով վճիռը, գանգատներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66, կետ 65:

¹³⁸ [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf), էջ 18

• Այլ կերպ ասած, անձին ազատությունից զրկելը՝ անկախ նրանից, թե դա իրականացվել է, ասենք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կամ քրեական դատավարության շրջանակներում, ձերբակալման կամ բերման ենթարկելու ինստիտուտների շրջանակներում, պետք է ապահովվի անձին որոշակի նվազագույն իրավունքներ տրամադրելով և միասնական երաշխիքներ ամրագրելով:

Ընդ որում, նվազագույն իրավունքների ապահովման պահանջը բխում է ոչ միայն անձի անձնական ազատության իրավունքի, այլև *վատ վերաբերմունքի չենթարկվելու բացարձակ իրավունքի ապահովմանը*: Այս պահանջից ելնելով՝ Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներում ամրագրված են ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքները. *փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները և ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը*:

• Այսպես, *ներպետական օրենսդրությամբ սահմանված ցանկացած ընթացակարգի շրջանակներում ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք, միջազգային պահանջների ձևակերպմամբ, պետք է ունենա առնվազն հետևյալ իրավունքները*.

1. անհապաղ տեղեկացվել ազատությունից զրկվելու պատճառների մասին՝ իրեն հասկանալի լեզվով.

2. պահպանել լրություն,

3. իրեն ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը,

4. հրավիրել փաստաբան,

5. իր պահանջով ենթարկվել բժշկական զննման, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի կողմից,

6. իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկել և դատարանի կողմից ազատ արձակվել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

Գործնականում թույլ տրվող այսպիսի խախտումներն ապացույցն են այն բանի, որ խնդիրն անձի ազատության իրավունքի երաշխավորմանն ուղղված կոնվենցիոն և սահմանադրական դրույթների լիարժեք արտացոլման՝ հստակ ու որոշակի օրենսդրական կարգավորումների բացակայությունն է:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու՝ օրենքով ամրագրված հստակ կառուցակարգերի և ընթացակարգերի բացակայության պայմաններում ոստիկանության կողմից ազատության իրավունքի սահմանափակմամբ պայմանավորված՝ անձի իրավունքների ցանկն ու դրանց ծանուցման կարգն իրենց ամրագրումն են ստացել ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշմամբ:

Միննույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, գործնականում չեն ապահովվում անգամ Կառավարության վերը նշված որոշման պահանջները, որպիսի հանգամանքը, մեր համոզմամբ, պայմանավորված է հենց սահմանադրաիրավական երաշխիքներին համահունչ օրենքով տրված իրավակարգավորումների բացակայությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեության արդյունքում իրականացրած անմիջական դիտարկումների և կատարված իրավական վերլուծության արդյունքներով ՀՀ սահմանադրական դատարան դիմում է ներկայացրել՝ վիճարկելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի, ինչպես նաև «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները՝ ազատությունից զրկման ընթացակարգերի բավարար որոշակիություն և անձի ազատության իրավունքի ապահովման սահմանադրական երաշխիքներ չապահովելու տեսանկյունից, ինչպես նաև օրենսդրական անկատար կարգավորումներով պայմանավորված՝ ձևավորված ոչ իրավաչափ պրակտիկան:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը 2017 թվականի հունվարի 24-ին կայացրել է որոշում, որով վերահաստատելով և զարգացնելով վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ իր ՄԴՈ-1048 և ՄԴՈ-1059 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը եզրահանգել է.

«1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 258-րդ, 260-րդ, 262-րդ, 266-րդ և 267-րդ հոդվածների, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի ադմինիստրացիան» դրույթի մասով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթների մասով կարճել, քանի որ դրանց առնչությամբ առկա են ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ, միաժամանակ շեշտելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1048, ՄԴՈ-1059 որոշումների ոչ պատշաճ կատարումը երկրում սահմանադրական օրինականության հաստատման լուրջ սպառնալիք է դարձել:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ և 262-րդ հոդվածների մյուս դրույթները, ինչպես նաև 258-րդ և 267-րդ հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից

փաստացի զրկելու պահից սկսած ազատությունից զրկված անձի համար ապահովվում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 266-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ այդ հոդվածով դատարանին չվկայակոչելը չի կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ խոչընդոտի վարչական ձեռքարկված իրավաչափությունը դատարանում վիճարկելու՝ անձի իրավունքի իրացմանը:

4. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկում միշտ պետք է ներառված լինեն առնվազն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները:

5. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այն մասով, որով չեն ապահովվում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում, անհրաժեշտ իրավական երաշխիքներ, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջներին հակասող և անվավեր:»¹³⁹:

Ոստի, հաշվի առնելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է, ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման առաջնահերթությամբ պայմանավորված, ապահովել ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխան իրավակիրառում: Միննույն ժամանակ, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու հստակ և որոշակի ընթացակարգեր:

Անհրաժեշտ է նաև համապատասխան փոփոխություններ կատարել Ոստիկանության ներքին կանոնակարգման ակտերում, ինչպես նաև Ոստիկանության՝ քաղաքացիների հետ անմիջականորեն շփվող ծառայողների վերապատրաստումն իրականացնել այնպես, որ յուրաքանչյուր ոստիկան տիրապետի քաղաքացիների նվազագույն իրավունքներին ու դրանց թողթակցող իր պարտականություններին:

11. Ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովումը

¹³⁹ Առավել մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ – 1339 որոշումը:
<http://concourt.am/armenian/decisions/common/2017/pdf/sdv-1339.pdf>

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են դեպքեր, երբ, օրենքի խախտմամբ, փաստաբանին թույլ չի տրվել մուտք գործել ազատությունից զրկման վայր, այդ թվում՝ Ոստիկանության համապատասխան բաժին:

Ոստիկանության բաժին փաստաբանի մուտքի արգելքն առավելապես հիմնավորվում է, ասենք, ոչ իրավաչափ պատճառաբանությամբ այն մասին, թե բերման ենթարկված և ոստիկանության բաժնում գտնվող անձը չունի որևէ կարգավիճակ, իսկ փաստաբանի մուտքը կթույլատրվի, երբ նա ձեռք բերի ձերբակալվածի կարգավիճակ:

Ոստիկանության բաժին փաստաբանի մուտքը չթույլատրելու վերաբերյալ բողոքներ Մարդու իրավունքների պաշտպանին հասցազրվում էին նաև փաստաբանների կողմից: Այդ բողոքները վերաբերում են նաև այնպիսի իրավիճակների, երբ փաստաբանի տեղեկությամբ վստահորդը բերման է ենթարկված, սակայն ազատությունից զրկման կոնկրետ վայրի տեղն իրեն հայտնի չէ, որի պատճառով չի կարողանում այցելել նրան:

Ազատությունից զրկված անձի իրավունքների ապահովման տեսանկյունից արագ արձագանքումը հատկապես կարևոր է, քանի որ փաստաբանի մուտքը խոչընդոտելը կարող է հանգեցնել բացասական հետևանքների, այդ թվում՝ անազատության մեջ նրա հետագա մնալու կամ քրեական հետապնդման հետ կապված:

Փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման հարցին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի դատական պրակտիկայում: Մասնավորապես, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է ձերբակալման սկզբնական փուլում գտնվող անձի կոնկրետ իրավունքների ծավալը, որն այլ իրավունքների թվում ներառում է նաև *յո փաստաբանին հրավիրելու իրավունքը*:

Փաստաբանի իրավունքի ապահովման կարևոր երաշխիք է հանդիսանում նաև վերջինիս կողմից իր լիազորությունների իրականացմանը խոչընդոտող վարքագծի քրեականացումը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի 332³-րդ հոդվածի առաջին մասը հանցագործություն է համարում պաշտոնատար անձի կողմից փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը:

Նկարագրված նորմով փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու սուբյեկտ կարող է լինել միայն պաշտոնատար անձը: Կարծում ենք, այսպիսի կարգավորումը սահմանում է սուբյեկտային առումով քրեաիրավական ազդեցության նեղ շրջանակ: Փաստաբանի գործունեությունը խոչընդոտող սուբյեկտների շարքը կարող է շատ ավելի լայն լինել: Այդ դեպքում դա չի ընդգրկի այն իրավիճակները, երբ օրինակ՝ ոչ թե պաշտոնատար անձն է ուղղակիորեն խոչընդոտում փաստաբանի աշխատանքը, այլ ոչ պաշտոնատար անձինք, թեկուզ հենց այդ պաշտոնատար անձի դրդմամբ կամ հրահրմամբ:

Ուստի, անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի 332³-րդ հոդվածի 1-ին մասը ենթարկել այնպիսի փոփոխության, որով այս հանցակազմի սուբյեկտ պաշտոնատար անձից բացի կհամարվի ցանկացած այլ այնպիսի անձ, ով խոչընդոտել է փաստաբանի

օրինական գործունեությանը:

Դրանից բացի, անհրաժեշտ է նշված հոդվածը լրացնել նոր խմբագրությամբ առանձին մասով, որը պատասխանատվություն կնախատեսի փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:

12. Քրեական գործով վարույթի շրջանակներում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականությանն անհամաչափ միջամտության հետ կապված խնդիրները

Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկի քննարկման շրջանակներում արձանագրվել է դեպք, երբ քրեական գործի նախաքննության ընթացքում խուզարկություն է կատարվել դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող այգետնակում, որտեղից հայտնաբերվել և առգրավվել են փամփուշտներ և պայթյունավտանգ նյութեր, և նշանակվել է դատապայթյունատեխնիկական փորձաքննություն: Այդ հիմնավորմամբ դիմումատուին սեփականության իրավունքով պատկանող այգետնակի մուտքի դուռը քննիչի կողմից կնքվել է: Արդյունքում, շուրջ վեց ամիս քրեական վարույթն իրականացնող մարմինը դիմումատուին չի թույլատրել մուտք գործել սեփականության իրավունքով իրեն պատկանող այգետնակ: Դատապայթյունատեխնիկական փորձաքննության եզրակացությունը ստանալուց հետո միայն քաղաքացուն թույլատրվել է իրացնել այգետնակի նկատմամբ իր՝ որպես սեփականատիրոջ իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմումով պարզվել է, որ քրեական գործով վարույթի շրջանակներում քաղաքացուն պատկանող ավտոմեքենան ճանաչվել է իրեղեն ապացույց և փորձաքննություն կատարելու նպատակով պահվում է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հատուկ պահպանվող տարածքում: Նշված ավտոմեքենան հանդիսացել է սեփականատիրոջ ապրուստի միակ միջոցը, ինչը հաշվի չի առնվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից, և մեքենան ի պահ չի հանձնվել սեփականատիրոջը: Նշված բողոքի քննարկման ընթացքում պարզվել է, որ ավտոմեքենան հանձնվել է սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը շուրջ երեք ամիս անց:

Մեկ այլ դեպքում հարուցված քրեական գործի շրջանակներում քաղաքացու ավտոմեքենան տեղափոխվել է հատուկ պահպանվող տարածք: Ըստ ՀՀ հատուկ քննչական ծառայության ներկայացրած տեղեկությունների՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել ավտոմեքենան իրեղեն ապացույց ճանաչելու մասին և նշանակվել է դատաավտոտեխնիկական փորձաքննություն: Հետևաբար, ավտոմեքենան քաղաքացուն վերադարձնելու հարցը կարող է քննարկվել միայն փորձագետի եզրակացությունը ստանալուց հետո: Արդյունքում, քաղաքացու սեփականությունը վերադարձվել է մոտ ինն ամիս անց:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված վերոնշյալ խնդիրների ուսումնասիրությունն իրականացվել է անձի սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովման, այս առումով ներպետական օրենսդրական կարգավորումների վերլուծության հիման վրա:

Այսպես, ՀՀ սահմանադրության 60-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

(...)

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով (...):»:

Սեփականության իրավունքին միջամտության համաչափության խնդրին անդրադառնալով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ միջոցը, որով անձը զրկվում է իր սեփականությունից, ոչ միայն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, այլև *ապահովի համաչափության ողջամիտ հարաբերակցություն հետապնդվող նպատակի և գործադրված միջոցների միջև*¹⁴⁰: Այս պահանջը Եվրոպական դատարանի իրավաբանության մեջ ամրագրվել է հասարակության շահի և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև «արդարացի հավասարակշռության» գաղափարի շրջանակներում: Ավելին, այդպիսի անհրաժեշտ հավասարակշռությունը չի ապահովվի, եթե *իրավունքի սահմանափակման արդյունքում անձը ստիպված է կրել «անհատական և անհամաչափ բեռ»*:

Անձի սեփականության իրավունքի սահմանափակման իրավաչափության՝ սահմանադրաիրավական և կոնվենցիոն պահանջների համատեքստում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի խնդրո առարկա կարգավորումների ուսումնասիրության արդյունքները հանգում են հետևյալին:

Այսպես, օրենսգրքի 116-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրեղեն ապացույցները և առգրավված այլ առարկաները, բացառությամբ շուտ փչացող առարկաների, քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահվում են այնքան, քանի դեռ նրանց տնօրինման հարցը չի լուծվել դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշմամբ:

¹⁴⁰ St 'u, օրինակ, Սպորրոնգը և Լոննրոթն ընդդեմ Շվեդիայի (Sporrong and Lönnroth v. Sweden) գործով վճիռը, գանգատներ թիվ 7151/75; 7152/75, կետ 73, Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (James and others v. the United Kingdom) գործով վճիռը, գանգատ թիվ 8793/79, կետ 50:

Մույն օրենսգրքով նախատեսված դեպքերում իրեղեն ապացույցների տնօրինման մասին որոշումը կարող է ընդունվել նախքան քրեական գործով վարույթի ավարտը:

Իսկ օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ նախքան քրեական գործով վարույթի ավարտը քրեական վարույթն իրականացնող մարմինը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին հետ է վերադարձնում՝

1) շուտ փչացող առարկաները.

2) առօրյա կենցաղում օգտագործելու համար անհրաժեշտ այն առարկաները, որոնց վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել.

3) թռչունները և տնային կենդանիները, ավտոմեքենան կամ տրանսպորտային այլ միջոցը, եթե դրանց վրա քաղաքացիական հայցը, դատական ծախսերը կամ հնարավոր գույքային բռնագանձումն ապահովելու համար կալանք դրված չէ:

Մեջբերված քրեադատավարական կարգավորումներից բխում է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ որպես իրեղեն ապացույց ճանաչված առարկաները պահվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի մոտ մինչև գործով վերջնական դատական ակտի կամ որոշման կայացումը:

Մինևույն ժամանակ, սեփականության օբյեկտ հանդիսացող որոշակի առարկաների դեպքում օրենսդիրը նախատեսել է իրեղեն ապացույցների պահպանման նշված կանոնից բացառություն, համաձայն որի՝ գույքը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին վերադարձվում է քրեական գործի քննության ընթացքում:

Կարծում ենք, որ օրենսդրական այսպիսի կարգավորումը պայմանավորված է հենց հանրային և մասնավոր շահերի, մասնավորապես՝ ապացուցման՝ որպես գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծմանն ուղղված գործընթացի պատշաճ իրականացման և անձի՝ որպես սեփականատիրոջ իրավունքների հարգման միջև արդարացի հավասարակշռության ապահովման պահանջով:

Սրա հետ կապված, հարկ ենք համարում նշել, որ թեև քրեադատավարական օրենքը վարույթն իրականացնող մարմնի՝ իրեղեն ապացույցները նախքան քրեական գործով վարույթի ավարտը վերադարձնելու պարտականության որևէ կոնկրետ դատավարական ժամկետ չի սահմանում, այդուհանդերձ, օրենսդրական այս պահանջի՝ սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված նորմատիվ արժեքը ենթադրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից բավարար ջանասիրություն և բարեխղճություն պետք է ցուցաբերվի՝ որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու պարտականության ապահովման ուղղությամբ:

Ուստի, անհրաժեշտ է գործնականում ապահովել որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման ողջամիտ ժամկետները՝ քրեադատավարական օրենքի պահանջներին համապատասխան գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելով:

13. Մասնագիտական գործունեություն իրականացնելիս փաստաբանին խուզարկելու ոչ իրավաչափությունը

Մարդու իրավունքների պաշտպանին քրեական գործով որպես պաշտպան ներգրավված փաստաբանի կողմից հասցեագրվել է դիմում, որում մասնավորապես նշվել է, որ իր պաշտպանյալին տեսակցելու նպատակով քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս վերջինս նախ ենթարկվել է անձնական իրերի (պայուսակի) զննության, այնուհետև վարչակազմի կողմից այն խուզարկելու փորձ է արվել: Մինչդեռ, փաստաբանն արգելել է խուզարկել իր անձնական իրերը, որի արդյունքում վերջինս գրկվել է իր պաշտպանյալին տեսակցելու հնարավորությունից:

Ներկայացված խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջին հերթին քննարկման առարկա է դարձել անձի արդար դատաքննության իրավունքի երաշխավորման և դրա հետ անխզելիորեն կապված փաստաբանական գործունեության բավարար երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն ամրագրում է փաստաբանի մասնագիտության կենտրոնական դերն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում: Եվրոպական դատարանը մասնավորապես նշել է, որ առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ և անհրաժեշտ նախապայման Կոնվենցիայի պահանջների իրագործման համար¹⁴¹:

Դատարանը հավելել է, որ փաստաբաններին վերաբերող գործերում փաստաբանի մասնագիտական գաղտնիքի նկատմամբ ոտնձգությունը կարող է հետևանք ունենալ արդարադատության համակարգի համար և այդպիսով խախտել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը¹⁴²:

Ավելին, Եվրոպական դատարանը մի շարք նախադեպային վճիռներով ամրագրել է, որ նախնական կալանքի տակ գտնվող մեղադրյալի նկատմամբ կիրառվող յուրաքանչյուր սահմանափակում, ներառյալ նրա հաղորդակցությունը փաստաբանի հետ, պետք է ունենա օրինական հիմք, և օրենքը պետք է լինի բավականաչափ որոշակի¹⁴³:

Հատկանշական է, որ նշված կարգավորման լույսի ներքո, ուսումնասիրելով ՌԴ օրենսդրության համանման կարգավորումները և կողմերի փաստարկները, Եվրոպական դատարանը եկել է եզրահանգման, որ նախնական կալանքի վերաբերյալ

¹⁴¹ Տե՛ս Էլչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի վճիռը, գանգատ թիվ 23145/93 և 25091/94, կետ 669:

¹⁴² Տե՛ս Նիմիցն ընդդեմ Գերմանիայի վճիռը, գանգատ թիվ 13710/88, կետ 37, Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատ թիվ 71362/01, կետ 48:

¹⁴³ Տե՛ս Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատ թիվ 5829/04, կետ 200, mutatis mutandis, Նոլանն ու Կ.-ն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատ թիվ 2512/04, կետեր 98-99:

օրենքի՝ «արգելված առարկաներ» անցկացնող «այցելուների» խուզարկությանը վերաբերող զանազան դրույթները, ըստ երևույթին, չեն տարածվում իր փաստաբանի հետ մեղադրյալի տեսակցության վրա¹⁴⁴:

Փաստաբանական գրասենյակներում խուզարկություն կատարելուն վերաբերող գործերով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո¹⁴⁵ Դատարանը, Խաղարկովսկին ընդդեմ Ռուսաստանի գործով քննարկելով փաստաբանին քրեակատարողական հիմնարկում խուզարկության ենթարկելու իրավաչափության հարցը, եզրահանգման գալու համար կարևոր է համարել պարզաբանել այն հարցը, թե արդյոք իշխանություններն ունեցել են «փաստաբան-պաշտպանյալ» արտոնության չարաշահման վերաբերյալ ենթադրություններ անելու ողջամիտ հիմքեր: *Արդյունքում, առանց նշված հիմքերի իրականացված միջամտությունը դատարանի կողմից որակվել է որպես ոտնձգություն փաստաբանի մասնագիտական գաղտնիքի և նրա պաշտպանյալի արդյունավետ իրավաբանական օգնության իրավունքի նկատմամբ*¹⁴⁶:

Ինչ վերաբերում է փաստաբանի՝ խուզարկության չենթարկվելու ներպետական օրենսդրական երաշխիքներին, հարկ է նշել, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ *չի թույլատրվում փաստաբանին խուզարկել իր մասնագիտական պարտականություններն անմիջականորեն կատարելիս*:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պետք է ապահովվի իր վստահորդի հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու, խորհրդատվություն տրամադրելու հնարավորությամբ* պետական մարմիններում և հիմնարկներում, տեղական ինքնակառավարման մարմիններում, այդ թվում՝ դատական մարմիններում: Պետական և դատական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ապահովելու փաստաբանի՝ վստահորդի հետ առանձին, անարգել և մեկուսի հաղորդակցվելու իրավունքը:

Վերոնշյալ օրենսդրական դրույթի տառացի մեկնաբանությունից բխում է, որ օրենսդիրն *իրավապաշտպան գործունեության շրջանակներում փաստաբանին խուզարկելու բացարձակ արգելք է նախատեսել*:

Ավելին, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալվածներին պահելու վայր և կալանավորվածներին պահելու վայր մուտք և ելք գործող անձը, ինչպես նաև նրա իրերը ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերի կողմից կարող են ենթարկվել զննության:

Օրենքի ընդհանուր կարգավորումներից և, մասնավորապես, վկայակոչված դրույթից աներկիմաստ բխում է, որ առհասարակ ձերբակալվածներին և

¹⁴⁴ Տե՛ս Խողորկովսկին ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատ թիվ 5829/04, կետ 200, Ռեզնիկն ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատ թիվ 4977/05, կետ 47:

¹⁴⁵ Տե՛ս, mutatis mutandis, Իլյա Ստեֆանովն ընդդեմ Բուլղարիայի վճիռը, գանգատ թիվ 65755/01, կետ 41, և Նիմիցն ընդդեմ Գերմանիայի գործը, գանգատ թիվ 13710/88, կետ 37:

¹⁴⁶ Տե՛ս Խողորկովսկին ընդդեմ Ռուսաստանի վճիռը, գանգատ թիվ 5829/04, կետեր 199-201:

կալանավորվածներին պահելու վայրեր մուտք և ելք գործող անձանց անձնական խուզարկության ենթարկելու՝ օրենքով նախատեսված որևէ հիմք և ընթացակարգ սահմանված չեն:

Հարցի առնչությամբ ձևավորված պրակտիկայի ոչ իրավաչափության մասին են վկայում արձանագրվող այն մի շարք դեպքերը, երբ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների կողմից *զննության ընթացակարգի շրջանակներում իրականացվող գործողությունները որոնողական բնույթ են ստանում, այսինքն՝ փաստացի իրականացվում է խուզարկություն:*

Ուստի, խնդրի լուծումը պետք է ապահովվի թե՛ օրենսդրական և թե՛ իրավակիրառման մակարդակներում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու միջոցով: Միասնական իրավակիրառ պրակտիկայի ապահովման նպատակով փաստաբանական գործունեության՝ օրենքով ամրագրված երաշխիքները և դրանց ապահովմանն ուղղված համապատասխան ընթացակարգերն իրենց ամրագրումը պետք է ստանան նաև պետական մարմինների (տվյալ դեպքում՝ քրեակատարողական հիմնարկների) գործունեությունը կանոնակարգող ենթաօրենսդրական իրավական ակտերում:

14. Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը վարույթն իրականացնող մարմնի կողմից չտրամադրելը

Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի գործունեության ընթացքում քննարկման առարկա է դարձել նաև քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումը դատավարության մասնակիցներին չտրամադրելու իրավաչափության խնդիրը: Այսպես, Պաշտպանին հասցեագրված դիմումներից մեկում քաղաքացին հայտնել է, որ ինքը քրեական գործով վարույթը, որով ինքը ներգրավված է որպես տուժող, քննիչի որոշմամբ կասեցվել է: Կասեցման վերաբերյալ վերջինս տեղեկացվել է քննիչի գրությամբ: Սակայն, խնդրո առարկա որոշման պատճենն իրեն տրամադրելու խնդրանքը մերժվել է:

Խնդրի առնչությամբ ՀՀ գլխավոր դատախազության արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ քաղաքացին՝ որպես տուժող քրեական գործի նյութերին կարող է ծանոթանալ (հետևաբար՝ տեղեկանալ քրեական գործով կատարված բոլոր քննչական ու դատավարական գործողությունների արդյունքներին) երկու դեպքում, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 265-րդ հոդվածի հիմքով՝ մեղադրական եզրակացություն կազմվելուց առաջ կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի երրորդ մասի հիմքով՝ քրեական գործով վարույթը կարճվելուց հետո:

Հետևաբար, քրեական գործով կասեցված վարույթի շրջանակներում բացառվում է տուժողի կողմից քրեական գործի նյութերին ծանոթանալը՝ այդպիսի դատավարական կարգ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չլինելու պատճառաբանությամբ:

Ինչ վերաբերում է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը

տուժողին չտրամադրելուն, ապա ըստ ՀՀ գլխավոր դատախազության պարզաբանման՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը տուժողին ուղարկելու լիազորություն դատավարական օրենքը քննիչին չի վերապահում, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով քննիչը պարտավոր է, այդ թվում՝ տուժողին, տեղեկացնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, ինչն ապահովվել է քննիչի գրությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ *քննիչը պարտավոր է տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին գրավոր տեղեկացնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին և միաժամանակ պարզաբանել, որ քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով նախատեսված կարգով:*

Մինևույն ժամանակ, Օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում դատական բողոքարկման առարկա կարող են հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները:

Գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում տուժողն իրավունք ունի բողոքարկելու քրեական գործով վարույթի կասեցման մասին կայացված որոշումը: Դրա հետ միասին, Քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է միայն խնդրո առարկա որոշման մասին տեղեկացվելու իրավունք՝ առանց դրա պատճենը ստանալու հնարավորության ուղղակի ամրագրման:

Մինչդեռ, կարծում ենք, որ բողոքարկման իրավունքի օրենսդրական ամրագրումն առանց անհրաժեշտ երաշխիքներ սահմանելու ինքնին բավարար չէ դրա լիարժեք իրացումն ապահովելու համար: Համապատասխան դատավարական ակտի բողոքարկման իրավունքը կարող է կյանքի կոչվել միայն այդ որոշման պատճենը բողոքարկման իրավունք ունեցող անձին տրամադրվելու դեպքում:

Բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման պահանջն իր ամրագրումն է գտել ՀՀ սահմանադրությամբ, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում: Մասնավորապես, Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք»:

Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, ում սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Կոնվենցիոն այս կարգավորումը նույնպես վկայում է, որ քրեադատավարական

գործող օրենսգրքի կարգավորումների նեղ մեկնաբանությունը կարող է հանգեցնել քրեական վարույթի ընթացքում անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի սահմանափակման և դրանով իսկ մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորությունների չկատարման:

Վերոգրյալի հիման վրա կարծում ենք, որ Օրենսգրքի 258-րդ հոդվածի սահմանափակ մեկնաբանությունն ու կիրառությունն իրական վտանգ կարող են ստեղծել անձի սահմանադրական իրավունքների իրականացման և դրանց արդյունավետ պաշտպանության համար: Դատավարական նորմերի նման նեղ մեկնաբանությունն ընդունելի չէ՝ հաշվի առնելով, որ վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը ստանալու դատավարական ընթացակարգ որևէ այլ հոդվածում նախատեսված չէ. միայն Օրենսգրքի 266-րդ հոդվածն է, որ նախատեսում է գործում առկա փաստաթղթերին ծանոթանալու հնարավորություն, որը, սակայն կարող է իրագործվել միայն նախնական քննության ավարտին:

Հետևաբար, Օրենսգրքի 258-րդ հոդվածի իրավակարգավորմանը պետք է տալ համակարգային մեկնաբանություն, և հոդվածով նախատեսված *քննիչի՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին տեղեկացնելու պարտականությունը պետք է ենթադրի նաև շահագրգիռ անձի պահանջով այդ որոշման պատճենը նրան տրամադրելու պարտականություն:*

Անհրաժեշտ է գործնականում ապահովել շահագրգիռ անձի պահանջով քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենի տրամադրումը՝ գործող քրեադատավարական կարգավորումների համակարգային մեկնաբանության հիման վրա: Միննույն ժամանակ, միասնական իրավակիրառ պրակտիկայի ապահովման տեսանկյունից Քրեական դատավարության օրենսգրքում ուղղակիորեն ամրագրել խնդրո առարկա որոշման պատճենը տրամադրելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

15. Անչափահասների մասնակցությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին օրինական ներկայացուցչի, ինչպես նաև մանկավարժի մասնակցությունն ապահովելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների չափապանումը

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ընթացքում քննարկման առարկա են դարձել քրեական գործով վարույթի շրջանակներում անչափահասների մասնակցության քրեադատավարական երաշխիքների, մասնավորապես՝ անչափահասների հարցաքննությանը մանկավարժի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը չափապանվելու հետ կապված խնդիրներ¹⁴⁷:

¹⁴⁷ Տե՛ս, մասնավորապես, 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 89-90:

Հարկ է նկատել, որ 2016 թվականի ընթացքում անչափահասների մասնակցությամբ քննչական գործողությունների իրականացման դատավարական կարգի խախտումների վերաբերյալ բողոքներ Մարդու իրավունքների պաշտպանին չեն հասցեագրվել:

Միննույն ժամանակ, քրեական գործով վարույթին մասնակցող անչափահասի (հատկապես տուժողի դատավարական կարգավիճակ ունեցողի) իրավունքների լիարժեք ապահովումը՝ երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային իրավական պահանջներին համահունչ, ենթադրում է քրեադատավարական օրենսդրությամբ արդյունավետ կառուցակարգերի նախատեսում՝ *երեխայի լավագույն շահի առաջնահերթության և տարիքով պայմանավորված՝ վերջինիս սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների հաշվառմամբ*¹⁴⁸:

Օրենսդրական առկա կարգավորումների հետ կապված՝ պետք է արձանագրել, որ անչափահաս վկայի կամ տուժողի մասնակցությամբ դատավարական գործողությունների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված լրացուցիչ երաշխիքները սահմանափակվում են միայն հարցաքննության իրականացման որոշակի առանձնահատկությունների՝ մասնավորապես դրա տևողության, մանկավարժի և անչափահասի օրինական ներկայացուցչի մասնակցության ապահովման, ինչպես նաև դատական քննության փուլում ամբաստանյալի բացակայությամբ անչափահաս վկային հարցաքննելու հնարավորության ամրագրմամբ¹⁴⁹:

Մինչդեռ, քրեական արդարադատության միջազգային իրավական

¹⁴⁸Տե՛ս Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան <http://www.ohchr.org/en/professionalinterest/pages/crc.aspx>, ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի «Անչափահասների արդարադատության իրականացման» 1997/30 բանաձևը <http://www.un.org/documents/ecosoc/res/1997/eres1997-30.htm>, ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից Ստանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին՝ կամրնտիք արձանագրությունը <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/OPSCCRC.aspx>

ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 2005/20 բանաձևով հաստատված՝ Անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ քրեական գործերով արդարադատության վերաբերյալ ուղեցույցը <http://www.un.org/en/ecosoc/docs/2005/resolution%202005-20.pdf>

ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի 2005/20 բանաձևի հիման վրա 2009 թվականին մշակված «Անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ քրեական գործերով արդարադատության վերաբերյալ» տիպային օրենքը https://www.unicef.org/ceecis/UNDOC-UNICEF_Model_Law_on_Children.pdf

«Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Եվրոպայի խորհրդի 2007թ. կոնվենցիան http://www.coe.int/t/dg3/children/1in5/Source/Lanzarote%20Convention_EN.pdf

Եվրոխորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2011/92EU «Երեխաների սեռական չարաշահման և սեռական շահագործման, մանկական պոռնոգրաֆիայի և Խորհրդի 2004/68/JHA շրջանակային որոշումը փոխարինելու վերաբերյալ» հրահանգը

<http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32011L0093&from=EN>

¹⁴⁹ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205¹-րդ, 207-րդ և 341-րդ հոդվածների կարգավորումները:

չափանիշներն այս առումով ենթադրում են ինչպես մինչդատական վարույթում, այնպես էլ դատական քննության փուլում անչափահասների մասնակցությամբ *բոլոր դատավարական գործողությունների* իրականացման իրավական և կազմակերպական պայմանների ապահովում:

Այս առումով, թերևս պետք է նշել, որ վերը նշված կառուցակարգերի ամրագրման ուղղությամբ ներկայում նախաձեռնվել են օրենսդրական փոփոխություններ¹⁵⁰:

Ինչ վերաբերում է անհրաժեշտ կազմակերպական միջոցառումների ապահովմանը, ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ ներկայում աշխատանքներ են իրականացվում Քննչական կոմիտեի՝ նոր շահագործման հանձնված շենքերում անչափահասների հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակներ առանձնացնելու և կահավորելու ուղղությամբ: 2016 թվականին այդպիսի հատուկ սենյակներով ապահովվել են Սյունիքի մարզային քննչական վարչությունը, Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժինը, Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթունի, Շենգավիթի վարչական շրջանների քննչական բաժինները: Անչափահասների հարցաքննության համար հատուկ սենյակներ (դեռևս ոչ ամբողջությամբ կահավորված) նախատեսված են Քննչական կոմիտեի կենտրոնական մարմնի, ինչպես նաև Երևան քաղաքի քննչական վարչության վարչական շենքերում:

Ասվածի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ *քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող ներգրավված անչափահասների իրավունքների ապահովումը պետք է իրականացվի նախաձեռնված օրենսդրական փոփոխությունների ընդունմամբ իրավական հիմքերի ամրագրման, իրավակիրառ պրակտիկայում դրանց գործնական ապահովման, ինչպես նաև բոլոր քննչական մարմիններում կազմակերպական միջոցառումների (հատուկ սենյակային և տեխնիկական պայմանների) հետևողական իրագործման ճանապարհով:*

16. Կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու դատական պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում

Քրեական գործերով վարույթի շրջանակներում կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու կամ դրա իրավաչափության հարցը քննարկելու իրավասությունը վերապահված է բացառապես ՀՀ դատարաններին:

Ելնելով անձի անձնական ազատության իրավունքին այդպիսի միջամտության դատական երաշխիքներ ամրագրելու կոնվենցիոն և սահմանադրական պահանջներից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրվել են կալանքի կիրառության

¹⁵⁰ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին: Նախագծով առաջարկվող լուծումների կատարելագործման ուղղությամբ ներկայացվել են մի շարք առաջարկություններ:

հիմքերն ու ընթացակարգը՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում:

ՀՀ-ում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի վերաբերյալ իրավական վերլուծության շրջանակներում կալանքի կիրառության դատական պրակտիկային անդրադարձը պայմանավորված է նախևառաջ խնդրո առարկա խափանման միջոցի՝ որպես անձի անձնական ազատության հիմնարար իրավունքը սահմանափակող հարկադրանքի խստությամբ, և այս առումով պետության՝ միջազգային իրավական մոտեցումներին ու հանձնարականներին խստորեն հետևելու կարևորությամբ: Մասնավորապես, կալանքը՝ որպես բացառիկ խափանման միջոց կիրառելու ինստիտուցիոնալ մոտեցում որդեգրելու հրամայականը բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի) վերաբերյալ նախադեպային վճիռների¹⁵¹, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի՝ կալանքի վերաբերյալ ներպետական իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրության զարգացման հստակ ուղղություններ նախանշող որոշումների¹⁵² կատարման անհրաժեշտությունից:

Բացի այդ, ՀՀ-ում կալանքի չարդարացված լայն կիրառության հիմնախնդրի արդիականության մասին են վկայում ինչպես հասարակական լայն շերտերում հնչող դժգոհությունները, խնդրի վերաբերյալ իրավապաշտպան գործունեություն իրականացնողների կողմից բարձրաձայնվող մտահոգությունները, այնպես էլ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված քաղաքացիների բողոքները:

Այդ բողոքների գերակշռող մեծամասնությունը վերաբերում է դատարանների կողմից կալանքի կիրառության միջնորդությունները բավարարելու ոչ իրավաչափությանը՝ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայությունը, ինչպես նաև խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հարցը լուծելիս նշանակություն ունեցող հանգամանքները պատշաճ քննարկման առարկա չդարձնելուն: Բացի այդ, ներկայացված մի շարք դիմումներում քաղաքացիները նշել են, որ կալանքը կիրառելիս դատարանների կողմից հաշվի չեն առնվել իրենց առողջական ծանր վիճակը, այդ թվում՝ հաշմանդամությունը,

¹⁵¹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ ձևավորվել և բովանդակային բացահայտում ու զարգացում են ստացել կալանքի կիրառման հիմքերն ու իրավաչափության պայմանները: Տե՛ս, մասնավորապես, կալանքի կիրառման և դրա ժամկետի երկարացման հիմքերի վերաբերյալ վճիռները՝ Ֆոքսը, Քեմբլը և Հայթլին ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom), գանգատներ թիվ 12244/86; 12245/86; 12383/86, Կեմաշն ընդդեմ Ֆրանսիայի (Kemmaché v. France), գանգատ թիվ 12325/86; 14992/8), Փիրոյանն ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33376/07, Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով 2011 թվականի դեկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 44068/07 և այլն:

¹⁵² Տե՛ս, մասնավորապես, Տիգրան Վահրադյանի վերաբերյալ գործով 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ԼԴ/0197/06/08, Արամ Ճուղուրյանի վերաբերյալ գործով 2007 թվականի օգոստոսի 30-ի ՎԲ-132/07, Ասլան Ավետիսյանի վերաբերյալ գործով 2008 թվականի հոկտեմբերի 31-ի ԱՎԴ/0022/06/08, Վարդան Մինասյանի վերաբերյալ գործով 2009 թվականի ապրիլի 10-ի ՀՅԲԴԴ/3/0106/01/08 որոշումները:

մեծահասակ լինելը, ընտանեկան դրությունը, ինչպես նաև իրենց խնամքին մանկահասակ երեխաներ և տարեց ծնողներ ունենալու հանգամանքները:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ամրագրված՝ դատական վարույթին կամ դատավորների լիազորությունների իրականացմանը միջամտելու արգելքի ուժով կոնկրետ գործերով կալանքի կիրառման օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ իրավական գնահատական տալու իրավասություն չունենալով հանդերձ՝ հարկ ենք համարում ընդհանրական մակարդակում անդրադառնալ ՀՀ-ում կալանքի կիրառության դատական պրակտիկային: Այս առումով, որպես ելակետ են դիտարկվել առկա օրենսդրական լուծումների՝ միջազգային իրավական զարգացումներին համապատասխանության, ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների՝ իրավակիրառ պրակտիկայում կենսագործման, ինչպես նաև դատական վիճակագրության ցուցանիշների համեմատաիրավական ուսումնասիրության արդյունքները:

Մասնավորապես, ուսումնասիրության առարկա են դարձել 2011-ից 2016 թվականի ՀՀ դատարանների գործունեության վերաբերյալ հաշվետվություններում արտացոլված պաշտոնական վիճակագրական տվյալները¹⁵³: Մասնավորապես, համեմատական կարգով վերլուծվել են ինչպես կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելու կամ կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունների քանակը, դատարանների կողմից բավարարված միջնորդությունների տեսակարար կշիռը, այնպես էլ գրավը՝ որպես այլընտրանքային խափանման միջոց ընտրելու միտումները:

Այսպես, դատարան ներկայացված՝ կալանքը կիրառելու միջնորդությունների բացարձակ ցուցանիշների, ինչպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների շարքում դրանց տեսակարար կշռի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել վարույթն իրականացնող մարմինների կողմից այդպիսի միջնորդություններ ներկայացնելու նվազման որոշակի միտում: Օրինակ, եթե 2011 թվականին կալանավորման վերաբերյալ միջնորդությունների ընդհանուր թիվը կազմել է 3262 կամ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների 23.4%-ը, 2013 թվականին այդ ցուցանիշը կազմել է 3172 (համապատասխանաբար՝ 21.8%), ապա 2016 թվականին խնդրո առարկա միջնորդությունների տեսակարար կշիռը նվազել է մինչև 15.8% (2563 միջնորդություն):

Միևնույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ դատարանների կողմից այդ միջնորդությունների բավարարման ցուցանիշները ուսումնասիրված բոլոր տարիների կտրվածքով գերազանցել են դատարան ներկայացված կալանքի միջնորդությունների 90%-ը (ըստ տարիների՝ դրանք տատանվել են 92-95% միջակայքում): Կարծում ենք, որ միջնորդությունների բավարարման այսպիսի բարձր շեմն ինքնին վկայում է

¹⁵³ ՀՀ դատարանների գործունեության վերաբերյալ հաշվետվությունները հրապարակված են «Հայաստանի Դատական Համակարգ» պաշտոնական կայքէջում (<http://www.court.am/>):

դատարանների կողմից կալանքի կիրառության հիմնավորվածության կանխավարկածով առաջնորդվելու և կալանքը բացառիկ դեպքերում, այսինքն՝ որպես «վերջին միջոց» կիրառելու կայուն պրակտիկայի բացակայության մասին:

Պաշտոնական վիճակագրության ուսումնասիրության շրջանակներում հարկ է արձանագրել, որ ի տարբերություն նախորդ տարիների՝ 2015 և 2016 թվականներին արձանագրվել են նաև կալանավորման վերաբերյալ միջնորդությունների մասնակի բավարարման դեպքեր (2015 թվականին՝ 11, իսկ 2016 թվականին՝ 13 դեպք): Այս ցուցանիշները, սակայն բավականին ցածր են՝ կալանքի կիրառության պրակտիկայի ընդհանուր պատկերը փոփոխելու առումով:

Բացի այդ, մտահոգության տեղի են տալիս կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների և դրանց բավարարման քանակական ցուցանիշները: Այսպես, 2016 թվականին ներկայացվել են այդպիսի 1795 միջնորդություններ, որոնցից բավարարվել է 1691-ը (միջնորդությունների ընդհանուր թվի 94.2%), մասնակի բավարարվել է 67-ը (3.9%), առանց քննության է թողնվել 11-ը (0.65%), իսկ դատարանների կողմից մերժվել է ընդամենը 36 միջնորդություն կամ դատարան ներկայացված միջնորդությունների 2.1%-ը: Նմանատիպ պատկեր է արձանագրվել նաև 2015 թվականի ցուցանիշներով. դատարան ներկայացված 1610 միջնորդություններից բավարարվել է 1463-ը (90.8%), իսկ մերժվել՝ ընդամենը 38-ը (2.4%):

Կալանավորման վերաբերյալ միջնորդությունները իբրև ընդհանուր կանոն բավարարելու պրակտիկայի մասին մտահոգությունները հիմնավորվում են նաև գրավի՝ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցի կիրառման ցածր ցուցանիշներով: Այսպես, կալանավորումը՝ որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների բավարարման և անձին կալանքից գրավով ազատելու դեպքերի քանակական հարաբերակցությունը 2011-ից 2016 թվականներին տատանվել է 4-7% միջակայքում: Բացի այդ, որոշակի բացասական միտում է նկատվում անձին գրավով ազատելու միջնորդությունների բավարարման հարցում: Այսպես, եթե 2011 թվականին գրավի կիրառման բավարարված միջնորդությունները կազմել են 131 (միջնորդությունների ընդհանուր թվի 29.2%), 2012 թվականին՝ 134 (միջնորդությունների ընդհանուր թվի 30.3%), ապա 2016 թվականին թեև բավարարվել է 161 միջնորդություն, սակայն դրա տեսակարար կշիռը նվազել է մինչև 20.9%:

Անդրադառնալով օրենսդրական հիմքերի լիարժեքությանը՝ հարկ է ընդգծել, որ կալանքի համատարած կիրառության դատական պրակտիկան որոշակիորեն պայմանավորված է նաև կալանքի կիրառման և դրա ժամկետի երկարացման օրենսդրական գործող կանոնակարգումների ոչ բավարար ճկունությամբ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է այլընտրանքային խափանման միջոցների գործուն համակարգի, մեղադրյալի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով այդպիսի այլընտրանքային միջոցների կիրառման առաջնահերթության ուղղակի պահանջի

բացակայությունը¹⁵⁴:

Այսպիսով, կալանքի կիրառության դատական պրակտիկայի ընդհանուր դիտարկման արդյունքներով՝ կարող ենք փաստել, որ *խնդրի լուծումը թերևս պետք է ապահովվի նոր հայեցակարգային մոտեցումներ պարունակող օրենսդրական դաշտի վերանայման, մասնավորապես՝ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման ճկուն օրենսդրական կառուցակարգերի հնարավորինս արագ ներդրման և դրանց համապատասխան՝ կայուն դատական պրակտիկայի ձևավորման ճանապարհով*:

17. 2008 թվականի մարտի 1-ի 10 գոհերի մահվան վերաբերյալ գործերի քննությունը

Մարդու իրավունքների պաշտպանին Հատուկ քննչական ծառայության տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործից 10 անձի մահվան և 3 անձի մարմնական վնասվածքներ ստանալու փաստով 10 առանձին գործեր են անջատվել, որոնցից յուրաքանչյուրով նախաքննությունը շարունակվում է, կատարվում են համապատասխան քննչական գործողություններ:

Մասնավորապես, տրամադրված տեղեկության համաձայն՝ բոլոր գործերով հարցաքննվել են շուրջ 200 անձինք, տրվել են հանձնարարություններ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ, կատարվել են հարցումներ:

Չնայած նրան, որ Ծառայության կողմից իրականացվել են վերը նշված քննչական գործողությունները, անհրաժեշտ է ընդգծել, որ 2016 թվականի ընթացքում կրկին չի ապահովվել քննարկվող քրեական գործերի վերաբերյալ հանրային իրազեկվածության պատշաճ մակարդակ: 2008 թվականի մարտի 1-ի տասը գոհերի մահվան փաստով կատարվող նախաքննության ոչ պատշաճ իրականացման խնդրին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2011, 2012, 2013, 2014 և 2015 թվականների տարեկան զեկույցներում: Նշվածի կապակցությամբ բազմիցս իրենց մտահոգությունն ու դժգոհությունն են հայտնել մարտի 1-ի 10 գոհերի ընտանիքների անդամները, հարազատները, տարբեր քաղաքական գործիչներ, քաղաքացիական հասարակությունը, ինչպես նաև միջազգային կառույցներ: Մի շարք դեպքերում դժգոհությունները կապված են Ծառայության կողմից իր գործառույթները ոչ պատշաճ իրականացնելու հետ, ինչի հետևանքով տվյալ գործերը տարիներ շարունակ չեն բացահայտվել: Անհրաժեշտ է ընդգծել, որ գործերի քննության ողջամիտ ժամկետների

¹⁵⁴ Այս առումով, պետք է արձանագրել, օրինակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով տրված լուծումներով նոր խափանման միջոցների (նոստիկանությունում հաշվառվելը, տնային կալանքը և այն) սահմանումը, ինչպես նաև գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց նախատեսելը, որոնք պետք է նպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը:

Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը https://www.e-gov.am/u/files/file/decrees/arc_voroshum/Mar9-6_1.pdf

խախտումը կարող է հանգեցնել մահացած անձանց իրավահաջորդների իրավունքների խախտմանը: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես մարտի 1-ի զոհերի գործերով ընթացող նախաքննության շուրջ 8 տարվա տևողությունը որևէ օրյեկտիվ պատճառով կամ այլ հանգամանքներով չի հիմնավորվել Շառայության կողմից: Այսպիսով, վերոգրյալից կարելի է գրակացնել, որ Շառայությունը նաև 2016 թվականին էական քայլեր չի ձեռնարկել 2008 թվականի մարտի 1-ի տասը մահվան դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Անհրաժեշտ է մարտի 1-ի տասը զոհերի փաստի առթիվ հարուցված քրեական գործերով Շառայության կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ պատշաճ իրազեկել զոհերի հարազատներին և հանրությանը: Ողջամիտ ժամկետներում ապահովել հարուցված քրեական գործերի լրիվ, օրյեկտիվ և բազմակողմանի քննությունը:

ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածն արձանագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Չնայած նշված ամրագրմանը և օրենսդրական մի շարք երաշխիքների՝ 2016 թվականի ընթացքում արձանագրվել են պատշաճ վարչարարության իրավունքի սահմանափակման դեպքեր:

1. Օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն չտրամադրելու, վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման գործընթացը պատշաճ չիրականացնելու, արդեն իսկ վճարված գույքահարկի գումարը կրկին պահանջելու, և վարչարարության գործընթացի հետ կապված այլ խնդիրներ

2016 թվականի ընթացքում ստացվել են դիմում-բողոքներ օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն չտրամադրելու, վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման գործընթացը պատշաճ չիրականացնելու, արդեն իսկ վճարված գույքահարկի գումարը կրկին պահանջելու, վարչական ակտի կատարումը կասեցված լինելու պարագայում դրա կատարումը շարունակելու, ինչպես նաև վարչարարության գործընթացի հետ կապված այլ խնդիրների վերաբերյալ:

Ըստ ներկայացված բողոքի՝ անձը դիմում է հասցեագրել Երևանի քաղաքապետարան՝ խնդրելով պարզաբանել, թե որ մարմնի կողմից է իրականացվում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգրումը: Դիմումատուի պնդմամբ՝ Երևանի քաղաքապետարանի կողմից իր դիմումի կապակցությամբ պատշաճ վարչարարություն չի իրականացվել, մասնավորապես, չի պարզաբանվել, թե որ մարմնի կողմից է իրականացվում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգրումը, փոխարենը՝ մերժել են իրեն տրամադրել առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր՝ պատճառաբանելով, որ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման համաձայն, առողջարանային բուժման ուղեգրերը տրամադրվում են սոցիալական (հատուկ) խմբերին, որոնցում ինքն ընդգրկված չէ: Մինչդեռ, քաղաքացին երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ է, իսկ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման համաձայն, պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու

առանձին (հատուկ) խմբերի մեջ ընդգրկված են նաև երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք¹⁵⁵:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Պաշտպանի միջամտության արդյունքում քաղաքացուն Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է ուղեգիր:

Պաշտպանին հասցեագրած մեկ այլ դիմումի համաձայն՝ անձին 1996 թվականին հատկացվել է բնակարան, իսկ շենքը, որտեղ գտնվում է նշված բնակարանը ճանաչվել է 4-րդ աստիճանի վթարային և ներկայումս Երևանի քաղաքապետարանը սկսել է շենքի բնակիչների վերաբնակեցման գործընթացը: Սույնով պայմանավորված քաղաքացին դիմել է Երևանի քաղաքապետարան իր բնակարանի փոխարեն իրեն նոր բնակարան հատկացնելու խնդրանքով, սակայն վերջինիս դիմումը մերժվել է: Նշված գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N 172-Ն որոշմամբ, ըստ որի՝ տվյալ դեպքում նշված ընտանիքին կարող է տրամադրվել մեկ սենյականոց բնակարան: Մինչդեռ, ըստ քաղաքապետարանի, այդ ընտանիքը զբաղեցրել է նաև վերաբնակեցման արդյունքում ազատված տարածք և պահանջում է դրա դիմաց ստանալ նոր բնակարան: Երևանի քաղաքապետարանը պատրաստակամություն է հայտնել ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ սահմանված կարգով քննարկելու քաղաքացու ընտանիքի վերաբնակեցման հարցը և տրամադրելու մեկ սենյականոց բնակարան՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու և տարածքները սահմանված կարգով Երևան համայնքին հանձնելու դեպքում: Դիմումատուն վերաբնակեցման համար պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրել է Երևանի քաղաքապետարան, որից հետո քաղաքապետարանը պահանջել է, որպեսզի դիմումատուի եղբայրն ազատի իր կողմից ինքնակամ զբաղեցրած սենյակը: Ըստ դիմումատուի՝ դեռևս 1996 թվականին իրեն հատկացվել է առանձին սենյակ, որը և ինքը պատրաստ է հանձնել և որի դիմաց ակնկալում է ստանալ նոր բնակարան և եղբոր զբաղեցրած սենյակի հետ ինքը որևէ առնչություն չունի: Պաշտպանի միջամտության արդյունքում Երևանի քաղաքապետարանը ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N 172-Ն որոշմամբ սահմանված կարգով քննարկել է նշված ընտանիքի վերաբնակեցման հարցը և տրամադրել մեկ սենյականոց բնակարան:

Մեկ այլ դեպքում, Պաշտպանին հասցեագրած դիմումի համաձայն՝ դատարանի կողմից կայացված վճռով հօգուտ Արաբկիր վարչական շրջանի համապարտության կարգով պետք է անձից բռնագանձվեր 2010-2012 թվականների գույքահարկի գծով

¹⁵⁵ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշում, Հավելված N1, «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկ», կետ 3:

պարտավորության գումարը: Ըստ դիմումատուի՝ իր կողմից համապարտ բռնագանձման ենթակա վերը նշված գումարն ամբողջությամբ մարվել է: Մինչդեռ, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից հետագայում տրված՝ առկա պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքով անձից պահանջվել է վճարել 2010-2011 թվականների կուտակված տույժերը և 2013 թվականի գույքահարկի պարտքի գումարը: Պաշտպանի միջամտությամբ գույքահարկի գծով պարտքի գումարը՝ ներառյալ ապառքը և տույժերը զրոյացվել են, ինչի մասին դիմումատուին տրամադրվել է համապատասխան անդորրագիր:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմումով բարձրացվել է անձին սոցիալական աջակցության շրջանակներում եռամսյակային հրատապ օգնություն չտրամադրելու հարցի՝ Երևանի քաղաքի համապատասխան վարչական շրջանի կողմից պատշաճ քննության չառնելու խնդիրը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում վարչական շրջանի ղեկավարի լիազորություններից է վարչական շրջանի տարածքում սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեության կազմակերպումը: Պաշտպանի միջամտության արդյունքում համապատասխան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից քաղաքացուն տրամադրվել է դրամական աջակցություն և ընդգրկվել է 2016 թվականի 4-րդ եռամսյակի հրատապ օգնության ցուցակներում:

2016 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում քաղաքացիները բարձրաձայնել են համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների ոչ պատշաճ կատարման խնդիրների վերաբերյալ:

Օրինակ, դեպքերից մեկով Գյումրու համայնքապետարանում կարիք ունեցող քաղաքացիների ցուցակում սննդի օգնություն ստանալու համար ընդգրկված անձը բազմիցս համապատասխան փաստաթղթեր է ներկայացրել Գյումրու քաղաքապետարան օգնություն ստանալու համար, սակայն արդեն շուրջ մեկ տարի շարունակ վերջինիս օգնություն չի տրամադրվել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը նպաստում է համայնքում բնակվող սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը՝ կազմակերպելով տնային այցելություններ և հնարավորության դեպքում մատուցելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ կամ ուղղորդելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ կամ մասնագիտացված այլ կազմակերպություններ: Պաշտպանի միջամտության արդյունքում հարցը ստացել է դրական լուծում և քաղաքացուն տրամադրվել է սննդի օգնություն:

Մեկ այլ դեպքում՝ անձը դիմել է Գյումրու համայնքապետարան՝ իրեն ֆինանսական օգնություն տրամադրելու, ինչպես նաև Գյումրու համայնքի ղեկավարի

մոտ ընդունելության կազմակերպման համար: Համայնքապետարանի կողմից անձին տրամադրվել է համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելության հիշեցման թերթիկ, ըստ որի՝ ընդունելությունը պետք է կայանար 2016 թվականի օգոստոս ամսին, սակայն այն չէր կայացել: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ համայնքի ղեկավարի՝ քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում իրականացվող սեփական լիազորություններից է քաղաքացիների ընդունելության կատարումը, օրենքով սահմանված կարգով քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննության առնելը և համապատասխան միջոցներ ձեռնարկելը: Նշված հարցով կապ է հաստատվել է Գյումրու համայնքապետարանի քարտուղարության հետ: Արդյունքում, համայնքի ղեկավարի մոտ դիմումատուի ընդունելությունը կայացել է 2016 թվականի դեկտեմբերի 1-ին: Դիմումում բարձրացված ֆինանսական օգնության տրամադրման հարցի կապակցությամբ Պաշտպանի միջամտության արդյունքում Սոցիալական ծառայության «Գյումրի-2» տարածքային գործակալության կողմից քաղաքացին ընդգրկվել է 2017 թվականի հունվար, փետրվար և մարտ ամիսների եռամսյակային հրատապ օգնության ցուցակում:

Դիմում-բողոքներից մեկով ներկայացված տեղեկության համաձայն՝ անձին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում կառուցված ավտոտնակի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու կապակցությամբ վերջինս 2016 թվականի հունիսի 10-ին դիմել է Արթիկի համայնքապետարան, սակայն պատասխան չի ստացել: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարի՝ քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացվող սեփական լիազորություններից է օրենքով սահմանված կարգով շինարարության ավարտական ակտի ձևակերպումը, ինչպես նաև ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվության տրամադրումը: Պաշտպանի միջամտության արդյունքում քաղաքացուն տրամադրվել է ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), ինչի հիմքով էլ քաղաքացին դիմել է ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտե շինության փաստագրման նպատակով:

Մեկ այլ դեպքով՝ 1989 թվականին քաղաքացու հայրը՝ Բաքու քաղաքում գտնվող իր տունը փոխանակել է ՀՀ-ում գտնվող տան հետ: Տան սեփականատերը եղել է հայրը, ում մահից հետո դիմումատուն, մայրը, քույրը և եղբայրը՝ որպես ժառանգներ, նշված գույքի նկատմամբ ժառանգություն չեն ձևակերպել: 2016 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից դիմումատուն ստացել է տվյալ անշարժ գույքին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, որպեսզի ձևակերպվի ժառանգություն: Արդյունքում պարզվել է, որ Խաչփար համայնքի ղեկավարի 1999 թվականի համապատասխան տեղեկանքի քաղվածքում ժառանգատուի ընտանիքի անդամների անունների և ազգանունների վերաբերյալ գրառումները սխալ են կատարվել, որի հետևանքով հնարավոր չէ ձևակերպել ժառանգություն: Ըստ դիմումատուի՝ ինքը դիմել է Խաչփար

համայնքի ղեկավարին ժառանգների անունների և ազգանունների վերաբերյալ գրառումները շտկելու խնդրանքով, սակայն արդյունքի չի հասել: Պաշտպանի միջնորդությամբ Խաչփարի համայնքապետարանի կողմից քաղաքացու ընտանիքին տրվել է ճշտված անուն-ազգանուններով քաղվածք և միջնորդություն է ներկայացվել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արարատի մարզային ստորաբաժանում ժառանգությունը ձևակերպելու համար:

Տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզում արձանագրված թերություններն հիմնականում վերաբերել են իրավական ակտերի օրենսդրական տեխնիկայի կանոններին, որոնք սահմանված կարգով և ժամկետներում վերացվել են և օրենսդրությանը համապատասխանեցված տարբերականները ներկայացվել են ՀՀ Արմավիրի մարզպետարան: 2016 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից սեփական կամ պետության պատվիրակված լիազորությունների չկատարման կամ իր լիազորությունների չարաշահման առթիվ ՀՀ Գեղարքունիքի մարզում արձանագրվել է մեկ դեպք՝ Սևան քաղաքային համայնքում: Արձանագրված թերությունների և խախտումների վերաբերյալ նյութերն ուղարկվել են ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն: 2016 թվականին պետական կամ համայնքային սեփականության հողամասերի օգտագործման տրամադրելու և օտարման կարգը խախտելու և հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Լոռու մարզի Արդվի, Գուգարք, Լոռի Բերդ, Ուրասար և Կուրթան համայնքների ղեկավարները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 561 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 54-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթներին համապատասխան՝ ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի. հունվարի 27-ի թիվ 31-Ա, 32-Ա, 33-Ա, 34-Ա և 35-Ա որոշումների համաձայն՝ ենթարկվել են վարչական պատասխանատվության: 2016 թվականի վարչական հսկողության աշխատանքային ծրագրում ընդգրկված ՀՀ Կոտայքի մարզի 23 համայնքում սահմանված կարգով իրականացված վարչական հսկողությունների ժամանակ արձանագրվել են համայնքի ղեկավարի կողմից սեփական լիազորությունների չկատարման բազմաթիվ դեպքեր: Համայնքներում վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում արձանագրվել են ընդհանուր բնույթ կրող թերություններ և խախտումներ: Մարզպետի համապատասխան գրություններով համայնքների ղեկավարներին առաջարկվել է ձեռնարկել միջոցառումներ՝ արձանագրված թերությունները և խախտումները վերացնելու, աշխատակազմերում նմանատիպ թերություններից խուսափելու և հետագայում դրանք չկրկնելու ուղղությամբ, իսկ խախտումները կրկնվելու դեպքում անդրադառնալ աշխատակազմերի համապատասխան աշխատակիցների հետագա պաշտոնավարման նպատակահարմարությանն ու կիրառել կարգապահական տույժեր: ՀՀ Վայոց ձորի մարզում 2016 թվականին անցկացված վարչական վարույթի ընթացքում վարչական պատասխանատվության են ենթարկվել մարզի 7 համայնքի ղեկավարներ՝ հողօգտագործման բնագավառում սեփական լիազորությունների ոչ պատշաճ

կատարման համար: Առանձին համայնքներում վարչական հսկողության արդյունքները քննարկվել են համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների հետ համատեղ: 2016 թվականի ընթացքում ՀՀ Սյունիքի մարզի 30 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կատարման ընթացքի նկատմամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի «Վարչական հսկողության 2016 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N 1381-Ա հրամանի, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի փետրվարի 10-ի N 13-Ա որոշման համաձայն: Ըստ ներկայացված տեղեկության՝ ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերություններն ու բացթողումները շտկվել են, օրենքով սահմանված գործառույթների իրականացումը համապատասխանեցվել է ՀՀ օրենսդրության պահանջներին: ՀՀ Սյունիքի մարզպետի համապատասխան գրություններով կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային հաղորդումները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն: Նույն օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողությունը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը կարող է իրականացնել անմիջականորեն կամ մարզպետների միջոցով: Այսպիսով, համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների ու համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացումը, մասնագիտական հսկողության բարձրագույն մարմինների կողմից իրականացվող մասնագիտական և իրավական հսկողությանը գրավոր համաձայնություն տալը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կանոնադրական գործառույթներից են¹⁵⁶:

Այնուամենայնիվ, համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չարաշահման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերը վկայում են, որ նախարարության կողմից իրականացվող համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ

¹⁵⁶ ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 258-Ն որոշում, Հավելված 1, «ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կանոնադրություն», բաժին II, կետ 8, ենթակետեր 17 և 18:

վարչական հսկողությունը բավարար և արդյունավետ չի եղել:

Միաժամանակ, ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տվյալների, 2016 թվականի ընթացքում պետական կամ համայնքային սեփականության հողամասերի օգտագործման տրամադրելու և օտարման կարգը խախտելու ու հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Լոռու մարզի Արդվի, Գուգարք, Լոռի Բերդ, Ուրասար և Կուրթան համայնքների ղեկավարները, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 561 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 54-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթներին համապատասխան, ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի հունվարի 27-ի N 31-Ա, 32-Ա, 33-Ա, 34-Ա և 35-Ա որոշումների համաձայն, ենթարկվել են վարչական պատասխանատվության:

Հաշվի առնելով վերոշարադրյալները՝ անհրաժեշտ է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից խստացնել համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ հսկողությունը՝ վերջիններիս գործողությունների կամ անգործության արդյունքում մարդու իրավունքների խախտման դեպքերը բացառելու համար:

2. Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին ծանուցելու խնդիրներ

2016 թվականի ընթացքում քաղաքացիների կողմից ստացվել են դիմում-բողոքներ առ այն, որ Ճանապարհային ոստիկանության կողմից վարչական տույժ նշանակելու մասին որոշումը քաղաքացիները չեն ստանում: Բողոքների քննարկման արդյունքում պարզվել է, որ կայացրած որոշումները Ճանապարհային ոստիկանության կողմից ուղարկվել են անձի հաշվառման հասցեով, այնուհետև տեղադրվել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում, ինչի արդյունքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի համաձայն, անձը համարվել է օրենքով սահմանված կարգով պատշաճ ծանուցված: Արդյունքում քաղաքացիները փաստացի ծանուցումները չեն ստացել, ինչի հետևանքով զրկվել են կայացված որոշումները բողոքարկելու իրավունքից: Խնդիրն ըստ էության համակարգային է և արտացոլում է օրենքով սահմանված ծանուցումների՝ պատշաճ կերպով կատարելու կարգավորումների թերությունը:

Ըստ Հայաստանի Հանրապետության ոստիկանության՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշումները հասցեատերերին հանձնվել է փոստային ծառայությունների՝ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից, իսկ Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրականացվող գործողությունների հաջորդականությունը կառուցվել է այդ ընկերությունների կողմից վարչական տույժ նշանակելու մասին որոշումները հասցեատերերին հանձնելու կամ հանձնված չլինելու մասին տրամադրված

տեղեկատվության հիման վրա: Չնայած նրան, որ բազմաթիվ դեպքերում նշված կազմակերպությունները տրամադրել են տեղեկատվություն, որ վարչական ակտերը հանձնվել են հասցեատերերին, սակայն լրացուցիչ ստուգումների արդյունքում ճանապարհային ոստիկանությունը պարզել է, որ վարչական ակտերն իրականում փաստացի չեն հանձնվել:

Այս առնչությամբ, ողջունելի է, որ վճարումների նույնականացման գործընթացը կարգավորելու և գումարի բռնագանձմանն ուղղված անհիմն գործողություններ չկատարելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ մշակվել է ծրագրային փաթեթ, որի միջոցով վարչական տուգանքների յուրաքանչյուր վճարման ժամանակ բանկերում կամ վճարային կազմակերպություններում կիրականացվի ճանապարհային ոստիկանության տվյալների շտեմարանի առցանց համադրում, որից հետո միայն կարող է իրականացվել գանձման գործառույթը:

2016 թվականի վերջին եռամսյակում մշակվել է նախագծերի փաթեթ, որով անդրադարձ է կատարվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով վարչական ակտերի վերաբերյալ ծանուցումների համակարգին՝ սահմանելով ծանուցումների կիրառման մեթոդների ընտրության առաջնահերթություն: Այնուամենայնիվ, թեև նշված նախագծով փորձ է կատարվել լուծել բարձրացված խնդիրը, այնուամենայնիվ նախագիծը 2016 թվականին չի ընդունվել և շարունակվել են արձանագրվել վերոնշյալ խնդիրները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել վարչական տուգանքների վերաբերյալ անձանց պատշաճ ծանուցումը:

3. Քաղաքացուն պատշաճ ծանուցելու ժամկետների ուշացման և կատարողական թերթերի պահանջների ոչ պատշաճ կատարման դեպքեր

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմում-բողոքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2016 թվականի ընթացքում Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության ոլորտում գրանցվել են նաև այլ խախտումներ և թերացումներ:

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում գրանցվել են նաև այլ խախտումներ՝ կապված Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կայացրած որոշման վերաբերյալ քաղաքացուն պատշաճ ծանուցելու ժամկետների ուշացման վերաբերյալ: Չնայած նրան, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի ուժով՝ հարկադիր կատարողի որոշման պատճենը ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում պատշաճ կերպով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին, այնուամենայնիվ պրակտիկայում շարունակվում են գրանցվել դեպքեր, երբ առանց քաղաքացիներին օրենքով սահմանված ժամկետում ծանուցելու, արգելանք է կիրառվում վերջիններիս դրամական միջոցների վրա:

Այս առնչությամբ, ողջունելի է, որ մշակվել, ներդրվել և ներկայումս գործում է էլեկտրոնային ծրագիր, որի համաձայն՝ եթե քաղաքացին ցանկանում է կարճ հաղորդագրության («SMS») միջոցով ծանուցվել իր վերաբերյալ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցվող կատարողական վարույթներով կիրառված արգելանքների մասին, ապա անհրաժեշտ է բջջային հեռախոսից գանգահարել 060-57-04-02 հեռախոսահամարին և հետևելով հեռախոսավարի հրահանգներին, հավաքելով իր հանրային ծառայության համարանիշը՝ գրանցվել ծառայության «SMS» ծանուցումների գրանցման շտեմարանում: Գրանցվելուց հետո, եթե քաղաքացու վերաբերյալ հարուցվում է կատարողական վարույթ, ապա գրանցում կատարած բջջային հեռախոսահամարին «SMS» հաղորդագրություն ուղարկելու միջոցով համապատասխան անձը տեղեկացվում է հարուցված կատարողական վարույթի համարի, պահանջատիրոջ անվանման (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն, ազգանուն) և պարտապան քաղաքացու գույքի ու դրամական միջոցների վրա կիրառված արգելանքի չափի վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք՝

- 1. ուժեղացնել հսկողությունը Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչների կողմից օրենսդրորեն սահմանված ծանուցման ժամկետները պատշաճ կերպով պահպանելու ուղղությամբ*
- 2. բացառել օրենսդրական նորմերի չպահպանման դեպքերը, ինչպես նաև հետևողական լինել դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթերի պահանջների պատշաճ կատարումն ապահովելու ուղղությամբ:*

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով քաղաքացիական հասարակության կայացման, հանրային կարծիքի ձևավորման գործընթացին մասնակցելու և ժողովրդաիշխանության իրականացման անհրաժեշտ նախապայման՝ հավաքների ազատության պաշտպանությունը հիմնարար դեր է կատարում ժողովրդավարական պետության համար:

Հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում հիմնարար իրավունք է և այդպիսի հասարակության հիմնաքարերից է: Միջազգային իրավունքում, մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում այն ամրագրված է՝ որպես հիմնարար արեժք: Այս իրավունքի նպատակը մարդկանց տարբեր խմբերի կողմից հանրային միջավայրում ընդհանուր մտքերի ու գաղափարների ցուցադրաբար արտահայտումն է, որոշակի ուղերձի հղումը: Այդ առումով հավաքների իրավունքը ներառում է նաև արտահայտվելու ազատության իրավունքը: Ըստ այդմ, հավաքների ազատության իրավունքի պաշտպանությունը էական նշանակություն ունի հանդուրժող և բազմախոհ հասարակություն ստեղծելու համար, որտեղ տարբեր հայացքներ ու մտադրություններ ունեցող մարդիկ, այդ թվում՝ փոքրամասնություն կազմող խմբերը կարող են խաղաղ գոյակցել:

Խաղաղ հավաքների իրավունքն ամրագրված է մարդու իրավունքներին վերաբերվող մի շարք միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ 1948 թվականին ընդունված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածում, 1950 թվականին ընդունված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածում, 1966 թվականին ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 21-րդ հոդվածում և այլն:

ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով ամրագրված է յուրաքանչյուրի՝ խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունքը:

Միայն խաղաղ բնույթի հավաքներն են պաշտպանված այս իրավունքով: Հավաքը համարվում է խաղաղ, եթե դրա կազմակերպիչները դրսևորել են խաղաղ մտադրություն, հավաքն ընթանում է առանց բռնության և առկա չէ բռնության անխուսափելի վտանգ: Թեև հասարակական վայրում տեղի ունեցող ցանկացած հավաք կարող է առաջ բերել բնականոն կյանքի որոշակի աստիճանի շեղում (օրինակ՝ երթևեկության խաթարում, աղմուկ կամ հասարակական անդորրի որոշակի աստիճանի խաթարում և այլն, որոնք այլ անձանց համար կարող են ժամանակավոր անհարմարություններ ստեղծել), դա չի նշանակում, թե ցանկացած նմանատիպ դեպքում հավաքը պետք է համարվի ոչ խաղաղ և այդ հիմքով մասնակիցներին պետք է զրկել այդ իրավունքի իրականացումից: Նույնիսկ հավաքի որոշ մասնակիցների կողմից բռնության կոչեր հնչեցնելը դեռ հիմք չէ հավաքն ամբողջությամբ դադարեցնելու համար: Իրավասու մարմինների առաջնային

նպատակը պետք է լինի քաղաքացիների համար այդ իրավունքի իրականացումն ապահովելը, անհրաժեշտության դեպքում նրանց այդ իրավունքի իրականացման հարցում օգնելը և այլոց միջամտությունից պաշտպանելը: Այդ առումով բոլոր սահմանափակումները պետք է մեկնաբանվեն նեղ ու կիրառվեն զգուշորեն, և, ընդհանուր առմամբ, բոլոր կարգավորումները պետք է հասցվեն նվազագույնի. որքանով հնարավոր է, խաղաղ հավաքների իրավունքը պետք է իրականացվի առանց կարգավորման: Այն, ինչը հստակորեն չի արգելվում օրենքով, պետք է ենթադրվի որպես թույլատրելի, և ովքեր ցանկանում են հավաքվել, չպետք է թույլտվություն պահանջեն այդ անելու համար: Հավաքի անցկացման իրազեկում ներկայացնելու պահանջի նպատակը պետք է լինի հնարավորություն տալը, որպեսզի պետական մարմինները ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ ապահովելու համար հավաքի անխափան տեղի ունենալը, այլ ոչ թե հավաքի անցկացման համար թույլտվություն հայցելը: Այսինքն՝ **կանխավարկածը միշտ պետք է լինի հավաքների ազատության իրավունքի իրականացման օգտին:**¹⁵⁷

Հավաքների ազատության իրավունքը կարող է սահմանափակվել միայն այնպիսի միջոցների կիրառումով, որոնք սահմանված են **օրենքով**, հետապնդում են **իրավաչափ նպատակ** և **անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում**:

Առաջինը ենթադրում է օրինականության հիմնարար սկզբունքը: Հավաքի անցկացման բոլոր կարգավորող նորմերը, այդ թվում՝ սահմանափակող հիմքերը, պետք է սահմանված լինեն օրենքում: Ավելին, օրենքը ինքնին պետք է համապատասխանի երկու որակական հատկանիշի: Առաջին, օրենքը պետք է լինի հասանելի քաղաքացիներին, այսինքն լինի հրապարակված ու մատչելի: Երկրորդ, օրենքը պետք է լինի հստակ ու կանխատեսելի: Այսինքն՝ օրենքում առկա բոլոր նորմերը, դրույթները պետք է ձևակերպված լինեն բավարար հստակությամբ, որպեսզի դրանց կիրառությունը քաղաքացիների համար լինի կանխատեսելի:

Իրավունքի սահմանափակումը ոչ միայն պետք է լինի օրենքով սահմանված կարգով, այլ նաև հետապնդի իրավաչափ նպատակ: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն (հավաքների ազատություն), այդպիսի իրավաչափ նպատակներ են պետական անվտանգության, հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները: Նմանատիպ հիմքեր սահմանված են նաև Քաղաքացիական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 44-րդ հոդվածում և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև նաև՝ Կոնվենցիա) 11-րդ հոդվածում: Սա նշանակում է, որ նույնիսկ եթե հավաքն իր

¹⁵⁷ Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց: Երկրորդ հրատարակություն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ: Վարշավա/Ստրասբուրգ, 2010: Կետ 30: (Guidelines on Freedom of Peaceful Assembly. Second edition. OSCE/ODIHR, Warsaw/Strasbourg, 2010): Ուղեցույցի անգլերեն տեքստը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://phsblog.at/wp-content/uploads/2016/04/ODHIR-Guidelines-on-Freedom-of-Peaceful-Assembly-Sec-Ed-2010.pdf>:

բնույթով խաղաղ է և օրինական, իրավասու պետական մարմինները կարող են այնուամենայնիվ սահմանափակել հավաքի անցկացումը, սակայն, նշված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում:

Իրավունքի սահմանափակումը պետք է նաև անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում: Այս պայմանն ըստ էության իրավունքի գերակայության սկզբունքի արտահայտումն է և պահանջում է, որպեսզի ցանկացած սահմանափակում, նույնիսկ եթե օրինական է և հետապնդում է իրավաչափ նպատակ, լինի **համաչափ** վերը նշված իրավաչափ նպատակներից որևէ մեկին հասնելու համար: Համաչափության սկզբունքը պահանջում է, որպեսզի ցանկացած սահմանափակում պայմանավորված լինի հասարակական սուր պահանջով և սահմանափակման համար ընտրված միջոցները լինեն անհրաժեշտ ու բավարար, առկա լինի ռացիոնալ կապ միջոցի ու հետապնդվող նպատակի միջև: Այլ կերպ՝ յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է սահմանել արդարացի հավասարակշռություն սահմանափակման և հետապնդվող իրավաչափ նպատակի, հավաքի մասնակիցների և ընդհանուրի շահերի միջև:

Համաչափության սկզբունքը նաև ենթադրում է, որ նույնիսկ եթե հավաքն անօրինական է, սակայն իր բնույթով խաղաղ, պետական մարմինները կրում են այս իրավունքի իրականացումն ապահովելու պոզիտիվ պարտականություն: Հիմնական բաժանարար գիծը պետք է լինի **բռնության անխուսափելի վտանգի առկայությունը**:

Հավաքների ազատության իրավունքը հնարավորություն է տալիս անձանց մասնակցելու պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորմանը: Թեև հավաքների ազատությունը բացարձակ իրավունք չէ և Մահմանադրությամբ նախանշված դեպքերում կարող է սահմանափակվել միայն օրենքով¹⁵⁸, այնուամենայնիվ, այդ սահմանափակումները պետք է համաչափ լինեն հետապնդվող օրինական նպատակներին (նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով)¹⁵⁹:

2016 թվականի հուլիսի 17-ից 31-ն ընկած ժամանակահատվածում՝ մի խումբ զինված անձանց կողմից Ոստիկանության ՊՊԾ գնդի գրավման օրերին տեղի ունեցան ինչպես խաղաղ, այնպես էլ բռնությամբ ուղեկցվող հավաքներ: Հավաքների ընթացքում նաև տեղի ունեցան հավաքների մասնակիցների իրավունքների խախտումներ: Այդ խախտումները կապված էին առանց հիմքերի պարզաբանման Ոստիկանության բաժիններ բերման ենթարկելու, հավաքի ընթացքում հատուկ միջոցներ օգտագործելու ու ցուցարարներին վնաս պատճառելու հետ և այլն:

¹⁵⁸ ՀՀ Մահմանադրություն, հոդված 44, մաս 5-րդ:

¹⁵⁹ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, հոդված 11, մաս 2-րդ:

Հատուկ պետք է արձանագրել կրկին, որ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ ամփոփման փուլում է գտնվում Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցը, որում համապարփակ ներկայացված են այդ իրադարձությունների բոլոր հանգամանքները: Ընդ որում, զեկույցում մանրամասն ներկայացված են բոլոր հավաքները՝ ըստ օրերի: Նկարագրված են նաև հավաքների Ոստիկանության ծառայողների ու հավաքների մասնակիցների գործողությունները:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2016 թվականին արձանագրել են այնպիսի իրավիճակներ, երբ հավաքների ազատության իրավունքը սահմանափակվել է միաժամանակ միևնույն վայրում մի քանի հավաք իրականացվելու պատճառով: Դեպքերից մեկով, Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողները հավաքի մասնակիցներին չեն թույլատրել մոտենալ հավաքի անցկացման համար նախատեսված վայր՝ պատճառաբանելով, որ այդ վայրում մի քանի հավաք է անցկացվում: Այսպիսի դեպքերի համար ՀՀ օրենսդրությամբ հստակ կարգավորումներ նախատեսված չեն: Միաժամանակյա հավաքներ հաճախ տեղի են ունենում, այն դեպքերում, երբ հավաքի անցկացումը նախապես իրազեկում չի պահանջում (մինչև 100 մասնակից ունեցող, ինքնաբուխ և շտապ հավաքներ):

Նշվածի համատեքստում, հարկ է ընդգծել, որ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ» ուղեցույցում նշվում է, որ այն դեպքերում, երբ լիազոր մարմինը տեղեկացվում է երկու կամ ավելի միմյանցից անկախ և միաժամանակյա հավաքի անցկացման մասին, պետք է քայլեր ձեռնարկի, ըստ հնարավորության, յուրաքանչյուր հավաքի անցկացման համար¹⁶⁰: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՄԱԿ-ի Խաղաղ հավաքներ իրականացնելու և միավորումներ կազմելու իրավունքի հարցերով հատուկ զեկուցողն իր թիվ A/HRC/20/27 զեկույցում, համաձայն որի՝ միաժամանակյա միավորումները պետք է թույլատրվեն, պաշտպանվեն և, ըստ հնարավորության, դյուրացվեն¹⁶¹:

Միաժամանակ, հարցի կապակցությամբ կատարված միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միաժամանակյա հավաքների անցկացման

¹⁶⁰ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) «Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ» ուղեցույց, երկրորդ հրատարակություն, 2010 թվական, § 4.3 (OSCE ODIHR, Council of Europe's European Commission for Democracy through Law (Venice Commission) "Guidelines on Freedom of Peaceful Assembly: Second Edition", 2010, § 4.3), [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?ref=cdl-ad\(2010\)020&lang=FR](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?ref=cdl-ad(2010)020&lang=FR), <https://www.osce.org/odihr/73405?download=true>

¹⁶¹ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Խաղաղ հավաքներ իրականացնելու և միավորումներ կազմելու իրավունքի հարցերով հատուկ զեկուցող Մայնա Կիայի թիվ A/HRC/20/27 զեկույց, 2012 թվական, մայիս 21, §§ 30, 92, http://www.ohchr.org/Documents/HRBodies/HRCouncil/RegularSession/Session20/A-HRC-20-27_en.pdf

վերաբերյալ կարգավորումներ նախատեսված են մի շարք երկրների օրենսդրություններում (օրինակ՝ Մոլդովայում¹⁶²):

Պետք է նշել նաև, որ 2017 թվականի մշակվել է «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ¹⁶³, սակայն քննարկվող խնդրին նշված նախագծով համապատասխան կարգավորում չի տրվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքում կատարել համապատասխան լրացումներ՝ ամրագրելով կարգավորումներ նաև միաժամանակյա հավաքների անցկացման վերաբերյալ:

¹⁶² Մոլդովայի Հանրապետության «Հավաքների մասին» 22.02.2008 թվականի թիվ Nr. 26 օրենք, հոդված 11, <http://lex.justice.md/ru/327693/>

¹⁶³ Նախագիծը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների՝ օրենքով կարգավորման պահանջ ուղղակիորեն նախատեսող դրույթների հիման վրա ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկը հաստատելու մասին» N 245-Ս որոշման հավելվածի 18-րդ կետի և ՀՀ վարչապետի 2016 թվականի մարտի 21-ի թիվ 16.9/[353501]-16 հանձնարարականի:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածով սահմանվում է, որ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ դեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Սահմանադրության նույն հոդվածով ամրագրվում է նաև յուրաքանչյուրի՝ շրջակա միջավայրի պահպանության մասին հոգ տանելու պարտականությունը:

Շրջակա միջավայրի պահպանության ապահովման նպատակով ՀՀ-ն վավերացրել է մի շարք միջազգային պայմանագրեր և ընդունել բազմաթիվ ներպետական օրենսդրական ակտեր: Չնայած իրականացրած քայլերին՝ բնապահպանական իրավունքների իրականացման ոլորտում առկա են խնդիրներ, որոնք լուծում չեն ստացել նաև 2016 թվականի ընթացքում:

1. Օրհուսի կոնվենցիայով նախատեսված հատուկ անկախ մարմնի բացակայություն

Հայաստանի Հանրապետությունը 1998 թվականի հունիսի 25-ին ստորագրել, իսկ 2001 թվականի օգոստոսի 1-ին վավերացրել է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998 թվականի Օրհուսի կոնվենցիան (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա): Վերջինիս 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր կողմ ազգային օրենսդրության սահմաններում պարտավոր է ապահովել դատարանի կամ օրենքին համապատասխան ստեղծված այլ անկախ և անկողմնակալ մարմնի կողմից ընդունված որոշման վերանայման հնարավորություն: Նույն հոդվածն ամրագրում է նաև, որ այն դեպքերում, երբ նախատեսվում է որոշման վերանայում դատարանում, պետությունն անձի համար ապահովում է նաև այլ պետական կամ անկախ և անաչառ մարմնի կողմից որոշման՝ օրենքով սահմանված վերանայման հնարավորություն: Նշված վերանայումն, ընդ որում, պետք է կատարվի վարձատրություն չպահանջող կամ նվազագույն վարձատրություն պահանջող արագ ընթացակարգերի միջոցով: Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը 2000 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՄԴՈ-269 որոշմամբ նշել է, որ կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք պարտավորություններ, մասնավորապես, ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովել արտադատական համակարգի կամ անկախ և անաչառ մարմնի միջոցով կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույնս հեշտացված հնարավորություն, ընդհուպ՝ արդարադատության մատչելիության ֆինանսական կամ այլ խոչընդոտների

վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծումը¹⁶⁴:

Խնդրին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի՝ Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի՝ Հայաստանի վերաբերյալ գեկույցում նշել է, որ Հայաստանը, չապահովելով շահագրգիռ հասարակայնության ներկայացուցիչների համար քննարկման ընթացակարգին հասանելիությունը և չներկայացնելով իրավական պաշտպանության համապատասխան և արդյունավետ միջոցներ, չի պահպանել Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-4 կետերը¹⁶⁵:

Չնայած նշյալ միջազգային չափանիշներին և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ներկայացված դիրքորոշմանը, Հայաստանում առ այսօր նման մարմին ստեղծված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

- 1. ուսումնասիրել Օրհուսի կոնվենցիայի դրույթների պահպանման ու դրանց համապատասխան հատուկ անկախ մարմնի ստեղծման համար անհրաժեշտ ուղղություններն ու միջազգային փորձը,*
- 2. ստեղծել Օրհուսի կոնվենցիայի դրույթների պահպանման ու դրանց համապատասխան հատուկ անկախ մարմին:*

2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացման և ոչնչացման խնդիր

Թափոնների կառավարման խնդիրը Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական հիմնահարցերից է: Հատկապես խնդրահարույց է պոչամբարների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա. պոչամբարների մեջ պարունակվող ծանր մետաղները և տոքսիկ նյութերը ներթափանցում և կուտակվում են ջրամբարներում, գետերի հուններում՝ մեծ վտանգ առաջացնելով շրջակա միջավայրի համար: Շարունակել են չլուծված մնալ նաև թափոնների առավելագույն օգտագործման, դրանց գոյացման նվազեցման և էկոլոգիապես անվտանգ հեռացման (ոչնչացման) խնդիրները:

2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտած ՄԱԿ-ի՝ «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակներից 6-երորդով պետությունների առջև հստակ նպատակ է դրվել մինչև 2030 թվականը բարելավել ջրի որակը՝ կրճատելով աղտոտումը, վերացնելով վտանգավոր քիմիկատներ ու նյութեր թափելը, նվազեցնելով դրանց արտահոսքերն ու կիսով չափ կրճատելով չմաքրվող կեղտաջրերի համամասնությունը:¹⁶⁶

Վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացման շուրջ առկա մի շարք հիմնախնդիրների մասին բարձրաձայնվում է նաև Հայաստանի

¹⁶⁴ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=4587>

¹⁶⁵ ՄԱԿ-ի՝ Տնտեսական և սոցիալական հարցերով խորհրդի՝ Հայաստանի վերաբերյալ գեկույց, ECE/MP.PP/2008/2/Add.10,

http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop3/ODS/ece_mp_pp_2008_2_add_10_e_Armenia.pdf

¹⁶⁶ <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6>

Հանրապետությունում ՄԱԿ-ի «ՌԻՈ+20» գագաթաժողովի հանձնարարականների իրականացման ռազմավարության «Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի հայեցակարգում:¹⁶⁷ Մասնավորապես՝ արդիական են ժամկետանց թունաքիմիկատների ոչնչացման հիմնախնդրին վերջնական լուծում տալու համար Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի լիկվիդացման, տնտեսական գործունեության արդյունքում առաջացած պոլիքլորացված բիֆենիլներ պարունակող թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացման, սնդիկին առնչվող հարցերի կանոնակարգման իրավական հենքի ստեղծման, սնդիկ պարունակող թափոնների հաշվառման, էկոլոգիապես անվտանգ հեռացման, դրանցով շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրման, էլեկտրական ու էլեկտրոնային սարքավորումների թափոնների հաշվառման և այլ հարցերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում են թափոնների գործածության ոլորտում երկրի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները: Հարկ է նկատել, որ նշյալ օրենքի գործողությունը չի տարածվում ռադիոակտիվ թափոնների, հոսքաջրերին խառնվող և բնական ջրատարներ թափվող նյութերի, արտանետման աղբյուրներից անջատվող գազային խառնուրդների հետ մթնոլորտ արտանետվող նյութերի, հանքարդյունահանող կազմակերպությունների մակաբացման շերտի ապարների վրա: Չնայած ոլորտին առնչվող մի շարք այլ օրենքների, որոնք թափոնների գործածության ոլորտում նշում են առանձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների իրավասությունները, այնուամենայնիվ, օրենսդրությամբ հստակեցված չէ ոլորտի համալիր խնդիրների լուծման և հսկողությունն ապահովող պատասխանատու պետական մարմինը, ինչն անհրաժեշտ է ոլորտում արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով:

Մինևույն ժամանակ, թափոնների կառավարման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով վերջիններիս պահանջների խախտման դեպքերի համար հստակ պատասխանատվության մեխանիզմներ նախատեսված չեն, ինչին անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի «ՌԻՈ+20» գագաթաժողովի հանձնարարականների իրականացման ռազմավարության՝ «Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի հայեցակարգում¹⁶⁸:

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկությունների՝ վերանայվել և նորացվել է «Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման ազգային ծրագիրը», ինչի արդյունքում մշակվել և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի նիստի N49 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում «Կայուն օրգանական աղտոտիչների

¹⁶⁷ <https://www.ecolur.org/files/uploads/pdf/RIO%2020%20hayecakarg/rio20hayetsakarg.pdf>

¹⁶⁸ <https://www.ecolur.org/files/uploads/pdf/RIO%2020%20hayecakarg/rio20hayetsakarg.pdf>

մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2016-2020 թվականների իրականացվելիք միջոցառումների ցանկը», որով նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են կայուն օրգանական աղտոտիչների հիմնախնդիրների լուծմանը և նախատեսում են կայուն օրգանական աղտոտիչների օգտագործման դադարեցմանը, դրանց արտանետումների կրճատմանը և կայուն օրգանական աղտոտիչների պարունակող թափոնների ոչնչացմանն ուղղված գործողություններ: Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքից բխող ՀՀ կառավարության որոշումների նախագծերի նախնական տարբերակը, որոնք նպատակաուղղված են թափոնների գոյացման ծավալների և դրանց հնարավոր վտանգի նվազեցմանը՝ լավագույն տեխնոլոգիաների ներդրման և վերամշակման միջոցով ընդերքօգտագործման թափոններով աղտոտումից շրջակա միջավայրի պահպանությանն ու արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Ավելին, ըստ ՀՀ բնապահպանության նախարարության, ստուգումների արդյունքում 2016 թվականին բնապահպանական պետական տեսչության գործունեության ընթացքում թափոնների ոլորտում հայտնաբերված 31 խախտման համար 31 անձ ենթարկվել է 1.61 միլիոն ՀՀ դրամի չափով վարչական տուգանքի:

Չնայած վերոնշյալի՝ 2016 թվականին հարցը համակարգային լուծում չի ստացել: Ուստի անհրաժեշտ է՝

- 1. ոլորտում արդյունավետ վերահսկողություն ապահովելու նպատակով սահմանել պատասխանատու պետական մարմին,*
- 2. իրականացնել թափոնների ոլորտի օրենսդրական կարգավորումների ամրագրում, ինչը գործնականում կապահովի օրենքի պահանջների հստակ կատարում և կնախատեսի այնպիսի պատասխանատվության միջոցներ, որոնք կստիպեն առավել զգոն լինել թափոնների առաջացման և գործածության հարցում,*
- 3. օրենսդրական բարեփոխումների մշակման արդյունքում ստեղծել արտոնություններ տրամադրող ու տնտեսական խրախուսանքի այլ միջոցներ կիրառող ծրագիր (քաղաքականություն) այն տնտեսվարողների նկատմամբ, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ, կամ կընտրեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն:*

3. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովման խնդիր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և Հայաստանի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիայի պահանջների հակասությունները խոչընդոտում են բնապահպանական մի շարք խնդիրների լուծմանը: Մինչ նշված օրենքի ընդունումը ՀՀ-ում գործում էր «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 1995

թվականին), որի գործողության ընթացքում Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն իր կայացրած որոշումներում¹⁶⁹ անդրադարձել էր ՀՀ օրենսդրության և պրակտիկայի անհամապատասխանությանը կոնվենցիային:¹⁷⁰

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ձեռնարկողի կողմից ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում լիազորված մարմինն իրազեկում է ազդակիր համայնքի ղեկավարներին ու հասարակությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին:¹⁷¹ Նույն օրենքի համաձայն՝ մասնագիտական եզրակացությունը ստանալուց հետո առնվազն 7 օր առաջ գրավոր իրազեկում է ձեռնարկողին, մարզի կամ համայնքի ղեկավարներին, ազդակիր համայնքներին, համապատասխան պետական մարմիններին ու լիազորված անձանց հասարակական լուսմների ժամկետի և անցման տեղի մասին:¹⁷² 2014 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանրության ծանուցումն իրականացնում է լիազոր մարմինը՝ ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին լուսմներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:¹⁷³ Փաստորեն, օրենսդրական նոր փոփոխություններով հանրային լուսմների վերաբերյալ հանրությանը ծանուցելու ժամկետը փոփոխության չի ենթարկվել, մինչդեռ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն խնդրահարույց էր համարել նման ժամկետները դեռևս 1995 թվականի օրենքի համապատասխան կարգավորումներում:

Հայաստանի՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ կոմիտեի IV/9ա որոշմամբ բարձրացված մի շարք խնդիրների շարքում փորձագետներն առանձնահատուկ կարևորել են պետության կողմից հանրության մասնակցության ապահովումը որոշումների կայացման բոլոր մակարդակներում՝ համաձայն կոնվենցիայի և ներպետական օրենսդրության:¹⁷⁴ Ավելին, առաջարկվել է մշակել ընթացակարգ որոշումների կայացման բոլոր մակարդակներում հանրային

¹⁶⁹ <http://www.unece.org/env/pp/ccimplementation.html>

¹⁷⁰ <http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf>

¹⁷¹ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (1995 թվական), հոդված 6:

¹⁷² «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (1995 թվական), հոդված 10:

¹⁷³ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014 թվական), հոդված 26, մաս 2, կետ 1:

¹⁷⁴ Հայաստանի՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի IV/9ա որոշում, կետ 4, ենթակետ ա),

http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop4/Documents/Excerpts/Decision_IV-9a_Compliance_by_Armenia_e.pdf

Հայաստանի համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի V/9ա որոշում կետ 4, ենթակետ գ(i)) http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post_session_docs/Decision_excerpts_in_English/Decision_V_9a_on_compliance_by_Armenia.pdf, Օրհուսի կոնվենցիայի (Կոնվենցիա) հոդված 3:

մասնակցության ապահովման համար¹⁷⁵՝ ձեռնարկելով պատշաճ միջոցներ արդարադատության արդյունավետ հասանելիության ապահովման ուղղությամբ:

Ավելին, Հայաստանի կողմից Օրհուսի կոնվենցիայի դրույթների ներդրման ու իրականացման կապակցությամբ ոլորտային մեծածավալ խնդիրների պատճառով և դրանց նկատմամբ առանձնահատուկ վերահսկողություն իրականացնելու նպատակով Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն Հայաստանին վերցրել է ամենամյա հսկողության տակ: Անդրադառնալով ՀՀ կառավարության 2014 թվականի ընթացիկ զեկույցին¹⁷⁶՝ կոմիտեն առաջընթացի գնահատման իր առաջին և երկրորդ եզրակացության մեջ նշել է նաև, որ չնայած նրան, որ Հայաստանը իր կոնվենցիոն պարտավորությունների կապակցությամբ ձեռնարկել է որոշակի քայլեր, այնուամենայնիվ, դեռևս չի կատարել կոմիտեի որոշման պահանջները:¹⁷⁷

Հիմք ընդունելով վերոգրյալը և ի կատարումն Կոմիտեի հանձնարարականների՝ անհրաժեշտ է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ վերջինիս 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի կարգավորումները համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիային և սահմանելով հանրային լսումների վերաբերյալ հանրությանը ծանուցելու առավել երկար ժամկետներ:

4. «Թեղուտ» ՓԲԸ-ում ստուգումների անցկացման խնդիր

Տարիներ շարունակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում անդրադարձ է կատարվել «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումների իրականացման հարցին և դրա հետևանքով առաջացած խնդիրներին, որոնք լուծում չեն ստացել նաև 2016 թվականի ընթացքում: Հարկ է ընդգծել, որ բնապահպանները ևս անդրադարձել են Թեղուտի հանքավայրը շահագործող

¹⁷⁵ Հայաստանի՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի IV/9ա որոշում, կետ 4(բ), http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop4/Documents/Excerpts/Decision_IV-9a_Compliance_by_Armenia_e.pdf, Հայաստանի համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի V/9ա որոշում կետ 4, ենթակետ գ(i),

[http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post session docs/Decision excerpts in English/ Decision V 9a on compliance by Armenia.pdf](http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post_session_docs/Decision_excerpts_in_English/Decision_V_9a_on_compliance_by_Armenia.pdf)

¹⁷⁶ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ առաջընթացի գնահատման եզրակացություն

[http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP5decisions/V.9a_Armenia/frmParty9a_PROGRESS REPORT V9a_3_.pdf](http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP5decisions/V.9a_Armenia/frmParty9a_PROGRESS_REPORT_V9a_3_.pdf)

¹⁷⁷ Հայաստանի կողմից Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պահանջների կատարման վերաբերյալ կոմիտեի V/9 որոշման իրականացման առաջընթացի կապակցությամբ առաջին դիտարկումը, [http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post session docs/Decision excerpts in English/ Decision V 9a on compliance by Armenia.pdf](http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post_session_docs/Decision_excerpts_in_English/Decision_V_9a_on_compliance_by_Armenia.pdf)

ընկերության բնապահպանական օրենսդրության նորմերի խախտումներն, ինչի հետևանքով հանքարդյունաբերական թափոնները հարակից գետ են թափվել:¹⁷⁸

Խնդիրն այն է, որ լեռնահանքային արդյունաբերությունը բացասական ազդեցություն ունի շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա: Հանքաքարի արդյունահանումն ու հարստացումը ուղեկցվում է տարբեր տոքսիկ քիմիական նյութերով և ծանր մետաղներով՝ աշխատանքային և շրջակա միջավայրի աղտոտմամբ: Հաստուկ նպատակառոտ դրած ուսումնասիրությունները (ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային կենտրոնի, Հայաստանի ամերիկյան համալսարանի Առողջապահության ուսումնասիրության և զարգացման կենտրոնի, Երևանի պետական համալսարանի և այլն) բացահայտել են, որ հանքալեռնային արդյունաբերական շրջաններում առկա են էկոլոգիական և բնակչության առողջության համար լուրջ ռիսկեր, որոնք հատկապես կապված են օդ-ջուր-հող-գյուղմթերք համակարգով ծանր մետաղների, այդ թվում՝ տոքսիկության առաջին դասի տարրերի, սնման շղթայի տարբեր օղակներ ներթափանցման հետ:¹⁷⁹

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն ընդգրկված է եղել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության ստուգման ենթակա կազմակերպությունների՝ 2013, 2014 և 2015 թվականների ցանկերում, սակայն այդ տարիներին տեսչական ստուգումներ չեն իրականացվել: Տեսչական ստուգումներ չեն իրականացվել նաև 2016 թվականի ընթացքում:

Ընդունելով խնդրի առկայությունը ՀՀ բնապահպանության նախարարությունը նշված հարցերի մասին բարձրաձայնել է ՀՀ-ում ՄԱԿ-ի «ՌԻՈ+20» գազաթաժողովի հանձնարարականների իրականացման ռազմավարության՝ «Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգ» համաշխարհային ծրագրի հայեցակարգում:¹⁸⁰

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ապահովել «Թեղուտ» ՓԲԸ-ում անհրաժեշտ ստուգումների իրականացումը:

5. Փոքր ՀԷԿ-երի կառուցմանը զուգահեռ ջրային ռեսուրսների գերօգտագործման, ինչպես նաև գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում բարձրաձայնվել է ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրները: Մասնավորապես՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները բազմիցս ահազանգել են, որ ՓՀԷԿ-երի շահագործումը շատ դեպքերում ուղեկցվել է խախտումներով, որոնք անցանկալի հետևանքներ են առաջացնում շրջակա միջավայրի

¹⁷⁸ <http://www.ecolur.org/hy/news/teghout/teghout-supporters-applying-to-nature-protection-ministry-to-hold-inspections-in-teghout-mine/8040/>

¹⁷⁹ <https://www.ecolur.org/files/uploads/pdf/RIO%2020%20hayecakarg/rio20hayetsakarg.pdf>

¹⁸⁰ <https://www.ecolur.org/files/uploads/pdf/RIO%2020%20hayecakarg/rio20hayetsakarg.pdf>

վրա: Դրանցից է, օրինակ, ՓՀԷԿ-ի շահագործման ընթացքում պատշաճ էկոլոգիական թողքի ապահովման բացակայությունը:¹⁸¹

2014-2016 թվականներին «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն «Բնապահպանության նախարարության հետ համատեղ իրականացրել են «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և Բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ՓՀԷԿ-երի մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ ՓՀԷԿ-երի շահագործումը մի շարք խնդիրների է հանգեցնում, որոնք են՝ նախագծային սխալ ջրատնտեսական հաշվարկները, բնապահպանական թողքի չապահովելը, ձկնանցարանների և ձկնապաշտպան ցանցերի ֆունկցիոնալ անհամապատասխանությունն ու ձկնաշխարհի կենսաբազմազանության և տեղաբնակ ձկնատեսակների վտանգների քանակական ցուցանիշների բացասական փոփոխությունները, ՓՀԷԿ-երի արտադրողականության անբավարար մակարդակը, ՓՀԷԿ-երի կասկադների ձևավորումն առանց կոմուլիատիվ ազդեցության գնահատման:¹⁸²

ՓՀԷԿ-երի զարգացման սխեմայի իրականացման հետ զուգահեռ, Հայաստանում առաջացել են ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի, կենսաբազմազանության, բնության հատուկ պահպանվող տարածքների, լանդշաֆտների, բնակչության սոցիալական վիճակի և կյանքի որակի հետ կապված խնդիրներ:¹⁸³ ՓՀԷԿ-երի նախագծման և շահագործման ընթացքում հիմնականում հաշվի չեն առնվում ջրային ֆաունայի կարիքները, իսկ լեռնային գետերի ջրային ռեժիմի փոփոխության ազդեցությունն ավամերձ և ջրային էկոհամակարգերի ու կենսաբազմազանության վրա ոչ միայն չի գնահատվել, այլև չի ուսումնասիրվել:

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության՝ 2016 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Բնապահպանական պետական տեսչության կողմից ՓՀԷԿ-երում իրականացվել է 6 ստուգում, որոնցից մեկով ՓՀԷԿ-ի գործունեությունը կասեցվել է, մյուսները ենթարկվել են վարչական տուգանքների (800 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով) և դրանց տրվել են ջրօգտագործման թույլտվությունների վերանայման հանձնարարականներ: Ավելին, ՀՀ բնապահպանության նախարարությունը գետերի վրա առաջացող ծանրաբեռնվածության բացասական հետևանքների վերացման կապակցությամբ ձեռնարկել է «Գետի ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդիկային վերաբերող» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում:

Այնուամենայնիվ, ոլորտի մասնագետները պնդում են, որ տարիներ շարունակ Հայաստանում ՓՀԷԿ-երի կառուցման և դրանց շահագործման ներկայիս մեթոդները

¹⁸¹ ՀՀ ջրային օրենսգիրք, հոդված 1. Էկոլոգիական թողք՝ ջրի նվազագույն ելք, որն ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը և ինքնավերականգնումը:

¹⁸² <http://www.mnp.am//images/files/nyuter/2016/June/ArdirEcoLur.pdf>

¹⁸³ «Փոքր ՀԷԿ-երի սոցիալ-էկոլոգիական ազդեցության վերլուծություն», Բաց հասարակության հիմնադրամ Հայաստան, <http://www.osf.am/wp-content/uploads/2014/05/VictoriaBurnazyan-policyPaper.pdf>

վտանգ են ներկայացնում երկրի էկոհամակարգի համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք իրականացնել պատշաճ վերահսկողություն փոքր ՀԷԿ-երի շահագործման նկատմամբ, որպեսզի կանխվեն և վերացվեն դրանց շահագործման արդյունքում առաջացող ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու էկոհամակարգերի հետ կապված խնդիրները:

ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Տրանսպորտի գերծանրաբեռնվածություն, սպասարկման որակ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում բարձրաձայնվել է հանրային տրանսպորտի գերծանրաբեռնվածության, տրանսպորտի սպասարկման որակի և այլ խնդիրների վերաբերյալ:

Հասարակական տրանսպորտի սպասարկման ընդհանուր որակի անբավարարության խնդիրները շարունակում են գոյություն ունենալ և՛ Երևան քաղաքում, և՛ մարզերում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից զեկույցներում բազմիցս առաջարկվել է ավելացնել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների քանակը, միկրոավտոբուսները փոխարինել ավտոբուսներով և բարձրացնել նշված տրանսպորտային միջոցների ընդհանուր սպասարկման որակը: Նշված խնդրի լուծման կապակցությամբ, սակայն իրավասու մարմինների կողմից չեն ձեռնարկվել բավարար քայլեր, և խնդիրները շարունակվել են նաև 2016 թվականի ընթացքում:

Ըստ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության՝ 2016 թվականին միջմարզային երթուղիներում շահագործվող տրանսպորտային միջոցների թվաքանակի էական փոփոխություն տեղի չի ունեցել: Միայն շահագործվել են «գ. Ծաղկաշեն - գ. Արայի-Երևան» թիվ 549 և «Երևան-Գորիս» թիվ 607 թափուր երթուղիները՝ 3-ական միկրոավտոբուսներով, իսկ «գ. Դվին-Երևան» թիվ 471 միկրոավտոբուսային երթուղին փոխարինվել է ավտոբուսային երթուղով՝ 4 ավտոբուսով: Ըստ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տվյալների՝ 2016 թվականի ընթացքում ուղևորահոսքի էական փոփոխություն տեղի չի ունեցել, ավելին, 2015 թվականին իրականացվել է տրանսպորտային միջոցների 70 փոխարինումներ, որից 30-ն՝ ամբողջովին նոր, այնուամենայնիվ, մի շարք քաղաքացիներ շարունակում են ահազանգել խնդիրների առկայության մասին:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ ընթացիկ տարում, քաղաքացիներն իրենց դժգոհություններն են հայտնել Երևանի հասարակական տրանսպորտի, հատկապես՝ ավտոբուսների ու միկրոավտոբուսների ոչ պատշաճ աշխատանքի վերաբերյալ: Բողոքները հիմնականում վերաբերում են տրանսպորտային միջոցների գերբեռնվածությանը, անսարքությանն ու աղտոտվածությանը:

Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում Երևանի քաղաքապետարանի որդեգրած քաղաքային ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցում ավտոբուսների տեսակարար կշիռն ավելացնելու և զուգահեռաբար միկրոավտոբուսների քանակը նվազեցնելու քաղաքականության արդյունքում իրականացված աշխատանքներում էական ձեռքբերումներ չեն

արձանագրվել: Վերջին երկու տարիներին մայրաքաղաք է ներկրվել ընդամենը 10 «ՊԱԶ» մակնիշի ավտոբուս, կրճատվել է մոտ 140 միկրոավտոբուս:

Գործող տրանսպորտային համակարգի արդյունավետության և շուրջ երկու տարի առաջ այս ուղղությամբ սկսված գործընթացի արդյունքների ու ձեռքբերումների անբավարարության խնդրի մասին բարձրաձայնում են նաև Երևանի քաղաքապետարանում, ինչի մասին փաստում են ուղևորահոսքի և տրանսպորտի առկա վիճակի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունները:¹⁸⁴

Ոլորտում հաճախակի կրկնվող և բազմիցս բարձրաձայնված խնդիրները փաստում են, որ պատասխանատու մարմինների կողմից ձեռնարկված քայլերը եղել են ոչ բավարար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

- 1. բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ,*
- 2. ավելացնել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների քանակն ու միկրոավտոբուսները փոխարինել ավտոբուսներով:*

2. Ճանապարհների անբարեկարգություն

2016 թվականին շարունակվել են դժգոհություններ ստացվել մի շարք ներքաղաքային և մարզային նշանակության ճանապարհների անբարեկարգ վիճակի վերաբերյալ: Քաղաքացիների պնդմամբ՝ բազմաթիվ ճանապարհների անբարեկարգ վիճակը մի շարք դեպքերում դժվարություններ է ստեղծել քաղաքացիների ազատ տեղաշարժման, ինչպես նաև բեռնափոխադրումների կազմակերպման առումով:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում քաղաքապետն իրականացնում է հետևյալ քաղաքային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, կամուրջների, թունելների, այլ ճարտարագիտական կառույցների շինարարությունը, պահպանումը և շահագործումը կազմակերպելու և Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպմանը աջակցելու պարտադիր լիազորությունները: Ոլորտում կարևոր նշանակություն ունի ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, որը, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի ««Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության

¹⁸⁴ <http://www.mediamax.am/am/news/yerevan/21315/>

աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1809-Ն որոշման, գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում, իրականացնում է տրանսպորտի, կապի և տեղեկատվայնացման բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը և, ի թիվս այլ նպատակների ու խնդիրների, իրականացնում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և երթևեկության անվտանգության ապահովումը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով մի խումբ քաղաքացիներ տեղեկացրել են, որ Երևան քաղաքի Սարի թաղի 5-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքները վերջին անգամ կատարվել են 1960-ական թվականներին, ինչի արդյունքում փողոցը գտնվում է ոչ բարվոք վիճակում. երկար տարիների շահագործման արդյունքում ասֆալտի ծածկույթը քայքայվել է, առաջացել են մեծ փոսեր: Դիմումատուները նշել են, որ Սարի թաղի 5-րդ փողոցը ասֆալտապատելու կապակցությամբ տարիներ շարունակ բազմիցս դիմել են վարչական շրջան և քաղաքապետարան, սակայն արդյունքի չեն հասել: Պաշտպանին հասցեագրած մեկ այլ դիմումով մի խումբ բնակիչներ հայտնել են, որ Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասի 3-րդ փողոցը գտնվում է ոչ բարվոք վիճակում, ասֆալտապատման աշխատանքները վերջին անգամ կատարվել են 6 տարի առաջ: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ Սարի թաղի 5-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքների իրականացման հնարավորության հարցը քննարկվել է և ընդգրկվել Երևանի քաղաքապետարանի կողմից 2017 թվականին Էրեբունի վարչական շրջանում նախատեսված փողոցների ասֆալտապատման նախնական ծրագրում, իսկ Սիլիկյան թաղամասի 3-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներն ընդգրկվել են Երևանի քաղաքապետարանի՝ փոսային նորոգման ենթակա փողոցների ցանկում:

ՀՀ մարզպետարաններից ստացված տվյալների ամփոփումից կարելի է եզրակացնել, որ հանրապետության ներհամայնքային և մարզային նշանակության ճանապարհների գերակշիռ մասը գտնվում է անբարեկարգ վիճակում, ինչը քաղաքացիների շրջանում բազմաթիվ բողոքների պատճառ է հանդիսանում (օրինակ՝ ըստ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տվյալների՝ ճանապարհների անբարեկարգ վիճակի վերաբերյալ բողոքներ եղել են Վարդաբլուր, Ձորագլուխ, Նիգավան, Թթուջուր, Գեղաձոր, Բերքառատ, Մելիքցյուղ, Պարտիզակ, Արուձ, Լեռնարոտ, Սիփան և Ավշեն համայնքներից, ինչպես նաև մարզում վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն ներհամայնքային և մարզային նշանակության 21 ճանապարհահատվածներ, իսկ օրինակ ՀՀ Գեղարքունիքի մարզում ավելի բարեկարգ վիճակում են գտնվում քաղաքային համայնքների փողոցները, սակայն ըստ մարզպետարանի տվյալների՝ բոլոր համայնքներում առկա է ճանապարհների հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների անհրաժեշտություն: Մարզի տարածքում գործում են 419.9կմ մարզային նշանակության ավտոճանապարհներ, որից հիմնանորոգման կարիք ունեն 270կմ ավտոճանապարհներ և այլն):

ՏԻՄ-երի կողմից տրամադրված տվյալների համեմատական վերլուծությունը վկայում է, որ մարզում համատարած գերակշռում են վատ վիճակում գտնվող ավտոճանապարհները, որոնց տոկոսային հարաբերականությունը լավ կամ բավարար վիճակ ունեցող ավտոճանապարհների համեմատությամբ մեծ է (օրինակ՝ ըստ ՀՀ Կոտայքի մարզպետարանի՝ մարզի բոլոր համայնքներում առկա են վերանորոգման և բարեկարգման ենթակա փողոցներ և ճանապարհներ: Մարզային ենթակայության ճանապարհներից առաջնային վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն 16 ուղիներ իսկ ըստ ՀՀ Շիրակի մարզպետարանի տվյալների՝ Գյումրի քաղաքում վերանորոգման ու բարեկարգման կարիք ունեն 224 փողոց՝ 164.4կմ երկարությամբ և 12 հրապարակ՝ ընդհանուր 2.755 միլիոն քմ մակերեսով: Ըստ ՀՀ Սյունիքի մարզպետարանի՝ գյուղական համայնքների ներհամայնքային ճանապարհների մոտ 90 տոկոսը վերանորոգման կարիք ունի:):

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ 2015 և 2016 թվականների ընթացքում մայրաքաղաքի փողոցներում կատարվել են միայն ընթացիկ նորոգման աշխատանքներ: Նախորդ տարում ասֆալտապատված ճանապարհների՝ 2016 թվականին կրկին ասֆալտապատման կարիք ունենալու հարցի կապակցությամբ քաղաքապետարանից տեղեկացրել են, որ կապված երթևեկելի հատվածում ստորգետնյա հաղորդակցողիների (ջուր, գազ, էլեկտրաէներգիա, կապ) վթարների հետ պարբերաբար անհրաժեշտություն է առաջանում նորոգելու փողոցների ասֆալտբետոնե ծածկի քայքայված, ճաքած և նստվածքային հատվածները, որի նպատակով հնարավոր է տարվա ընթացքում երկու և ավելի անգամներ ասֆալտապատման աշխատանքներ կատարվեն նույն փողոցներում:

3. Խտրականություն սեռական կողմնորոշման հիմքով

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթից այլ հանգամանքներից, արգելվում է:

Թեև ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է խտրականության արգելքը, այնուամենայնիվ, հստակ իրավական մեխանիզմների բացակայության հետևանքով անձինք զրկված են իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցներից: Ուստի, կարևոր է օրենսդրական մեխանիզմների ներդրումը, որով կսահմանվեն ինչպես խտրականության հասկացությունը, տեսակները, այնպես էլ խտրականությունը կանխարգելող հստակ մեխանիզմները: Այս առնչությամբ, դեռևս 2015 թվականին ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից Հայաստանին առաջարկվել է ընդունել խտրականությունը սահմանող համապարփակ օրենսդրություն և խտրականության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ՝

ուղղված հասարակության խոցելի խմբերի դեմ ատելության քարոզչության և հրահրման բացառմանը¹⁸⁵:

2016 թվականի ընթացքում մի շարք կազմակերպություններ անդրադարձել են Հայաստանում խտրականության դրսևորումներին: Այսպես, «Հյուսիսային Ռայթս Ուոչ» (Human Rights Watch) միջազգային իրավապաշտպան կազմակերպությունն իր գեկույցում արձանագրել է, որ սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները շարունակում են ենթարկվել խտրականության, ոտնձգությունների և ֆիզիկական բռնության, ինչպես նաև շարունակվում է ատելության քարոզումը նրանց դեմ¹⁸⁶:

Նշված խնդիրներին անդրադարձել են նաև մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ: Այսպես, Հայաստանի Հելսինկյան կոմիտեի տվյալներով՝ 2016 թվականին արձանագրվել են ԼԳԲՏ անձանց նկատմամբ ոտնձգության 13 դեպք, որոնցից 3-ը արտահայտվել են ֆիզիկական բռնությամբ: Բռնության երկու դեպքերի գոհ է դարձել տրանսգենդեր անձր. մի դեպքում փողոցում ենթարկվել է հարձակման և ծեծի, իսկ երկրորդում՝ դանակահարվել, երրորդ դեպքում անչափահասը, ում նույնասեռական լինելու հանգամանքը հայտնի է դարձել դպրոցում, այնուհետև՝ ընտանիքում, ենթարկվել է բռնության և սահմանափակվել է վերջինիս ազատությունը:

Նշվածի կապակցությամբ հարկ է ընդգծել նաև, որ անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերով նախատեսված չէ որպես ատելության հիմքով կատարված հանցագործության որակյալ հատկանիշ: Նույն կերպ, ՀՀ քրեական օրենսգրքի «Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները» վերտառությամբ 63-րդ հոդվածով արարքն ատելության հիմքով կատարված լինելու շարժառիթ նախատեսված է միայն ազգային, ռասայական կամ կրոնական ատելությունը: Արդյունքում, օրենսդրական բացի հետևանքով, անձի սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով կատարված հանցագործությունները չեն ազդում հանցագործության որակման և պատժի չափի որոշման վրա¹⁸⁷: Մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադառնալով անձի սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դրսևորմանը՝ նշել է, որ խտրականությունն անձի սեռական կողմնորոշման հիմքով նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը¹⁸⁸:

4. Խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ վերահսկողություն

¹⁸⁵ ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խումբ, 2015,

http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

¹⁸⁶ <https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/armenia>

¹⁸⁷ Հայաստանի Հելսինկյան կոմիտե «Մարդու իրավունքները Հայաստանում 2016» գեկույց, Դիտորդ # 1, Հունվար 2017, <http://armhels.com/wp-content/uploads/2017/01/Ditord-2017-01arm-Web.pdf>

¹⁸⁸ Տե՛ս Վեյդելանդի և այլոք ընդդեմ Շվեդիայի (Vejdeland and Others v. Sweden) 2012 թվականի փետրվարի 9-ի գործով վճիռ, գանգատ թիվ 1813/07, կետ 55:

Դեռևս 2015 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնել էր, որ խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ չի իրականացվում պատշաճ վերահսկողություն:

ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի մարտի 26-ի «Մանկական խաղալիքների, խաղերի արտադրության և իրացման» սանիտարական կանոնները հաստատելու մասին N 539-Ն հրամանով սահմանված է մինչև 14 տարեկան երեխաների խաղալիքների (խաղերի) և դրանց պատրաստման համար օգտագործվող հումքի և նյութերի հիգիենիկ պահանջների սանիտարական կանոնները: Նշված կանոնների պահանջները տարածվում են ինչպես երեխաների համար արտադրող և իրացնող, այնպես էլ Հանրապետության տարածք ներկրվող խաղալիքների (խաղերի) վրա:

Հարկ է ընդգծել, որ դեռևս 2013 թվականին հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտության արդյունքում պարզ էր դարձել, որ տարբեր խանութներից գնված խաղալիքների զգալի մասը պարունակել են առնվազն մեկ ծանր մետաղ (կապար, սնդիկ, բրոմ և այլն)¹⁸⁹: Չնայած քննարկվող ոլորտում առկա խնդիրներին՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից խաղալիքներում ծանր մետաղների պարունակությունը պարզելու նպատակով արտադրանքի լաբորատոր փորձարկումներ չեն իրականացվում: Մինչդեռ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հայտնած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունիսի 12-ի N 616-Ա որոշմամբ ձեռք է բերվել խաղալիքների փորձարկման ժամանակակից լաբորատորիա, սակայն Տեսչական մարմինը ստուգումներ և ուսումնասիրություններ չի իրականացրել նաև 2016 թվականի ընթացքում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ նախարարության Տեսչական մարմինը պաշտոնական կայքէջում¹⁹⁰ վտանգավոր ապրանքների, այդ թվում՝ վտանգավոր խաղալիքների վերաբերյալ առկա տեղեկատվությունն ամբողջական չէ և չի ապահովում հարցի առնչությամբ սպառողների պատշաճ իրազեկումը:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը պետք է պատշաճ վերահսկողություն իրականացնի շուկայում առկա խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ:

5. ՀՀ որոշ համայնքների ղեկավարների պատասխանատվությունը իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս 2014 և 2015 թվականների տարեկան զեկույցներում բարձրացվել է օրենսդրական բացի հետևանքով 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարներին միայն դատական կարգով

¹⁸⁹ <http://www.a1plus.am/75949.html>

¹⁹⁰ <http://www.prosafe.am/am/>

կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ խնդիրը, որը դեռևս լուծում չի ստացել:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ համայնքների ղեկավարները, նրանց տեղակալները, խորհրդականները և այլ պաշտոնները համարվում են համայնքային պաշտոններ: Իսկ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքն առանձնացնում է այդ պաշտոնները համայնքային ծառայողի պաշտոնից: Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն՝ համայնքային ծառայողի նկատմամբ իրենց ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում սահմանվում են մի շարք կարգապահական տույժեր՝ նախազգուշացումից ընդհուպ մինչև պաշտոնից ազատում:

Այնուամենայնիվ, որոշ համայնքների ղեկավարների կողմից իրենց՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, լիազորությունների վերազանցման համար պատասխանատվության սահմանումը դուրս է մնում օրենքի կարգավորման շրջանակից:

Այսպես, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը բարձրաստիճան պաշտոնատար անձանց խմբին է դասում նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50.000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարներին¹⁹¹: Վերջիններիս նկատմամբ սահմանվում է էթիկայի հանձնաժողովի կողմից հսկողության իրականացումը, անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի կողմից վարույթի իրականացումը, իսկ էթիկայի կանոնների խախտումների մեջ հանցագործության հատկանիշներ ի հայտ գալու դեպքում՝ նաև վարույթի բոլոր նյութերը ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելը¹⁹²:

Մինչդեռ, օրենքը կարգապահական պատասխանատվության ենթարկելու նման մեխանիզմի կիրառման հնարավորությունը չի տարածում 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների նկատմամբ՝ վերջիններիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը թողնելով դատական իշխանության մարմիններին, ինչի արդյունքում չի իրականացվում ուղղակի վերահսկողություն 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, և վերջիններս կարող են պատասխանատվության ենթարկվել միայն դատական կարգով:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության տվյալների (2015 թվականի տարեկան հաղորդման վերաբերյալ), նախարարությունում ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ի թիվս այլ կարգավորումների, նպատակ ունի մշակել նաև համայնքի ղեկավարի հետևանքի կամ պաշտոնանկության մեխանիզմը՝ հիմք ընդունելով 2015 թվականի դեկտեմբերի 6-ի

¹⁹¹ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, կետ 15:

¹⁹² «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 43:

փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթն առ այն, որ համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ օրենսդրական պարտականությունների չկատարման կամ թերի կատարման դեպքում 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարներին պատասխանատվության ենթարկելու դատական կարգից բացի այլ ուղղակի մեխանիզմների մշակման ուղղությամբ:

6. Հայցի ապահովման միջոցի հետ կապված խնդիր

Օրենսդրական թերի կարգավորումների արդյունքում, որոշ դեպքերում հայցի ապահովման միջնորդություն դատարան ներկայացնելիս այլևս հնարավոր չի լինում անձի գույքի և (կամ) դրամական միջոցների վրա արգելանք տարածել, քանի որ պարտապանն այլևս գույք չի ունենում: Խնդիրը բարձրաձայնել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցներում:

Այսպես, քաղաքացիական գործի քննության ընթացքում պարտատերը հաճախ դիմում է դատարան և միջնորդում հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությամբ սահմանվում է, որ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Միաժամանակ, գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխել այն¹⁹³: Հարկ է նշել նաև, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ հայցի ապահովումը նույնպես վերացնում է դատարանը: Միաժամանակ, հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը¹⁹⁴:

Հայցի ապահովման միջոցի միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու պարագայում, հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով¹⁹⁵, և կատարողական թերթը փոխանցվում է ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, ինչի հիման վրա էլ պարտապանի գույքի վրա արգելանք է տարածվում:

¹⁹³ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, հոդված 100:

¹⁹⁴ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, հոդված 101:

¹⁹⁵ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրք, հոդված 99:

Հետագայում, երբ պարտապանի կողմից Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հաշվին վճարվում է հայցադիմումում առկա պահանջի գումարը, Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, վերացնում է գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը և ավարտում կատարողական վարույթը: Արդյունքում, Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը հանվելուց հետո պարտապանը հնարավորություն է ունենում վաճառել իր գույքը և երբ, որոշ ժամանակ անց, պարտատերը պարտապանի գույքի և (կամ) դրամական միջոցների նկատմամբ լրացուցիչ գումարի չափով արգելանք դնելու վերաբերյալ հայցի ապահովման միջնորդություն է ներկայացնում դատարան, պարզ է դառնում, որ պարտապանն այլևս գույք չունի: Ստացվում է, որ օրենսդրական թերի կարգավորումների արդյունքում, պարտատերերը զրկվում են իրենց հայցապահանջի ապահովման հնարավորությունից:

Թեև ըստ ՀՀ արդարադատության նախարարության 2015 թվականի տվյալների՝ վերոնշյալ հարցը հստակ կանոնակարգված չէ և անհրաժեշտ է ձեռնարկել օրենսդրական փոփոխություններ, այնուամենայնիվ խնդիրը լուծում չի ստացել նաև 2016 թվականի ընթացքում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք մշակել օրենսդրական փոփոխություններ՝ հստակ կարգավորվելով հայցի ապահովման միջոցի փոփոխման մեխանիզմները:

7. Աղմուկի հետևանքով հարակից տարածքների բնակչությանն անհանգստություն պատճառելու դեպքեր

2016 թվականին շարունակվել են բողոքներ ստացվել գիշերային ակումբների, զվարճանքի այլ վայրերում երեկոյան և գիշերային ժամերին աղմուկի հետևանքով հարակից տարածքների բնակչությանն անհանգստություն պատճառելու վերաբերյալ:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ իր տան հարևանությամբ գործող գիշերային ակումբն աշխատում է գիշերային ժամերին (ժամը՝ 23.00-ից մինչև 7.00-ն) անհանգստություն պատճառելով իր ընտանիքին՝ ակումբից հնչող բարձր երաժշտության, ակումբին հարող տարածքում տեղի ունեցող վիճաբանությունների, և հասարակական կարգի այլ խախտումների պատճառով: Համաձայն Երևանի քաղաքապետարանի՝ քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչության կողմից նշված գիշերային ակումբի տնօրենին զգուշացվել է հնչող երաժշտության ձայնի մակարդակը նորմայի սահմաններում պահպանելու, ինչպես նաև ակումբին հարակից ընդհանուր օգտագործման տարածքում հարակից տների բնակիչների հանգիստը չխանգարելու մասին:

Թեև ներպետական օրենսդրությամբ հանգստի իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության «Աշխատանքային պայմանները» վերտառությամբ 82-րդ հոդվածով, այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում նշվում է, որ մարդու հանգստի իրավունքն ավելի լայն բովանդակություն ունի. այն ոչ թե աշխատանքային

ուրորտի կամ աշխատանքի իրավունքին հարակից իրավունք է, այլ սոցիալական իրավունք է, քանի որ ապահովում է հասարակության ու նրա անդամների սոցիալ-կենսաբանական, բնական պահանջմունքները: Հանգստի իրավունքի սուբյեկտներ են ոչ միայն աշխատանքային պայմանագրով աշխատանքներ կատարող անձինք, ովքեր աշխատանքային իրավունքի սուբյեկտներ են, այսինքն՝ աշխատող, այլև ֆիզիկական ուժ և մտավոր ունակություններ դրսևորող բոլոր անձինք¹⁹⁶:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք նախադեպային որոշումներում նշել է, որ թեև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան ուղղակիորեն չի նախատեսում խաղաղ շրջակա միջավայր ունենալու իրավունքը, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ աղմուկը լուրջ ներգործություն է ունենում անհատի վրա, կարող է առաջանալ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման վտանգ¹⁹⁷: Հետևաբար, տվյալ խախտումը կարող է հանգեցնել պետության կողմից Եվրոպական կոնվենցիայով ստանձնած պարտավորության չկատարման¹⁹⁸:

Այս առումով, պետությունը պարտավոր է ոչ միայն միջոցներ ձեռնարկել ուղղված բնակելի շենքերի հարևանությամբ գտնվող գիշերային ակումբներում և զվարճանքի այլ վայրերում չափազանց բարձր աղմուկի վերացման ուղղությամբ, այլև ապահովել նշյալ երևույթների կանխարգելումը:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ 2016 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանում գիշերային ակումբների, կարավանների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների գործունեության ընթացքում աղմուկի թույլատրելի նորմերի խախտման վերաբերյալ ստացվել են 24 դիմում-բողոքներ: Քաղաքապետարանի կողմից ուղարկված գրությունների հիման վրա ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության կողմից 11 օբյեկտի նկատմամբ քաղաքացիների բնակարաններում կատարվել են աղմուկի մակարդակի վերաբերյալ գործիքային չափումներ, որոնց հիման վրա 3 օբյեկտի պաշտոնատար անձինք ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 6-ի N 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» Ի12-111-113 սանիտարական նորմերի

¹⁹⁶ «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» գիտագործնական ժողովածու (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010 թվական, 1086 էջ), <http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>

¹⁹⁷ Տե՛ս Օլուիցն ընդդեմ Խորվաթիայի (Oluić v. Croatia) 2010 թվականի մայիսի 20-ի գործով վճիռ, գանգատ թիվ 61260/08, §45, Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի (López Ostra v. Spain) 1994 թվականի դեկտեմբերի 9-ի գործով վճիռ, գանգատ թիվ 16798/90, § 51, Հաթոնը և ուրիշներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and Others v. the United Kingdom) 2003 թվականի հուլիսի 8-ի գործով վճիռ, գանգատ թիվ 36022/97, § 96, Փոուելը և Ռայներն ընդդեմ Միացյալ Թագավորության (Powell and Rayner v. the United Kingdom) 1990 թվականի փետրվարի 21-ի գործով վճիռ, § 40:

¹⁹⁸ Տե՛ս Տե՛ս Օլուիցն ընդդեմ Խորվաթիայի (Oluić v. Croatia) 2010 թվականի մայիսի 20-ի գործով վճիռ, գանգատ թիվ 61260/08, § 45:

պահանջները խախտելու համար առողջապահական պետական տեսչության կողմից ենթարկվել են վարչական տուգանքների:

Քննարկվող խնդրի լուծման համար Երևանի քաղաքապետարանից դեռևս 2014 թվականին շրջանառության մեջ է դրվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում և այլ համապատասխան օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծային փաթեթ, որով, մասնավորապես, նախատեսվում է արգելել զվարճանքի օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքերում: Այնինչ, նախագծային փաթեթը 2016 թվականի ընթացքում դեռևս չի ընդունվել, արդյունքում վերոնշյալ խնդիրը փաստացի շարունակում է չլուծված մնալ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք հանգստի իրավունքի ապահովման համատեքստում «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում և այլ համապատասխան օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարություն:

ԶԻՆՏԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Զինձառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է արդյունավետ համագործակցություն ինչպես ՀՀ պաշտպանության նախարարության, այնպես էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու լրատվամիջոցների հետ: Մասնավորապես, պարբերաբար կազմակերպվել են համատեղ քննարկումներ ինչպես ՀՀ պաշտպանության նախարարության, այնպես էլ հասարակական կազմակերպությունների ու անկախ փորձագետների (ռազմական հոգեբան, սոցիոլոգ և այլն): Այս առումով, կարևոր նշանակություն ունի Պաշտպանության նախարարության հանձնառությունն առավել ուժեղացնելու ուշադրությունը ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի նկատմամբ, ինչպես նաև համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի հետ: Այս սկզբունքներն են, որ կնպաստեն ընդհանուր նպատակի, այն է՝ զինձառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների առավել ամրապնդմանը:

Նշվածով հանդերձ, պետք է, իհարկե, արձանագրել, որ ազգային անվտանգության հիմնարար արժեքներին ծառայող գործոններից է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովումը, իսկ ազգային անվտանգության ներքին սպառնալիքներից է մարդու իրավունքների պաշտպանության ոչ լիարժեք համակարգի ձևավորումը¹⁹⁹:

Հայաստանի Հանրապետությունն իր ռազմական անվտանգության ապահովումը դիտարկում է ժողովրդավարական, իրավական, մարդու և քաղաքացու իրավունքների ապահովման ու պաշտպանության վրա հիմնված պետության կառուցման և քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում²⁰⁰:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ընդգրկվածության, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա:

1994 թվականի դեկտեմբերի 3-ին Բուդապեշտում ընդունված «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների ԵԱՀԿ վարքականոններն» առաջին բազմակողմանի

¹⁹⁹ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 07. 02. 2007թ. N ՆՀ-37-Ն հրամանագիր, 2-րդ կետ

²⁰⁰ «Հայաստանի Հանրապետության ռազմական դրկտրինը հաստատելու մասին» ՀՀ նախագահի 25. 12. 2007թ. N ՆՀ-308-Ն հրամանագիր, 10-րդ կետ

փաստաթուղթն էր, որը կարգավորում էր զինված ուժերում առկա հարաբերություններն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակով²⁰¹:

Դրա հիմքում ընկած գաղափարն այն է, որ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը «կայունության և անվտանգության անբաժանելի մասն է և ժողովրդավարության կարևոր արտահայտություններից մեկը» (կետ 20): Այն որդեգրում է առաջադեմ մոտեցում, որով միահյուսվում են անվտանգության մարդկային և զինվորական չափանիշները: Բացի այդ, կանոնները տարածվում են ռազմական և պաշտպանական քաղաքականության վրա թե՛ խաղաղ պայմաններում, թե՛ պատերազմի ժամանակ:

Վարքականոնները մարմնավորում են չորս հիմնական սկզբունք. սահմանադրական քաղաքացիական իշխանության գերակայությունը զինվորական իշխանությունների նկատմամբ (կետ 21-26), զինված ուժերի ենթարկվելը միջազգային մարդասիրական իրավունքին (կետ 29-31 և 34-35), զինված ուժերի անդամների՝ մարդու իրավունքների պահպանումը (կետ 23, 27-28 և 32-33) և պետության ներսում ուժի կիրառման և միջամտության սահմանափակումը մարդու իրավունքների խաղաղ ու օրինական իրականացմանը (կետ 36-37)²⁰²:

Վարքականոնների համաձայն յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է ապահովել, որ ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերում ծառայելու համար հավաքագրման և զորակոչի պրակտիկան համապատասխանի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտում ստանձնած պարտավորություններին: Մասնակից պետություններն իրենց օրենքներում և այլ առնչվող փաստաթղթերում պարտավորվում են արտացոլել զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքները և պարտականությունները (27-րդ կետ):

Վարքականոններով ամրագրվում է նաև «*համազգեստով քաղաքացիներ*» սկզբունքը: Մասնավորապես՝ յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովելու է, որ ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերի անձնակազմը կարողանա օգտվել ԵԱՀԿ փաստաթղթերով և միջազգային իրավունքում ամրագրված մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից և իրացնել դրանք սահմանադրական և օրենսդրական նորմերին և ծառայության պահանջներին համապատասխան (32-րդ կետ):

«Համազգեստով քաղաքացիները»՝ պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություն անցնող անձինք օժտված են մարդու այն նույն իրավունքներով և հիմնարար ազատություններով, ինչ մնացած բոլոր քաղաքացիները:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ 1742 (2006) հանձնարարականի համաձայն զինված ուժերը կառույց է, որը պատասխանատու է պետության և

²⁰¹ Code of Conduct on Politico-Military Aspects of Security, <http://www.osce.org/fsc/41355>.

²⁰² Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, <http://www.osce.org/hy/odihr/88572>, էջ 31

հասարակության պաշտպանության համար: Հանձնարարականի 2-րդ կետի համաձայն զինված ուժերի անդամները համազգեստով քաղաքացիներ են, ովքեր, հաշվի առնելով զինվորական ծառայության սահմանափակումները, ունեն նույն իրավունքները և ազատությունները և դրանց պաշտպանության իրավունքը, ինչպես մյուս քաղաքացիները²⁰³:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով զինվորական կյանքի առանձնահատկությունները զինված ուժերի անդամները՝ անկախ զբաղեցրած դիրքից ունեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով և Եվրոպական սոցիալական կանոնագրքով, ինչպես նաև մարդու իրավունքների այլ միջազգային իրավական ակտերով երաշխավորված իրավունքները²⁰⁴: Հանձնարարականով սահմանված են զինված ուժերի մարդու այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են կյանքի, ազատության և անվտանգության, արդար դատաքննության իրավունքները, խոշտանգումների և անմարդկային կամ դաժան վերաբերմունքի, հարկադիր աշխատանքի ներգրավելու արգելքները և այլն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը «Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների» գործով կայացված վճռում (1976 թ.) նշել է. «54. ... Կոնվենցիան կիրառելի է ոչ միայն քաղաքացիական անձանց, այլև զինծառայողների նկատմամբ: Այն իր 1-ին և 14-րդ հոդվածներում ամրագրում է, որ պայմանավորվող պետությունների «իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք» պետք է «առանց խտրականության» օգտվի կոնվենցիայի I-ին բաժնում սահմանված իրավունքներից... »:

Այնուամենայնիվ, կոնվենցիայի նորմերը սույն գործով մեկնաբանելիս և կիրառելիս դատարանը պետք է հաշվի առնի զինվորական կյանքի առանձնահատկությունները և առանձին զինծառայողների համար դրա ունեցած ազդեցությունը»²⁰⁵:

**ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

²⁰³Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ 1742 (2006) հանձնարարական, <http://semanticpace.net/tools/pdf.aspx?doc=aHR0cDovL2Fzc2VtYmx5LmNvZS5pbmQvbnVveG1sL1hSZWYvWDJILURXLWV4dHIuYXNwP2ZpbGVpZD0xNzQyNCZsYW5nPUVO&xsl=aHR0cDovL3NlbnFudGljcGFjZS5uZXQyWHNsdC9QZGYvWFJlZi1XRC1BVC1YTUwyUERGLnhzbA==&xslparams=ZmlsZWlkPTE3NDI0>

²⁰⁴ Ձինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարական, https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf8ef

²⁰⁵ Engel v. Netherlands, European Court of Human Rights, 8 August 1976, European Human Rights Reports, Vol. 1, 1979, p. 647 [«Էնգելն ընդդեմ Նիդեռլանդների» գործով Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանի 1976 թ. օգոստոսի 8-ի վճիռը, Մարդու իրավունքների եվրոպական Դատարանի զեկույցներ, հտ. 1, 1979 թ., էջ 647

1. Չինվորական գրքույկի, զինապարտի կցագրման վկայականի ձևերն ու դրանք լրացնելու, դրանց տրամադրման հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման բացակայությունը

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 7-րդ կետի համաձայն 18 տարին չլրացած քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետք է լինի անդամ պետությունների հատուկ ուշադրության կենտրոնում:

Այս առումով նախագորակոչային տարիքի զինապարտների կցագրման, ինչպես նաև զինվորական ծառայություն անցնող և պահեստագոր արձակված քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, զինվորական հաշվառումից հանելու և դրանց հետ կապված այլ իրավահարաբերությունների պատշաճ կարգավորումը ունի կարևոր նշանակություն:

2016 թվականի ընթացքում զինվորական հաշվառման գործընթացի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է մի քանի գրավոր բողոք՝ զինվորական ծառայության մեջ գտնված զինծառայողների զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցած լինելու մասին գրառումներ չկատարելու, կատարված գրառումներում «անվավեր» նշում կատարելու կամ այդ գրառումները ջնջելու վերաբերյալ: Բողոքների զգալի մասը ստացվել են 2017 թվականին, որոնց կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը օրենքով սահմանված կարգով սկսել է քննարկման ընթացակարգ:

Նշված խնդրի վերաբերյալ տեղեկություններ են տարածվել նաև տեղեկատվության հրապարակային աղբյուրներով²⁰⁶: Մասնավորապես, հրապարակված տեղեկությունների համաձայն մարտական գործողությունների մասնակից բազմաթիվ զինծառայողներ գորացրվում են զինգրքույկներում մարտական գործողություններին իրենց մասնակցության մասին գրառումները կա՛մ ջնջված, կա՛մ փոփոխված՝ անվավեր նշումներով, մի շարք դեպքերում էլ ուղղակի առանց համապատասխան գրառման:

ՀՀ պաշտպանության նախարարության պարզաբանումների համաձայն՝ զինվորական հաշվառման փաստաթղթերում և զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ գրառումներ չկատարելու մասին ստացվել են 141 դիմում-բողոքներ: Նշված խնդրի կարգավորման համար իրավասու պետական մարմինը ձևավորել է հանձնաժողովներ, հանձնարարվել է հստակեցնել մարտական հերթապահություն իրականացրած և մարտական գործողություններին մասնակցած պարտադիր ժամկետային զինծառայողների

²⁰⁶ Հոդվածները հասանելի են հետևյալ հղումներով՝ www.azatutyun.am/a/28269835.html, www.tert.am/am/news/2017/01/27/zingrquyk/2261168, www.aravot.am/2017/01/18/846327/, www.alplus.am/1517936.html, <http://razm.info/95742>, www.aysor.am/am/news/2017/02/02/ՄԻՊ/1205248 և այլն:

անվանացուցակը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկություններ է տրամադրել նաև այն մասին, որ «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշման հավելվածի 11-րդ կետի պահանջների համաձայն՝ զինվորական հաշվառման վարման մասին հրահանգը, ինչպես նաև կցագրման ենթակա անձանց ամփոփացուցակի, այբբենական հաշվառման գրքերի և անձնական գործերի, զինապարտի կցագրման վկայականի և զինվորական գրքույկի ձևերն ու դրանք լրացնելու կարգը սահմանող ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամաններ առկա չեն:

Իրավասու պետական մարմինը նախատեսում է նշված գործընթացն ապահովել 2017 թվականի ընթացքում՝ ՀՀ կառավարության ներկայացման ենթակա «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման, ինչպես նաև դրա կիրարկումն ապահովելու շրջանակներում:

Այսպիսով՝ բացակայում են պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող և մարտական գործողություններին մասնակցած քաղաքացիների զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցելու մասին գրառումներ կատարելու կամ զինվորական գրքույկները լրացնելու կարգը, ինչպես նաև զինապարտի կցագրման վկայականի և զինվորական գրքույկի ձևերը սահմանող իրավական հիմքերը:

Ուստի, անհրաժեշտ է ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով սահմանել զինապարտի կցագրման վկայականի, զինվորական գրքույկի ձևերն ու դրանք լրացնելու կարգը, ինչպես նաև կարգավորել դրանց տրամադրման հետ կապված հարաբերությունները, որը կապահովի զինվորական հաշվառման փաստաթղթերի միատեսակությունը, կսահմանի զինվորական հաշվառման փաստաթղթերում ներառվող տեղեկությունների հստակ շրջանակ և դրանք լրացնելու կարգ և իրավակիրառ պրակտիկան կդարձնի առավել հստակ և կանխատեսելի:

2. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ընթացքում զինապարտների պատշաճ բժշկական փորձաքննության ապահովման իրավունքը և բժշկական ու ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների գործունեության թափանցիկությունը

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի համաձայն զինված ուժերի անդամներն ունեն առողջության պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

Մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները սահմանված են «Բնակչության

բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով:

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների գերակշիռ մասն առնչվել է գորակոչի ընթացքում զինապարտներին պատշաճ բժշկական հետազոտության ենթարկելու, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների (եզրակացության) արդյունքների հիմնավորվածությամբ պայմանավորված այդ որոշումների բողոքարկման և պարտադիր զինվորական ծառայության գորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքների տրամադրման խնդիրներին:

Օրինակ՝ զինապարտ քաղաքացին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով տեղեկացրել է, որ 2014 և 2015 թվականներին բուժման նպատակով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչից ստացել է տարկետում 10 ամիս ժամկետով:

Դիմումատուի պնդմամբ՝ 2016 թվականի ամառային գորակոչի ժամանակ իր մոտ ախտորոշվել է «Օրգանական ծագման էմոցիոնալ անկայուն ասթենիկ խանգարում, չափավոր արտահայտված» հիվանդությունը, սակայն Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից հաշվի չի առնվել իր հիվանդության ծանրության աստիճանը և չի կիրառվել ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի ապրիլի 8-ի «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի N 175-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 410-Ն հրամանով հաստատված «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգ»-ի (այսուհետ՝ Փորձաքննության կարգ) 2-րդ հոդվածի «բ» կետը (պիտանի չեն խաղաղ ժամանակ, պիտանի են զինվորական ծառայության՝ սահմանափակումով, պատերազմական ժամանակ):

Նշված դիմումի ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ դիմումատուն համաձայն է եղել տրված ախտորոշման հետ, սակայն համաձայն չի եղել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից ընդունված եզրակացության հիմնավորվածության հետ: Դիմումի քննարկման ընթացքում ուսումնասիրվել են դիմումատուի ներկայացրած բժշկական փաստաթղթերը և պարզաբանումներ են պահանջվել: Արդյունքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից տեղեկացրել են, որ 2016 թվականի հուլիսի 2-ին զինապարտ քաղաքացին ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին: Ջորակոչիկը գննվել է բժիշկ փորձագետների կողմից, հաստատվել է վերը նշված ախտորոշումը, սակայն կիրառվել է Փորձաքննության կարգի 7-րդ հոդվածի «գ» կետը և գորակոչիկը ճանաչվել է «պիտանի չէ զինվորական ծառայության համար խաղաղ ժամանակ» և հաշվառվել պահեստագորում:

Նշված բողոքի, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բազմաթիվ այլ բողոքների շրջանակներում ներկայացված ռազմաբժշկական և բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների

որոշումների, եզրակացությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործող իրավակարգավորումներով հստակ սահմանված չեն հանձնաժողովների կողմից կայացվող որոշումներին (եզրակացություններին) ներկայացվող պահանջները և դրանցում պարտադիր ներառվող տեղեկությունների շրջանակը:

Մասնավորապես՝ Փորձաքննության կարգի հավելվածի 8-րդ և 9-րդ գլուխներով սահմանված են ռազմաբժշկական (բժշկական) հանձնաժողովների որոշումների ձևերը և որոշումները գրանցելու կարգը: Այնուամենայնիվ նշված գլուխներում ներառված դրույթները չեն սահմանում հանձնաժողովների որոշումներին ներկայացվող այնպիսի պահանջներ, ինչպիսիք են որոշումների (եզրակացությունների) կառուցվածքը (նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ), բողոքարկման օրենքով սահմանված կարգի և ժամկետների մասին նշում կատարելը, դրանց հիմնավորված և պատճառաբանված լինելը, պարտադիր ներառվող տեղեկությունների շրջանակը և այլն:

Վերը նշված խնդրին փորձ է կատարվել լուծում տալ «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով: Այսպես՝ նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն զինապարտի բժշկական փորձաքննության արդյունքներով զինվորական կոմիսարիատին կից բժշկական և կենտրոնական բժշկական հանձնաժողովների կողմից տրվում է զինապարտի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը ներառում է՝ զինապարտի առողջական վիճակի *ամփոփ նկարագրությունը*, զինապարտի պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը և զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են զինապարտի առողջական վիճակին՝ նրան զինվորական ծառայության մեջ ներգրավելու դեպքում:

Այսպիսով՝ ՀՀ զինապարտ քաղաքացիների վերաբերյալ ռազմաբժշկական և բժշկական փորձաքննության արդյունքներով կայացված որոշումների հիմնավորվածության, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերի, բողոքարկման կարգի և ժամկետների ու այլ պարտադիր նշումների, ինչպես նաև հստակ կառուցվածքի առկայությունն անհրաժեշտ և կարևոր են զինապարտների իրավունքների պաշտպանության ապահովման տեսանկյունից:

ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն 2016 թվականի ընթացքում դատական կարգով բողոքարկվել է Հանրապետական զորակոչային հանձնաժողովի 4, Կենտրոնական բժշկական հանձնաժողովի 3 և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2 որոշումներ, բողոքարկումները գտնվում են դատաքննության փուլում: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի և զինվորական կոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովների կողմից կայացված որոշումների վերաբերյալ ներկայացվել են 957 դիմում-բողոք, բողոքարկման արդյունքում փոփոխվել է ընդամենը 75-ի վերաբերյալ նախկինում տրված եզրակացությունները:

Անհրաժեշտ է սահմանել ռազմաբժշկական և բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների կողմից կայացվող որոշումներին (եզրակացություններին) ներկայացվող պահանջները և դրանցում պարտադիր

ներառվող բողոքարկման կարգի ու ժամկետների և այլ տեղեկությունների շրջանակը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել նշված հանձնաժողովների գործունեության թափանցիկությունը բարձրացնելու ուղղությամբ²⁰⁷: Առաջարկվում է նաև հասակեցնել բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների Փորձաքննության կարգով սահմանված լիազորությունները, ինչպես նաև դրանց կողմից կայացվող որոշումների բողոքարկման ընթացակարգերը:

3. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքի պաշտպանության խնդիրը

Զորակոչի ընթացքում զինապարտների իրավունքների պաշտպանության խնդիրներից է մի քանի հիվանդություններ ունեցող և զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկների առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքի տրամադրման հետ կապված հարցերը:

Փորձաքննության կարգում 2016 թվականի հունիսի 13-ի N 9-Ն հրամանով կատարվել են լրացումներ: Մասնավորապես՝ այն լրացվել է նոր 45.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «45.1. Այն զորակոչիկներին, ովքեր *հայտարարված զորակոչի* ընթացքում փորձաքննության արդյունքներով առնվազն 5 տարբեր հոդվածներով ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով, տրվում է տարկետում բուժման նպատակով՝ մինչև մեկ տարի ժամկետով:»:

Օրինակ՝ Տեղեկության հրապարակային աղբյուրներից ստացված տվյալների համաձայն՝ զորակոչիկը մի շարք առողջական խնդիրներով՝ տարբեր հիվանդություններ ունենալու պատճառով՝ դրանցից յուրաքանչյուրով ճանաչվել էր պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով և զորակոչվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության:

Մասնավորապես՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքով դիմումատուի մայրը տեղեկացրել է, որ զորակոչիկն ունի մի շարք առողջական խնդիրներ՝ «Կրծքավանդակի առաջնային պատի արտահայտված ռախիտիկ դեֆորմացիա, ողնաշարի գոտկակրծքային հատվածի ծովածություն, ստորին վերջույթների ծովածություն, ձախ ստորին վերջույթի կարճացում՝ 1,5 սմ, սրտի միտրալ փականի առաջնային փեղկի պրոլապս՝ 2-րդ աստիճանի, միտրալ անբավարարություն՝ 1-ին աստիճանի, պիելեկտազիա՝ ձախից, նեֆրոպտոզ՝ աջից, իզոլացված միզային սինդրոմ (պրոտեինուրիա), միզային համակարգի զարգացման արատ, աջ երիկամի գոտկային դիստոպիա, գլխի մագածածկ հատվածի սեբորեոսային դերմատիտ, դեմոդիկոզ»:

²⁰⁷ Բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների գործունեության թափանցիկության և մատչելիության բարձրացման անհրաժեշտությունը և խնդրի լուծման կարևորությունը քննարկվել է նաև 2017 թվականի մարտի 3-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի հերթական նիստում:

Բողոքի քննարկման և ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերջինս գորակոչի օրը տեղափոխվել է ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական կայազորային զինվորական հոսպիտալ: Հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից գորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ ներկայացվել է կարծիք, որի համաձայն՝ նրա մոտ չի հայտնաբերվել այնպիսի հիվանդություն, որն անհամատեղելի է զինվորական ծառայության հետ:

Կենտրոնական կայազորային զինվորական հոսպիտալի իրավասու ներկայացուցիչների հետ հոսպիտալում տեղի ունեցած քննարկման ժամանակ, վերջիններս Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին տեղեկացրել են, որ գորակոչիկի բժշկական փաստաթղթերն արդեն ներկայացվել են ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի քննարկմանը²⁰⁸:

2016 թվականի հոկտեմբերի ամսին ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից Փորձաքննության կարգի 20-րդ հոդվածի «բ», 26-րդ հոդվածի «դ», 36-րդ հոդվածի «դ», 39-րդ հոդվածի «դ», 54-րդ հոդվածի «զ» և 86-րդ հոդվածի «զ» կետերի առաջին սյունակի համաձայն՝ Ա.Խ.-ն ճանաչվել է «Պիտանի չէ խաղաղ ժամանակ, պիտանի է զինվորական ծառայության՝ սահմանափակումով պատերազմական ժամանակ»:

Քննարկվող պարագայում գորակոչիկի մոտ առանձին վերցված չի եղել այնպիսի հիվանդություն, որի հիման վրա վերջինս ոչ պիտանի ճանաչվեր զինվորական ծառայության համար: Սակայն, մի քանի հիվանդությունների առկայության պարագայում գորակոչվելուց հետո նրա առողջական վիճակը էականորեն վատթարացել է:

ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 2016 թվականին առողջության պատճառով վաղաժամկետ ազատ է արձակվել 447 ժամկետային զինծառայող, *որոնցից 26 զինծառայողի մոտ արձանագրվել է մինչ գորակոչն ունեցած հիվանդությունների սրացում կամ զարգացում ծառայության ընթացքում*:

Փորձաքննության կարգի վերը նշված իրավանորմի (45.1-րդ կետի) որոշակիության տեսանկյունից պարզ չէ հիվանդությունների նշված (հինգ) քանակի հիմնավորվածությունը, ինչպես նաև միայն հայտարարված գորակոչի ընթացքում տարկետում ստանալու հանգամանքը:

Ընդ որում՝ էականը ոչ թե հոդվածների կամ հիվանդությունների քանակն է, այլ այն հանգամանքը, թե որքանով գորակոչիկը կկարողանա կատարել զինվորական պարտականությունները, հիվանդության կամ հիվանդությունների առկայությունը ինչքանով է բարձրացնում վերջինիս առողջական վիճակի ավելի վատթարացման և հաշմանդամություն ձեռք բերելու հավանականությունը:

²⁰⁸ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են ՀՀ Պն կենտրոնական կայազորային զինվորական հոսպիտալ, <http://pashtpan.am/media/kayazorayin-zinvorakan-hospital.html>, <http://www.aravot.am/2016/11/17/827817/>

Բացի այդ՝ առկա են դեպքեր, երբ անձը լրացուցիչ հիվանդություններ է ձեռք բերում զինվորական ծառայության ընթացքում, այլ ոչ թե հայտարարված զորակոչի ընթացքում, որոնք Փորձաքննության կարգի համաձայն հիմք են անձին զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչելու համար:

Այլ կերպ ասած՝ այն դեպքերում, երբ պարտադիր ժամկետային զինծառայողը՝ զինվորական ծառայության ընթացքում է ձեռք բերում 5 տարբեր հոդվածներով նախատեսված հիվանդություններ (որոնց համար Փորձաքննության կարգով սահմանված է սահմանափակումով ծառայություն), ապա շարունակում է իր զինվորական ծառայությունը:

Նշված խնդիրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ զորամասեր այցելությունների ընթացքում բարձրացրել են նաև առողջական խնդիրներ ունեցող զինծառայողները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ բացակայում է «հիվանդությունների որակական փունջ» (այլ ոչ թե որոշակի քանակի հիվանդություններ) ունենալու դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը: Բժշկական հանձնաժողովը «հիվանդությունների որակական փունջ» չունենալու դեպքում այդ հիվանդությունները գնահատում է առանձին-առանձին՝ այլ ոչ թե ընդհանուր վերցրած և արդյունքում ստացվում է, որ անձն ենթակա է զինվորական ծառայության: Սակայն, փաստացի, զինապարտը պիտանի չէ, և նույնիսկ մեծ հավանականություն կա, որ ծառայության ընթացքում ձեռք կբերի հաշմանդամություն կամ ավելի կիտրանան առկա հիվանդությունները:

Այսպիսով՝ հիվանդությունների քանակի մեխանիկական հաշվարկով անձին տարկետում տալն արդյունավետ չէ: Ջորակոչիկը կարող է ունենալ 3 կամ չորս զինվորական ծառայությունը սահմանափակումով անցնելու համար հիմք հանդիսացող այնպիսի հիվանդություններ, որոնց առկայության պայմաններում զորակոչիկը կամ «փաստացի ոչ պիտանի է» կամ այդ հիվանդությունների համակցությունը զինվորական ծառայություն անցնելու ընթացքում կարող է վերածվել առողջական առավել լուրջ խնդիրների:

Ջորակոչիկներին ոչ պատշաճ բժշկական փորձաքննության ենթարկելու և զորակոչելու վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով 2016 թվականին հրապարակվել են մի շարք տեղեկություններ²⁰⁹:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝

1. Փորձաքննության կարգում կանոնակարգել զինվորական ծառայության ընթացքում մի շարք հիվանդությունների (սահմանափակումով) առկայության դեպքում զինծառայողի պիտանելիության որոշման հիմքերը և կարգը,

²⁰⁹ Նշված տեղեկությունները հասանելի են հետևյալ հղումներով՝ <http://armtimes.com/hy/read/81838>, <http://news.am/arm/news/333087.html>, <http://hcav.am/events/19-07-2016-0987/>, <http://hraparak.am/?p=124539&l=am/toxvordus+bugen+hetovo%D6%82xarken+lernayin+xarabax%D5%9D+carayutyan> և այլն:

2. Փորձաքննության կարգով սահմանել «հիվանդությունների որակական փունջ» (այլ ոչ թե որոշակի հիվանդությունների քանակ) ունենալու դեպքում անձին զինվորական ծառայության գորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը,
3. վերանայել և հստակեցնել Փորձաքննության կարգով սահմանված ցանկում ներառված հիվանդությունները,
4. խստացնել հսկողությունը բժշկական և ռազմաբժշկական փորձաքննությունների իրականացման նկատմամբ:

4. Առողջական վիճակի, բժշկական հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, արդյունքների վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև ռազմաբժշկական ու բժշկական փորձաքննության արդյունքներով կայացված որոշումները և այլ բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունք

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 50-րդ կետի համաձայն զինված ուժերի յուրաքանչյուր գործող կամ նախկին անդամ իրավունք ունի հարցմամբ ստանալ իրեն առնչվող տեղեկատվությունը, անձնական տվյալները, այդ թվում՝ բժշկական բնույթի տեղեկությունները:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին (7-րդ հոդված):

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2016 թվականի ընթացքում գորակոչիկներից և նրանց ծնողներից բողոքներ են ստացվել այն մասին, որ իրավասու պաշտոնատար անձինք չեն տրամադրում գորակոչիկների ռազմաբժշկական և բժշկական փորձաքննության արդյունքների, հիվանդության ախտորոշումների, բուժման ընթացքի և արդյունքների վերաբերյալ փաստաթղթերի պատճենները:

Օրինակ՝ քաղաքացին 2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գծին կատարված հեռախոսազանգով տեղեկացրել է, որ դիմել է զինկոմիսարիատ որդու վերաբերյալ բժշկական փաստաթղթերի կրկնօրինակները ստանալու համար, սակայն զինկոմիսարիատի աշխատակիցներն բժշկական փաստաթղթերի կրկնօրինակները չեն տրամադրել:

Քաղաքացու բանավոր բողոքի հիման վրա ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը պարզաբանումներ է պահանջել զինվորական կոմիսարիատի աշխատակցից, ով տեղեկացրել է, որ քաղաքացին կարող է այցելել զինկոմիսարիատ և վերցնել իր որդու վերաբերյալ բոլոր բժշկական փաստաթղթերի կրկնօրինակները: Արդյունքում՝ վերջինս ստացել է որդու վերաբերյալ բժշկական բոլոր

փաստաթղթերի պատճենները:

Նմանատիպ այլ դեպքերում նույնպես Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների և Պաշտպանության նախարարություն իրավասու պաշտոնատար անձանց համատեղ աշխատանքի արդյունքում գորակոչիկներին կամ նրանց ընտանիքների անդամներին տրամադրվել են համապատասխան բժշկական փաստաթղթերի կրկնօրինակները:

Վերը նշված խնդիրը կարգավորելու փորձ է կատարվել «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով: Նախագծի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն. «Զինապարտն իրավունք ունի ծանոթանալ իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալ դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնել առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:»:

ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն ՀՀ զինվորական կոմիսարի կողմից տարածքային զինվորական կոմիսարներին տրվել է գրավոր ցուցում՝ դիմելու դեպքում գորակոչիկներին կամ նրանց օրինական ներկայացուցիչներին տրամադրել իրենց բժշկական հետազոտության արդյունքների և առողջական վիճակի վերաբերյալ բժշկական հանձնաժողովների կողմից տրված եզրակացությունների պատճենները:

Ուստի, անհրաժեշտ ենք համարում օրենքով սահմանել, որ զինապարտն իրավունք ունի ծանոթանալ իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալ դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնել առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

5. Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում ստանալու իրավունք

Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում ստանալու հիմքերը սահմանված են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով:

Մասնավորապես՝ նշված օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայնանձր օգտվում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում ստանալու իրավունքից այն դեպքերում, երբ՝

ա) քաղաքացին մինչև գորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված, և առկա է նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պայմաններից որևէ մեկը,

բ) քաղաքացու ծնողներն ամուսնալուծվել են գորակոչային տարիքի հասնելուց առնվազն 5 տարի առաջ, և առկա է նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված

պայմաններից որևէ մեկը:

Մինչդեռ մի շարք դեպքերում իրավակիրառ պրակտիկայում տարկետում է տրամադրվում այն դեպքերում, երբ գորակոչիկը և՛ մինչև գորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված, և՛ ծնողներն ամուսնալուծված են եղել առնվազն 5 տարի առաջ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումն իրավական որոշակիության տեսանկյունից հստակեցման կարիք ունի: Խնդիրն այն է, որ նշված դրույթը, որպես տարկետման իրավունքի տրամադրման հիմք, բացի գորակոչիկի՝ մինչև գորակոչային տարիքի հասնելը՝ 5 տարի առաջ որդեգրված լինելու կամ նրա ծնողների՝ ամուսնալուծված լինելու պայմանի առկայությունից, պարտադիր է համարում նաև նշված հոդվածով նախատեսված այլ հիմքի առկայությունը: Մինչդեռ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը տարկետում տալու ինքնուրույն հիմքեր են՝ անկախ գորակոչիկի որդեգրման կամ նրա ծնողների ամուսնալուծված լինելու հանգամանքների առկայությունից:

ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18-ի ՄԴՈ- 630 որոշման 11-րդ կետի 6-րդ պարբերությունում տրված սահմանադրական դատարանի դիրքորոշման համաձայն՝ «Տվյալ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»:

Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաև «2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդմամբ²¹⁰:

Խնդրի վերաբերյալ 2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են նաև բանավոր և գրավոր բողոքներ:

Ընտանեկան դրության բերումով տարկետում ստանալու վերը նշված իրավակարգավորումներում առկա է նաև գորակոչիկների իրավունքների պաշտպանության մեկ այլ խնդիր: Մասնավորապես՝ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում սահմանված է, որ անաշխատունակ ծնողներ են համարվում նաև *ծերության կենսաթոշակի իրավունք* տվող տարիքի հասած հայրը և մայրը: Մինչդեռ, 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Պետական կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-156-Ն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը, որը ծերության կենսաթոշակը սահմանում էր որպես սոցիալական

²¹⁰ 2015 թվականի տարեկան հաղորդումը, <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf>, էջեր՝ 48-49:

կենսաթոշակի տարատեսակ: Հետևաբար՝ ՀՀ գործող օրենսդրությամբ «ծերության կենսաթոշակի իրավունք տվող տարիքի հասած անձ» գոյություն չունի:

Վերը նշված խնդիրները լուծում են ստացել «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով, որը դեռևս չի ներկայացվել Ազգային ժողով:

Անհրաժեշտ է նշված օրենսդրական խնդիրների լուծման նպատակով «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացնել ՀՀ ազգային ժողով կամ «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետում և նույն հոդվածի 2-րդ մասում կատարել համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ՝ ծերության կենսաթոշակի և որդեգրման հետ կապված վերը նշված խնդիրները լուծելու նպատակով:

ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Զինվորական ծառայության անցնելու իրավունք

1948 թվականի դեկտեմբերի 12-ի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք²¹¹:

1966 թվականի դեկտեմբերի 16-ի Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 3-ին) 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որևէ խտրականության և անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով անցնել պետական ծառայության²¹²:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր՝ «Եվրոպայում հանրային ծառայողների կարգավիճակի վերաբերյալ» թիվ R (2000)6 հանձնարարականում ընդգծել է, որ հանրային իշխանության մարմիններն էական դեր են կատարում ժողովրդավարական հասարակությունում և պետք է ունենան համապատասխան անձնակազմ, որը համահունչ է իրավունքի գերակայությանը, չեզոք է, հավատարիմ ժողովրդավարական ինստիտուտներին և հարգալից՝ այն ժողովրդի հանդեպ, որին ծառայում է: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախարարների կոմիտեն ընդգծել է, որ հանրային ծառայողները կազմում են հանրային վարչակազմի կարևոր տարրը և պետք է

²¹¹ Universal Declaration of Human Rights, <http://www.un.org/en/universal-declaration-human-rights/>

²¹² International Covenant on Civil and Political Rights, https://treaties.un.org/doc/Treaties/1976/03/19760323%2006-17%20AM/Ch_IV_04.pdf

ունենան անհրաժեշտ որակավորում և համապատասխան իրավական և նյութական պայմաններ՝ իրենց առջև դրված խնդիրները պատշաճ կատարելու համար²¹³:

«Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից 2008 թվականին տպագրված ձեռնարկի՝ «Մարդու իրավունքների կարևորությունը զինված ուժերի անձնակազմի համար» գլխում (2-րդ գլուխ) նշված է, որ «Համազգեստով քաղաքացու» սկզբունքի կարևորությունը չի սահմանափակվում բացառապես այն զինված ուժերով, որոնց կազմում առկա զինձառայողների թիվը մեծ է: Նշված սկզբունքը բովանդակում է նաև առավել կարևոր այն ընդհանուր բնույթի հիմնարար գաղափարը, որի համաձայն՝ ժողովրդավարական հասարակությունում զինված ուժերն իրավունքի գերակայության տիրույթում են: Նպաստելով զինձառայողների՝ իրենց հնարավորինս որպես քաղաքացի դիտելուն, խթանվում է նաև հարգանքը ժողովրդավարական ինստիտուտների նկատմամբ: Հետևաբար՝ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող քաղաքացի, պետք է հնարավորություն ունենա օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից²¹⁴:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով²¹⁵ ամրագրված չէ քաղաքացիների հանրային ծառայության անցնելու իրավունքը, սակայն կոնվենցիայի 14-րդ հոդվածն ամրագրում է, որ Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից: Այդ է պատճառը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր նախադեպային որոշումներում նշել է, որ 14-րդ հոդվածի ներքո հարց առաջանալու համար պետք է տարբերություն լինի համեմատաբար նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ վերաբերմունքում: Նման տարբերությունը խտրական է, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և հիմնավոր արդարացում, այլ կերպ ասած՝ եթե դա չի հետապնդում օրինական նպատակ կամ եթե չկա համապատասխան հիմնավոր կապ կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև: Պայմանավորվող պետությունները կիրառում են հայեցողության լայն շրջանակ, երբ գնահատում են, թե արդյոք առկա են տարբերություններ, և եթե՝ այո, ապա ինչ չափով են դրանք այլ նման իրավիճակներում արդարացնում վերաբերմունքի տարբերությունները (Բուրդենն

²¹³ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (2000)6 հանձնարարականը, [http://www.unispeyer.de/files/de/Lehrst%C3%BChle/Stelkens/Lehrveranstaltungen/EuVerwR_weitere%20Materiale/Recommendation_No_R\(2000\)6.pdf](http://www.unispeyer.de/files/de/Lehrst%C3%BChle/Stelkens/Lehrveranstaltungen/EuVerwR_weitere%20Materiale/Recommendation_No_R(2000)6.pdf)

²¹⁴ Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, <http://www.osce.org/hy/odihr/88572>

²¹⁵ European Convention on Human Rights, http://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf

ընդդեմ Անգլիայի գործով, 2008 թվականի ապրիլի 29-ի վճիռ, գանգատ թիվ 13378/05, կետ 60): Այսպիսով՝ դատարանը խտրական վերաբերմունք է տեսնում այն դեպքերում, երբ նույն իրավիճակում հայտնված անձանց նկատմամբ կիրառվում է տարբեր մոտեցում, սակայն այն չի հետապնդում օրինական նպատակ: Քննարկվող իրավիճակում քաղաքացուն նախկինում դատվածություն ունենալու պատճառով պայմանագրային ծառայության չընդունելը կարող է դիտվել խտրական վերաբերմունք, քանի որ այն օրինական նպատակ չի հետապնդում:

Քննարկելով խտրականության արգելքի սկզբունքը ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ այդ սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերաժվել խտրականության: Խտրականության արգելքի սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (ՄԴՈ-881, 2010 թվականի մայիսի 4, 5-րդ կետ): Արդյունքում ՀՀ սահմանադրականը նույնպես արձանագրել է, որ խտրականություն առկա է այն դեպքերում, երբ առկա է տարբերակված մոտեցում, որը գուրկ է իրավաչափ նպատակից²¹⁶:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականի ընթացքում ստացել է մի շարք բողոքներ քաղաքացիներին զինվորական ծառայության ընդունելը մերժելու վերաբերյալ:

Օրինակ՝ քաղաքացին տեղեկացրել է, որ ծառայել է ՀՀ ոստիկանությունում, ունի բարձրագույն իրավաբանական կրթություն, և պահեստագործի ավագ լեյտենանտի կոչում: Դիմում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարություն՝ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու խնդրանքով: Ըստ դիմումատուի՝ մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության սպաների թեկնածուների համար սահմանված որակավորման քննություններին, որոնց արդյունքներով համապատասխանել է զինվորական ծառայության համապատասխան պաշտոնի համար սահմանված պահանջներին, սակայն ՀՀ պաշտպանության նախարարությունը զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր չի կնքել:

Բողոքի քննարկման ընթացքում պարզվել է, որ վերջինս դեռևս 2012 թվականին դատապարտված է եղել դիտավորությամբ թեթև մարմնական վնասվածք պատճառելու համար և դատավճռով որպես պատիժ կիրառվել է տուգանքը:

²¹⁶ ՀՀ սահմանադրական դատարանի 11.05.2011թ. ՄԴՈ-881 որոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի և Երևանի կենտրոն և նորք-մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Ավետիսյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի եվ 268-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, <http://concourt.am/armenian/decisions/common/2010/index.htm>

Մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ պաշտպանության նախարարության համատեղ աշխատանքի արդյունքում քաղաքացուն ներկայացվել է զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնելու առաջարկ, որին քաղաքացին տվել է իր համաձայնությունը և ընդունվել պայմանագրային զինվորական ծառայության:

ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն 2016 թվականի ընթացքում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունն ավարտելուց հետո պայմանագրային զինվորական ծառայության անցնելու համար դիմել են 22 պահեստագորայիններ, որոնցից 21-ը ներկայումս գտնվում են ծառայության մեջ, իսկ մեկ պահեստագորայինի ընդունելությունն ընթացքի մեջ է, ինչպես նաև հրամանագրվել են 2014թ. երկու տարի ժամկետով պարտադիր զինվորական ծառայության գորակոչված 2 սպա (բժիշկ մասնագետ):

Ըստ իրավասու գերատեսչության՝ 2016 թվականի ընթացքում դատարանի վճռի հիման վրա պայմանագրային զինվորական ծառայության մեջ վերականգնվել և նշանակվել է պաշտոնի մեկ պայմանագրային զինծառայող:

Ուստի, անհրաժեշտ է խստացնել հսկողությունը «Զինվորական ծառայությունն անցնելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին զինվորական ծառայության ընդունելու հարցում:

2. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունք

2016 թվականի ընթացքում մի շարք դեպքերում խախտվել են պայմանագրային զինծառայողների՝ զինծառայությունից արձակման ժամկետները, և օրենքով սահմանված ժամկետում նրանց չեն ներկայացվել ուսման ծախսերի փոխհատուցման վերջնահաշվարկ:

Մարդու իրավունքների պաշտպանը մի շարք դիմումներ է ստացել պայմանագրային զինծառայողներից, ովքեր վերադաս հրամանատարությանը զեկուցագիր են ներկայացրել մինչև պայմանագրի ժամկետի ավարտը ծառայությունից արձակվելու համար՝ պատրաստակամություն հայտնելով փոխհատուցել ուսման ծախսերը, սակայն իրենց պատասխանելու ժամկետը լրացել է, և որևէ պատասխան չեն ստացել:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով զինապարտ քաղաքացին տեղեկացրել է, որ 2004 թվականին կնքել է զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր և ուսումն ավարտելուց հետո ՀՀ զինված ուժերում անցել է պայմանագրային զինվորական ծառայության: 2016 թվականին զեկուցագիր է ներկայացրել գորամասի հրամանատարին՝ խնդրելով իրեն զինվորական ծառայությունից արձակել ՀՀ զինված ուժերի պահեստագոր՝ միաժամանակ հայտնելով իր պատրաստակամությունն ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու հարցում, սակայն զեկուցագրին ընթացք չի տրվել:

Ըստ իրավասու մարմնի՝ կատարվել է ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի հաշվարկ, որից հետո զինապարտ քաղաքացին

նշված գումարը սահմանված կարգով վճարել և արձակվել է ՀՀ զինված ուժերի պահեստագոր:

ՀՀ կառավարության «Ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների կողմից հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման կարգը սահմանելու մասին» 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 393-Ն որոշմամբ 7-րդ կետի համաձայն հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում զինծառայողը զեկուցագիր է ներկայացնում իր ծառայության վայրի գորամասի հրամանատարին: Հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու զեկուցագիր ստացած հրամանատարը (պետը) պարտավոր է ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում զեկուցագիրը՝ կից գրությամբ, ուղարկել լիազոր մարմնի կադրային ստորաբաժանման ղեկավարին, որը փաստաթղթերը կադրային մարմնում մուտք լինելուց հետո ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում պարտավոր է զինծառայողի ծառայությունից արձակումը համաձայնեցնել շահագրգիռ ծառայությունների հետ և ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը ներկայացնել զինծառայողին:

2016 թվականի ընթացքում նշված 15-օրյա *ժամկետը մի շարք դեպքերում չի պահպանվել՝ զինծառայողներին չի ներկայացվել ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը, և նրանք չեն արձակվել զինվորական ծառայությունից*: Բացի այդ, նշված խնդրին առնչվող որոշ դեպքերում զինծառայողներն իրենց անհամաձայնությունն են հայտնել նաև ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի հաշվարկի հետ:

Անհրաժեշտ է նշել, որ վերը նշված խնդրի կարգավորման նպատակով 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքով հստակեցվել է փոխհատուցման գումարի չափը և սահմանվել է, որ պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելիս ծագում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունն անպատշաճ կատարելու համար իրավական հետևանք՝ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության յուրաքանչյուր լրիվ չճառայած տարվա դիմաց՝ մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի չափով տուժանքի ձևով:

Խնդրի կարգավորման նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Զինծառայողին հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում զինվորական ծառայությունից արձակելիս պայմանագրային պարտավորությունն անպատշաճ կատարելու համար իրավական հետևանքի կիրառման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 393-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը դեռևս չի ընդունվել:

Այս խնդրի մասին բարձրաձայնվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան զեկույցներում (2012թ., 2013թ., 2014թ., 2015թ.): 2016 թվականի ընթացքում խնդրի վերաբերյալ տեղեկություններ են հրապարակվել նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից²¹⁷:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկատվության համաձայն 2016 թվականի ընթացքում մինչև պայմանագրի ժամկետի լրանալը ՀՀ ՁՈԻ պահեստագոր արձակվելու վերաբերյալ զեկուցագիր է ներկայացրել 513 զինծառայող: Ձեկուցագիր ներկայացրա՞մերից 84-ը արձակվել է պահեստագոր իր զեկուցագրի համաձայն, 50-ը՝ արձակվել է պահեստագոր ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու պայմանով:

Անհրաժեշտ է խստացնել հսկողությունը պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու համար զեկուցագիր ներկայացնելու դեպքում զինծառայությունից արձակելու գործընթացի նկատմամբ:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը

Մարդու իրավունքների և ազատությունների համակարգում կյանքի իրավունքը միանշանակ ունի հիմնարար արժեք, այն հանդիսանում է բնական և անօտարելի: Յուրաքանչյուր իրավական փաստաթղթում հենց դրանով է սկսվում մարդու իրավունքների և ազատությունների ամրագրումը: Այն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի առաջին կետի համաձայն. «Ապրելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է: Այդ իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայական ձևով զրկել կյանքից»:

Կյանքի իրավունքի նմանատիպ բնորոշում է տրված նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիայի 2-րդ հոդվածում. «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»²¹⁸:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 6-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի անդամներն ունեն կյանքի իրավունք և այն չի կարող վտանգի տակ դրվել առանց իրավաչափ ռազմական նպատակի կամ այնպիսի իրավիճակ ստեղծվի, երբ արհամարվի զինծառայողի կյանքի իրավունքը:

²¹⁷ «Զինծառայողին հրաժարվում են գորացրել», <http://hcav.am/events/20-04-2016-01/>

²¹⁸ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, <http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>, էջ 179:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 24-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:

Ձինձառայողների կյանքի իրավունքի պաշտպանությունն ունի առանցքային նշանակություն: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պաշտպանական ոլորտի գերատեսչության կողմից ներկայացված տվյալների հիման վրա ուսումնասիրվել է 2016 թվականի ընթացքում զինձառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վիճակը:

Մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2016 թվականի ընթացքում գրանցվել է 139 զինձառայողի մահվան ելքով դեպք: Ընդ որում, մարտական պայմաններում կորուստները կազմել են 84 զինձառայող, իսկ ոչ մարտական պայմաններում՝ 55:

Նշված դեպքերը տեղի են ունեցել հակառակորդի հարձակողական և դիվերսիոն հետախուզական խմբերի գործողությունների կասեցման, դիպուկահարների կողմից արձակված կրակոցների, մարտական հերթապահության կրման և զինվորական ծառայության անվտանգության ապահովման, ինչպես նաև զինձառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտումների, հիվանդությունների, ճանապարհատրանսպորտային ու դժբախտ պատահարների հետևանքով:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն մահացության դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ՝ պարզելու ծառայության կազմակերպման ու իրականացման ժամանակ տեղ գտած թերություններն ու բացթողումները, արձակվել են հրամաններ և կրկնությունը բացառելու նպատակով զորամասերի հրամանատարական կազմին կոնկրետ հանձնարարականներ են տրվել, նախանշվել կանխարգելիչ աշխատանքների ուղղությունները: Ծառայողական քննությունների արդյունքներով արձակված վերադաս, ինչպես նաև զորամասերի հրամանատարության հրամաններով պարտականությունների կատարման մեջ թերացած զինձառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 7-րդ կետը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ստեղծեն անկախ և արդյունավետ մեխանիզմներ զինձառայողների մահվան կամ նրանց կյանքի իրավունքի դեմ կատարված ոտնձգությունների պատշաճ քննության համար: Հանձնարարականի համաձայն զինված ուժերի յուրաքանչյուր անդամի համար պետք է երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը:

ՀՀ պաշտպանության նախարարության տվյալների համաձայն՝ 2016 թվականի ընթացքում գրանցվել է ժամկետային պարտադիր զինձառայողների կողմից ինքնավնասման 137 դեպք, որոնցից շուրջ 85%-ը կատարվել են զինվորական

ծառայության պարտականությունների իրականացման հետ կապված հանգամանքներում:

Արձանագրված ինքնավնասման դեպքերը պետք է դառնան դրանց պատճառների և նպաստող պայմանների խորը ուսումնասիրության ու համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու հիմնարար առիթ:

2. Հայաստանի Հանրապետության պետական սահմանի խախտման դեպքերի առնչությամբ կատարված փաստահավաք աշխատանքները

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության հաղորդագրության՝ 2016 թվականի դեկտեմբերի 29-ի վաղ առավոտյան ադրբեջանական զորքերը Հայաստանի Տավուշի մարզի Չինարի գյուղի մոտակայքում ձեռնարկել են դիվերսիոն ներթափանցման փորձ: Հարձակման արդյունքում սպանվել են երկու շարքային զինծառայող և մեկ սպա: Հարձակումը շարունակվել է նաև ցերեկը ժամը 12-ի դրությամբ, այդ թվում՝ Չինարի գյուղի մերձակայքում:

Հարձակման վերաբերյալ հրապարակված տեղեկությունից անմիջապես հետո Մարդու իրավունքների պաշտպանի Գեղարքունիքի տարածքային ներկայացուցիչը հատուկ հանձնարարությամբ մեկնել է Տավուշի մարզի Չինարի գյուղ՝ տեղում անմիջականորեն ուսումնասիրելու իրավունքների, այդ թվում՝ զինծառայողների կյանքի իրավունքի խախտման հանգամանքները և կատարելու անհրաժեշտ փաստահավաք աշխատանքներ²¹⁹:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցչի կողմից Չինարի գյուղում իրականացվել են փաստահավաք աշխատանքներ՝ միջազգային պրակտիկայում ընդունված հատուկ սկզբունքներին համապատասխան: Տեղի են ունեցել առաձևագրույցներ Չինարիի գյուղապետի և գյուղի ավագանու անդամների, գյուղի բնակիչների, ինչպես նաև Հայաստանի զինված ուժերի ծառայողների հետ: Այնուհետև, գյուղի ավագանու անդամի ուղեկցությամբ կատարվել են նաև տեղանքի, հարձակման վերաբերյալ հրապարակային տվյալների և անհրաժեշտ այլ ուսումնասիրություններ:

Արդյունքում՝ արձանագրվել են փաստեր այն մասին, որ դեկտեմբերի 29-ին ադրբեջանական զինված ուժերի կողմից երեք հայ զինծառայողները կյանքից զրկվել են այն պայմաններում, երբ չի եղել հարձակման որևէ հավանականություն կամ վտանգ: Դրանից բացի, հարձակումը կատարվել է այնպիսի եղանակով, որն ակնհայտորեն վկայում է խաղաղ բնակիչներին վնաս հասցնելու ադրբեջանական զինված ուժերի մտադրության մասին: Վաղ առավոտից, երբ սկսվել են գնդակոծությունները, խաղաղ բնակիչները ստիպված են եղել թաքնվել հատուկ թաքստոցներում և դուրս են եկել թաքստոցներից ցերեկը ժամը 13:00-ի սահմաններում:

²¹⁹ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական հաղորդագրությունը՝ <http://www.ombuds.am/media/chinari.html>

Փաստահավաք աշխատանքների ընթացքում արձանագրվել են նաև գյուղի խաղաղ բնակիչների, այդ թվում՝ երեխաների, կանանց ու տարեցների կյանքի համար ակնհայտորեն վտանգավոր գնդակոծությունների հետքեր: Դրանք վկայում են այն մասին, որ խաղաղ բնակիչների տների ուղղությամբ արձակվել են թիրախային կրակոցներ²²⁰:

Փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ՝

1) 2016 թվականի դեկտեմբերի 29-ին գնդակոծվել են պետական սահմանին հարակից և մոտ գտնվող բնակելի տները: Վաղ առավոտից, երբ սկսվել են գնդակոծությունները, խաղաղ բնակիչները ստիպված են եղել թաքնվել հատուկ թաքստոցներում և դուրս են եկել թաքստոցներից ցերեկը ժամը 13:00-ի սահմաններում: Փաստահավաք աշխատանքների ընթացքում արձանագրվել են նաև գյուղի խաղաղ բնակիչների, այդ թվում՝ երեխաների, կանանց ու տարեցների կյանքի համար ակնհայտորեն վտանգավոր գնդակոծությունների հետքեր: Դրանք վկայում են այն մասին, որ խաղաղ բնակիչների տների ուղղությամբ արձակվել են թիրախային կրակոցներ:

Ըստ Google Earth ծրագրի տվյալների առաջնագծի տներից մինչև պետական սահման տարածությունը կազմում է 1,43 կիլոմետր:

2) 2017 թվականի հունվարի 3-ին՝ ժամը 18:05-19:00-ի սահմաններում կրակոցներն են արձակվել նաև գյուղի դպրոցի և մանկապարտեզի ուղղությամբ: Ըստ Google Earth ծրագրի տվյալների Չինարի գյուղի մանկապարտեզից մինչև պետական սահման տարածությունը կազմում է 1,74, իսկ դպրոցից մինչև պետական սահման՝ 2,36 կիլոմետր:

Ընտրված վայրերը և ժամը, ինչպես նաև փաստահավաք աշխատանքների ընթացքում արձանագրված նյութերը վկայում են, որ կրակոցներն ակնհայտորեն նպատակ են ունեցել վտանգել երեխաների կյանքը:

3) 2017 թվականի հունվարի 8-ին՝ ժամը 24:00-01:00-ի սահմաններում գնդակոծվել և թիրախում են հայտնվել Չինարի գյուղի հյուսիսային հատվածի խաղաղ բնակիչների տները:

Վաղ առավոտից, երբ սկսվել են գնդակոծությունները, խաղաղ բնակիչները ստիպված են եղել թաքնվել հատուկ թաքստոցներում և դուրս են եկել թաքստոցներից ցերեկը ժամը 13:00-ի սահմաններում: Փաստահավաք աշխատանքների ընթացքում արձանագրվել են նաև գյուղի խաղաղ բնակիչների, այդ թվում՝ երեխաների, կանանց ու տարեցների կյանքի համար ակնհայտորեն վտանգավոր գնդակոծությունների հետքեր: Դրանք վկայում են այն մասին, որ խաղաղ բնակիչների տների ուղղությամբ արձակվել են թիրախային կրակոցներ:

4) 2017 թվականի հունվարի 13-ին աղբբեջանական զինված ուժերի թիրախում է հայտնվել Հայաստանի Հանրապետության՝ Ոսկեպար-Բաղանիս միջպետական

²²⁰ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական հաղորդագրությունը՝ <http://www.ombuds.am/media/chinari.html>

ճանապարհը:

Մասնավորապես, 2017 թվականի հունվարի 13-ին ժամը 16:00-ի սահմաններում սահմանամերձ Ոսկեպար գյուղից դեպի Բաղանիս գյուղ տանող ճանապարհը գնդակոծությունների է ենթարկվել Ադրբեջանի զինված ուժերի կողմից, որի հետևանքով նշված ճանապարհահատվածը փակվել է նույն օրը մինչև ժամը 17:00-ն

2016 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ Տավուշի մարզի Չինարի գյուղի մոտակայքում ադրբեջանական զինված ուժերի կողմից ձեռնարկված զինված հարձակման և 2017 թվականի հունվարի 3-ի եւ 4-ին Չինարի գյուղի դպրոցի, մանկապարտեզի եւ բնակելի տների ուղղությամբ կրակ բացելու դեպքերի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքների արդյունքները ինտերակտիվ ու անգլերեն ձայնային նկարագրություններով ամփոփվել և զետեղվել են տեսասկավառակում:

Փաստահավաք աշխատանքները ներկայացվել են ընդհանուր հասանելիություն ունեցող Google Earth ծրագրի միջոցով՝ տեղանքի քարտեզի վրա համապատասխան նշագրումներ իրականացնելու միջոցով:

Մասնավորապես փաստահավաք աշխատանքների արդյունքում առանձնացվել և սկավառակում զետեղվել են 5 հիմնական միջադեպեր, որոնք տեղի են ունեցել 2016 թվականի դեկտեմբերի 29-ին, 2017 թվականի հունվարի 3-ին, նույն թվականի հունվարի 8-ին և հունվարի 13-ին: Քարտեզի վրա տեսանելի եղանակով նշագրվել են թիրախային գնդակոծության ենթարկված խաղաղ բնակիչների տները, գնդակոծության ենթարկված Չինարի գյուղի մանկապարտեզը և դպրոցը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ոսկեպար-Բաղանիս ճանապարհը (Հավելված 2):

Ադրբեջանական զինված ուժերի այս արարքն ակնհայտորեն խախտում է կյանքի իրավունքը պաշտպանող միջազգային բոլոր պահանջները: Խիստ դատապարտման է ենթակա և անթույլատրելի մարդուն, այդ թվում՝ զինվորական ծառայողին կյանքից զրկելն այն պայմաններում, երբ բացակայում է հարձակման որևէ հավանականություն: Խիստ դատապարտելի է ռազմական գործողություն նախաձեռնելը բնակելի գյուղի մոտակայքում և այն էլ առավոտյան ու ցերեկային ժամերի, ինչը իրական է դարձնում գյուղի բնակիչներին վնաս պատճառելու հնարավորությունը և ադրբեջանական զինված ուժերի այդպիսի մտադրությունը:

Հարձակումները և գնդակոծությունները կատարվել են այնպիսի վայրերում, այնպիսի եղանակով և օրվա այնպիսի ժամերին, որն ակնհայտորեն վկայում է խաղաղ բնակիչներին վնաս հասցնելու ադրբեջանական զինված ուժերի մտադրության մասին:

Ադրբեջանական զինված ուժերի այս ոտնձգություններն ակնհայտորեն խախտում են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային բոլոր պահանջները՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ Չինարի գյուղում և նրա մոտակայքում գորամաս կամ այլ զինվորական ստորաբաժանում տեղակայված չէ:

Մասնավորապես՝ Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիայի լրացուցիչ առաջին արձանագրության 51-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական բնակչությունը

և քաղաքացիական անձինք օգտվում են ռազմական գործողությունների հետևանքով առաջացած վտանգների ընդհանուր պաշտպանությունից: Քաղաքացիական բնակչությունը, որպես այդպիսին, ինչպես նաև քաղաքացիական առանձին անձինք չպետք է հարձակումների օբյեկտ հանդիսանան: Արգելվում են բռնության գործողությունները կամ բռնության սպառնալիքները, որոնց հիմնական նպատակն է ահաբեկել քաղաքացիական բնակչությանը: Արձանագրության 52-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական օբյեկտները չպետք է հանդիսանան հարձակման կամ փոխճնշումների օբյեկտ: Հարձակումները պետք է խստագույնս սահմանափակվեն ռազմական օբյեկտներով: Կասկած առաջանալու դեպքում, այն օբյեկտը, որը սովորաբար նախատեսված է քաղաքացիական նպատակների համար, օրինակ, պաշտամունքի վայր, բնակելի տուն կամ այլ բնակելի շինություններ, կամ դպրոց, ենթադրվում է, որ այն չի օգտագործվում ռազմական գործողություններին արդյունավետ աջակցելու համար:

Փաստահավաք աշխատանքների արդյունքներն առավել մանրամասնությամբ ամփոփվել և ներկայացվել են միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Չինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովությունը

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ամենախոցելի սոցիալական հիմնախնդիրներից է չինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման իրավունքի իրացումը:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում չինձառայողների բնակարանային ապահովման հենքը կազմում են դեռևս ԽՍՀՄ զինված ուժերից մնացած բնակարանային ֆոնդը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ձեռք բերված բնակարանները:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ զինված ուժերի անդամների մարդու իրավունքների մասին թիվ (2010)4 հանձնարարականի 62-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի յուրաքանչյուր անդամ ունի համարժեք ստանդարտներին համապատասխանող, առողջության և հիգիենայի հիմնական պահանջները բավարարող բնակության վայր ունենալու իրավունք:

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն 2016 թվականի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից թվով 31 չինձառայող ապահովվել է ծառայողական բնակարաններով, իսկ թվով 1550 չինձառայողի տրվել է վարձակալած բնակարանների դիմաց դրամական փոխհատուցում, ինչը գործող կարգի համաձայն համարժեք է ծառայողական

բնակարան ապահովելուն: Ըստ պատասխանատու գերատեսչության՝ 2016 թվականի ընթացքում բնակարաններ ձեռք բերելու նպատակով թվով 68 զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց տրամադրվել է անհատույց ֆինանսական աջակցություն:

Զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները 2016 թվականի ընթացքում բնակարանային ապահովման խնդիրների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են մի շարք բողոքներ:

Բողոքները հիմնականում վերաբերել են բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման ցուցակներում հաշվառված լինելու, սակայն հերթում տարիների ընթացքում էական առաջխաղացում չլինելուն:

2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման մեջ նույնպես անդրադարձ է կատարվել այս խնդրին: Մասնավորապես 2015 թվականի հաղորդման մեջ նշվել է, որ. «խնդրի ուսումնասիրությունից կարելի է եզրահանգել, որ բնակարանային պայմանների բարելավման կամ բնակարան հատկացնելու համար ցուցակներ են կազմվում պայմանագրային ժամկետային զինծառայողների, զոհված զինծառայողների ընտանիքի անդամների և հաշմանդամ դարձած զինծառայողների, թոշակի անցած նախկին զինծառայողների և այլ խմբերի համար: Ինչ վերաբերում է վերոնշյալ առաջին և երկրորդ խմբերի վերաբերյալ քաղաքացիները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել են, որ տարիներ շարունակ իրենց հերթը գրեթե առաջ չի անցնում: Երրորդ խմբի անձանց մինչ օրս գումար չի հատկացվել այդ ծրագիրն իրականացնելու համար: Ծառայության ընթացքում պայմանագրային ժամկետային զինծառայողների բնակարանային ապահովման ցուցակում չընդգրկված զինծառայողները չեն ստանում բնակարան և հետագայում ընդգրկվում են թոշակի անցած նախկին զինծառայողների բնակարանային ապահովման ցուցակում:»²²¹:

Առաջարկվում է վերանայել զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման իրավունքի իրացման մեխանիզմները:

Մասնավորապես՝ արտասահմանյան երկրներում զինծառայողների բնակարանային ապահովման օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում գործում է զինծառայողների բնակարանային ապահովության կուտակային-հիփոթեքային համակարգ:

Մասնավորապես՝ «Զինծառայողների կուտակային-հիփոթեքային համակարգի մասին» ՌԴ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն համակարգի մասնակիցներ կամ շահառուներ են հանդիսանում պայմանագրային հիմունքներով զինվորական

²²¹ 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf>,

ծառայությունն անցնող ՌԴ քաղաքացիները, ինչպես նաև ռեեստրում ընդգրկված անձինք: Ռեեստրում ընդգրկվում են դաշնային պետական այն մարմինների աշխատակիցները, որտեղ օրենքով նախատեսված է զինվորական ծառայություն:

Կուտակային համակարգի էությունը կայանում է նրանում, որ զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի համար բացվում է անհատական կուտակային հաշիվ, որտեղ տարիների ընթացքում կուտակվում են պետական բյուջեից այդ նպատակով պետական լիազոր մարմինն հատկացված գումարները:

Ընդ որում՝ նշված օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ զինծառայողը իրավունք է ձեռք բերում օգտագործելու կուտակված գումարները: Մասնավորապես՝ կուտակված գումարների օգտագործման իրավունքը ծագում է, երբ՝ քաղաքացու զինվորական ծառայության ընդհանուր տևողությունը կազմում է 20 և ավելի տարի, զինծառայողը հասնում է զինվորական ծառայության սահմանային տարիքի, առողջության, հաստիքների կրճատման պատճառով արձակվում է զինվորական ծառայությունից և այլն:

Նշված համակարգն անառարկելիորեն խթանում է պայմանագրային զինվորական ծառայությունն անցնելու ցանկությունը, բարձրացնում է զինվորական ծառայության հեղինակությունը և կանխարգելում պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայությունն անցնող անձանց արտահոսքը: Նշված համակարգի շրջանակներում զինծառայողը վստահ է, որ օրինակ 20 և ավելի տարի բարեխիղճ և կարգապահ զինվորական ծառայությունն անցնելու դեպքում անխուսափելիորեն հնարավորություն է ունենալու լուծել իր կամ իր ընտանիքի բնակարանային կարիքները:

Հաշվի առնելով զինծառայողների բնակարանային ապահովման խնդիրները ժամանակին լուծելու կարևորությունը՝ առաջարկվում է արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրության հիման վրա քննարկել Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բնակարանային ապահովության կուտակային-հիփոթեքային համակարգ ներդնելու հնարավորության հարցը:

Միաժամանակ՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն մինչև բնակարանով ապահովվելը զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ծառայողական բնակելի տարածություններով ապահովելու անհնարինության դեպքում բնակելի տարածությունների վարձակալության համար նրանց վճարվում է դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հարկ է նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների՝ գորամասեր այցելությունների ընթացքում զինծառայողները մտահոգություն են արտահայտել, որ նրանց կողմից վարձակալված բնակարանի համար վճարվող դրամական փոխհատուցումները չեն համապատասխանում գորամասերի տեղակայման վայրերում փաստացի առկա վարձավճարներին (Օրինակ՝ Մեղրի քաղաքում):

2. Ձինձառայողների տրանսպորտային սպասարկման իրավունքը

«Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն զինձառայողները Հայաստանի Հանրապետության տարածքում օգտվում են քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու իրավունքից: Ձինձառայողներին ձառայողական պարտականությունների կատարման նպատակով այլ բնակավայրեր գործուղելու ծախսերը փոխհատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով: Ձինձառայողներն արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս ընտանիքի՝ նրանց ուղեկցող անդամները քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից, անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), օգտվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՀՀ տարածքում քաղաքային ուղևորատար տրանսպորտից (բացի տաքսիից) զինձառայողների անվճար օգտվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքը գործնականում ձևական բնույթ է կրում:

Երևան քաղաքում զինձառայողների մեծ մասը լիարժեքորեն չեն օգտվում քաղաքային ուղևորատար տրանսպորտից (տրոլեյբուս, ավտոբուս, մետրո)՝ երթևեկության ցանցի թերի զարգացվածության պատճառով, իսկ ՀՀ մարզերում նման տրանսպորտային միջոցները բացակայում են:

ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս զինձառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների՝ տրանսպորտից օգտվելու կարգը հաստատելու մասին» N 886-Ն որոշման 2-րդ կետի համաձայն զինձառայողներին՝ արձակուրդի վայր մեկնելիս և արձակուրդից վերադառնալիս, ինչպես նաև նրանց ուղեկցող ընտանիքի անդամներին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքային, մերձքաղաքային և միջքաղաքային ուղևորատար տրանսպորտից (բացի տաքսիից) օգտվելու համար *տարեկան մեկ անգամ տրվում է ծախսերի փոխհատուցում* (լրացուցիչ արձակուրդի դեպքում՝ նաև մեկից ավելի):

Սակայն, զինձառայողներն ու նրանց ընտանիքների անդամները լիարժեքորեն չեն կարողանում օգտվել նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ արձակուրդի վայր մեկնելու և վերադառնալու դեպքում տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ստանալու իրավունքից, քանի որ արձակուրդի վայր մեկնելիս և վերադառնալիս ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կողմից երթևեկության տոմսեր չտրամադրելու պատճառով զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների գերակշիռ մասը չի կարողանում ստանալ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում:

3. Զինվորական ծառայությունից արձակված քաղաքացիների զբաղվածության ապահովման իրավունքը

Հայաստանի Հանրապետության զինված ուժերից երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքով արձակված քաղաքացիների և զինվորական հաշմանդամների մեծամասնության առջև ծառայած են կենսակերպի նոր պայմաններին հարմարվելու խնդիրները:

Օրինակ՝ ԱՄՆ-ում գործում են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների խնամքի և ադապտացման կենտրոններ: Այդ կենտրոնները զբաղվում են ինչպես զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների՝ զինվորական ծառայության վայրի փոփոխությամբ պայմանավորված հարմարեցման, այնպես էլ պահեստագործ արձակված քաղաքացիների զբաղվածության խնդիրներով: Կենտրոններն աջակցում են նաև զինծառայողներին՝ երեխաների խնամքի, նրանց ընտանիքներին իրավաբանական օգնության տրամադրման, ֆինանսական խորհրդատվության և այլ հարցերում²²²:

Զինվորական ծառայությունից հետո զրկվելով համեմատաբար բարձր աշխատավարձից, բոլոր տեսակի բավարարումներից և արտոնություններից՝ նախկին զինծառայողներն արդեն հասուն տարիքում ստիպված են լինում լուծել սոցիալ-կենցաղային բազմաթիվ խնդիրներ, բախվում են անհաղթահարելի դժվարությունների:

Նախկին զինծառայողների համար զբաղվածության աջակցությանը նպաստակաուղղված պետական ծրագրեր նախատեսված չեն, ինչի հետևանքով նրանց մեծամասնությունը չեն կարողանում ինքնուրույն լուծել զբաղվածության խնդիրը, հայտնվում են սոցիալ-հոգեբանական դժվարին իրավիճակում և ստիպված մեկնում են արտագնա աշխատանքի, ինչը ժողովրդագրական, ընտանեկան և այլ խնդիրներից բացի՝ հանգեցնում է որակյալ գորահավաքային ռեսուրսների նվազեցմանը և զինված ուժերի մարտունակության անկմանը:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերից երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքով զինվորական ծառայությունից արձակված նախկին զինծառայողները, որպես կանոն, բարձրագույն կրթությամբ և կազմակերպչական հմտություններով օժտված աշխատունակ անձինք են, ովքեր ծառայության ընթացքում ձեռք բերած ղեկավարման հարուստ փորձի, կատարողական բարձր կարգապահության, սկզբունքայնության և նախաձեռնողականության շնորհիվ կարող են նշանակալի ներդրում ունենալ երկրի հասարակական-քաղաքական բնագավառում և տնտեսության տարբեր ոլորտներում:

4. Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնությունների տրամադրման առաջարկներ

²²² Benefits, <http://www.goarmy.com/benefits/soldier-and-family-services.html>

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են Ռուսաստանի Դաշնության, ԱՊՀ անդամ այլ պետություններում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար արտոնություններ և սոցիալական երաշխիքներ սահմանող իրավական ակտերը:

Ուսումնասիրությամբ առանձնացվել են նշված երկրներում զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին վերապահված ոչ ֆինանսական և այլ արտոնությունները, որոնք համեմատական-իրավական վերլուծության են ենթարկվել ՀՀ գործող օրենսդրության իրավակարգավորումների հետ և արդյունքում մշակվել են զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական արտոնություններ տրամադրելու առաջարկներ:

Ուսումնասիրության և ներկայացված առաջարկների խնդիրներն են ազգ-բանակ գաղափարի շրջանակներում՝

1. ստեղծել օրենսդրական հիմքեր, որպեսզի հասարակության բոլոր անդամները ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի հիման վրա իրենց գործունեության շրջանակներում ներգրավված լինեն, նպաստեն կամ օժանդակեն Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման համակարգի խնդիրների լուծմանը

2. սահմանել հասարակական բոլոր ոլորտներում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ, որոնք իրենց համակցության մեջ կբարձրացնեն Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող կամ անցած զինծառայողների, հատկապես սպայական կազմի զինծառայողների կարգավիճակը և զինվորական ծառայության հեղինակությունը

3. մշակել իրավական ակտեր կամ գործող իրավական ակտերում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք կսահմանեն ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայություն անցած կամ անցնող սպայական կազմի, ինչպես նաև Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած, մահացած կամ զոհված զինծառայողների ընտանիքների անդամների առաջնահերթության իրավունքը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից սահմանված բոլոր ընթացակարգերում:

Ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրել հետևյալ ոչ ֆինանսական արտոնությունները՝

1. Աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք

ՌԴ աշխատանքային օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն գործատու ընկերությունում աշխատողների թվաքանակի և հաստիքների կրճատման դեպքերում աշխատանքի պահպանման նախապատվության իրավունքը տրվում է առավել աշխատունակ կամ բարձր որակավորում ունեցող անձանց: Աշխատունակության և որակավորման չափորոշիչների հավասարության դեպքում ի թիվս այլ անձանց աշխատանքի պահպանման նախապատվության իրավունքը վերապահված է նաև

Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած անձանց:

Նմանատիպ մոտեցում է ամրագրվել նաև Մոլդովայի աշխատանքային օրենսգրքում: Մասնավորապես, օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն աշխատունակության և որակավորման չափորոշիչների հավասարության դեպքում ի թիվս այլ անձանց աշխատանքի պահպանման նախապատվության իրավունքը վերապահված է պատերազմի հետևանքով սահմանափակ կարողություններ ունեցող անձանց և *գոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամներին*:

«Զինծառայողների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն պարտադիր զինվորական ծառայության գորակոչված զինծառայողների մեկ երեխա ունեցող ամուսինները (կանայք) աշխատողների թվաքանակի և հաստիքների կրճատման դեպքերում ունեն աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք նախատեսված չէ:

Հարկ է նշել, որ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն զինծառայողները (պայմանագրային) օգտվում են աշխատանքում թողնվելու նախապատվության իրավունքից: Մասնավորապես՝ աշխատողների թվակազմի կամ հաստիքների կրճատման ժամանակ այլ հավասար պայմանների դեպքում, զինված ուժերի շարքերից սահմանված կարգով արձակվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, զինծառայողները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, օգտվում են աշխատանքում թողնվելու նախապատվության իրավունքից:

Առաջարկվում է նշված դեպքերում աշխատանքի պահպանման նախապատվության իրավունք վերապահել ժամկետային պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած) զինծառայողների, պարտադիր ժամկետային զինծառայություն անցնող զինծառայողների *ընտանիքների անդամներին* (զինվորական ծառայության ժամկետում), Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական

գործողությունների մասնակիցների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին և նրանց *ընտանիքների անդամներին*, ինչպես նաև պաշտպանության ժամանակ կամ զինվորական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների *ընտանիքների անդամներին*:

2. Չվճարվող արձակուրդի տրամադրման պարտադիր կարգ

ՌԴ աշխատանքային օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն գործատուն *պարտավոր է* գրավոր դիմումի հիման վրա տրամադրել չվճարվող արձակուրդ՝

1) Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին՝ տարեկան մինչև 35 օր տևողությամբ

2) զինվորական պարտականությունների կատարման ժամանակակ զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին և ամուսնուն՝ տարեկան մինչև 14 օր տևողությամբ:

Տաջիկստանի աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն աշխատողի դիմումի հիման վրա պարտադիր կարգով տարեկան մինչև 14 օր տևողությամբ չվճարվող արձակուրդ է տրամադրվում՝

1) Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին և նրանց հավասարեցված անձանց.

2) Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողներին և ամուսիններին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն աշխատողի պահանջով չվճարվող արձակուրդի պարտադիր տրամադրման առանձին կատեգորիաների անձանց ցանկում նախատեսված չեն Հայաստանի պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողները և ամուսինները: Այնուամենայնիվ՝ նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ: Քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ ոչ ավելի, քան երեսուն օր:

Սակայն, նշված իրավանորմի վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխատանքային պայմանագրերով սահմանված դեպքերում կամ կողմերի համաձայնությամբ աշխատողին *կարող է* տրամադրվել չվճարվող արձակուրդ: Նույն կերպ՝ հայեցողական և կողմերի համաձայնությամբ չվճարվող արձակուրդ տրամադրվում է նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին: Մինչդեռ՝ վերը նշված երկրներում չվճարվող արձակուրդ պարտադիր կարգով՝ գրավոր դիմումի հիման վրա

տրամադրվում է նաև Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողներին և ամուսիններին:

Առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասում՝ ի թիվս պարտադիր կարգով չվճարվող արձակուրդ ստացող այլ անձանց, ներառել նաև պաշտպանության ժամանակ զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ծնողներին և ամուսիններին:

3. Ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության արտոնություն

Բելառուսի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 168-րդ հոդվածը նվիրված է արձակուրդների տրամադրման առաջնահերթությանը: Համաձայն այդ հոդվածի արձակուրդների տրամադրման հերթականությունը որոշվում է գործատուի կողմից հաստատված գրաֆիկով: Միաժամանակ, գործատուն պարտավոր է արձակուրդների տրամադրման գրաֆիկը կազմելիս հաշվի առնել նշված հոդվածում թվարկված առանձին կատեգորիայի անձանց ցանկությունը: Այդ անձինք են՝ Հայրենական Մեծ պատերազմի, այլ երկրներում մարտական գործողությունների մասնակիցները, ինչպես նաև զինծառայողների կանայք (ամուսինները), որոնց ցանկության դեպքում արձակուրդ է տրվում իրենց զինծառայող ամուսինների արձակուրդի ժամանակահատվածում:

Թուրքմենստանի աշխատանքային օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն ամենամյա հիմնական արձակուրդը աշխատողի ցանկությամբ պարտադիր տրամադրվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողի կնոջը, ով ունի մեկ երեխա:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ամենամյա արձակուրդի տրամադրման հերթականության կարգը սահմանվում է կոլեկտիվ պայմանագրով, իսկ նման պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի համաձայնությամբ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն *մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը* աշխատողի խնդրանքով ամենամյա արձակուրդ տրամադրվում է կանանց հղիության ու ծննդաբերության արձակուրդից առաջ կամ հետո կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Այստեղ հարկ է նշել, որ, օրինակ, Տաջիկստանի աշխատանքային օրենսգրքի 92-րդ հոդվածի համաձայն ամենամյա արձակուրդը տրամադրվում է գործատուի մոտ առաջին տարում ոչ պակաս, քան 11 ամիս աշխատելուց հետո: Մակայն նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն պարտադիր ժամկետային զինվորական ծառայողների համար սահմանված է այլ՝ 3-ամսյա ժամկետ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն *անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո* ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության իրավունք ունեն՝ մինչև տասնութ տարեկան աշխատողները, ինչպես նաև հղի կանայք և մինչև 14 տարեկան երեխա խնամող աշխատողը:

Հարկ է նշել, որ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածում զինծառայողների համար արդեն իսկ ամրագրված է նման կարգավորում:

Մասնավորապես՝ հերթական արձակուրդի ժամանակը որոշելու իրավունք վերապահվում է՝ մարտական գործողությունների մասնակիցներին, մինչև 16 տարեկան 3 և ավելի երեխա ունեցող զինծառայողներին, ինչպես նաև հաշմանդամ ամուսին կամ երեխա ունեցող զինծառայողներին:

Առաջարկվում է սահմանել մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը և դրա լրանալուց հետո ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության առաջնահերթության իրավունք, ինչպես նաև մինչև անընդմեջ աշխատանքի վեց ամիսը լրանալը արձակուրդի իրավունք՝ ժամկետային պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի (այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ կամ համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ ավարտած) զինծառայողների, պարտադիր ժամկետային զինծառայություն անցնող զինծառայողների ընտանիքների անդամներին (զինվորական ծառայության ժամկետում), Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքների անդամներին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, ինչպես նաև պաշտպանության ժամանակ կամ զինվորական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամների համար:

4. Առաջին աշխատատեղի իրավունք

Բելառուսի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 281-րդ և 342-րդ հոդվածների համաձայն Բելառուսի զինված ուժերից և այլ զորքերից սահմանված կարգով արձակված պարտադիր ժամկետային զինծառայողների համար պետությունը երաշխավորվում է առաջին աշխատատեղի իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն առաջին աշխատատեղ է համարվում այն աշխատատեղը, որը տրամադրվում է պետական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին, հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկություններ ունեցող անձանց, ինչպես նաև զինված ուժերից և այլ զորքերից սահմանված կարգով արձակված պարտադիր ժամկետային զինծառայողներին, ովքեր մինչև գորակոչվելը աշխատանքային հարաբերությունների մեջ չեն գտնվել:

2006 թվականի դեկտեմբերի 19-ի «Առաջին աշխատատեղի տրամադրման կարգը և պայմանները հաստատելու մասին» Բելառուսի Հանրապետության նախարարների խորհրդի որոշմամբ կարգավորվում են առաջին աշխատատեղի իրավունքի տրամադրման կարգն ու պայմանները:

Առաջին աշխատատեղի իրավունքի իմաստը կայանում է նրանում, որ պետությունը իրականացնում է մասնավոր կազմակերպություններում և պետական մարմիններում առկա թափուր աշխատատեղերի կամ նախատեսվող՝ նոր աշխատատեղերի հաշվառում: Հաշվառումից հետո կատարում է աշխատատեղի «ամրագրում» և հետագայում ըստ մասնագիտությունների բաշխում է կատարում՝

ապահովելով առաջին աշխատատեղի իրավունք ունեցող անձանց աշխատանքը: «Աշխատատեղի ամրագրումը» ենթադրում է պետական մարմինների կամ մասնավոր կազմակերպությունների կողմից որոշակի քանակով պարտադիր զինվորական ծառայությունից նոր գորացրված անձանց աշխատանքով ապահովելու պարտականություն:

Առաջարկվում է պատասխանատու գերատեսչությունների մասնակցությամբ մշակել մեխանիզմ, որով յուրաքանչյուր պետական մարմին թափուր աշխատատեղերի առկայության կամ նոր աշխատատեղերի ստեղծման դեպքում այդ աշխատատեղերից մի մասը կառանձնացնի և կնախատեսի համապատասխան մասնագիտություն ունեցող և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված անձանց համար:

Նմանատիպ «աշխատատեղի ամրագրման» մեխանիզմ անհրաժեշտ է մշակել նաև բոլոր մասնավոր կազմակերպությունների համար՝ ապահովելով ազգ-բանակ գաղափարի շուրջ բոլորի համախմբման և ներգրավվածության՝ սույն ծրագրի խնդիրը:

Բացի այդ, իրավասու պետական մարմինները և ուսումնական հաստատությունները պետք է մինչև գորացրված զինվորական ծառայողի աշխատանքի ընդունվելը՝ անհրաժեշտության դեպքում ապահովեն նրա վերապատրաստման գործընթացը:

Նշված մեխանիզմի ներդրումը կնպաստի պարտադիր զինվորական ծառայությունից նոր արձակված երիտասարդների զբաղվածության ապահովմանը, նոր ընտանիք ստեղծելուն և այլն: Բացի այդ, նոր գորացրված երիտասարդին աշխատանքով ապահովելը կնվազեցնի նրա՝ Հայաստանի Հանրապետությունից հեռանալու կամ արտագաղթելու հավանականությունը:

5. Զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք

«Զինծառայողների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն զինծառայողների ամուսիններն իրավունք ունեն զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման չափանիշ է անձի հաշմանդամություն ունենալու հանգամանքը, անձի տարիքը, անձի արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկը, անձի ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադառնալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, լիազորված մարմնում հաշվառվելու հանգամանքը և այլն: Նշված հոդվածով սահմանված հիմքերով և ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշմամբ սահմանված անմրցունակության որոշարկման կարգով աշխատաշուկայում գործազուրկին անմրցունակ ճանաչելու դեպքում անձը ձեռք է բերում «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով

սահմանված լրացուցիչ իրավունքներ:

Այդ հոդվածի համաձայն աշխատաշուկայում անմրցունակ ճանաչված գործազուրկը ձեռք է բերում հետևյալ լրացուցիչ իրավունքները՝

1) լիազորված մարմնի կողմից զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք:

2) փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության իրավունք

3) լիազորված մարմնի հետ համագործակցող ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության իրավունք:

4) սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության իրավունք:

Նշված հոդվածով սահմանված են նաև դրամական կամ ֆինանսական արտոնություններ:

Առաջարկվում է սահմանել, որ պաշտպանության ժամանակ զոհված կամ մահացած զինծառայողների գործազուրկ ամուսին կամ ընտանիքի անդամ (որոշակի լրացուցիչ պայմաններով) լինելը աշխատաշուկայում անմրցունակ ճանաչելու չափանիշ է՝ դրանով իսկ ապահովելով նրանց՝ վերը նշված 23-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերով սահմանված լրացուցիչ իրավունքներից օգտվելը:

6. Ուսումնական հաստատությունը փոխելու իրավունք

«Զինծառայողների կարգավիճակի մասին» ՌԴ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն զինվորական ծառայության վայրի փոփոխությամբ պայմանավորված բնակության վայրը փոխելու դեպքում զինծառայողի ամուսինը և ընտանիքի անդամները, ովքեր մինչև նոր բնակավայր տեղափոխվելը ուսումնառություն են անցնում պետական ուսումնական հաստատություններում իրավունք ունեն զինվորական ծառայության նոր վայրում գործող ուսումնական հաստատություններում ընդունելության իրավունք:

Առաջարկվում է նշված նորմը տարածել նաև ժամկետային պայմանագրային և պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածում զինծառայողի ծառայության վայրի փոփոխությամբ պայմանավորված ընտանիքի բնակության վայրը փոխելու դեպքում զինծառայողի ամուսնու (կնոջ) կամ ընտանիքի անդամի վրա, ով մինչև բնակության նոր վայր տեղափոխվելը սովորել է պետական կամ ոչ պետական՝ հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններում:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կողմից 1993 թվականին ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի վավերացմամբ՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է բացառել կանանց նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորում, ազգային օրենսդրությամբ ամրագրել տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքը և երաշխավորել, որ պետական մարմիններն ու հաստատությունները գործեն այդ պարտավորություններին համապատասխան²²³:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջև, իսկ 2015 թվականի փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածով ամրագրվեց, որ կանայք և տղամարդիկ իրավահավասար են: Ավելին, ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ պետության քաղաքականության հիմնական նպատակներից է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը: Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունն ամրագրված է նաև 2013 թվականին ընդունված «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենքում, որի կիրարկման համար, սակայն բացակայում են գործուն մեխանիզմներ:

Կանանց իրավունքների պաշտպանության նպատակով 2016 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը Եվրոպայի խորհրդի (ԵԽ) աջակցությամբ նախաձեռնել է «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում» ծրագիրը, որը կյանքի կոչվեց ԵԽ Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրինության հետ համագործակցության արդյունքում: Ծրագիրը հիմնված է եղել Համընդհանուր պարբերաբար դիտարկման զեկույցների և հանձնարարականների, ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատարի 2014 թվականին Հայաստան կատարած այցից հետո պատրաստած զեկույցի, Խոշտանգումների դեմ կոմիտեի ամփոփիչ դիտարկումների և այլ միջազգային փաստաթղթերի վրա:

Արդյունքում 2016 թվականին կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ. մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի անձնակազմի կարողությունները զարգացնելու և ուժեղացնելու նպատակով Վրաստանում կազմակերպվեց փորձի փոխանակում Վրաստանի հանրային պաշտպանի աշխատակազմի հետ: 2016 թվականի վերջում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի համար կազմակերպվեց հատուկ դասընթաց: Դասընթացավարների թվում էին թե՛ միջազգային փորձագետները, թե՛ Հայաստանի ՀԿ-ների ներկայացուցիչները, ովքեր կիսվեցին բռնության գոհերի հետ աշխատելու իրենց փորձով և այդ ոլորտի գործնական գիտելիքով: 2016 թվականին իրականացվեց Հայաստանի քրեական օրենսդրության և Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին»

²²³ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 2:

կոնվենցիայի համեմատական վերլուծություն, որի նպատակն է վերհանել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրության բացերը և համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Ամբողջ ծրագրի իրականացման գործընթացում կարևորվել է ներառականության սկզբունքը, ինչը ենթադրել է ՀԿ ներկայացուցիչների պարտադիր մասնակցություն, ինչպես նաև աշխատանք մի շարք պետական մարմինների հետ:

Չնայած նրա, որ օրենսդրությամբ ամրագրված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը, և օրենսդրության ուսումնասիրության արդյունքում կանանց նկատմամբ խտրականություն պարունակող իրավական նորմեր չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ, 2016 թվականի ընթացքում Հայաստանում շարունակվել են արձանագրվել կանանց իրավունքների ոտնահարման և վերջիններիս նկատմամբ խտրականության դրսևորման դեպքեր: Նման իրավիճակը պայմանավորված է ինչպես իրավական մեխանիզմների բացակայությամբ, այնպես էլ՝ հասարակությունում կանանց դերի նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպային մոտեցումներով:

1. Կանանց նկատմամբ բռնություն

Կանանց նկատմամբ խտրականության դրսևորման առավել տարածված ձևերից շարունակում է մնալ կանանց նկատմամբ բռնությունը, որը միջազգային նորմերին²²⁴ համապատասխան, գնահատվում է որպես մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում: Չնայած կառավարությունների, ինչպես նաև միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ այս խնդրի կանխարգելման և դրա դեմ պայքարի շարունակական ջանքերին՝ կանանց նկատմամբ բռնությունը լուրջ մտահոգություն է առաջացնում աշխարհի բոլոր մասերում:

Կանանց նկատմամբ բռնության առավել տարածված տեսակներից է ընտանեկան բռնությունը, որը դրսևորվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ հոգեբանական, սեռական և տնտեսական ձևերով: Կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունն ունեն ինչպես ուղղակի, այնպես էլ՝ անուղղակի ազդեցություն: Բռնությունը բացասաբար է անդրադառնում թե՛ անմիջականորեն բռնության ենթարկված անձի (օրինակ՝ կնոջ) և թե՛ բռնությանը ականատես եղած և բռնության միջավայրում մեծացող երեխաների հետագա զարգացման վրա: Նշված իրավիճակը խարխալում է նաև ընտանեկան արժեքները: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը բացասաբար է ազդում նաև երկրի տնտեսության վրա: Այսպես, որոշ ուսումնասիրությունների նախնական տվյալներ ցույց են տալիս, որ Հայաստանին ընտանեկան բռնության հասցրած տնտեսական կորուստը կազմում է

²²⁴ Տե՛ս, օրինակ, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄՍԿ-ի կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարական, <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm>

400.000-ից մինչև 1.1 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ կանանց նկատմամբ տնտեսական բռնության արդյունքում, տնտեսությունում չի գոյանում գրեթե 6.5 միլիոն դոլար:²²⁵

Իրավասու մարմինների կողմից տրամադրված տվյալները վկայում են ընտանեկան բռնության տարբեր տեսակների առկայության մասին: Այսպես, 2016 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ընտանեկան բռնության 756 դեպք, որից 699-ը ֆիզիկական բռնության դեպք, 4-ը սեռական բռնության դեպք և 53 դեպք կապված բռնության այլ տեսակների հետ: Նշված դեպքերից 3-ը կատարվել է կենսակցի կողմից, 471-ը՝ ամուսնու կողմից կնոջ նկատմամբ, 20-ը՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ, 66-ը՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ, 99-ը՝ զավակի կողմից ծնողի նկատմամբ, 97-ը՝ ընտանիքի այլ անդամների կողմից: ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տվյալների համաձայն՝ 2016 թվականի ընթացքում ընտանեկան բռնության 311 դեպքի առթիվ հարուցվել են քրեական գործեր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-106-րդ, 109-114-րդ, 117-121-րդ, 124-րդ, 131-133-րդ, 137-142-րդ, 144-րդ, 165-174-րդ, 185-186-րդ և այլ հոդվածներով: Վերոնշյալ գործերից 89-ը 89 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 206 գործի վարույթ կարճվել է (40-ը արդարացման հիմքով, 166-ը՝ ոչ արդարացման հիմքով), 7 քրեական գործի վարույթ կասեցվել է, որից 6-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու հիմքով, 1-ը՝ այլ հիմքով:

Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի միասնական վիճակագրություն չի վարվում, ինչի արդյունքում բացակայում են բռնության դեպքերի, դրանց առաջացման պատճառների ու հատկապես խոցելի խնդրի վերաբերյալ պաշտոնական տվյալներ: Այս մասին նշվել է նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի կողմից²²⁶: Ավելին, առկա պաշտոնական տվյալները տարբերվում են ոչ պաշտոնական տվյալներից: Մասնավորապես, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռալիցիայի հրապարակած տեղեկատվության համաձայն՝ 2016 թվականին գրանցվել է ընտանեկան բռնության վերաբերյալ մոտ 5000 զանգ: Խնդիրը նախ և առաջ այն է, որ օրենսդրությամբ տրված չէ «ընտանեկան բռնություն» միասնական հասկացությունը: Արդյունքում յուրաքանչյուր իրավասու մարմին տվյալները հավաքագրում է ըստ իր մեկնաբանության: Բացի այդ, շատ հաճախ ընտանեկան բռնության ենթարկված կանայք վստահության և իրավական կառուցակարգերի պակասի պատճառով նախընտրում են դիմել միայն ոլորտի հասարակական կազմակերպություններին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2016 թվականին ևս ստացել է մի շարք ահազանգեր ընտանեկան բռնության դեպքերի մասին, որոնց ընթացքում պարզ է դարձել, որ կանայք, հաշվի առնելով մի շարք գործոններ (ամոթ, իրավապահ մարմինների նկատմամբ անվստահություն, պետական բավարար աջակցության

²²⁵ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf

²²⁶ Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետ 37:

բացակայության), շարունակում են խուսափել իրենց նկատմամբ կիրառվող բռնության մասին բարձրաձայնումից:

Արդյունքում կարող ենք եզրակացնել, որ ընտանեկան բռնության դեպքերի վերհանման, կանխարգելման և այդ դեպքերի լուծման հարցում խնդրահարույց է թե՛ օրենսդրությունը, թե՛ վերջինիս կիրառումը:

Օրենսդրական խնդիրներ

Իրավապահ մարմինների, հետևաբար նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործողությունները խիստ սահմանափակ են ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելման հարցում՝ հաշվի առնելով օրենսդրական կարգավորումների բացակայությունը: Առ այսօր Հայաստանը չունի ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին օրենք:²²⁷ Խնդրի մասին բարձրաձայնում է թե՛ Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն, թե՛ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական իրավունքների կոմիտեն²²⁸, թե՛ «Հյուման Ռայթս Ուոչ» իրավապաշտպան կազմակերպությունը (Human Rights Watch)²²⁹, թե՛ մի շարք այլ միջազգային կազմակերպություններ: Ավելին, 2015 թվականին Համընդհանուր պարբերական դիտարկման ընթացքում Հայաստանի վերաբերյալ մի շարք երկրների դիտարկումներ առնչվում էին հենց ընտանեկան բռնության մասին օրենսդրության բացակայությանը:²³⁰

Խնդիրն այն է, որ միջազգային նորմերով ընտանեկան բռնություն համարվող ոչ բոլոր գործողություններն են ներպետական օրենսդրությամբ որակվում որպես քրեորեն պատժելի արարք և, ըստ այդմ, իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ այդ դեպքերին: Այսպես, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են, այդ թվում նաև զուգընկերների միջև: ՀՀ օրենսդրությամբ կարգավորվում են ֆիզիկական բռնության որոշ տեսակները, ինչպես նաև սեռական բռնությունը, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով համարվում են քրեորեն պատժելի արարք (օրինակ՝ ծեծ, բռնաբարություն

²²⁷ Ընտանեկան բռնության մասին օրենսդրության մշակումը բխում է ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայով, Պեկինի 4-րդ համաշխարհային համաժողովի (1995 թվական) հանձնարարականներով, ԵՖ Կանանց և սղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերով, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջներով և միջազգային այլ փաստաթղթերով ստանձնած պարտավորություններից և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի առաջարկներից:

²²⁸ <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmlBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkGuOgXwB0Dv54x9D%2FtTvtKqVlVcgKieaWt6S0CJmSRHd2YbUGKlOrDzjo9z47iNYCZgmYgv27A6%2F5Jw0ZBjno1vpNcA>

²²⁹ <https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/armenia>

²³⁰ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_l.8.pdf

և այլն): Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ, օրինակ՝ հոգեբանական և տնտեսական բռնությունը: Մինչդեռ, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի տվյալներով՝ ընտանեկան բռնության տեսակներից Հայաստանում առավել հաճախ հանդիպում են հոգեբանական բռնությունը՝ հետամտում, ֆինանսական կախվածության մեջ գցելը, սոցիալական մեկուսացումը և այլն:

«Ընտանեկան բռնություն» հասկացությունն ամրագրված է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում, որի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ ընտանեկան բռնություն է համարվում ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառումը կամ տնտեսական միջոցներից զրկումը: Արդյունքում նշյալ օրենքով սահմանված դեպքերից ոչ բոլորի համար են նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Բացի այդ ՀՀ քրեական օրենսդրության կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են մի շարք օրենսդրական խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարին: Այսպես, միջազգային փաստաթղթերի և մի շարք երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետ միջոց է դրա քրեականացումը: Ընդ որում՝ դա կարող է դրսևորվել կամ մեկ հանցակազմի սահմանմամբ, կամ ընտանեկան բռնության յուրաքանչյուր տեսակի համար առանձին հանցակազմ սահմանելով: Ավելին, միջազգային ստանդարտների համաձայն՝ պատիժը ծանրացնող հանգամանք պետք է հանդիսանա այն դեպքը, երբ իրավախախտումը կատարվել է ներքին օրենսդրությամբ ճանաչված ներկա կամ նախկին ամուսնու (կնոջ) կամ զուգընկերոջ նկատմամբ, ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից, ինչպես նաև երեխայի ներկայությամբ²³¹, ինչը սակայն ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանված չէ: Վերոնշյալ հանգամանքները որպես ծանրացուցիչ հանգամանք դիտարկելու վերաբերյալ առաջարկներ են ներկայացվել նաև միջազգային կազմակերպությունների կողմից²³² և համապատասխան կարգավորում են գտել մի շարք երկրներում:²³³

Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է

²³¹ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 46:

²³² «Ընտանեկան բռնությունից պաշտպանության մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 28-ին ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիք (N: GEND-KYRG/261/2014 [AIC]), 3.2 մաս, 51-րդ պարբերություն:

²³³ Օրինակ՝ Ավստրիայում տուժողի և բռնություն գործադրած անձի միջև ընտանեկան կապը կամ նախկին ամուսիններ լինելու հանգամանքը, այն դեպքում, երբ բռնարարը բնակվել է տուժողի հետ համատեղ իրավախախտումը կատարելու պահին, կամ չարաշահել է տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը հանդիսանում է ծանրացնող հանգամանք, <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806a6b72>

հանդիսանում տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման մեղմացնող հանգամանք նախատեսելը ընտանեկան բռնության դեպքում համահունչ չէ միջազգային չափանիշներին: Մասնավորապես, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 42-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների անընդունելի արդարացումներ են համարվում՝ հանուն, այսպես կոչված, «պատվի» կատարվող հանցագործությունները: Սա վերաբերում է, մասնավորապես, այն պնդումներին, որ տուժողի կողմից խախտվել են պատշաճ վարքագծի մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդության նորմերը կամ սովորույթները:

Մեկ այլ խնդիր է հանրային և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի իրավական կարգավորումները ընտանեկան բռնության դեպքերում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ կատարված հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով: Մասնավոր հետապնդման գործեր են համարվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը: Մնացած բոլոր հանցագործությունների վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր:

Մասնավոր մեղադրանքի պարագայում, երբ տուժողը հաշտվում է իրավախախտում կատարելու մեջ կասկածվող անձի հետ կամ հետ է վերցնում իր դիմումը, քրեական հետապնդումն այդ անձի նկատմամբ դադարեցվում է: Մինչդեռ միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության դեպքերում մասնավոր մեղադրանքի ինստիտուտի կիրառումն ու հաշտության հիմքով գործի վարույթը կարճելու օրենսդրական պարտադիր պայմանը վիճահարույց է:

Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ներկայացված հանձնարարականի համաձայն՝ անդամ պետությունները պետք է քաջալերեն դատախազությանը, որպեսզի վերջիններս կանանց և երեխաների նկատմամբ բռնության դեպքերը համարեն ծանրակշիռ հանգամանք այդ դեպքերը հանրային մեղադրանքի կարգով քննելու համար:²³⁴ Համանման դիրքորոշում է ներկայացված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Օփուզն ընդդեմ Թուրքիայի գործով: Մասնավորապես, դատարանը նշել է, որ հաշվի առնելով բռնություն կիրառած անձի կողմից նախկինում կատարված իրավախախտումների լրջությունն ու ծանրությունը, քրեական հետապնդում իրականացնող մարմինները պետք է հնարավորություն ունենան շարունակելու գործի քննությունը՝ որպես հանրային

²³⁴ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեից թիվ (2002)5 հանձնարարական:

մեղադրանքի գործ, անկախ նրանից՝ տուժողը հետ է վերցրել իր բողոքը, թե՛ ոչ:²³⁵

Հայաստանում հանրային և մասնավոր մեղադրանքի կարգով գործերի քննության վերաբերյալ մտահոգություն է հայտնել նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն և առաջարկել կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեպքերը քննել հանրային մեղադրանքի կարգով:²³⁶

Հարցի կարգավորման կապակցության 2014 թվականին ՀՀ քննչական կոմիտեի նախագահի կողմից ընդունվել է «Մասնավոր մեղադրանքի կարգով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու միասնականության վերաբերյալ ուղեցույցը հաստատելու մասին» հրամանը: Ըստ նշված հրամանի՝ մասնավոր կարգով հետապնդվող ընտանեկան բռնության գործերով, դիմողի (տուժողի) կողմից իր դիմումը (բողոքը) հետ վերցնելու դեպքում քրեական գործը հարուցվում է կամ քրեական վարույթը շարունակվում է հանրային կարգով, եթե մեծ է դիմողի նկատմամբ կրկին անգամ հանցագործություն կատարելու վտանգը: Ավելին, ընտանեկան բռնության գործերով, դիմողի բողոքի բացակայության պայմաններում, հարուցված քրեական գործով պատշաճ քննության շրջանակներում քննիչը պարզում է հանցանքի ծանրությունը, տուժողին պատճառված վնասի բնույթը (ֆիզիկական, թե հոգեբանական վնաս), անձի կողմից զենք գործադրելը, հարձակումից հետո սպառնալիքների առկայությունը, տանը բնակվող երեխաների վրա ունեցած ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), անձի կողմից կրկին հանցագործություն կատարելու հավանականությունը, տուժողի կամ մեկ այլ անձի առողջության կամ անվտանգության համար շարունակական վտանգի հավանականությունը և մի շարք այլ հանգամանքներ:²³⁷ Այս հարցը, սակայն ունի համակարգային լուծման կարիք:

Ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարին խոչընդոտում է նաև տուժողների համար պաշտպանական բավարար միջոցների բացակայությունը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Նույն օրենսգրքի 98¹-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանության միջոցներն են, օրինակ՝ անձին պաշտոնապես նախագործացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը և

²³⁵ Օլուոգն ընդդեմ Թուրքիայի 2009 թվականի սեպտեմբերի 9-ի գործով վճիռ, գանգատ թիվ 33401/02, կետեր 128, 145:

²³⁶ Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6):

²³⁷ <http://investigative.am/news/view/hraman2.html>

այլն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, սակայն, որ օրենքով սահմանված այս միջոցները բավարար չեն և ընտանեկան բռնության դեպքերում չեն կիրառվում:

Ավելին, ընտանեկան բռնությունից տուժած անձինք մի շարք դեպքերում չեն կարողանում արդյունավետ օգտվել իրենց իրավունքների պաշտպանության մեխանիզմներից, ինչպիսին է դատական ներկայացուցչությունը: Այսպես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ հանրային պաշտպանություն է համարվում նշված հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը: Նշված հոդվածով հստակ ամրագրվում են այն դեպքերը, երբ անձը կարող է օգտվել հանրային պաշտպանի ծառայություններից (օրինակ՝ 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, դատապարտյալները, գործազուրկները և այլն): Ստացվում է, որ ընտանեկան բռնության զոհերը, եթե չեն հանդիսանում նշված հոդվածով ամրագրված խմբերի ներկայացուցիչներ, չեն կարող օգտվել անվճար իրավաբանական օգնությունից: Արդյունքում Հայաստանում ընտանեկան բռնության զոհերին անվճար իրավաբանական օգնություն տրամադրվում է միայն հասարակական կազմակերպությունների կողմից:

Վերոնշյալ և մի շարք այլ հարցերի կարգավորման համար 2016 թվականին մշակվել է «Ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն, ընդհանուր առմամբ, համապատասխանում է միջազգային չափանիշներին: Նախագծում, սակայն առկա են որոշակի բացեր և կատարելագործման ենթակա ամրագրումներ: Պաշտպանի աշխատակազմի կողմից նախագծի քննարկման արդյունքում ներկայացվել են մի շարք առաջարկներ:

Գործնական խնդիրներ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի գործնական խնդիրներից են հասարակությունում առկա կարծրատիպերը, որոնց պատճառով բազմաթիվ դեպքեր մնում են առանց քննության: Ընտանեկան բռնության վերաբերյալ թե՛ մամուլում, թե՛ հասարակության մեջ, թե՛ իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների մոտ առկա են կարծրատիպային մոտեցումներ, որոնք ավելի են դժվարացնում բռնության դեպքերի բացահայտումը և դրա դեմ պայքարը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տղամարդ հարցվածների մեկ երրորդից կամ նույնիսկ կեսից ավելին գենդերային հիմնախնդրի առնչությամբ սուբյեկտիվ են: Նրանք արդարացնում են զուգընկերոջ դեմ ֆիզիկական բռնության գործադրումը: Հարցվածների 35.7 տոկոսը, որից 44.6 տոկոսը տղամարդ են և 27.8 տոկոսը՝ կանայք, համաձայն են, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ հանուն ընտանիքի միասնության:²³⁸ Որոշ դեպքերում կինը ծեծի է արժանի պնդման հետ համաձայն է հարցվածների 27.7 տոկոսը, որից 35.2 տոկոսը տղամարդ և 21 տոկոսը կին են:

Նշված խնդիրները սուբյեկտիվ մեկնաբանության են ենթարկվում նաև մի շարք լրատվամիջոցների կողմից, ինչը որոշ դեպքերում հասարակության մոտ խեղաթյուրում

²³⁸ <http://www.unfpa.am/sites/default/files/IMAGES-executive%20summary-Arm.pdf>

է ընտանեկան բռնության դեմ պայքարի անհրաժեշտությունը:²³⁹

Կարծրատիպային մոտեցումն իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների կողմից շատ հաճախ բերում է կրկնակի զոհացման, ինչը կարող է հանդիսանալ խոչընդոտ հետազայում նման դեպքերի բացահայտման համար, քանզի մի շարք դեպքերում տուժողները չեն ցանկանա կրկին դիմել իրավասու մարմիններին: Հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արձանագրվել է նաև դատարանի ու նախաքննության մարմինների կողմից երկակի ստանդարտների կիրառման դեպքեր, որի հիմքով էլ խախտվել է տուժողի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքը:²⁴⁰ Խնդրի մասին բարձրաձայնել է նաև Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն, որը նշել է, որ բռնության դեպքերի մասին բարձրաձայնման խոչընդոտ է հանդիսանում իրավապահ մարմինների կողմից կարծրատիպերի պատճառով բռնությունն արդարացնելը:²⁴¹

Ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարի խոչընդոտներից է նաև բռնության զոհերին և նրանց ընտանիքներին պետության կողմից տրամադրվող օգնության բացակայությունը: «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ կացարանը տրամադրվում է ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ որպես ժամանակավոր օթևան, ինչպես նաև սահմանվում է, որ կացարանով ապահովվելու կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Այնուամենայնիվ, պետության կողմից ֆինանսավորվող և հիմնադրված կացարաններ առկա չեն:

Թրաֆիքինգ և շահագործում

Կանանց նկատմամբ բռնության ձև է նաև թրաֆիքինգը:²⁴² ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերով խորհրդի անդամ է, որին կից աշխատանքային խմբում ներկայացված է նաև աշխատակազմի համապատասխան ներկայացուցիչը:

Աշխատանքային խմբի կողմից մշակվեց և ընդունվեց «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի 2016-2018 թվականների ազգային ծրագիրը»: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում նշել, որ քննարկվող ոլորտում նշված դրական զարգացումներին զուգահեռ, շարունակում է արդիական մնալ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման խնդիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

²³⁹ <http://coalitionagainstviolence.org/hy/%D5%A2%D5%B8%D5%B2%D5%B8%D6%84%D5%AB-%D5%A1%D5%AF%D6%81%D5%AB%D5%A1-%D5%B8%D5%B9-%D5%AF%D5%AB%D5%BD%D5%A1%D5%A2%D5%A1%D6%81-%D5%AC%D5%B8%D6%82%D5%BD%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80/>

²⁴⁰ <http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321>

²⁴¹ Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի՝ Հայաստանի 4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, http://tbinternet.ohchr.org/Treaties/CAT/Shared%20Documents/ARM/INT_CAT_COC_ARM_25977_E.pdf

²⁴² ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 132:

1. ամրագրել ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի օրենսդրական բավարար և արդյունավետ կառուցակարգեր,
2. համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ քրեական և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում՝ վերջիններս համապատասխանեցնելով ընտանեկան բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին,
3. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում կատարել օրենսդրության փոփոխություն՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց անվճար իրավաբանական օգնության տրամադրումն ապահովելու համար,
4. կազմակերպել համապատասխան մասնագետների (քննիչներ, դատախազներ, դատավորներ և այլն) հատուկ դասընթացներ՝ կանանց նկատմամբ բռնության մասին կարծրատիպերի վերացման ուղղությամբ,
5. բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ:

2. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ

Կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է նաև, երեխաների իգական սեռով պայմանավորված, հղիության արհեստական ընդհատումը: Նշված խնդիրը պայմանավորված է ինչպես հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումներով (օրինակ՝ արու զավակ ունենալու նախապատվությունը), այնպես էլ՝ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումներով և կանանց նկատմամբ խտրականությամբ: Համանման դիրքորոշում է ներկայացրել նաև Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն:²⁴³

Հայաստանում կանանց և տղամարդկանց սեռերի հարաբերակցության նորմայից շեղումը սկսել է նկատվել դեռևս 1991 թվականից, իսկ 2000 թվականին այն հասել է մինչև 120 տղա 100 աղջիկ հարաբերակցության այն դեպքում, երբ նման հարաբերակցության համար սահմանված նորման կազմում է 102-103 տղա 100 աղջիկ հարաբերակցությունը:²⁴⁴

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ մի շարք միջազգային կազմակերպություններ կոչ են արել հրատապ միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ:²⁴⁵ Դեռևս 2011 թվականի ԵԽԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականով Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, առաջին հերթին ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց

²⁴³ Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետ 29:

²⁴⁴ [http://unfpa.am/sites/default/files/Sex-selective abortions report Arm.pdf](http://unfpa.am/sites/default/files/Sex-selective%20abortions%20report%20Arm.pdf)

²⁴⁵ 1995 թվականին Պեկինում անցկացված «Կանանց մասին» 4-րդ համաշխարհային գիտաժողովի ժամանակ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը նկարագրվել է որպես կանանց դեմ բռնության դրսևորում: Երեք տարի անց ՄԱԿ-ի Գլխավոր գազաթափոցովում «Աղջիկ երեխաների մասին» բանաձևը հավանության արժանացավ և Պետություններին կոչ արվեց «ընդունել և կիրառել օրենսդրություն»:

նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները:²⁴⁶

Խնդիրն այն նաև, որ բուժաշխատողների կողմից հղիության 12 շաբաթից հետո իրականացվող արհեստական ընդհատումների համար օրենքով անհրաժեշտ բժշկասոցիալական ցուցիչների պահպանման նկատմամբ բավարար վերահսկողություն առկա չէ: ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 12-րդ շաբաթը լրանալուց հետո հղիության արհեստական ընդհատում իրականացնելիս բուժաշխատողի կողմից հղիության բժշկասոցիալական ցուցումների դիտավորյալ կեղծ կիրառման դեպքեր չեն արձանագրվել: Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչպես են կատարվել սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխայի սեռը հիմնականում հնարավոր է նշել հղիության 12-րդ շաբաթից հետո:

Խնդրի լուծման կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարությունը իրականացրել է մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ մշակվել ու հրատարակվել է ծննդագնության հիվանդանոցային ծառայություններ մատուցող հաստատությունների աշխատակիցների, այդ թվում՝ նշված ոլորտի ղեկավարության, երեխայի սեռը որոշելու նպատակով ուլտրաձայնային հետազոտություն կատարող անձնակազմի և գինեկոլոգների համար հատուկ մեթոդաբանություն և ձեռնարկ: Ավելին, կազմակերպվել է երեխայի սեռի կանխակալ ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով հանդիպումներ համայնքների բնակիչների հետ:

Այնուամենայնիվ, խնդիրը պետք է կանխարգելել շարունակական բնույթ կրող միջոցառումների իրականացման միջոցով՝ կանանց կարողությունների զարգացման, որոշումների կայացման ազատության և այլ իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև բուժաշխատողների նկատմամբ վերահսկողության ուժեղացման բարձրացման միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք՝

1. գանգվածային լրատվության միջոցներով, կրթական ծրագրերում համապատասխան ուղղություններ ներառելով, ինչպես նաև այլ միջոցներով նպաստել հասարակությունում կանանց դերի բարձրացմանը,

2. ՀՀ առողջապահության նախարարությանը՝ վերահսկել բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցիչների պահպանումը:

3. Քաղաքական կյանքին կանանց մասնակցությունը

²⁴⁶ http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28

Կանայք Հայաստանում լիարժեքորեն ներգրավված չեն հասարակական և քաղաքական կյանքում՝ որպես որոշում կայացնողներ, չնայած նրան, որ ՄԱԿ-ի Կոնվենցիայի վավերացմամբ՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է միջոցներ ձեռնարկել հասարակական և քաղաքական կյանքում կանանց նկատմամբ խտրականության վերացման ուղղությամբ: Խնդրի մասին մշտապես բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում:

Մի շարք ուսումնասիրություններ վկայում են այն մասին, որ չնայած նրան, որ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց, այնուամենայնիվ, զբաղեցնում են պաշտոններ ստորին օղակներում:²⁴⁷ Կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող պատճառներից է այն, որ հասարակությունը կարծրատիպերի պատճառով չի ընկալում կնոջը՝ որպես քաղաքական առաջնորդի, աղավաղված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարը²⁴⁸:

Մասնավորապես, ՀՀ կառավարությունում 18 նախարարներից միայն 2-ի պաշտոնում են ներկայացված կանայք²⁴⁹, 58 տեղակալներից միայն 4-ն են կին, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր 7 մարմիններից ղեկավարի կամ ղեկավարների տեղակալների շարքում կանայք ներկայացված չեն:²⁵⁰ Կառավարության համակարգում որևէ գերատեսչությունում աշխատակազմի ղեկավարի պաշտոնում կանայք ներկայացված չեն: Ավելին, ՀՀ ազգային ժողովի պատգամավորների թվում 131 պատգամավորից միայն 12-ն են կին²⁵¹, իսկ 14 հանձնաժողովներից միայն 2-ի նախագահներն են կանայք:²⁵²

Քաղաքացիական ծառայության համակարգում բարձրագույն պաշտոններ զբաղեցնող կանանց թիվը ևս կտրուկ նվազ է տղամարդկանց թվի համեմատ: Քաղաքացիական ծառայություն իրականացնող անձանց բարձրագույն պաշտոն է զբաղեցնում 107 արական և 20 իգական սեռի ներկայացուցիչ:²⁵³ Այսպիսի ցուցանիշներ ներկայացված են դեռ այն պարագայում, երբ կանայք կազմում են ՀՀ ընդհանուր բնակչության մոտ 51.9 տոկոսը:²⁵⁴

Ցածր է նաև կանանց ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում նաև այդ ոլորտի բարձր պաշտոններում: Երևան քաղաքն անկախությունից ի վեր կին քաղաքապետ չի ունեցել, իսկ քաղաքապետի 4

²⁴⁷ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf

²⁴⁸ «ՏԻՄ ընտրություններում կանանց քաղաքական մասնակցությունը. խնդիրներ և հեռանկարներ», http://ysu.am/files/Hasmik_Shapaghatyan_Final_Report_ARM.pdf

²⁴⁹ <http://gov.am/am/structure/>

²⁵⁰ <http://gov.am/am/adjunct-bodies/>

²⁵¹ <http://www.parliament.am/deputies.php?lang=arm>

²⁵² <http://www.parliament.am/committees.php?lang=arm>

²⁵³ <http://www.csc.am/documents/statistics/13.pdf>

²⁵⁴ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում բնակչությունն ըստ սեռի կազմում են տղամարդիկ՝ 1.439.148, կանայք՝ 1.571.450, տե՛ս մանրամասն, <http://armstat.am/>

տեղակալների պաշտոններում կանայք ներկայացված չեն: Ավելին, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2016 թվականին ՏԻՄ ընտրություններում առաջադրված և հաղթած կանանց մեծ մասն անկուսակցական են: Այսպես, ԿՀՀ-ի՝ «WomenNet.am»-ին տրամադրած տվյալների համաձայն՝ 2016 թվականի սեպտեմբերի 18-ին համայնքի ղեկավար առաջադրված 10 կին թեկնածուներից 6-ն անկուսակցական էին: Սեպտեմբերի 18-ին ավագանու ընտրություններին առաջադրված է եղել 339 կին, նրանցից 217-ը եղել են անկուսակցական:²⁵⁵ Հոկտեմբերի 2-ին կայացած քվեարկության արդյունքում կանայք հաղթանակ տոնեցին Կոտայքի մարզի Նոր Երզնկա, Շիրակի, մարզի խոշորացված Ամասիա, Սյունիքի Հացավան, Շիկահող, Շրվենանց, Պաղաղբյուր, Լոռու մարզի Բագում համայնքներում:

Տեղական ինքնակառավարման համակարգում կանանց ներգրավվածության պատկերը ներկայացնելու համար նշենք որոշ օրինակներ. ըստ Տավուշի մարզպետարանի տեղեկությունների՝ Տավուշի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կին ղեկավարներ չկան: Արմավիրի մարզպետարանի տեղեկությունների համաձայն՝ ՏԻՄ ընտրություններին ընտրված 699 ավագանու անդամներից կանանց թիվը կազմում է 88-ը: Գեղարքունիքի մարզպետարանի տվյալների համաձայն՝ Գեղարքունիքի մարզում կա 3 կին համայնքի ղեկավար, 46 ավագանու անդամներ և 130 համայնքային ծառայողներ: ՀՀ Կոտայքի 79 համայնքների ղեկավարներից 2-ը կին են (մեկը խոշորացված համայնքի), իսկ ավագանու 517 անդամներից կանանց թիվը կազմում է 31: Գյումրի համայնքում նախորդ տարվա ավագանու 1 կին անդամի փոխարեն 2016 թվականի հոկտեմբերին կայացած ընտրությունների արդյունքում ընտրվել են 8-ը: Խոշորացված Աշոցք համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի 10 վարչական ղեկավարներից 3-ը կին են: ՀՀ Սյունիքի մարզի 72 համայնքների ղեկավարներից 4-ը կին են, համայնքների ավագանիների 420 անդամներից 97-ը (23,09%) կին են, 314 համայնքային ծառայողներից 202-ը (64,33%) կին են:

Կանանց ներգրավվածությունը բավարար չէ նաև դատական համակարգում: Դատական իշխանությունում առաջընթացը դատավորների թվում կազմել է 3 տոկոսը՝ փոխվելով 2010 թվականի համեմատ 21 տոկոսից 24 տոկոսի: Դրա հետ մեկտեղ դատարանների նախագահների խորհրդում, որում ընդգրկված են բոլոր աստիճանների դատարանների նախագահները, կին դատավորներ ներկայացված չեն:²⁵⁶

Կանանց քաղաքական ներգրավվածության բարձրացման համար կարևոր է 2016 թվականին ընդունված նոր ընտրական օրենսգրքում երաշխիքների սահմանումը, որոնք նաև համահունչ են ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի կողմից Հայաստանին ներկայացված առաջարկներին²⁵⁷: Մասնավորապես՝ 83-րդ հոդվածով սահմանվեց, որ կուսակցության,

²⁵⁵ <http://womennet.am/%D5%BF%D5%AB%D5%B4-%D5%A8%D5%B6%D5%BF%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%A9%D5%A1%D5%AE-%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B6%D6%81/>

²⁵⁶ http://www.mlsa.am/up/Final%20Report%20on%20Assesment_151215.pdf

²⁵⁷ <http://www.osce.org/odihr/elections/Armenia/2012>

կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի համապետական ընտրական ցուցակի առաջին մասում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) տարածքային ընտրական ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը: Նույն օրենսգրքի 141-րդ հոդվածով սահմանվեց, որ մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին, իսկ եթե դրա արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 25 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա: Այնուամենայնիվ, կանանց ներգրավվածությունը բարձրացնելը չի կարող արդյունավետ համարվել միայն քվոտաների սահմանմամբ, քանզի այն կրում է համակարգային բնույթ:

Վերոնշյալ տվյալները վկայում են այն մասին, որ կանայք դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում և հասարակությունում առկա են կարծրատիպեր կանանց՝ որպես որոշում կայացնողների դիտարկման հարցում:²⁵⁸

4. Առողջության պահպանման իրավունք

Թեև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր մարդիկ ունեն բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հավասար իրավունք, այնուամենայնիվ, 2016 թվականին առողջապահական հաստատությունները մատչելի են եղել ոչ բոլոր կանաց համար: Դեռևս լուծված չէ գյուղական մի շարք համայնքներում բժշկական հաստատությունների ոչ բավարար պայմանների հարցը, ինչի արդյունքում կանայք հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով հետազոտվել և ստանալ համապատասխան բուժօգնություն:

Ինչ վերաբերում է վերարտադրողական առողջության խնդիրներին, ապա, ըստ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, ներկայումս Հայաստանում անպտղության ցուցանիշները հասել են վտանգավոր՝ 17 տոկոսի շեմին, մինչդեռ, Առողջության համաշխարհային կազմակերպության կողմից վտանգավոր շեմ սահմանվել է 15 տոկոսը²⁵⁹: Սա վկայում է այն մասին, որ կանայք բավարար ձևով իրազեկված չեն իրենց համար հասանելի ծառայությունների և վերարտադրողական առողջության պահպանման միջոցների վերաբերյալ:

²⁵⁸ Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետեր 20, 21:

²⁵⁹ http://civilnet.am/2014/07/24/c-academy-unfpa-garik-hayrapetyan-img_0231-6/#.VQ1FE9LLc6g;

<http://med.news.am/arm/news/1705/abotnern-u-seravaraknery-anptxutyay-himnakan-pattcharnery-en.html>

Բացի այդ, բժշկական ծառայությունների անմատչելիության, բժշկական անձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային կամ ոչ պատշաճ վերաբերմունքի, վերարտադրողական ծառայություններից օգտվելիս հաշմանդամություն ունեցող կանայք հաճախ ենթարկվում են խտրականության:²⁶⁰

Հաշվի առնելով նշվածը՝ անհրաժեշտ է կանանց իրազեկել իրենց առողջության պահպանման համար առկա միջոցների և ծառայությունների մասին:

5. Աշխատանքային իրավունքներ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներն են աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, այդ թվում՝ անկախ նրանց սեռից: Նույն օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանվում է, որ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ՝ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն:

Չնայած վերոգրյալ կարգավորումներին՝ փաստացի գոյություն ունի կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և սեկտորների) խտրականություն:

Ըստ Զբաղվածության պետական գործակալության տվյալների՝ 2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ գրանցված գործազուրկների թիվը կազմել է 80.492, որից 53.088-ը կանայք են:²⁶¹ Ավելին, Հայաստանում կանանց ամսական միջին աշխատավարձը տնտեսության բոլոր հատվածներում զիջում է տղամարդկանց միջին աշխատավարձին և այդ ձեռքվածքը կազմում է 35.9 տոկոս²⁶²: Ըստ նույն ուսումնասիրության՝ կանանց աշխատավարձի ձեռքվածքը տարբերվում է ըստ տնտեսության ոլորտների: Գյուղատնտեսությունում կանանց միջին աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի 83.8 տոկոսը, կրթությունում՝ 81.3, առողջապահությունում և սոցիալական ծառայությունների ոլորտում՝ 75.1, հանրային կառավարման հատվածում՝ 67.9 և ֆինանսական ու ապահովագրական հատվածում՝ 54.9 տոկոսը: Նման պրակտիկան բխում է, նախևառաջ, հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերից (օրինակ՝ փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում ընդունված է, որ տղամարդը պետք է աշխատի, կինը՝ խնամի երեխաներին և այլն):

Ավելին, խնդրահարույց է նաև աշխատանքի թափուր տեղերի համար տրվող հայտարարությունների և այդ թափուր հաստիքների համալրման գործընթացը:

²⁶⁰ Տե՛ս, մանրամասն «Առողջության պահպանման իրավունք» բաժնում:

²⁶¹ http://armstat.am/file/article/sv_12_16a_141.pdf

²⁶² ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ձեռքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf

Մասնավորապես, հաճախ հանդիպում են աշխատանքի հայտարարություններ, որտեղ աշխատանքի ընդունման հիմնական նախապայմանն է, օրինակ, կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը: Մինչդեռ, որոշ դեպքերում կինը խտրականության դրսևորման արդյունքում աշխատանքի չի վերցվում, և նախապատվություն է տրվում ավելի ցածր որակավորում ունեցող տղամարդ դիմորդին:

Դրա հետ միասին աշխատանքային իրավունքների և աշխատող-գործատու հարաբերությունների ստուգման և համակարգման համար պատասխանատու պետական իրավասու մարմնի բացակայության պարագայում²⁶³ խնդրի վերհանումն էլ ավելի է բարդանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- 1. հզորացնել կանանց հնարավորությունները՝ վեր հանելով վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը,*
- 2. զանգվածային լրատվական միջոցներով նպաստել աշխատաշուկայում կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացմանը:*

²⁶³ Տե՛ս, մանրամասն «Սոցիալական իրավունքներ» բաժնում:

ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՆՔՆԵՐ

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածը պարտավորեցնում է կոնվենցիայի մասնակից երկրներին «ձեռնարկել անհրաժեշտ բոլոր օրենսդրական, վարչական և այլ միջոցները՝ սույն Կոնվենցիայով ճանաչված իրավունքների իրականացման համար»: Մարդու իրավունքների ազգային անկախ ինստիտուտները Կոնվենցիայի խթանման և իրականացման կարևոր մեխանիզմներ են և ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն համարում է, որ նման մարմնի ստեղծումը Կոնվենցիայի մասնակից երկրների պարտավորությունների իրականացման մաս է կազմում: 2002 թվականի թիվ 2 Ընդհանուր մեկնաբանությամբ²⁶⁴ Կոմիտեն խրախուսեց մասնակից երկրներին հիմնել Կոնվենցիայի մշտադիտարկման անկախ ինստիտուտներ: Կոմիտեի առաջարկությամբ Մարդու իրավունքների ազգային ինստիտուտները պետք է ունենան մանդատ, որը կընդգրկի մարդու իրավունքների լայն շրջանակը՝ ներառելով Կոնվենցիան և Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունները:

Մինչև 2013 թվականի հունիս ամիսը երեխաների իրավունքների պաշտպանությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ապահովվում էր մեկ պատասխանատուի կողմից, ով զբաղվում էր նաև հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց հիմնախնդիրներով: Սակայն, հաշվի առնելով Կոմիտեի 2013 թվականի Հայաստանի Հանրապետության երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումներում²⁶⁵ առաջարկությունները (կետ 17), ինչպես նաև համագործակցելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ, Մարդու իրավունքների պաշտպանի հրամանով ստեղծվեց Երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը:

2016 թվականից Բաժինն արդեն իսկ կատարել է մեծածավալ աշխատանքներ երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Մասնավորապես, Բաժինը կատարել է իրավական վերլուծություններ²⁶⁶ (օրինակ՝ Լանսարոտի կոնվենցիայի ընդունման նպատակահարմարության մասին), տրամադրել է կարծիքներ (առաջարկներ) ներպետական օրենսդրության վերաբերյալ (օրինակ՝ Երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի նախագիծ), մասնակցել է միջազգային կազմակերպությունների աշխատանքներին (օրինակ՝ Երեխաների օմբուդսմենների եվրոպական ցանց, Եվրոպայի խորհրդի

²⁶⁴http://www.refworld.org/docid/4538834e4.html%20http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fGC%2f2002%2f2&Lang=en

²⁶⁵ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

²⁶⁶ Լանսարոտի կոնվենցիայի ընդունման նպատակահարմարության մասին վերլուծություն, ներպետական օրենսդրության վերաբերյալ կարծիքների (առաջարկների) տրամադրում, օրինակ՝ Երեխաների իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի նախագիծ և այլն:

Երեխաների իրավունքների կոմիտե):

Բաժինը մասնակցում է նաև 2015 թվականից գործող Անչափահասների արդարադատության խորհրդի աշխատանքներին, որի նպատակն է օրենքի հետ առնչվող երեխայի շահերի պաշտպանության օրենսդրական, գործնական երաշխիքների ստեղծումը:

Երեխաների իրավունքների պաշտպանության բաժինն իրականացրել է նաև մշտադիտարկման այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ (օրինակ՝ Երևանի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն, Գյումրու թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, «Փոքր Միեր» կրթահամալիր), իրականացրել է քաղաքացիների ընդունելություններ և սահմանված կարգով պատասխանել է քաղաքացիների դիմում-բողոքներին: Մասնավորապես, տեղեկության հրապարակային աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա Պաշտպանի որոշմամբ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ սկսվել է հարցի քննարկման ընթացակարգ սեփական նախաձեռնությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Արագ արձագանքման և Երեխաների իրավունքների պաշտպանության ստորաբաժանումների ներկայացուցիչներն երկու այց են կատարել «Փոքր Միեր» կրթահամալիր, որոնց ընթացքում արձանագրվել են երեխայի՝ ներպետական օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքների խախտումներ: Մասնավորապես, արձանագրվել են երեխայի՝ պատվի և արժանապատվության, բոլոր ձևերի բռնությունից պաշտպանության, անձնական կյանքի անձեռնմխելիության և ընտանիքում ապրելու իրավունքների խախտումներ: Երեխայի իրավունքների տեսանկյունից մտահոգիչ դրույթներ են հայտնաբերվել նաև կրթահամալիրի կանոնադրության մեջ: Պաշտպանի՝ սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման արդյունքում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, ձեռնարկվել են համապատասխան քայլեր «Փոքր Միեր» կրթահամալիրի սաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ուղղությամբ:

2016թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ ազգային ժողովն ընդունեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որտեղ առաջին անգամ առանձին հոդվածներով նշվեցին, որ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն: Այս դրույթն ամբողջովին համապատասխանում է Կոմիտեի թիվ 2 Ընդհանուր մեկնաբանությանը և նպատակ ունի մեկ անգամ ևս շեշտել երեխաների իրավունքների պաշտպանության առանձնահատկությունը և կարևորությունը:

1. Երեխաների աղբատություն

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով ամրագրված է, որ երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը պետական քաղաքականության հիմնական նպատակներից է: Միննույն ժամանակ, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով երաշխավորվում է սոցիալական ապահովության երեխայի իրավունքը:

Երեխաների պատշաճ կենսամակարդակի ապահովման համար անհրաժեշտ սոցիալական պայմանների առկայության կարևորությունը նշված է նաև ՀՀ-ի կողմից վավերացված ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում: Պետությունները, ստորագրելով «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, հաստատել են, որ երեխայի իրավունքները պահանջում են հատուկ պաշտպանություն և երեխաների դրության մշտական բարելավում: Կոնվենցիայի 26-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ երեխան իրավունք ունի օգտվելու սոցիալական ապահովությունից (ներառյալ՝ սոցիալական ապահովագրությունից), և պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար՝ համաձայն իր ազգային օրենսդրության²⁶⁷:

Կոնվենցիան ամրագրում է նաև անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը, որը կարևոր երաշխիք է երեխայի մյուս հիմնարար իրավունքների իրացման համար: Մասնավորապես, նշվում է, որ Կոնվենցիայի մասնակից պետություններն ընդունում են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի:

Անհերքելի է, որ պետությունն ազգային պայմաններին համապատասխան և իր հնարավորությունների շրջանակներում, անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի երեխայի անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքի իրացման համար և այդ իրավունքի իրացման գործում ծնողներին և երեխային դաստիարակող այլ անձանց օգնություն ցույց տա և հարկ եղած դեպքում ցուցաբերի նյութական աջակցություն ու սատարում հատկապես՝ սննդով, հագուստով և բնակարանով ապահովելու ծրագրերով: Վերոգրյալը ամրագրված է Կոնվենցիայի 27-րդ հոդվածով:

Չնայած երեխաների կենսամակարդակի պատշաճ ապահովմանն ուղղված առկա բարենպաստ իրավական կարգավորումներին՝ երեխաների աղքատության վերաբերյալ վերջին պաշտոնական ուսումնասիրությունները բոլորովին այլ պատկեր են ներկայացնում:

2016 թվականի հրապարակված ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն²⁶⁸՝ երեխաների 2.5 տոկոսը 2015 թվականին ապրել է ծայրահեղ աղքատության, իսկ 33.7 տոկոսը՝ աղքատության մեջ: Ծայրահեղ աղքատ և աղքատ է Հայաստանի Հանրապետության բնակչության համապատասխանաբար՝ 2.0 և 29.8 տոկոսը: Նշված տվյալները վկայում են, որ երեխաներն ավելի խոցելի են և՛ ընդհանուր,

²⁶⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503>

²⁶⁸ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2016 թվական, Վիճակագրական վերլուծական զեկույց, <http://www.armstat.am/am/?nid=80&id=1819>

և՛ ծայրահեղ աղքատության ռիսկի նկատմամբ, քան ամբողջ բնակչությունը: Ինչ վերաբերում է երեխաներ ունեցող տնային տնտեսությունների կողմից ընտանեկան նպաստ ստանալուն, ապա 2015 թվականին աղքատ տնային տնտեսությունների միայն 22.0 տոկոսն է ստացել այն, իսկ ծայրահեղ աղքատների միայն 35.8 տոկոսը²⁶⁹:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ բազմանդամ ընտանիքների երեխաներն ավելի աղքատ են, քան այլ ընտանիքների երեխաները: Այսպես, պաշտոնական տվյալների համաձայն, երեք կամ ավելի երեխա ունեցող ընտանիքներում աղքատ է երեխաների 46.7 տոկոսը (բոլոր երեխաների մեջ 33.7 տոկոսի համեմատ), իսկ մեծ ընտանիքներում ծայրահեղ աղքատ է երեխաների 4.9 տոկոսը (բոլոր երեխաների 2.5 տոկոսի համեմատ)²⁷⁰, այնինչ ՀՀ Մահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ պետական քաղաքականության հիմնական նպատակներից է նաև ծնելիության և բազմազավակության խթանումը: Տվյալ պարագայում անհրաժեշտ է նշել, որ ծնելիության և բազմազավակության խթանման հետ զուգահեռ անհրաժեշտ է ապահովել երեխաների զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

ՀՀ-ում երեխաների աղքատության մեկ այլ մտահոգիչ ցուցանիշ է տարիքով ավելի փոքր երեխաների աղքատության ցուցանիշը: Այսպես, աղքատության ռիսկն ավելի մեծ է այն ընտանիքների երեխաների շրջանում, որոնցում կրտսեր երեխան հինգ տարեկան է կամ ավելի փոքր²⁷¹:

Չնայած երեխաների աղքատության մասին նշվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից²⁷², այնուամենայնիվ վերջին տարիներին զգալի առաջընթաց չի գրանցվել վերջինիս վերացման ուղղությամբ:

Այդ մասին վկայում է նաև 2016 թվականին Հայաստանում մանկական բազմաչափ աղքատության առաջին ազգային գնահատումը²⁷³: Ուսումնասիրությունը հիմնվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից մշակված բազմակի և համընկնող խոցելիության վերլուծության մեթոդաբանության (MODA) վրա: Մասնավորապես, թե 2013, 2014 թվականներին և թե 2015 թվականին Հայաստանում երեխաների մեծ մասը զրկված է կոմունալ ծառայություններից, ժամանցային հնարավորություններից և բնակարանային պայմաններից: Հարկ է ընդգծել նաև, որ 2015 թվականին կոմունալ ծառայությունների դրսևորման մեջ խոցելիության մակարդակը բարձրացել է, սակայն մյուս բոլոր դրսևորումներում այն նվազել է:

²⁶⁹ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2016 թվական, Վիճակագրական վերլուծական զեկույց, Գլուխ 5, «Մանկական աղքատություն», էջ 87, http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

²⁷⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 88

²⁷¹ Տե՛ս նույն տեղում:

²⁷² <http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/a42b07b145e69f9193cda108ef262d7c.pdf>

²⁷³ ՀՀ ԱՎԾ, ՅՈՒՆԻՄԵՖ, «Մանկական աղքատությունը Հայաստանում, բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծություն», 2016 թվական, http://www.un.am/up/library/Child_Poverty_Armenia_N-MODA_Report_2016_eng.pdf

Դեռ 2013 թվականին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն իր ամփոփիչ դիտարկումներում ՀՀ-ին խորհուրդ է տվել ուժեղացնել խոցելի իրավիճակներում գտնվող ընտանիքներին տրվող աջակցությունը, մասնավորապես, այն ընտանիքներին, ովքեր ապրում են ծայրահեղ աղքատության մեջ²⁷⁴: 2013 թվականին Կոմիտեն նաև նշել է, որ ծայրահեղ աղքատ ընտանիքների ընդամենը 54.3 տոկոսն է ստանում ընտանեկան նպաստ, իսկ աղքատ ընտանիքների՝ 4.1 տոկոսը, քանի որ ընտանեկան նպաստի հաշվարկման բանաձևը ոչ պատշաճ է և առկա է իրազեկվածության պակաս ՀՀ կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերի վերաբերյալ²⁷⁵:

Այսպիսով, անհերքելի է, որ երեխաների աղքատության վերացումը ՀՀ-ում առաջնահերթ լուծման ենթակա խնդիր է և պետությունը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները ուղղված այս խնդրի լուծմանը:

Ուստի, ելնելով վերոշարադրյալից՝ առաջարկում ենք՝

1. *մշակել երեխաների աղքատության վերացմանն ուղղված պետական ծրագիր,*
2. *ընտանեկան նպաստի հաշվարկման բանաձևը վերամշակել՝ հաշվի առնելով երեխաների աղքատության բարձր ցուցանիշները,*
3. *բարձրացնել կառավարության գործող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածությունը:*

2. Երեխայի աշխատանք

Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի հետ կապված երեխայի իրավունքները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով, Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներով²⁷⁶ և այլ միջազգային փաստաթղթերով: Այս իրավական ակտերը հստակորեն սահմանում են երեխայի աշխատանքի նվազագույն տարիքը, աշխատանքային օրվա տևողությունը, ինչպես նաև թե ինչպիսի աշխատանքներում կարող են ներգրավվել երեխաները: Չնայած վերոնշյալ կարգավորումներին՝ դեռևս բազմաթիվ են դեպքերը, երբ երեխաները կատարում են այնպիսի աշխատանքներ, որոնք կարող են վնասել երեխաների առողջությանը և զարգացմանը: ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն Հայաստանի Հանրապետության երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումներում²⁷⁷ իր մտահոգությունն էր հայտնել, որ տասնչորս տարեկանից ցածր բազմաթիվ երեխաներ դուրս են մնում կրթական համակարգից և աշխատում են

²⁷⁴ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

²⁷⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁷⁶ «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» կոնվենցիա, «Հարկադիր աշխատանքի վերացման մասին» կոնվենցիա, «Նվազագույն տարիքի մասին» կոնվենցիա, «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» կոնվենցիա:

²⁷⁷ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, մեքենաների սպասարկման ծառայությունները, շինարարությունը և հատկապես կատարում են այնպիսի ծանր աշխատանք, ինչպիսին է բեռնակրությունը: Բազմաթիվ միջազգային կառույցներ^{278,279} նույնպես նշել են երեխայի աշխատանքի հիմնախնդրի մասին՝ կոչ անելով Հայաստանի Հանրապետության կառավարությանը ակտիվ քայլեր ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ: Մարդու իրավունքների պաշտպանը նախորդ տարիների իր տարեկան զեկույցներում ևս բարձրաձայնել էր այս խնդիրը՝ մատնանշելով, որ բացակայում է հստակ վիճակագրություն աշխատող երեխաների վերաբերյալ, ինչպես նաև չկա աշխատող երեխաների և կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման մեխանիզմներ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2016 թվականին հրապարակեց «Երեխայի աշխատանքի ազգային հետազոտություն 2015» վերլուծական զեկույցը²⁸⁰, որով էլ երևում է խնդիրը: Ըստ վերոնշյալ զեկույցի՝ հետազոտությանը մասնակցած 5-17 տարեկան 453 հազար երեխաներից ընթացիկ զբաղվածություն է ունեցել 52,000 երեխա կամ հարցվածների 11.5 տոկոսը (նրանց 95 տոկոսը զբաղված է եղել նաև ողջ տարվա ընթացքում): 5-17 տարեկան 453 հազար երեխաների 9 տոկոսը կամ 39,300 երեխա ընդգրկված է եղել երեխայի արգելված համարվող աշխատանքում (երեխաների զբաղվածությունը բոլոր այն աշխատանքներում, որոնք ֆիզիկապես, սոցիալապես կամ բարոյապես համարվում են վնասակար կամ վտանգավոր): Առավել խոցելի են եղել գյուղաբնակ երեխաները, քանի որ ընթացիկ զբաղվածություն ունեցող երեխաների 88 տոկոսը եղել են գյուղաբնակ: Մտահոգիչ է վնասակար աշխատանքի պատճառով աշխատող երեխաների ստացած վնասվածքների փաստը (հենաշարժիչ համակարգին և վերջույթներին հասցված վնասվածքները տղաների մոտ կազմել են դեպքերի 6.2 տոկոսը, իսկ աղջիկների մոտ այն կազմում է գրեթե երկու անգամ ավելի՝ 11.2 տոկոսը): Հետազոտության տվյալները վկայում են նաև երեխաների դպրոց հաճախելիության մակարդակի և զբաղվածության միջև ակնհայտ փոխադարձ կապի մասին, ընդ որում՝ հատկապես արտահայտված երեխայի արգելված և վնասակար համարվող աշխատանքների առումով (չաշխատող երեխաներն ունեցել են դպրոց հաճախելիության ավելի բարձր մակարդակ, քան աշխատող երեխաները (95.2 տոկոս և 92.8 տոկոս)):

Ըստ 2016 թվականի հրապարակված երեխայի պաշտպանության ինդեքսի՝ տնտեսական շահագործման ցուցանիշը կազմում է 0,381 միավոր՝ առավելագույնը՝ 1,0 միավորից: Այս առումով, ՀՀ-ն զբաղեցնում է վերջին տեղը ինը երկրների՝ Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Կոսովո, Հայաստան, Մոլդովա, Ռումինիա, Սերբիա և Վրաստան շարքում²⁸¹:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք՝

²⁷⁸ <https://www.dol.gov/sites/default/files/documents/ilab/reports/child-labor/findings/ArmeniaTrans.pdf>

²⁷⁹ <http://www.osce.org/yerevan/212571>

²⁸⁰ <http://www.armstat.am/file/doc/99499668.pdf>

²⁸¹ <http://2016.childprotectionindex.org/country/armenia>

1. աշխատող երեխաների աշխատանքային պայմանների վերահսկման, ինչպես նաև ապօրինի աշխատող երեխաների հայտնաբերման նպատակով ստեղծել տեսչական մարմին կամ հստակեցնել ՀՀ առողջապահության նախարարության ենթակայությամբ գործող Առողջապահական պետական տեսչության գործառնությունները և վերջինիս վերապահել աշխատող երեխաների իրավունքների պաշտպանությունը,
2. մշակել կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման ընթացակարգ՝ ներգրավելով դպրոցները, սոցիալական ծառայությունները, ԽՀՄ-ները, Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը,
3. սոցիալական ծառայությունների և ԽՀՄ կանոնադրություններում հստակորեն ամրագրել աշխատող երեխաների բացահայտման և ուղղորդման, ինչպես նաև այդ երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցություն տրամադրելու պարտականությունը,
4. դպրոցներում, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, համայնքներում պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ երեխաների աշխատանքային իրավունքների մասին:

3. Խնամակալության և հոգաբարձության մարմիններ (հանձնաժողովներ)

Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից 2016 թվականին ստացված դիմում-բողոքների ճնշող մեծամասնությունը կապված է եղել Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՀ) գործունեության հետ: Նման բողոքներ եղել են նախորդ տարիներին ևս, ինչի պատճառով Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար անդրադարձել է այս խնդրին: Բազմաթիվ տեղական և միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև պետական մարմիններ նույնպես բարձրաձայնել են ԽՀՀ գործունեության անարդյունավետության մասին:

Այսպես, ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն Հայաստանի Հանրապետության երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների եզրափակիչ դիտարկումներում²⁸² իր մտահոգությունն է հայտնել, որ տեղական մակարդակում երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է կամավորների կողմից, ովքեր չունեն համապատասխան որակավորում և վերապատրաստված չեն:

ԽՀՀ-ի կողմից իրենց գործառնությունների ոչ պատշաճ կատարման մասին նշվել է Մարդու իրավունքների պաշտպանի 2013-2015 թվականների տարեկան զեկույցներում: Մասնավորապես նշվել է, որ խնամակալության և հոգաբարձության մարմինները (հանձնաժողովները) պատշաճ կերպով չեն գնահատում երեխայի և նրա ընտանիքի կարիքները և հաճախ տալիս են եզրակացություններ մեկ տնային այցելությունից հետո, եզրակացությունները հաճախ լինում են սուբյեկտիվ, տնայցերի ժամանակ չեն ընդգրկվում մասնագետներ (օրինակ՝ հոգեբանի), երբ դրա կարիքը լինում է: Բազմաթիվ են վերլուծություններն այն մասին, որ ԽՀՀ անդամները մոտիվացված չեն աշխատում,

²⁸² <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

քանի որ չեն վճարվում այդ աշխատանքի դիմաց, նրանք չունեն ռեսուրսներ իրենց լիազորությունների իրականացման համար, ինչպես նաև չկան ընթացակարգեր, որով կառաջնորդվեին ԽՀՀ-ները:

ԽՀՀ հետ կապված խնդիրների մասին նշվել է նաև Հայաստանի Հանրապետությունում Երեխաների իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրում²⁸³: Հիմնական խոչընդոտներից է նշվել կամավորական հիմունքներով աշխատանքը, ռեսուրսների բացակայությունը, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում պետության կողմից իրականացվող քաղաքականությունից անտեղյակությունը: Չնայած վերոնշյալ ռազմավարական ծրագրով նախատեսվել են միջոցառումներ ԽՀՀ արդյունավետության բարձրացման նպատակով, սակայն փաստ է, որ խնդիրը դեռևս արդիական է:

2016 թվականին իրավիճակը զգալի առաջընթաց չի գրանցվել, և վերոնշյալ խնդիրները դեռևս մնում են չլուծված, ինչը հանգեցնում է ՀՀ Սահմանադրության ու «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի դրույթների և երեխաների պաշտպանության ոլորտում ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների ոչ պատշաճ ապահովման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք՝

1. *աշխատանքներ տանել ԽՀՀ անդամների մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ,*
2. *հնարավորության սահմաններում բացառել ԽՀՀ անդամների աշխատանքի կամավորության սկզբունքը կամ ներգրավել վճարվող մասնագետների (սոցիալական աշխատող, հոգեբան),*
3. *ԽՀՀ համար մշակել մեթոդական ուղեցույց, ինչպես նաև համապատասխան միջոցներ տրամադրել իրենց գործառույթների լիարժեք իրականացման համար,*
4. *վերանայել ԽՀՀ լիազորություններն ու պարտականությունները՝ հաշվի առնելով ինտեգրված սոցիալական ծառայությունների ներդրման, ինչպես նաև համայնքների խոշորացման գործընթացը:*

4. Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան մասնակից երկրներից պահանջում է ապահովել, որ երեխաները չբաժանվեն ծնողներից, իսկ բաժանումը լինի այն դեպքերում, եթե դա բխում է երեխայի լավագույն շահից: ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը (հոդվածներ 12, 13) նույնպես պաշտպանում են ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը, ինչպես նաև ամրագրում են պետության պարտականությունը՝ աջակցելու այդ իրավունքի իրականացմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալներով՝ 2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ նախարարության ենթակայությամբ գործող

²⁸³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81357>

մանկատներում խնամվում է 635 երեխա, այդ թվում՝ համակարգի երեք մասնագիտացված մանկատներում խնամվող 350 երեխա և 18 տարին լրացած 100 անձ: Նախարարության ենթակայության երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատություններում խնամվում է 510 երեխա: Թեև ընդհանուր տիպի մանկատներում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ, ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը մասնագիտացված մանկատներում:

2016 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մի շարք ծրագրեր և միջոցառումներ է իրականացրել՝ ուղղված երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպման, երեխաների խնամքի այլընտրանքային ձևերի զարգացման ուղղությամբ: Մասնավորապես, վերակազմակերպվել է նախարարության ենթակայության Նուբարաշենի թիվ 2 գիշերօթիկ խնամքի հաստատությունը և նրա փոխարեն ստեղծվել է Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնը, ՀՀ կառավարության կողմից հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման հայեցակարգը և վերջինիս կատարումն ապահովող միջոցառումների ցանկը, Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգը: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում տարբեր մարզերում իրականացվել են խնամատար ընտանիքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցառումներ:

Չնայած ձեռնարկված քայլերին՝ դեռևս մեծ թվով երեխաներ խնամվում են հաստատություններում, խիստ սահմանափակ են դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցող համայնքահեն ծառայությունների թիվը, որևէ քայլ չի իրականացվել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին աջակցող ծառայությունների թվի ավելացման ուղղությամբ: Մտահոգիչ է նաև այն փաստը, որ չնայած ՀՀ կառավարության կողմից հաստատված խնամատարության նոր հայեցակարգին, ինչպես նաև խնամատարության վերաբերյալ իրականացվող իրազեկվածության բարձրացման արշավին, 2017 թվականին լրացուցիչ բյուջետային հատկացումներ չեն նախատեսվել խնամատար ընտանիքների թվի ավելացման ուղղությամբ: Մարդու իրավունքների պաշտպանն արդեն իսկ ստացել է բողոքներ այն մասին, որ քաղաքացիները ցանկություն ունեն դառնալ խնամատար ծնողներ և իրականացնել մանկատներում խնամվող երեխաների (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների) խնամքը, սակայն ստանում են պատասխան, որ լրացել է խնամատար ընտանիքների թիվը և չկան ֆինանսական միջոցներ նոր ընտանիքների ներգրավման համար:

Ելնելով վերոշարադրյալից՝ առաջարկում ենք՝

1. հստակեցնել հաստատություններ երեխաների ընդունելության չափորոշիչները՝ բացառելով միայն աղքատության պատճառով երեխաներին հաստատություն տեղավորելը,
2. ստեղծել մասնագիտացված համայնքահեն կենտրոններ, որոնք աջակցություն կցուցաբերեն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ կանխարգելելով երեխաների մուտքը հաստատություններ,
3. ավելացնել ֆինանսական հատկացումները նոր խնամատար ընտանիքների ներգրավման նպատակով՝ շեշտը դնելով հաշմանդամություն ունեցող երեխաների խնամատարության վրա,
4. հաստատությունների վերակազմակերպման գործընթացում ընդգրկել նաև հաշմանդամություն ունեցող երեխաների խնամք իրականացնող մանկատները՝ բացառելով նոր հաստատությունների ստեղծումը,
5. պատվիրակման մեխանիզմով ընդլայնել ծառայությունների հասանելիությունը,
6. ներդնել ընտանիքներ վերադարձած երեխաների մոնիտորինգի մեխանիզմ:

5. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներ

Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելու և աջակցություն տրամադրելու արդյունավետ մեխանիզմների բացակայության դեռևս արդիական խնդրի հետևանքով մի շարք երեխաներ չեն իրացնում ՀՀ Սահմանադրությամբ, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված իրենց իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2016 թվականի ընթացքում ստացել է ահազանգեր մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների վերաբերյալ:

Դեռևս 2013 թվականին Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ իր դիտողություններում մտահոգություն էր հայտնել ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն՝ նշելով, որ զգալի թվով երեխաներ, այդ թվում՝ մինչև 14 տարեկան, լքում են դպրոցները՝ աշխատելու համար ոչ ֆորմալ ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը ավտոսպասարկումը, շինարարությունը, մետաղների թափոնների հավաքումը և ընտանեկան բիզնեսները: Կոմիտեն մտահոգություն էր հայտնել նաև մուրացիկության մեջ ներգրավված երեխաների աճող թվի վերաբերյալ²⁸⁴:

Չնայած Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից իրականացվող աշխատանքներին՝ մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների թիվը 2015 թվականի համեմատ աճել է: 2016 թվականի ընթացքում հայտնաբերվել են 57 թափառաշրջիկ և մուրացիկ անչափահասներ, իսկ Ոստիկանությունում հաշվառման է գտնվում 19 թափառաշրջիկ և մուրացիկ երեխա: Նշվածը, մասնավորապես, պայմանավորված է

²⁸⁴ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

նաև նրանով, որ մինչ օրս չեն մշակվել ապօրինի աշխատող երեխաների հայտնաբերման մեխանիզմներ, չեն հավաքվել հստակ վիճակագրական տվյալներ, և չի կատարվել իրավիճակի համալիր վերլուծություն: Բացի այդ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված նման երեխաների հետ չեն իրականացվում ամենօրյա մասնագիտական աշխատանք, ինչպես նաև հսկողություն նրանց կյանքի, կենցաղային պայմանների նկատմամբ, իսկ կանխարգելիչ ծառայություններ նույնպես չկան ժամանակին հայտնաբերելու համար, թե որ ընտանիքն է խոցելի երեխաների մուրացիկությամբ զբաղվելու նկատմամբ:

Ոլորտի կարևոր բացթողումներից է այն փաստը, որ խնդրով հիմնականում զբաղվում է Ոստիկանությունը և շատ հազվադեպ են սոցիալական ծառայությունների հետ համագործակցության դեպքերը: Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաները զրկված են սոցիալական ծառայություններից պատշաճ օգտվելու հնարավորությունից:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից ընդունված բանաձևի համաձայն՝ պետությունը պետք է համալիր ձևով հակազդի փողոցում աշխատող կամ ապրող երեխաների խնդրին՝ մասնավորապես, տնտեսական, սոցիալական և կրթական ռազմավարությունների շնորհիվ²⁸⁵: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հետ պետք է իրականացվի ամենօրյա աշխատանք: Նրանց հայտնաբերելուց հետո պետք է իրականացվի հսկողություն նրանց կյանքի, կենցաղային պայմանների, ինչպես նաև հիմնարար իրավունքների իրացման հասանելիության վերաբերյալ:

Այնուամենայնիվ, դեռևս առկա չեն կանխարգելիչ ծառայություններ և մեխանիզմներ՝ ժամանակին հայտնաբերելու այն ընտանիքները, որոնց երեխաները խոցելի են մուրացիկությամբ զբաղվելու նկատմամբ: Այդպիսի ընտանիքների հայտնաբերումը և վերջիններիս ժամանակին և երեխայակենտրոն աջակցության ցուցաբերումը կհանդիսանա կանխարգելիչ քայլ, որպեսզի ՀՀ-ում այլևս չլինեն մուրացիկ ու թափառաշրջիկ երեխաներ:

Կանխարգելիչ քայլերից մեկը կարող է լինել նաև դպրոցների ներգրավումը խնդրի լուծման գործին: Մուրացիկ ու թափառաշրջիկ երեխաները շատ հաճախ դուրս են մնում կրթությունից, և եթե դպրոցը ժամանակին ահազանգի խնդրի մասին, ապա երեխայի՝ մուրացկանության մեջ ներգրավումը հնարավոր կլինի կանխել, իսկ արդեն մուրացկանությամբ զբաղվող երեխային ավելի հեշտ կլինի հայտնաբերել:

Թափառաշրջիկ և մուրացկանությամբ զբաղվող հայտնաբերված երեխաները, հաճախ նորից վերադառնում են փողոց, քանի որ պետությունը չի ցուցաբերում նրանց կարիքների հոգալուն ուղղված համալիր մոտեցում, այդ թվում՝ երկարաժամկետ սոցիալական աջակցության միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք՝

1. *խթանել Ոստիկանության, խնամակալության և հոգաբարձության մարմինների, և ինտեգրված սոցիալական ծառայությունների համագործակցությունը համայնքներում,*

²⁸⁵ http://www2.ohchr.org/english/bodies/hrcouncil/docs/16session/A.HRC.RES.16.12_en.pdf

2. բարելավել մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հայտնաբերմանն ուղղված մեխանիզմները,

3. հայտնաբերված մուրացիկ և թափառաշրջիկ երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև մուրացկանությամբ զբաղվելու հավանականություն ունեցող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական երկարաժամկետ համալիր աջակցություն տրամադրել:

6. Երեխաների նկատմամբ բռնություն

Հայաստանի Հանրապետությունում երեխաների նկատմամբ բռնությունը դեռևս շարունակում է խնդրահարույց լինել: Սահմանափակ գործողություններ են ձեռնարկվում պետության կողմից՝ ապահովելու կառուցակարգեր, որոնց միջոցով հայտնաբերվում, հաղորդվում, ուղղորդվում և գործի են դրվում ծառայություններ՝ ուղղված երեխաների նկատմամբ բռնությունների կանխարգելմանն ու վերացմանը:

Ըստ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների՝ 6-14 տարեկանների շրջանում տասը երեխայից յոթը ենթարկվել է որևէ տեսակի հոգեբանական կամ ֆիզիկական բռնության, երեխաների մոտ 40 տոկոսը ենթարկվել են որևէ տեսակի ֆիզիկական բռնության: Հարցվածներից 6-ից 5-ը հայտնել են, որ չեն տեղեկացնի ընտանիքի որևէ անդամի կողմից երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ: Տղաների 19 տոկոսը և աղջիկների 11 տոկոսը դպրոց չեն հաճախել ամսվա մեջ մեկ անգամ դպրոցում ծաղրուծանակի (bullying) ենթարկվելու պատճառով²⁸⁶:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ 2016 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ գրանցվել է երեխայի նկատմամբ բռնության 182 դեպք, որից 56-ը եղել է ծեծ, 73-ը սեռական ոտնձգություն, 26-ը՝ դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը:

Չնայած ՀՀ օրենսդրությունը նախատեսում է քրեական պատասխանատվություն երեխաների նկատմամբ բռնությունների համար, սակայն չկան հստակ մեխանիզմներ այդ բռնությունների դեպքերը հայտնաբերելու համար: ՀՀ ընտանեկան օրենսգրքի²⁸⁷ և

²⁸⁶ Վորլդ Վիժն Հայաստան «Երեխաների պաշտպանության տեխնիկական մոտեցում. Ռազմավարական հետազոտություն», 2015 (World Vision Armenia “Strategy Baseline Survey, Child Protection Technical Approach”, 2015):

²⁸⁷ ՀՀ ընտանեկան օրենսգրք, 53-րդ հոդվածի 1-ին մաս. «Օնոդական իրավունքներն իրականացնելիս ծնողներն իրավունք չունեն վնաս պատճառելու երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, նրանց բարոյական զարգացմանը: Երեխաների դաստիարակության եղանակները պետք է բացառեն նրանց նկատմամբ քամահրական, դաժան, կոպիտ, մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքը, վիրավորանքը կամ շահագործումը:»:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի²⁸⁸ համաձայն՝ ծնողներն իրավունք չունեն ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրել երեխայի նկատմամբ՝ որպես դաստիարակության միջոց, սակայն օրենսդրությամբ պատասխանատվության միջոցներ չկան սահմանված նման մեթոդներ կիրառելու դեպքում՝ բացառությամբ քրեական օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

ՀՀ օրենսդրությունը չի պարտավորեցնում դպրոցի ուսուցիչներին, մանկապարտեզի դայակներին, սոցիալական աշխատողներին, խնամքի հաստատությունների աշխատակիցներին և երեխաների հետ աշխատող այլ աշխատակիցներին հաղորդել պատկան մարմիններին երեխայի նկատմամբ ենթադրյալ բռնության, անտեսման դեպքերի մասին: Մասնագետների կողմից նման հաղորդումը կամավոր բնույթ ունի: Օրենսդրությամբ հստակ պարտականություն պետք է դրվի երեխայի հետ աշխատող մասնագետների վրա նման դեպքերի մասին հաղորդելու համար համապատասխան մարմիններ՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, ոստիկանություն և այլն: Երեխաների համար հասանելի մեխանիզմներ նույնպես անհրաժեշտ է ներդնել համայնքներում՝ դեպքերի մասին հաղորդումը խրախուսելու համար:

Դեռևս չկան օրենսդրական բավարար հիմքեր, որ տեղական և մարզային սոցիալական աշխատողները, ներառյալ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովները (ԽՀՀ) և երեխայի իրավունքների պաշտպանության մարզային բաժինները ակտիվորեն հայտնաբերեն և հաղորդեն բռնությունների դեպքերի մասին: Նրանք միայն լիազորված են միջամտել և կառավարել այն դեպքերը, որոնց մասին նրանց արդեն հաղորդել են:

Ըստ 2016 թվականի հրապարակված Երեխայի պաշտպանության ինդեքսի՝ ՀՀ-ի կողմից բռնության և չարաշահման կանխարգելման միավորը կազմում է 0,339 միավոր՝ առավելագույնը՝ 1,0 միավորից: ՀՀ-ն զբաղեցնում է վերջին տեղը ինչը երկրների՝ Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Կոսովո, Հայաստան, Մոլդովա, Ռումինիա, Սերբիա և Վրաստան շարքում²⁸⁹:

2014 թվականից ՀՀ կառավարությունը դեպքերի վարման ընթացակարգ է ներդրել դեպքերին հետևելու և դեպի ծառայություններ ուղղորդելու համար: Որպես հաջորդ քայլ՝ անհրաժեշտ է, որ տեղական և մարզային աշխատակազմերը վերապատրաստումներ անցնեն՝ այս կարգերն ավելի արդյունավետորեն կիրառելու համար: Անհրաժեշտ է նաև սոցիալական աշխատանքի վերապատրաստում անցած լրացուցիչ աշխատողների հաստիքներ ստեղծել՝ ավելի լիարժեք ուղղորդման և դեպքերի կառավարման պրակտիկա ստեղծելու համար²⁹⁰:

ՀՀ-ում քիչ թվով ծառայություններ կան, որոնք արձագանքում են ընտանեկան և

²⁸⁸ Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք, 9-րդ հոդված «(...) Ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի (...)»:

²⁸⁹ <http://2016.childprotectionindex.org/country/armenia>

²⁹⁰ Երեխաների պաշտպանության ցանց «Երեխայի պաշտպանության ինդեքս», 2016 թվական, էջ 15:

այլ տեսակի բնությունների ենթարկված երեխաների խնդիրներին: Ծառայությունները չունեն մասնագիտացում բնության, ներառյալ սեռական բնության, թրաֆիքինգի ենթարկված երեխաներին ծառայություն մատուցելու համար:

Քանի որ այլընտրանքային ընտանիքահեն խնամքը նախընտրելի է կենսաբանական ընտանիքներից անջատված երեխաների համար, առաջարկվում է, որ ՀՀ-ն և՛ խնամակալությունը, և՛ խնամատարությունը զարգացնի որպես հաստատություններին պոտենցիալ այլընտրանք՝ երեխաների բնությունների ենթարկվելու դեպքում:

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2016 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված է 202.839 հաշմանդամություն ունեցող անձ,²⁹¹ ովքեր բազմաթիվ դեպքերում հանդիպում են խտրականության և իրենց իրավունքների իրականացման խոչընդոտների: Խախտվում են վերջիններիս կրթության, աշխատանքային, սպորտային և մշակութային կյանքին մասնակցելու, ազատ տեղաշարժի, ընտրելու և այլ իրավունքներ:

2010 թվականին, վավերացնելով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2006 թվականի դեկտեմբերի 13-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ: Այդ միջոցները պետք է ուղղված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ՝ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների ու համակարգերի հասանելիության ու մատչելիության ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի վավերացրել Կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունը, որով նախատեսվում է ներդնել անհատական հաղորդումների և հետաքննության ընթացակարգերը՝ որպես Կոնվենցիայի կիրարկման ապահովման երաշխիքներ: ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2016 թվականի հարցադրումներին²⁹² ի պատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը նշել է, որ կարող է անդրադառնալ Կոնվենցիայի Կամընտիր արձանագրության վավերացման հարցին, երբ հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ օրենսդրությունը լիովին զարգացած կլինի և համապատասխան միջոցառումներն ինպլեմենտացված կլինեն:²⁹³

2016 թվականի ընթացքում ևս շարունակական բնույթ են կրել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խտրական վերաբերմունքի դրսևորումները: Չնայած հաշմանդամության հիմքով խտրականությունն արգելված է Կոնվենցիայով, խտրականությունը

²⁹¹ ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N1 արձանագրային որոշում, Հավելված N1:

²⁹²http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fO%2f1&Lang=en

²⁹³http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fO%2f1%2fAdd.1&Lang=en

կանխարգելող և արգելող գործուն ու արդյունավետ մեխանիզմներ Հայաստանում առայժմ չկան:

Հաշվի առնելով ոլորտում առկա խնդիրները՝ պետության կողմից քայլեր են ձեռնարկվել «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված մոտեցումները հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես, մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» նոր օրենքի նախագիծ, որի մշակման գործընթացին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

Վերոնշյալ նախագծի քննարկման նպատակով 2016 թվականի նոյեմբերի 30-ին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ, տեղի է ունեցել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից կազմակերպված հանրային քննարկումը: Քննարկմանը հրավիրված էին մասնակցելու ինչպես շահագրգիռ պետական մարմինների, այնպես էլ՝ միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Վերջիններս ներկայացրել են իրենց դիտարկումներն ու մտավախությունները նախագծի վերաբերյալ: Մասնավորապես, քննարկվել են Կոնվենցիայի դրույթներին նախագծի համապատասխանության, «հաշմանդամություն» հասկացության ձևակերպման, հաշմանդամության կանխարգելումը՝ որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման պետական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը սահմանելու, նախագծում հաշմանդամություն ունեցող երեխաների և կանանց իրավունքների տեսանկյունից կարգավորումների նախատեսման, Կոնվենցիայով սահմանված ազգային մշտադիտարկման գործառույթի իրականացման համար անկախ մեխանիզմի նախատեսման և այլ հարցեր: Նշված հանրային քննարկման ընթացքում ներկայացված կարծիքներն ու առաջարկներն ամփոփվել են և նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

1. Ֆիզիկական միջավայրի մատչելիություն

Քաղաքաշինության ոլորտում օրենսդրության²⁹⁴ պահանջների չպահպանման հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք զրկվում են մատչելի միջավայրի, կրթություն ստանալու, առողջության պահպանման, աշխատանքի և այլ իրավունքներից՝ չկարողանալով լիարժեքորեն ինտեգրվել հասարակությանը:

Մինչդեռ, Կոնվենցիայի համաձայն, հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովվի կառույցների, ճանապարհների, բացօթյա և փակ հաստատությունների, դպրոցների, բնակելի տարածքների, ինչպես նաև բժշկական

²⁹⁴ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 29 N 1473-Ն որոշում, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի N 253-Ն հրաման և այլն:

հաստատությունների մատչելիությունը:²⁹⁵ Կոնվենցիայում կիրառվող «մատչելիություն» տերմինի վերաբերյալ ուղենիշներում²⁹⁶ նշվում է, որ մատչելի ֆիզիկական միջավայրն օգտակար է ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձի, այլ բոլորի համար: Միաժամանակ, ֆիզիկական միջավայրի մատչելիությունը ենթադրում է ոչ միայն շինությունների մատչելիությունը, այլ նաև մայթեզների հարմարեցումը և հետիոտների շարժը սահմանափակող այլ խոչընդոտների վերացումը:²⁹⁷

Թեև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով արգելվում է բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար, այնուամենայնիվ, նշված պահանջը գերակշռող դեպքերում թերի է կատարվում:

Մի շարք դեպքերում էլ, երբ շինության թեքահարթակը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջներին, տեղաշարժման խոչընդոտներ են առաջանում շինության ներսում, քանի որ հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական մատչելիության խնդրի լուծումը սահմանափակվում է միայն թեքահարթակներով: Ավելին, ոլորտում գործող ՀԿ-ները նշում են, որ թեքահարթակների մասին անընդհատ անդրադարձը նոր կարծրատիպ է ստեղծել՝ մատչելի միջավայրի ապահովումը սահմանափակելով միայն դրանց առկայությամբ:²⁹⁸

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ձեռնարկվել են որոշակի քայլեր՝ միջավայրի մատչելիության ապահովման ուղղությամբ: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ 2016 թվականի ընթացքում մայրաքաղաքում կառուցվել է 275 թեքահարթակ, ինչպես նաև մայրաքաղաքի Կենտրոն և Արաբկիր վարչական շրջանների 73 հատվածներում տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար տեղադրվել են մայթի ավարտը նախագծուշացնող հատուկ դեղին գույնի գոգավոր սալիկներ: Բացի այդ, Ն. Տիգրանյանի անվան թիվ 14 հատուկ դպրոցի ուսումնափորձարարական բակում ուսուցման նպատակով տեղադրվել են նույն սալահատակներից: Որոշակի աշխատանքներ են տարվել նաև նախկինում կառուցված թեքահարթակների վերանորոգման ուղղությամբ՝ ապահովելով համապատասխան նորմատիվային թեքություն:

Թեև Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում իրականացվում են ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովմանն ուղղված որոշ գործողություններ, այլ վարչական շրջաններում ֆիզիկական մատչելիությունը գրեթե բացակայում է: Ըստ Երևանի քաղաքապետարանի տվյալների՝ 2017 թվականին

²⁹⁵ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 9, կետ 1, ենթակետ ա):

²⁹⁶ <http://www.un.org/esa/socdev/enable/disacc.htm>

²⁹⁷ Տե՛ս նույն տեղում:

²⁹⁸ <http://www.aravot.am/2016/10/18/817426/>

նախատեսվում է աշխատանքները շարունակել և ընդգրկել բոլոր 12 վարչական շրջանները՝ համաչափ զարգացման սկզբունքին համապատասխան:

Միաժամանակ, խնդիրը շարունակվում է չլուծված մնալ նաև ՀՀ մարզերում: Ըստ ՀՀ տարածքային կառավարման մարմինների տեղեկությունների՝ նոր կառուցվող կամ վերանորոգվող շենքերում ուշադրություն է դարձվել հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի, ինչպես նաև ազատ տեղաշարժի համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը: Նշված տեղեկատվության վերլուծությունից, սակայն պարզ է դառնում, որ մարզերում ևս հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի և անարգել քաղաքաշինական միջավայրի ապահովված լինելը մեծամասամբ կապվում է թեքահարթակների առկայության հետ: Միաժամանակ, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի քաղաքաշինական միջավայրի ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքները լիարժեքորեն չեն կարող ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի իրավունքի իրացումը (օրինակ՝ ՀՀ Շիրակի մարզում 2016 թվականի ընթացքում կառուցվել և վերակառուցվել են պետական և համայնքային սեփականություն հանդիսացող 9 շենքեր, որոնցից հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված են 6-ը: Նոր կառուցված շենքերից 3-ը բազմաբնակարան են, որոնք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ Այգեհովիտ համայնքում բարերարի աջակցությամբ մանկապարտեզի շենքում 2 թեքահարթակ է կառուցվել: Չինչին համայնքի մանկապարտեզում՝ մեկ, իսկ Չինարի համայնքի ադմինիստրատիվ շենքերում երկու թեքահարթակ է կառուցվել):

Նշվածը խնդրահարույց է թե՛ Կոնվենցիայի²⁹⁹ և թե՛ գործող օրենսդրության պահանջների տեսանկյունից: Մասնավորապես, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ, որոնց կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար:³⁰⁰ Վերջիններս (մասնավորապես՝ համայնքի ղեկավարը³⁰¹) տալիս են քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք³⁰² (ՃՀԱ), որում նշվում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջներ:³⁰³ Դրա հետ միասին համայնքի ղեկավարը վերահսկում է

²⁹⁹ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 9:

³⁰⁰ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

³⁰¹ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 6:

³⁰² «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

³⁰³ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 2:

կառուցապատողներին տրված ՃՀԱ-ի պահանջների կատարումը³⁰⁴, ինչպես նաև փաստագրում³⁰⁵ ավարտված շինարարության շահագործման ընդունումը:³⁰⁶

Այդուհանդերձ, թե՛ հին, թե՛ նորակառույց կամ հիմնովին վերանորոգվող շինություններում քաղաքաշինական օբյեկտների մատչելիության խնդիրը շարունակում է չլուծված մնալ:

Մեկ այլ խնդիր վերաբերում է շինարարական նորմերին (ՇՆուԿ), որոնք լիարժեքորեն չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Նշված չափորոշիչների մեջ պետք է ընդգրկվեն համապատասխան նորմեր ոչ միայն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց, այլև տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կանոնադրության համաձայն՝ վերջինիս գործառույթներից է քաղաքաշինական և լանդշաֆտային համակարգերի ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, ինչպես նաև տարբեր գործառական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների մշակումը:³⁰⁷ Ավելին, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում շինարարություն իրականացնողների պարտականություններից է շինարարության ընթացքում պահպանել հաստատված նախագծի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները: Արդյունքում համապատասխան ՇՆուԿ-ների բացակայության հետևանքով քաղաքաշինական ոչ բոլոր օբյեկտները կարող են հարմարեցված լինել տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Մինչդեռ, ըստ ՀՀ կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտեի՝ կոմիտեի առաջարկությամբ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծում ներառվել են «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի վերանայում և

³⁰⁴ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 37:

³⁰⁵ Ավարտված շինարարության (շենքերի, շինությունների, դրանց վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ընդլայնման և բարեկարգման) շահագործման ընդունումը փաստագրվում է շահագործման ակտով՝ տվյալ օբյեկտի շինարարության թույլտվության համար հիմք հանդիսացող հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացնելուց հետո: Ավարտված շինարարական օբյեկտի շահագործումը թույլատրվում է միմիայն շահագործման ակտը ձևակերպելուց հետո: («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 25):

³⁰⁶ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 25, պարբերություն 2:

³⁰⁷ ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշում, Հավելված N1, ՀՀ կառավարությանն առընթեր Քաղաքաշինության պետական կոմիտեի կանոնադրություն, բաժին 2, կետ 9, ենթակետ 9:

արդիականացում» (2017 թվական) և «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուի մշակում (տեղայնացում)» (2017-2019 թվականների.) միջոցառումները: Միաժամանակ, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով միջոցներ հատկացնելու նպատակով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում (տեղայնացում) ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը՝ ներառելով «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» մշակումը (տեղայնացումը):

Այնուամենայնիվ, 2016 թվականի ընթացքում խնդիրը շարունակել է մնալ չլուծված:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- 1. հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել բոլոր պետական և տեղական ինքնակառավարման, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների սեփականություն հանդիսացող շինությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար,*
- 2. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ապահովել շարունակական վերահսկողություն նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նպատակով,*
- 3. ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին՝ մշակել քաղաքաշինական նորմեր՝ շինությունները տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին հարմարեցնելու նպատակով:*

2. Փոխադրամիջոցների մատչելիություն

ՀՀ-ում տրանսպորտային միջոցները հավասարապես մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործմանը: Թեև վերջին տարիներին իրականացվում են օրենսդրական բարեփոխումներ, այնուամենայնիվ, հաշմանդամություն ունեցող անձանց՝ հանրային տրանսպորտային միջոցներից օգտվելու մատչելիության ապահովման խնդիրը 2016 թվականին ևս լուծում չի ստացել:

Կոնվենցիան, որպես հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու երաշխիք, սահմանում է նաև, որ մասնակից պետությունները ձեռնարկում են

համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովվի փոխադրամիջոցների մատչելիությունը:³⁰⁸

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանության և կառավարման մարմինները հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովեն հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության միջոցներից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը: Խնդրի լուծման նպատակով տրանսպորտային միջոցների ուղեսրահներում պետք է տեղադրված լինեն, օրինակ, ավտոբուսի կանգառման անհրաժեշտության մասին նախազգուշացնող սեղմվող կոճակներ, որոնք կարող են օգտակար լինել խոսքի դժվարություն ունեցող անձանց համար: Ինչ վերաբերում է տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովմանը, ապա նման դեպքերում տրանսպորտային միջոցներում պետք է տեղադրվեն ձայնային ազդանշաններ, որոնք ուղևորներին կնախազգուշացնեն յուրաքանչյուր հաջորդ կանգառի մասին:

Խնդրի լուծման կապակցությամբ Երևան քաղաքում իրականացվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, ըստ Երևանի քաղաքապետարանի, Երևանի ներքաղաքային երթուղիներում ներկայումս շահագործվում է թվով 25 «ՀԻԳԵՆ» մակնիշի ավտոբուսներ, որոնք հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց համար (5 ավտոբուս հարմարեցվել է 2016 թվականին) և այդ նպատակով ավտոբուսներում տեղադրել են հատուկ վերելակային հարմարանքներ: Բացի այդ, թվով 2 «ԼԻԱԶ» մակնիշի տրոլեյբուսներ ևս հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար (տրոլեյբուսները կահավորված են թեքահարթակներով): Տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար քաղաքային հասարակական տրանսպորտը մատչելի և հարմարավետ դարձնելու նպատակով Երևանի ներքաղաքային երթուղիներում 2016 թվականին 36 «ՀԻԳԵՆ» մակնիշի ավտոբուսների ուղեսրահներում տեղադրվել են կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարման ավտոմատ սարքեր (ընդհանուր տեղադրվել է 73 «ՀԻԳԵՆ» մակնիշի ավտոբուսների ուղեսրահներում):

Այս գործընթացը չպետք է սահմանափակվի միայն մայրաքաղաքով: Ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տրամադրած տվյալների՝ մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված ներհամայնքային հասարակական տրանսպորտային միջոցներ չեն գործում:

Միաժամանակ, ըստ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տեղեկությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ այլ խմբերի համար տեղաշարժման հասանելիությունն ապահովելու նպատակով համապատասխան նախատեսվում է լրացումներ կատարել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ

³⁰⁸ «Հաշմանդամություն ունեցող իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 9, կետ 1:

կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 762 որոշմամբ հաստատված կարգում: Վերջին նախագծով, սակայն հաշմանդամություն ունեցող անձանց նստեցման և իջեցման հարմարեցման կամ վերասարքավորման պահանջը չի տարածվում միկրոավտոբուսների և երթուղում 1-4 ավտոբուս (չհաշված պահուստային) շահագործող կազմակերպությունների վրա: Ավելին, որպես մրցույթին մասնակցելու պայման սահմանված է, որ կազմակերպությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի նստեցման և իջեցման համար հարմարեցված կամ վերասարքավորված ավտոբուսներ երթուղում շահագործվող 1-10 (այդ թվում՝ յուրաքանչյուր ոչ լրիվ տասնյակի համար) ավտոբուսի դեպքում՝ միայն 1 ավտոբուսի հաշվարկով:

Ուստի, չնայած ձեռնարկված քայլերին, ներհամայնքային և միջհամայնքային տրանսպորտի մատչելիության ապահովման խնդիրը հաշմանդամություն ունեցող անձանց համար շարունակում է մնալ չլուծված, ինչը հանգեցնում է վերջիններիս անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի խախտմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց համար միջհամայնքային, ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովմանը:

3.Տեղեկատվության և հաղորդակցության մատչելիություն

Թեև Կոնվենցիան սահմանում է, որ մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան փնտրել, ստանալ և տարածել տեղեկություններ ու գաղափարներ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով, այնուամենայնիվ, ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիությունը բավարար կերպով ապահովված չէ:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչպես և հաշմանդամություն չունեցող անձանց համար տեղեկատվությունն անհրաժեշտ է իրենց առօրյա կյանքում որոշումների կայացման համար: Տեղեկատվություն ստանալն ենթադրում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են, օրինակ, հնարավորություն կարդալու գնապիտակներ և հայտարարություններ, առողջապահական տեղեկատվություն պարունակող բուկլետներ, դիտելու կայքէջեր, հեռուստացույց և այլն, ինչը ՀՀ-ում ապահովված չէ:

Մինչդեռ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական իշխանության և կառավարման մարմինները, ՀՀ տարածքում գործող բոլոր գործատուները հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում են կապի և տեղեկատվության միջոցներից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը:

Մինչդեռ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվում են տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, հատուկ կարգավորումներ ամրագրված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության ազատության իրավունքի լիարժեք իրացումն ապահովելու համար: Այսպես, եթե տեսողական խնդիր ունեցող անձն օրենքի համաձայն հարցում է կատարում իրավասու մարմնին, ապա հստակ չէ, թե ինչպես պետք է ապահովվի տրամադրվող տեղեկատվության մատչելիությունը վերջինիս համար: Մեկ այլ օրինակ է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 5.1-րդ հոդվածը, որի համաձայն՝ հանրային հեռուստառադիոընկերությունը և ՀՀ-ում գործող այլ մասնավոր հեռուստաընկերություններ, որոնք հեռարձակում են մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող անձանց համար տեղեկատվության ստացման մատչելիությունը, ինչպես նաև օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրերով: Միաժամանակ, Կոնվենցիան պարտադրում է պետությանը զանգվածային լրատվական միջոցների և համացանցի միջոցով տեղեկատվություն տրամադրողներից պահանջել իրենց ծառայությունները մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց համար³⁰⁹:

Այնուհանդերձ, մի շարք քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ և ոլորտի մասնագետներ նշում են, որ տեղեկատվության մատչելիության ապահովումը, հակառակ օրենքի պահանջի, շարունակում է չլուծված մնալ լսողական խնդիրներ ունեցող անձանց համար: Արդյունքում, լսողական խնդիրներ ունեցող անձինք օգտվում են բացառապես համակարգչից, որտեղ տեղեկատվություն ստանալու հնարավորությունն ավելի մեծ է:³¹⁰

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- 1. ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքի իրացումը,*
- 2. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ և առնչվող այլ հոդվածներում և իրավական ակտերում կատարել համապատասխան լրացում՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց ճիշտ ժամանակին ու առանց*

³⁰⁹ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 21, կետ դ:

³¹⁰ <http://champord.am/xuleri-mayreni-lezun-jesteri-ashxarh-2/>

հավելյալ ծախսերի հասարակության համար նախատեսված տեղեկատվության մատչելի ձևաչափերով և հաշմանդամության տարբեր տեսակներին հատուկ տեխնոլոգիաներով տրամադրումը,

3. ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին՝ իրականացնել վերահսկողություն մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներում ժեստերի լեզվով թարգմանության կամ լուսագրերի ապահովման օրենքի պահանջի կատարման նկատմամբ:

4. Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին

ՀՀ-ում դեռևս մի շարք մշակութային հաստատություններ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի, ինչպես նաև նշված շինությունների ներսում նրանց ազատ տեղաշարժի համար: Ավելին, մի շարք կինոթատրոնների, թատրոնների և այլ մշակութային կառույցների դահլիճներում ընդհանրապես բացակայում են հենաշարժողական, ինչպես նաև լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ հարմարեցված տարածքներ:

Կոնվենցիայի 30-րդ հոդվածն ամրագրում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը և պարտավորեցնում պետությանը ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նրանց համար մշակութային գործերի, հեռուստահաղորդումների, ֆիլմերի, թատրոնի և մշակութային ներկայացումների ու ծառայությունների մատչելիությունն ապահովելու համար:

Միաժամանակ, ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2014 թվականի թիվ 2 Ընդհանուր մեկնաբանության մեջ նշվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի վայելելու արվեստը, մասնակցելու սպորտային միջոցառումներին և այլն: Սակայն, սայլակի օգնությամբ տեղաշարժվող անձինք չեն կարող գնալ համերգի, եթե համերգասրահն ապահովված է միայն աստիճաններով: Կույր անձինք չեն կարող վայելել նկարչությունը, եթե պատկերասրահում չկա վերջինիս նկարագրությունը, որը նրանք կարող են լսել: Լսողության խնդիրներ ունեցող անձինք չեն կարող վայելել ֆիլմը, եթե չկան տիտրեր, չեն կարող վայելել ներկայացումը, եթե չկա ժեստերի լեզվով թարգմանություն: Մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող վայելել գիրքը, եթե չկա նշված գրքի այլընտրանքային դյուրացված տարբերակը:³¹¹

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանության և կառավարման տեղական մարմինները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային հիմնարկների և մարզական

³¹¹ <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/033/13/PDF/G1403313.pdf?OpenElement>

կառույցների մատչելիությունը և դրանցից օգտվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և հատուկ մարզական գույքի տրամադրումը:

Ըստ ՀՀ մշակույթի նախարարության՝ խնդիրը լուծվել է նորակառույց կամ վերանորոգված մշակութային հաստատություններում: Միաժամանակ, ըստ նախարարության տեղեկությունների, 29 մշակութային կազմակերպություններից 8-ը գտնվում է առաջին հարկում, 10-ը՝ տեղում ստեղծում է հնարավորություններ, 10-ը՝ ունի թեքահարթակներ: Ավելին, ըստ տրամադրած տեղեկությունների, 5 կազմակերպությունների շենքեր³¹² տեխնիկապես հնարավոր չէ հարմարեցնել: Իսկ «Գ. Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն», «Պետական կամերային երաժշտական թատրոն», «Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն», «Գյումրու Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն», «Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոն», «Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն», «Երևանի կամերային պետական թատրոն», «Կ. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոն», «Հայաստանի պետական ֆիլհարմոնիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունների դահլիճներում բացակայում են անվասայլակի օգնությամբ տեղաշարժող անձանց համար նախատեսված համապատասխան հատվածներ: Ավելին, ՀԿ-ները նշում են, որ Երևան քաղաքում գործող կինոթատրոններից միայն նորաբաց «Կինոպարկում» ընդհանուր թվից մի քանի նստատեղեր հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Միայն թեքահարթակները, հարմարեցված սանհանգույցներն ու շարժական նստատեղերը չեն կարող ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը տարբեր միջոցառումներին: Առկա է խնդիր նաև տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար, օրինակ, ֆիլմի հասանելիությունն ապահովելու հարցում. ցուցադրությունների ժամանակ նրանց համար չկան ո՛չ լուսագրեր, ո՛չ ձայնային նկարագրություն:³¹³

Հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չեն նաև բազմաթիվ մարզադպրոցներ, մինչդեռ Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն, մասնակից պետությունն ապահովում է հատուկ սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության հնարավորությունը, ինչպես նաև խրախուսում է անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով:

Մարզադպրոցների շենքերում, մասնավորապես, բացակայում են թեքահարթակները, ինչպես նաև անհրաժեշտ հարմարանքները շենքերի ներսում ազատ տեղաշարժի համար³¹⁴: Նշվածի հետևանքով, հաշմանդամություն ունեցող

³¹² Վ. Պետրոսյանի անվան Արագածոտնի մարզային գրադարան, Վայոց ձորի մարզային գրադարան, Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն, Ե. Չարենցի տուն-թանգարան:

³¹³ <http://www.aravot.am/2016/10/18/817426/>

³¹⁴ Օրինակ՝ վերելակ և (կամ) ամբարձիչ, տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար սանհանգույցների և դռների մատչելիություն և այլն:

մարզիկները զրկվում են պարաօլիմպիկ, սուրդօլիմպիկ ու հատուկ օլիմպիադաների խաղերին և այլ մրցաշարերին մասնակցելու համար արդյունավետ, շարունակական և լիարժեք նախապատրաստման հնարավորությունից:

Ըստ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության տվյալների՝ վերջինիս ենթակայության 24 մարզադպրոցներից 2 մարզադպրոցների մուտքի մոտ կան թեքահարթակներ, մյուսները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի, ելքի, հաստատություններում ազատ տեղաշարժի և սանհանգույցներից օգտվելու համար:

Դեռևս 2015 թվականի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման մեջ բարձրացվել էր Երևանի պարաօլիմպիկ մարզաձևերի մարզադպրոց ստեղծելու հարցը, ինչը հաշմանդամություն ունեցող մարզիկների նկատմամբ խտրական դրսևորումների և մեկուսացման ռիսկ է պարունակում: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի պարաօլիմպիկ մարզաձևերի մարզադպրոցի ստեղծումը պայմանավորված է չորս տարին մեկ անգամ անցկացվող միջազգային պարաօլիմպիկ օլիմպիական խաղերին հաշմանդամություն ունեցող անձանց մարզումների համար համապատասխան մասնագիտացված պայմանների ապահովմամբ: Ուստի, պարաօլիմպիկ մարզաձևերի մասնագիտացված մարզադպրոցի ստեղծումն իր մեջ չի կարող պարունակել խտրական դրսևորումներ և մեկուսացման ռիսկ:

Այնուամենայնիվ, Կոնվենցիայի համաձայն, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումը, այդ թվում՝ սպորտային կյանքին ներգրավման միջոցով, ենթադրում է մյուսների հետ հավասար հիմունքներով սպորտային վայրերի մատչելիության ապահովում՝ խտրականության ու մեկուսացման բացառման, հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքի ներառման խթանման սկզբունքների հիման վրա³¹⁵: Հետևաբար, մարզադպրոցը պետք է հավասարապես մատչելի լինի բոլոր անձանց համար՝ անկախ վերջիններիս մոտ հաշմանդամության առկայությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին, ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին, ինչպես նաև ՀՀ տեղական կառավարման մարմիններին քայլեր ձեռնարկել, անհրաժեշտության դեպքում նախատեսելով նաև ժամանակավոր լուծումներ (թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ), մշակույթային շենքերը, վայրերը, միջոցառումները, ինչպես նաև մարզադպրոցներն ու սպորտային միջոցառումները հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ:

5. Կրթության իրավունք

Նախադպրոցական կրթություն

³¹⁵ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 30-րդ հոդվածներ:

ՀՀ-ում շարունակում է խնդրահարույց մնալ հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) մատչելիությունը³¹⁶:

Ըստ Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների՝ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թվով 8 մանկապարտեզներ հարմարեցված են հաշմանդամություն ունեցող երեխաների մատչելի մուտքի և ելքի համար: Միաժամանակ, 2016 թվականի ընթացքում մեկ մանկապարտեզում ստեղծվել է հատուկ կարիքներով երեխաների վերականգնողական կենտրոն: Այնուամենայնիվ, ձեռնարկված քայլերը բավարար չեն, քանի որ միայն թեքահարթակների տեղադրումը և շենքային պայմանների ոչ լիարժեք հարմարեցումները չեն կարող ապահովել հաշմանդամություն ունեցող երեխաների լիարժեք նախադպրոցական կրթություն:

Մարզերում ևս գրեթե բացակայում են հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելի ՆՈՒՀ-եր: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ հաստատություններ հարմարեցված են մուտքի և ելքի համար, իսկ որոշներում հարմարեցված են նաև սանհանգույցները (օրինակ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում համայնքային ենթակայության 46 ՆՈՒՀ-երից՝ 8-ը ունեն թեքահարթակներ: ՀՀ Լոռու մարզում գործող համայնքային ենթակայության 29 ՆՈՒՀ հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի, ելքի համար: ՀՀ Վայոց Ձորի մարզում առկա են 17 ՆՈՒՀ-եր, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չեն ոչ մուտքերը, ոչ էլ՝ սանհանգույցները:):

Վերոնշյալից պարզ է դառնում, որ ՀՀ-ում ապահովված չէ հաշմանդամություն ունեցող երեխաների համար ներառական նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է ապահովել բոլոր նախադպրոցական կրթական հաստատությունների ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Հանրակրթություն

Չնայած նրան, որ Հայաստանը որդեգրել է ներառական կրթության աստիճանական անցման քաղաքականություն, համապատասխան փոփոխություններ նախատեսելով նաև օրենքով, այնուամենայնիվ, ոլորտում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք, մասնավորապես, վերհանվել էին Պաշտպանի կողմից՝ դեռևս 2015 թվականին ներառական կրթություն իրականացնող մի շարք

³¹⁶ ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն 2016 թվականին մի շարք երկրների զեկույցների վերաբերյալ տված իր եզրափակիչ դիտարկումներում նշել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների համար պետք է ապահովվի հասանելի, մատչելի և ներառական նախադպրոցական կրթություն: Տե՛ս, օրինակ, ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներ թիվ CRPD/C/SVK/CO/1 և թիվ CRPD/C/LTU/CO/1:

հանրակրթական դպրոցների մշտադիտարկման արդյունքում: Մասնավորապես, ներառական դպրոցների շենքերի ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար սահմանափակվում է հիմնականում դպրոցների մուտքի մոտ կառուցված թեքահարթակով: Տեղաշարժման դժվարություն ունեցողներ անձանց համար բացակայում են վերելակները, դռները դժվար են հրվում, ունեն շեմեր, չկան բռնակներ, բացակայում են հարմար սանհանգույցները, իսկ կահույքը, երբեմն մատչելի է դառնում ծնողների ջանքերի շնորհիվ: Շենքերը նաև հարմար չեն տեսողության և լսողության խնդիրներ, մտավոր առանձնահատկություններ և այլ դժվարություններ ունեցող անձանց համար (բացակայում են, օրինակ, գունային գծանշումներ և այլն):

Թե՛ Երևան քաղաքում, թե՛ Հայաստանի տարբեր մարզերում գործող դպրոցների մատչելիության խնդիրները գրեթե նույնն են: Մասնավորապես, ըստ տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրված տեղեկությունների՝ ներառական կրթություն իրականացնող դպրոցների մի մասը հարմարեցված է թեքահարթակներով՝ ինչն ապահովում է մատչելիությունը միայն մուտքի և ելքի համար: Որոշ դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխայի առկայության դեպքում դասապրոցեսը կազմակերպվում է դպրոցի առաջին հարկում: Առկա են նաև ներառական կրթություն իրականացնող դպրոցներ, որոնց սանհանգույցները ևս հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին (օրինակ՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության 119 դպրոցից միայն 5-ն ունեն թեքահարթակ: ՀՀ Լոռու մարզի ենթակայության թվով 150 հանրակրթական ուսումնական հաստատություններից մեկ դպրոց ունի հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված սանհանգույց, որը կառուցվել է 2016 թվականին:): Վերոնշյալը վկայում է, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական մատչելիությունը բավարար կերպով ապահովված չէ:

Ավելին, դեռևս 2015 թվականին իրականացված «Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում առկա հիմնախնդիրները» հետազոտության համաձայն³¹⁷՝ մասնագետները կարիք ունեն տեսական և գործնական բնույթ կրող վերապատրաստումների, ինչպես նաև օժանդակող գիտամեթոդական գրականության: Դպրոցներում գրեթե չկան կամ շատ քիչ են աշխատանքային գործիքները՝ աշխատանքային տետրեր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, մեթոդական գրականություն, երեխայի, ընտանիքի կարիքների գնահատման, դեպքի վարման համար անհրաժեշտ փաստաթղթեր: Բացի այդ, հետազոտության համաձայն, դասասենյակները համալրված չեն դիդակտիկ նյութերով, զարգացնող խաղերով, որոնց անհրաժեշտությունը մեծ է հատկապես տարրական դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության արդյունավետ կազմակերպման համար: Բազմամասնագիտական թիմի անդամները չունեն երեխային հետազոտելու ստանդարտ փաթեթներ և յուրաքանչյուր դպրոց կիրառում է իր կողմից ստեղծված

³¹⁷ <http://specedu.am/wp-content/uploads/2015/12/joxovacu.pdf>

գործիքակազմը, ինչը բարդացնում է դպրոցում երեխայի դիտարկման և հետազոտման գործընթացն ու համապատասխան տեղեկությունների տրամադրումը բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնին և համապատասխան այլ կառույցներին:³¹⁸

«Կոռուպցիոն ռիսկերի գնահատում ՀՀ հանրակրթության բնագավառում» հետազոտությունը³¹⁹ ցույց է տվել, որ ոչ միայն ներկայումս սահմանված չեն բազմամասնագիտական թիմի անդամների պարտականությունների ծավալը, աշխատանքի նկարագրությունը, ինչպես նաև հաստիքների համար մասնագիտական նվազագույն պահանջները, այլև դպրոցներ այցելության ընթացքում բացահայտվել են մի քանի դեպքեր, երբ, օրինակ, հատուկ մանկավարժի հաստիքում աշխատել է նման մասնագիտացում չունեցող անձը:

Միաժամանակ, «Հյուման Ռայթս Ուոչ» իրավապաշտպան կազմակերպությունը (Human Rights Watch) պարզել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաները, այդ թվում՝ ներառական համարվող հանրակրթական դպրոցներում, ՀՀ-ում հաճախ չեն ստանում որակյալ կրթություն մյուսների հետ հավասար հիմունքներով: Ողջամիտ հարմարեցումների բացակայությունը, այդ թվում՝ շենքերի տարրական ֆիզիկական մատչելիությունը, վերապատրաստված՝ բավարար թվով աշխատակազմի, երեխաների կրթության նկատմամբ անհատականացված մոտեցման պակասը և սոցիալական զարգացման աստիճանը, խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող շատ երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությանը:³²⁰ Ավելին, հաշմանդամություն ունեցող երեխաները հաճախ ներկա չեն դասերին մյուս երեխաների հետ միասին կամ ներկա են դասարաններում, բայց լիովին ներգրավված չեն կրթական ծրագրում:

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2014 թվականի թիվ 2 Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ մատչելի պետք է լինի ներառական կրթության ամբողջ գործընթացը. ոչ միայն շենքերը, այլ նաև տեղեկատվությունը և հաղորդակցության միջոցները:

Նշված հարցերի լուծման համար պետական մարմինները ձեռնարկել են մի շարք քայլեր: Մասնավորապես, ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության, 2016 թվականին «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսված ծրագրերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում, հրատարակում և ձեռքբերում» ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել՝ Բրայյան համակարգով գրելու տետրեր և «Անհատական ուսուցման պլանի մշակման մեթոդական ուղեցույց-ձեռնարկ»-ներ, «Հաղթահարելով դժվարությունները» ֆիլմ-ձեռնարկներ, ինչպես նաև կրթական խաղեր: ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 969-Ն և 2016 թվականի

³¹⁸ Տե՛ս նույն տեղում:

³¹⁹ «Կոռուպցիոն ռիսկերի գնահատում ՀՀ հանրակրթության բնագավառում», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, «Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ:

³²⁰ https://www.hrw.org/sites/default/files/report_pdf/armenia0217arm_web_0.pdf

սեպտեմբերի 22-ի N 986-Ն որոշումներով «Միսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Գորիսի թիվ 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ները վերանվանվել են «Միսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ների:

Հայաստանում ներառական կրթություն իրականացնող դպրոցների թիվը 2016 թվականին ավելացել է 78-ով: 2016 թվականի դեկտեմբեր ամսի դրությամբ Հանրապետությունում գործել է ներառական կրթություն իրականացնող 260 հանրակրթական ուսումնական հաստատություն, որոնցում ընդգրկված է շուրջ 6700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա³²¹: 2015-2016 թվականներին ուսումնական տարում ներառական կրթություն իրականացնող 203 հանրակրթական դպրոցներում սովորել են 4706 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ³²²:

Սակայն վերոնշյալ տվյալները և վերլուծությունը փաստում են, որ ձեռնարկվող քայլերը բավարար չեն հանրակրթական ուսումնական կրթություն իրականացնող հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների համար լիարժեք ներառական կրթության ապահովման համար:

Ուստի անհրաժեշտ է, որպեսզի ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի, ինչպես նաև ՀՀ տեղական կառավարման մարմինների կողմից իրականացվեն շարունակական համակարգային միջոցառումներ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ուղղված՝

- *դպրոցների ֆիզիկական մատչելիության,*
 - *կրթության և ուսումնական ծրագրերի բովանդակային մատչելիության*
 - *ուսուցիչների շարունակական վերապատրաստման ապահովման ուղղությամբ:*
- Երևանի լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում միայն մեկ օտար լեզու դասավանդելու խնդիր*

2016 թվականին Պաշտպանին ուղղված դիմում-բողոքով «Երևանի լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր»-ում սովորող երեխաների մի խումբ ծնողներ բարձրաձայնել են կրթահամալիրում բացի ռուսերենից այլ օտար լեզու չդասավանդելու խնդիրը: Դիմումի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և որոշ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված է անգլերեն լեզվի ուսուցում, մինչդեռ լսողության խանգարումներ ունեցող երեխաների հանրակրթական հատուկ կրթահամալիրի օրինակելի ուսումնական պլանով այն չի նախատեսվում:

³²¹ <http://armedu.am/index.php/am/news/view/526>

³²² ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N1 արձանագրային որոշման Հավելված N1:

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Միաժամանակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման սկզբունքներից է այն, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում:

Մինչդեռ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նշված խնդրի կապակցությամբ հայտնել է, որ հանրակրթական հիմնական հատուկ պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2016-2017 ուստարվա օրինակելի ուսումնական պլանների մայրենի (հայերեն) լեզվից բացի նախատեսված է նաև «Ժեստերի լեզու» և «Ռուսաց լեզու» առարկաների դասավանդում: Հայտնել են նաև, որ նոր օտար լեզվի ուսուցանումը կարող է առաջացնել ուսումնառության լրացուցիչ դժվարություններ և գրեթե անհաղթահարելի խնդիրներ լսողության խանգարում ունեցող երեխաների մեծ մասի համար: Միաժամանակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ մյուսների հետ հավասար իրավունքներ ունենալու մասին դրույթի հետ կապված նշել են, որ այդ իրավունքն այս դեպքում իրացված է, քանի որ ուսումնական պլանի բովանդակությունը համապատասխանում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի և Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման «Հանրակրթության պետական չափորոշիչ» վերտառությամբ 2-րդ Հավելվածի՝ «Հանրակրթական ծրագրերի առարկայացանկի ձևավորման հիմնական սկզբունքները» վերտառությամբ՝ III-րդ բաժնի 13-րդ կետի համաձայն, միջնակարգ հանրակրթական ընդհանուր պետական ծրագրում «Օտար լեզուներ» բնագավառը ներկայացվում է երկու լեզվով: Օտար լեզուների ընտրության կարգն ու ըստ դասարանների դրանց դասավանդման հերթականությունը սահմանվում են օրինակելի ուսումնական պլանով: Սահմանվում է նաև, որ հանրակրթական հատուկ և մասնագիտացված պետական ծրագրերի առարկայացանկը մշակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ հանրակրթական ընդհանուր պետական ծրագրի առարկայացանկի հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների զարգացման առանձնահատկություններն ու ծրագրի մասնագիտական ուղղվածությունը:

Միաժամանակ, ՀՀ ԿԳ նախարարի՝ «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական

հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ հաստատելու մասին» 2016 թվականի հունիսի 27-ի N 670-Ն հրամանի 3-րդ Հավելվածով հաստատված Հանրակրթական հատուկ ուսումնական հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների 7-րդ կետի համաձայն՝ օտար լեզվի ընտրության կարգը սահմանված է հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ուսումնական պլանի (նշված հրամանով հաստատված Հավելված 1)՝ հաստատության ուսումնական պլանների ընդհանրական պարզաբանումների «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում: Նշված կարգի համաձայն՝ հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից առաջինը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու:

Ուստի, քննարկվող դեպքում ուսումնական պլանի բովանդակությունը չի համապատասխանում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի և Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք, որպեսզի ՀՀ կրթության և գիտության նախարարությունն ապահովի Երևանի լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում երկրորդ օտար լեզվի ուսուցանումը:

Բարձրագույն կրթություն

Չնայած ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին՝ արդիական է մնում բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ)՝ մատչելիության խնդիրը և՛ ֆիզիկական, և՛ կրթական ծրագրերի բովանդակության առումներով:

Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց առանց խտրականության ու մյուսների հետ հավասար հիմունքներով մատչելի լինեն ընդհանուր բարձրագույն կրթությունը, մասնագիտական կրթությունը, մեծահասակների ուսուցումը և կրթությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ-ում ԲՈՒՀ-երի ֆիզիկական մատչելիությունն ապահովված չէ, մասնավոր դեպքերում այն սահմանափակվում է մուտքի թեքահարթակի և վերելակի առկայությամբ: Դրա պատճառներն են ոչ միայն Խորհրդային միության տարիներին կառուցված շենքերը և հարմարեցումները կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սակավությունը, այլև հիմնախնդրի վերաբերյալ իրազեկվածության պակասը և որպես հետևանք՝ հիմնախնդիրը չկարևորելը:³²³

Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության տվյալների՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին ամբողջությամբ հարմարեցված է միայն Հայաստանի ամերիկյան համալսարանը: Մյուս բուհերում շարունակվում են

³²³ <http://www.osce.org/hy/yerevan/142231?download=true>

աշխատանքները՝ ԲՈԻՀ-ի շենքերն ու ենթակառուցվածքները հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցնելու ուղղությամբ: Ավելին, «Ունիսոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ մշակվում են «Բարձրագույն կրթության ներառականության չափորոշիչները»: Միաժամանակ, «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների» համալիր ծրագրով նախատեսված են միջոցառումներ, որոնք կօգնեն հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրվել բուհական կյանքին և նախատեսվում է մինչև 2021 թվականը մշակել և իրականացնել Հայաստանում ներառական բարձրագույն կրթության ներդրման գործողությունների ծրագիր:

Դեռևս 2014 և 2015 թվականներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում բարձրաձայնվել էր հաշմանդամություն ունեցող անձանց՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ (Ֆիզկուլտուրայի ինստիտուտ) ընդունվելու և սովորելու հնարավորությունից զրկված լինելու խնդիրը: Մասնավորապես, ՀՀ կառավարության որոշմամբ, որով կարգավորվում է ՀՀ պետական և ոչ պետական ԲՈԻՀ-եր ընդունելության գործընթացը, նախատեսվում է, որ Ֆիզկուլտուրայի ինստիտուտի մասնագիտական առարկաների քննությունները ներբուհական քննություններ են և անցկացվում են տվյալ մասնագիտության առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան³²⁴: ԲՈԻՀ-ի ընդունման կարգից, սակայն բխում է, որ անկախ ընտրած մասնագիտությունից, բոլոր դիմորդները պարտավոր են հանձնել «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկան³²⁵, ինչպես նաև ներկայացնել բժշկական զննության եզրակացություն³²⁶: Ըստ այդմ, հաշվի չեն առնվում հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ կարիքները և հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք զրկվում են տվյալ ԲՈԻՀ-ում կրթություն ստանալու հնարավորությունից՝ վերոնշյալ առարկայից քննություն հանձնելու հնարավորություն չունենալու պատճառով:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ԲՈԻՀ-ին տրվել է հանձնարարական՝ մշակելու համապատասխան ծրագրեր և մեթոդական փաստաթղթեր հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կրթությունն ապահովելու նպատակով: Համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ հարցի լուծման համար անհրաժեշտ է կատարել խոշոր ֆինանսական ներդրումներ, քանի որ Ֆիզկուլտուրայի ինստիտուտը չունի համապատասխան ենթակառուցվածքներ՝ ողջամիտ հարմարեցումների ապահովմամբ, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց կրթությունը կազմակերպելու համար: Ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության՝ 2016-2017

³²⁴ ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 597-Ն որոշում:

³²⁵ Ներառում է վազք, եռացատկ, ձգումներ և այլն:

³²⁶ «Ֆիզիկական Կուլտուրա և Սպորտ» մասնագիտության ընդունելության քննության ծրագիրը և զննահատման չափանիշները Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկայից հաստատվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից 2009 թվականին, <http://www.asipc.am/index.php?lng=am&p=page53>

ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման ընդունելության արդյունքում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ է ընդունվել հաշմանդամություն ունեցող 1 ուսանող:

Չնայած նշված ձեռնարկված քայլերին, այնուամենայնիվ ոլորտում անհրաժեշտ է կատարել համակարգային բարեփոխումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց բարձրագույն և մասնագիտական կրթությունն ապահովելու ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեին, ինչպես նաև ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններին ապահովել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆիզիկական և կրթական ծրագրերի մատչելիությունը:

6. Առողջապահական ծառայությունների մատչելիություն

ՀՀ-ում դեռևս լուծված չէ նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական ծառայությունների մատչելի դարձնելու խնդիրը: Մինչդեռ, Կոնվենցիայի 4-րդ և 25-րդ հոդվածներին համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն և օժանդակեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների՝ այդ թվում՝ առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացումն առանց հաշմանդամության պատճառով որևէ խտրականության:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Մեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» (Հետազոտություն) շրջանակներում դեռևս 2015 թվականին այցեր են կատարվել ՀՀ մի շարք մարզային բժշկական հաստատություններ: Այցերի ընթացքում պարզ է դարձել, որ բժշկական հաստատություններում, գրեթե բացակայում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ֆիզիկական միջավայրը՝ անարգել տեղաշարժվելու և բժշկական ծառայություններից օգտվելու համար: Միաժամանակ, առկա հարմարեցումները հիմնականում սահմանափակվում են միայն թեքահարթակների կառուցմամբ: Ավելին, գերակշռող դեպքերում բժշկական հաստատությունները չունեն համապատասխան սարքավորումներ հենաշարժական խնդիր ունեցող անձանց պատշաճ սպասարկումն ապահովելու համար:

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության՝ մարզերում բժշկական հաստատությունները հիմնականում լիարժեքորեն հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին (օրինակ՝ ՀՀ Արագածոտնի մարզում տեղակայված 22 բժշկական հաստատությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովված է մասնակիորեն (9-ը չունեն թեքահարթակներ), ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող

բուժհաստատությունները գործում են դեռ խորհրդային տարիներից, մասնաշենքերի վերանորոգումների ընթացքում կառուցվել են մատչելի մուտքեր և ելքեր, սանհանգույցները հարմարեցված չեն, ազատ տեղաշարժի համար գործում են վերելակներ: ՀՀ Արարատի մարզում գործող 56 բժշկական հաստատություններից 23-ը մասնակիորեն հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի, ելքի, հաստատությունում ազատ տեղաշարժի, սանհանգույցներից, ինչպես նաև բոլոր բժշկական ծառայություններից օգտվելու համար:): Ավելին, որոշ բժշկական հաստատություններում բացակայում են հարմարեցված սանհանգույցներ, իսկ որոշ դեպքերում շենքի հարմարեցվածությունը կապվում է մեկ հարկանի շինության հետ:

Հետազոտության շրջանակներում թիմին չի հաջողվել գտնել առողջապահական որևէ օժանդակ նյութ տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց համար: Նման տեղեկատվության պատշաճ առկայության համար պահանջվում է ընտանիքի անդամների կամ ծանոթների աջակցությունը, ինչը կարող է խախտել հաշմանդամություն ունեցող անձի՝ բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովման պահանջի իրավունքը³²⁷: Ավելին, Հետազոտության ընթացքում այցելած բժշկական հաստատություններում բուժաշխատողների հետ զրույցների արդյունքում պարզվել է, որ բուժանձնակազմում գրեթե բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու առանձնահատուկ հմտությունների տիրապետող մասնագետներ:

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության՝ բուժաշխատողների շփումները պացիենտների հետ և այդ շփումներում էթիկական նորմերի պահպանումը ուսուցանվում է բժշկական կրթության դիպլոմային և հետբուհական կրթության փուլերում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուժաշխատողներն իրենց շփումներում պացիենտների հետ արդեն իսկ պարտավոր են լինել նրբանկատ և պահպանել էթիկական նորմեր, սպա որևէ լրացուցիչ կրթություն հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփումներում վարվելակերպի առանձնահատկություններ ուսուցանելու վերաբերյալ չի իրականացվում: Միաժամանակ, ըստ նախարարության, ՀՀ տարածքում բուժաշխատողների վերապատրաստումներին պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի միջոցով դրամական միջոցներ չեն հատկացվում:³²⁸

Ավելին, ըստ ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ-ում ժեստերի լեզվի թարգմանչի ծառայություն, ինչպես նաև տեսողության խնդիրների հետ առնչվող հաշմանդամություն ունեցող անձանց համար Բրայլյան համակարգով, խոշոր

³²⁷ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 5, պարբերություն 1, կետ գ:

³²⁸ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշումն ընդունելու կապակցությամբ շահագրգիռ նախարարությունների առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկանք, ամփոփաթեթը, <https://www.e-gov.am/sessions/archive/2017/01/12/>

տառատեսակով կամ աուդիոգրքերով տեղեկատվություն մատուցող բժշկական հաստատություններ չկան:

Մինչդեռ, ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն 2016 թվականին մի շարք երկրների զեկույցների վերաբերյալ տված իր եզրափակիչ դիտարկումներում³²⁹ նշել է, որ անհրաժեշտ է ապահովել բուժհաստատությունների, բժշկական ծառայությունների և բուժտեխնիկայի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար, այդ թվում՝ ատամնաբույժների, գինեկոլոզների և մանկաբարձների ընդունարաններում: Ավելին, բուժանձնակազմը պետք է վերապատրաստվի՝ հաշվի առնելով հաշմանդամության՝ մարդու իրավունքների վրա հիմնված մոդելը, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձի՝ ազատ և տեղեկացված համաձայնություն տալու իրավունքը:

Ըստ այդմ, պետությունը բավարար կերպով չի ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց՝ Կոնվենցիայով երաշխավորված առողջության պահպանման իրավունքի լիարժեք իրացում:

Ուստի անհրաժեշտ է՝

- 1. ՀՀ առողջապահության, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջության պահպանման իրավունքի լիակատար իրականացմանը, այդ թվում՝ ապահովելով բժշկական ծառայությունների և բուժտեխնիկայի մատչելիությունը վերջիններիս համար:*
- 2. ՀՀ առողջապահության նախարարության կողմից բուժանձնակազմի համար իրականացնել շարունակական վերապատրաստումներ՝ հաշվի առնելով հաշմանդամության՝ մարդու իրավունքների սկզբունքի վրա հիմնված մոդելը:*
- 3. ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ապահովել բուժհաստատությունների մատչելիությունը:*

7. Աշխատանք և զբաղվածություն

2016 թվականի ընթացքում շարունակում է հաշմանդամություն ունեցող անձանց գործազրկության խնդիրը, ինչը պետության կողմից իրականացվող զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրերի անարդյունավետության և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կարծրատիպերի առկայության արդյունք է:

2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմել է 2926 անձ³³⁰, նախորդ տարվա՝ 2499-ի³³¹ փոխարեն:

³²⁹ Տե՛ս, օրինակ, ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2016 թվականի Եզրափակիչ դիտարկումներ թիվ CRPD/C/LTU/CO/1, CRPD/C/PRT/CO/1 և CRPD/C/SVK/CO/1:

³³⁰ http://armstat.am/file/article/sv_12_16a_141.pdf

Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերում ընդգրկված անձանց թվաքանակը 2016 թվականի ընթացքում կազմել է 5086 մարդ, որոնցից 278-ը հաշմանդամություն ունեցող անձինք³³²:

Միաժամանակ, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, 2016 թվականի ընթացքում զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվել է 1063 հաշմանդամություն ունեցող անձ: Այն կազմում է Զբաղվածության պետական գործակալությունում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց 36.7 տոկոսը: Հաշմանդամություն ունեցող 990 անձ տեղավորվել է աշխատանքի (727-ը՝ սեզոնային կամ ժամանակավոր աշխատանքի), այդ թվում 918-ը՝ զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի աջակցությամբ:

Կոնվենցիան սահմանում է, որ մասնակից պետություններն անհրաժեշտ քայլեր են ձեռնարկում նաև օրենսդրության միջոցով, որպեսզի, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց համար զարգացնեն աշխատանքային հնարավորությունները և նպաստեն աշխատանքային առաջընթացին աշխատուժի շուկայում, ինչպես նաև աջակցեն աշխատանք գտնելու, ձեռք բերելու, պահպանելու և աշխատանքի վերադառնալու հարցերում:³³³

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրությամբ որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներ, ի թիվս այլնի, սահմանվում է բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը, ինչպես նաև հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության խթանումը:³³⁴

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ սահմանվեց հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի պարտադիր ապահովման քվոտա: Սակայն, քվոտայի պահանջի հետ մեկտեղ օրենքը նախատեսում է նաև, որ այն չկատարելու դեպքում կազմակերպությունը կատարում է մասհանում՝ քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:³³⁵ Նշվածը պոտենցիալ ռիսկ է պարունակում առ այն, որ կազմակերպությունները կարող են վճարել մասհանումները և աշխատանքի չընդունել հաշմանդամություն ունեցող անձանց: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, 2017 թվականի փետրվարի 13-ի դրությամբ քվոտայի պահանջը չկատարած թվով 4 պետական կազմակերպության կողմից կատարվել է 7,800,000,00 դրամի մասհանում:

³³¹ http://armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf

³³² http://armstat.am/file/article/sv_12_16a_141.pdf

³³³ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 27, կետ 1, ենթակետ «ե»:

³³⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 86:

³³⁵ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մասեր 7 և 8:

Միաժամանակ, քվոտայի պահանջի անարդյունավետությունը կայանում է նրանում, որ բացակայում է գործընթացի նկատմամբ մշտադիտարկման արդյունավետ համակարգ, ինչպես նաև գերակշիռ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված պարտադիր լրացման ենթակա աշխատատեղերը լրացվում են արդեն իսկ տվյալ կազմակերպությունում տարիներ շարունակ աշխատած և հաշմանդամության խումբ ունեցող անձանցով:

Ըստ հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայքում առաջին կիսամյակի հրապարակված վիճակագրական տվյալների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող աշխատողների թիվը պետական կառույցներում գրեթե կրկնակի էր, քան պետք է ապահովեր օրենսդրական նոր նախաձեռնությունը: Այսինքն՝ պահանջվող թիվը որոշ դեպքերում արդեն ապահովված էր:³³⁶ Սակայն, ըստ որոշ մարզպետարանների՝ 2016 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող նոր աշխատակիցներ չեն ընդունվել, քանի որ վերջիններս իրենց չեն դիմել ու չեն մասնակցել հայտարարված մրցույթներին:³³⁷

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1308-Ն որոշման 5.1-րդ կետը՝ քվոտավորման ենթակա պետական կազմակերպություններում 2016 թվականի քվոտավորման ենթակա յուրաքանչյուր աշխատատեղի մասով քվոտայի պահանջի կատարման փաստը պարզելու նպատակով, 2017 թվականին իրականացվում է նշված կազմակերպությունների կողմից հարկային մարմին ներկայացված աշխատողների անձնավորված հաշվառման վերաբերյալ տեղեկատվության և հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման տեղեկատվական համակարգի տվյալների ուսումնասիրություն, համադրում և վերլուծություն: Միաժամանակ, նախատեսվում է մշակել քվոտայի պահանջի ներդրման հասցեականության և արդյունավետության բարձրացմանն ուղղված ամփոփ առաջարկություններ:

Ավելին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ առկա չեն հստակ տվյալներ քվոտավորման համակարգի ներդրումից հետո ընդունված և նախքան այդ նույն կազմակերպությունում աշխատող անձանց վերաբերյալ, ուստի և քվոտայի արդյունավետությունը գնահատել հնարավոր չէ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

1. *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի, զբաղվածության ապահովման համար արդյունավետ ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ,*

³³⁶ <http://disabilityinfo.am/15381/>

³³⁷ Տե՛ս նույն տեղում:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բարձրացնել քվոտավորման համակարգի արդյունավետությունը՝ ներդնելով վերջինիս գնահատման և մշտադիտարկման գործուն մեխանիզմ:

Ց. Հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունք

2016 թվականի ընթացքում ևս չեն իրականացվել անհրաժեշտ և բավարար ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի ապահովմանը:

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում: Երեխային ընտանեկան խնամքից հեռացումը, պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց և իրականացվի, այն դեպքերում, երբ դա հնարավոր է, լինի ժամանակավոր և հնարավորինս կարճ տևողությամբ: Ավելին, ընտանեկան խնամքից հեռացնելու որոշումները պետք է պարբերաբար վերանայվեն, և այն դեպքերում, երբ ընտանեկան խնամքից հեռացման իրական պատճառները լուծվել կամ վերացվել են, երեխայի վերադարձը ծնողական խնամքի, պետք է իրականացվի՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը³³⁸:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ՀՀ-ում նախարարության համակարգի՝ երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր և հատուկ (մասնագիտացված) հաստատությունները (մանկատներ) վեցն են, որտեղ դեկտեմբերին խնամվել է շուրջ 635 երեխա: Մանկատներից 3-ը՝ հատուկ տիպի (մասնագիտացված) են, որտեղ 2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ խնամվել է շուրջ 350 երեխա և 18 տարեկանը լրացած՝ շուրջ 100 չափահաս անձ:

Միաժամանակ, ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2016 թվականի հոկտեմբերի 24-ի հարցադրումներին³³⁹ ի պատասխան՝ ՀՀ կողմից նշվել է, որ չնայած նրան, որ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր հաստատություններում խնամքի տակ գտնվող երեխաների թիվը շարունակում է նվազել, մասնագիտացված հաստատություններում այն ընդհանուր առմամբ չի նվազում, բժշկական հաստատություններից առողջական խնդիրներ ունեցող նորածիններին մանկատներ շարունակական տեղափոխման պատճառով, ինչպես նաև նշվածը պայմանավորված է հաշմանդամություն ունեցող երեխաների համար կենսաբանական ընտանիքներ վերադառնալու, որդեգրվելու կամ

³³⁸ «Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց», 64/142 բանաձև, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից (A/RES/64/142*), կետ 14:

³³⁹ http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fQ%2f1&Lang=en

խնամատար ընտանիք տեղափոխվելու գրեթե անհնարինությամբ: Վերջին երեք տարիների ընթացքում, 181 երեխա, այդ թվում՝ 97 առողջական խնդիրներ ունեցող երեխաներ, ծննդատներից տեղափոխվել են մանկատներ:³⁴⁰

Ավելին, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվել է 65 երեխա, այդ թվում՝ 25 երեխա որդեգրվել է ՀՀ քաղաքացիների կողմից, որից 3-ն ունեցել է առողջական խնդիր: Օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվել է 40 երեխա, և որդեգրված երեխաներից հաշմանդամություն է ունեցել 11-ը:

Ըստ նախարարության տվյալների՝ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն կամ առողջական խնդիրներ ունեցող երեխա հիմնականում չի որդեգրվում պայմանավորված այն հանգամանքով, որ երկրում բավարար չեն առողջապահական ծառայություններն ու առողջական խնդիրներ ունեցող երեխաների վերականգնողական կենտրոնները:

Միաժամանակ, ըստ «Հյուման Ռայթս Ուոչ» իրավապաշտպան կազմակերպության (Human Rights Watch) չնայած նրան, որ ՀՀ կառավարությունը պարտավորվել է երեխաներին դուրս բերել առնվազն 22 մանկատներից, հատուկ դպրոցներից և գիշերօթիկ դպրոցներից և վերափոխել դրանք համայնքահեն ծառայություններ մատուցող ոչ բնակելի կենտրոնների, որևէ ծրագրեր չկան երկրի՝ բացառապես հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված երեք մանկատները վերափոխելու ուղղությամբ: Բացի այդ, Կառավարությունը բավարար չի կարևորել հաշմանդամություն ունեցող երեխաների վերադարձն իրենց ընտանիքներ և չի նախատեսել խնամքի այլընտրանքային լուծումներ նրանց համար:³⁴¹

Նշվածը վկայում է, որ պետության կողմից 2016 թվականի ընթացքում չեն իրականացվել անհրաժեշտ համալիր միջոցառումներ հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքն ընտանեկան կամ ընտանեկանին մոտ միջավայրում կազմակերպելու, ինչպես նաև նշված երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման և խթանման ուղղությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

- 1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից անհրաժեշտ է կանխել հաշմանդամություն ունեցող երեխաների տեղափոխումը խնամքի հաստատություններ,*
- 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ մշակել ծրագրեր հաշմանդամություն ունեցող երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի ապահովման, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման կամ խնամատար ընտանիքներ տեղափոխվելու նպատակով,*

³⁴⁰ CRPD/C/ARM/Q/1/Add.1:

³⁴¹ https://www.hrw.org/sites/default/files/report_pdf/armenia0217arm_web_0.pdf

3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ ինստիտուցիոնալացումը կանխելու նպատակով հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների համար ստեղծել արդյունավետ համայնքահեն ծառայություններ:

9. Հաշմանդամության խմբերի սահմանման ոլորտում առկա խնդիրներ

2016 թվականի ընթացքում բազմաթիվ քաղաքացիներ, ՀԿ-ներ ահազանգել են, որ հաշմանդամության խմբերը սահմանելիս բժիշկների լայն հայեցողական լիազորությունները պարունակում են կոռուպցիոն ռիսկեր, ինչի մասին բազմիցս բարձրաձայնվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում քաղաքացիները բարձրաձայնել են նաև բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում իրենց նկատմամբ հաշմանդամության ցածր խումբ սահմանելու կամ հաշմանդամություն ունեցող անձ չճանաչելու վերաբերյալ: Դիմումների քննության ընթացքում Պաշտպանի միջնորդությամբ նշանակվել են կրկնակի կամ հանձնաժողովի ընդլայնված կազմով բժշկասոցիալական փորձաքննություններ, սակայն կայացված որոշումները թողնվել են անփոփոխ:

Խնդիրն այն է, որ ԲՍՓ հանձնաժողովների կողմից հաշմանդամության խմբի սահմանման համար գործածվող ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» N 780-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները բավականին լայն են ձևակերպված, ինչը լայն հայեցողություն է ընձեռում հանձնաժողովի անդամներին որոշում կայացնելիս և բազմաթիվ դեպքերում հանգեցնում է երկակի ստանդարտների կիրառման, ուստի նաև կոռուպցիոն ռիսկերի առաջացման:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի 143-Ա/1 հրամանով հաստատված՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ԱՀԿ ՖՄԴ) սկզբունքների հիման վրա մշակված հաշմանդամության սահմանման չափորոշիչների փորձարկման նպատակով 2016 թվականի մարտ-մայիս ամիսների ընթացքում իրականացվել է պիլոտ ծրագիր ԲՍՓ 3 հանձնաժողովներում: Պիլոտ ծրագրի ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը մուտքագրվել է այդ նպատակով ստեղծված էլեկտրոնային ձևաչափերի մեջ, վերլուծվել և ներկայացվել են առաջարկություններ ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների հիման վրա հաշմանդամության սահմանման նոր մոդելի փուլերով ներդրման վերաբերյալ: Ավելին, 2016 թվականին իրականացվել են բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրման աշխատանքներին մասնակցող բժիշկների վերապատրաստումներ՝ ԱՀԿ ՖՄԴ սկզբունքներին իրազեկելու նպատակով:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ՀՀ ԲՄՓ գործակալությունը նախարարությունից 2016 թվականին ստացվել է 510 դիմում, որից 17 կոռուպցիայի դրսևորման կամ ԲՄՓ հանձնաժողովների կողմից գումար ակնկալելու կասկածների վերաբերյալ դիմումներ, 9-ը՝ քաղաքացիների հետ վերաբերմունքի վերաբերյալ դիմումներ, 484-ը՝ բժշկասոցիալական փորձաքննական որոշումների հետ անհամաձայնության և այլ հարցերի վերաբերյալ դիմումներ: Ստացված 239 դիմումների վերաբերյալ գործակալության կողմից տրվել են անհրաժեշտ գրավոր պարզաբանումներ դիմումատուներին, 264-ի վերաբերյալ տեղեկանք է ներկայացվել ՀՀ ԱՍՀ նախարարություն, 19 դիմումի հիման վրա իրականացվել է վերադասության կարգով վերափորձաքննություն գործակալության վերափորձաքննության բաժնի կողմից: Իրենց վերապահված լիազորություններն ու իրավական ակտերի պահանջները ոչ պատշաճ կատարելու համար ԲՄՓ հանձնաժողովի 2 նախագահ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից մատուցվող ծառայությունների որակի և թափանցիկության վերաբերյալ» հետազոտության³⁴² համաձայն՝ գումարի ակնկալիքն ամենահաճախ հանդիպող խնդիրն է շահառուների շրջանում: Այն հարցին, թե «Հաշմանդամության կարգ սահմանելու, բարձրացնելու կամ վերականգնելու համար Դուք երբևէ գումար տվե՞լ էք հանձնաժողովի որևէ անդամի» հարցվածների³⁴³ 55 տոկոսը փաստել է վճարում կատարելը, և միայն 45 տոկոսն է, որ ոչ մի վճարում չի կատարել:

2016 թվականի դեկտեմբերի 27-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) մամուլի կենտրոնի կողմից տարածված հաղորդագրության համաձայն՝ ԱԱԾ կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կաշառք ստանալու կասկածանքով ձերբակալվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետը և նույն գործակալության վերափորձաքննության բաժնի պետը: Ըստ ձեռք բերված նախնական տվյալների՝ ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունում ձևավորվել և տևական ժամանակ գործել է կոռուպցիոն սխեմա, որի միջոցով պաշտոնատար անձինք ստացել են կաշառքներ և դրանք փոխանցել իրենց վերադասներին: Մասնավորապես, բժշկասոցիալական փորձաքննությունների տարածքային մի շարք հանձնաժողովների անդամներ, ի պաշտոնե լիազորված լինելով իրականացնել համապատասխան փորձաքննություններ, քաղաքացիներին օրենքով

³⁴² Հետազոտությունն իրականացվել է «ԼոգոՍ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից:

³⁴³ Հաշմանդամության կարգ ստանալու համար դիմած շահառուների շրջանում իրականացված հարցումներն անց են կացվել ԲՄՓ հանձնաժողովներ դիմած և փորձաքննություն անցնող անձանց հետ՝ հանձնաժողովներում, տնայցերի, ՀԿ-ների շահառուների հետ հանդիպումների ընթացքում հարցաթերթիկների լրացման միջոցով: Հարցմանը, ընդհանուր առմամբ, մասնակցել է 693 անձ՝ Շիրակի, Լոռու, Տավուշի և Արարատի մարզերից:

նախատեսված հաշմանդամության խումբ որոշելու դիմաց նրանցից վերցրել են 20-40 հազար ՀՀ դրամի չափով գումարներ: Այնուհետև, ապօրինի և համակարգային բնույթ կրող եղանակով գոյացած գումարները հանձնաժողովների նախագահները բաժանել են անդամների միջև, իսկ մի մասն էլ՝ թողություն համար պարբերաբար հանձնել բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետին: Պարզվել է, որ վերոնշյալ կոռուպցիոն շղթայում ներգրավված է եղել բժշկասոցիալական փորձաքննական մարզային առնվազն ինը, Երևան քաղաքի երկու հանձնաժողովի նախագահ, ինչպես նաև վերափորձաքննության բաժնի պետը: Առերևույթ հանցագործության դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 311 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով (մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կաշառք ստանալը):³⁴⁴

Հաշվի առնելով վերոնշյալ վերլուծությունն՝ առաջարկում ենք՝

- 1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ հստակեցնել հաշմանդամության սահմանման չափորոշիչները,*
 - 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ քայլեր ձեռնարկել ուղղված՝ ԲՄՓ ոլորտում կոռուպցիայի դեպքերի կանխմանը և բացահայտմանը:*
- 10. Քաղաքական իրավունքներ*

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքների իրացման համար ապահովված չեն մատչելիության պայմաններ, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չեն ընտրությունները, որոնք ժողովրդավարության հիմնական գործիքն են հանդիսանում:

Մինչդեռ, Կոնվենցիայի 29-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և մյուսների հետ հավասար հիմունքներով դրանցից օգտվելու հնարավորությունը: Միաժամանակ, ընտրական իրավունքի լիարժեք իրացման ապահովումը պահանջում է դրա համար անհրաժեշտ, իրապես մատչելի հնարավորություններ բոլորի համար՝ անկախ քվեարկությանը մասնակցելու դժվարություններ կամ հաշմանդամություն ունենալուց:

Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի ապահովման հետ կապված մտահոգությունը պայմանավորված է նաև Ընտրական նոր օրենսգրքում³⁴⁵ այդ իրավունքի իրական ապահովման համար գործուն կառուցակարգերի բացակայությամբ: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ իրականացվել էր ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի ուսումնասիրություն, որի արդյունքում ներկայացվել էին առաջարկներ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրելու իրավունքի իրացման երաշխիքներ սահմանելու վերաբերյալ, սակայն վերջիններս չեն ընդունվել:

³⁴⁴ <http://www.sns.am/index.php/am/news/353-27122016>

³⁴⁵ Ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին և ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ին:

Մասնավորապես, նշված օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Տեղական ինքնակառավարման մարմինները սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող³⁴⁶ ընտրողների ընտրական իրավունքի իրականացման մատչելիությունն ապահովելու համար տեղամասային կենտրոններում ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ»: Միաժամանակ, օրենսգրքի 65-րդ հոդվածի 8-րդ մասը ընդհանրական անդրադարձ է կատարում քննարկվող հարցին՝ նշելով, որ քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է սահմանել լրացուցիչ հնարավորություններ՝ ապահովելով քվեարկողի կամքի ազատ արտահայտման հնարավորությունն ու քվեարկության գաղտնիությունը:

Այնուհանդերձ, կոնկրետ կարգավորումների բացակայության պայմաններում հնարավոր չէ հիշատակված դրույթներն իրական երաշխիք համարել: Ավելին, վերոնշյալ դրույթների ձևակերպումը ենթադրում է նշված անձանց աջակցության տրամադրում միայն տեղամասային կենտրոններում, այնինչ ընտրական իրավունքի իրական երաշխավորման համար նրանց աջակցություն է հարկավոր տրամադրել նաև տեղամասային կենտրոններ հասնելու համար:

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն Կոնվենցիան մեկնաբանելիս, ընդգծում է, որ պետությունները հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի գործնականում իրականացման նպատակով, բացի ողջամիտ տարածքի ապահովումից, պետք է ձեռնարկեն այլ պրոակտիվ միջոցներ ևս՝ ապահովելով ընտրական իրավունքի ֆիզիկական, տեղեկատվական և հաղորդակցությունների մատչելիությունը: Այլ խոսքերով՝ ոչ միայն պետք է վերացվեն ֆիզիկական խոչընդոտները տեղամասային կենտրոնի ճանապարհին և դրա ներսում, այլև պետք է ապահովվի տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը: Եվ այդ ամենն առանց խախտելու ընտրության գաղտնիության իրավունքը:³⁴⁷

Բացի այդ, օրենսդրորեն պետք է լուծում տրվի նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու մեխանիզմների հարցին: Չնայած իրավական արգելքների բացակայությանը՝ առկա չեն նաև ուղղորդող բնույթի հատուկ դրույթներ: Այնինչ, միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից բազմիցս նշվել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական կյանքին լիարժեք մասնակցելու համար լրացուցիչ կառուցակարգերի նախատեսման կարևորությունը:³⁴⁸ Արդյունքում, հաշմանդամություն ունեցող անձինք գրեթե ներառված չեն քաղաքական կյանքին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

³⁴⁶ ՀՀ ընտրական օրենսգրքում կիրառվող ձևակերպում:

³⁴⁷ <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/031/20/PDF/G1403120.pdf?OpenElement>

³⁴⁸ <http://www.osce.org/odihr/elections/spain/224411?download=true>

1. քայլեր ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական կյանքին մասնակցելու, այդ թվում՝ ընտրելու իրավունքի լիարժեք իրացման ուղղությամբ, ներառյալ տեղամասային կենտրոններ հասնելու, կենտրոններում ազատորեն տեղաշարժվելու և տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև այլ օրենսդրական կարգավորումների սահմանման միջոցով:

2. ՀՀ ընտրական օրենսգրքով և հարակից իրավական ակտերով կարգավորել հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու մեխանիզմների հարցը:

11. Հաշմանդամություն ունեցող կանայք

Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ ՀՀ-ում դրսևորվում է կրկնակի խտրականություն կրթության, զբաղվածության, առողջապահության և հասարակական կյանքի այլ ոլորտներում:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեն 2016 թվականի նոյեմբերին ՀՀ-ին ուղղված իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ կրթության զբաղվածության, առողջապահության հասանելիության ոլորտում դրսևորվող խտրականության, հասարակական և սոցիալական կյանքում մասնակցության ու որոշումների կայացման գործընթացներից նրանց դուրսմղման վերաբերյալ: Ավելին, կոմիտեն մտահոգված է հաշմանդամություն ունեցող կանանց տնտեսական կախվածության համար, որը վերջիններիս կանգնեցնում է բռնության ենթարկվելու ռիսկի առջև:³⁴⁹

Կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունները, գիտակցելով, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի, պարտավորվում են միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու համար նրանց՝ մարդու բոլոր իրավունքներից և հիմնարար ազատություններից լիակատար և հավասար օգտվելը: Միաժամանակ, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն բազմիցս նշել է, որ հաշմանդամություն ունեցող կանանց համար պետք է ապահովվեն սեռական և վերարտադրողական իրավունքների իրացումը և առողջության պահպանման համար բուժճառայությունների մատչելիությունը՝ թե՛ ֆիզիկական մատչելիության և թե՛ վերջիններիս համար հասանելի ձևով իրենց առողջական վիճակի վերաբերյալ տվյալների փոխանցման միջոցով:

Դեռևս 2015 ընթացքում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագրի

³⁴⁹ Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումները ՀՀ-ի 2015 և 2016 թվականների համակցված պարբերական զեկույցների վերաբերյալ, http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDA W%2fC%2fARM%2fCO%2f5-6&Lang=en

շրջանակներում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ իրականացված «Հայաստանում սեռական և վերարտադրողական առողջության իրավունքների իրացման վերաբերյալ հանրային հետազոտության» (Հետազոտություն) ընթացքում հավաքագրված տվյալներից պարզ է դառնում, որ Հայաստանում վերարտադրողական բժշկական ծառայությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող կանանց համար ընդհանուր առմամբ անբավարար է: Վերարտադրողական բուժօժանդությունների ֆիզիկական, զգայական և սոցիալ-մշակութային հասանելիությունը որոշ դեպքերում չի համապատասխանում Հայաստանի հաշմանդամություն ունեցող կանանց: Հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ֆիզիկական անհասանելիությունը հաղթահարում են ուրիշների օգնությամբ, ուստի և վերարտադրողական բուժօգնություն ստանալիս զգում են այլոց օգնության կարիքը: Առաջնային բուժօգնության հաստատություններում և ծննդատներում աշխատող բուժանձնակազմը, որոնց հետ հարցազրույց է վարվել, դժվարությամբ էին մտաբերում դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող կանայք դիմած լինեին ծննդօգնության համար կամ իրենց աշխատանքային պրակտիկայի ընթացքում նման դեպքերը եզակի էին եղել: Այդ դեպքերը նկարագրելիս բժիշկները նշում էին, որ այդ պացիենտների հետ իրենց շփումը հիմնականում տեղի է ունեցել մեկ այլ՝ ուղեկցող անձի օգնությամբ:

Հետազոտության իրականացման ընթացքում ՀԿ ներկայացուցիչները հաստատել են, որ հաշմանդամություն ունեցող կանայք առողջապահության ոլորտում բախվում են խտրականության հղիության արհեստական ընդհատումների և հետաբորտային բուժօգնության դիմելիս: Ավելին, հաստատվում է այն, որ հաշմանդամություն ունեցող կանայք կամ նրանց ներկայացնող հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը զգալի մասնակցություն չունեն հղիության վտանգավոր արհեստական ընդհատումների կանխարգելման, հղիության անվտանգ արհեստական ընդհատումների և հետաբորտային բուժօգնության ռազմավարությունների կամ ծրագրերի մշակման, իրականացման ու մշտադիտարկման աշխատանքներում: Նշվածը հանգեցնում է հաշմանդամություն ունեցող կանանց հանդեպ խտրականության մեծացման ու խաթարում է հաշվետվողականությունը³⁵⁰:

Այն հարցին, թե ինչ քայլեր են ձեռնարկվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից վերարտադրողական բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ, նախարարությունից պատասխանել են, որ համաձայն այստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 568-Ն որոշման, վերարտադրողականության օժանդակ

³⁵⁰ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 5, պարբերություն 1, կետ «գ»:

տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը պետության կողմից երաշխավորված կարգով իրականացնելու իրավունք է սահմանված անապահովության համակարգում ներգրավված անձանց համար, ինչպես նաև համաձայն Հայաստանի հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 12-ի «Սահմանամերձ առանձին գյուղական համայնքների մի խումբ բնակիչների համար վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը պետության կողմից երաշխավորված կարգով իրականացնելու մասին» N 1528-Ն որոշման համաձայն այդ իրավունքից օգտվելու իրավունք ունեն նաև սահմանամերձ առանձին գյուղական համայնքների բնակիչները: Անհասկանալի է, թե ինչ առնչություն ունեն նշված երկու որոշումները հաշմանդամություն ունեցող կանանց համար վերարտադրողական առողջապահական ծառայությունները մատչելի դարձնելու հետ:

Արդյունքում, հաշմանդամություն ունեցող կանայք ենթարկվում են խտրականության բժշկական սպասարկման տրամադրման ընթացքում կամ ընդհանրապես չեն դիմում բժշկի՝ համոզված լինելով, որ վերջիններիս պատշաճ բժշկական ծառայություններ չեն մատուցվի:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք՝

- 1. ապահովել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար կրթության, աշխատանքի, առողջապահական և այլ հիմնարար իրավունքների իրականացումը, այդ թվում՝ օրենսդրական կարգավորումներ նախատեսելու միջոցով,*
- 2. իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված հասարակության և հաշմանդամություն ունեցող կանանց իրազեկվածությունը վերջիններիս իրավունքների վերաբերյալ գործնականում բարձրացնելուն,*
- 3. իրականացնել իրազեկման աշխատանքներ բուժաշխատակիցների և բժշկական ծառայություններ մատուցող հաստատությունների այլ աշխատակիցների շրջանում՝ հաշմանդամություն ունեցող վերարտադրողական առողջության պահպանման առանձնահատկությունների վերաբերյալ:*

12. Մասնագիտացված հատուկ մանկատների հաշմանդամություն ունեցող սաների համար համապատասխան կացարանների և խնամքի հաստատությունների բացակայության խնդիրը

Տարիներ շարունակ բարձրաձայնվում է մասնագիտացված հատուկ մանկատների՝ հաշմանդամություն ունեցող սաների 18 տարեկանը լրանալուց հետո մանկատներում մնալու կամ նյարդահոգեբուժական տուն-ինտերնատներ կամ համապատասխան բժշկական հաստատություններ տեղափոխելու խնդիրը՝ համապատասխան կացարանների և այլընտրանքային խնամքի հաստատությունների բացակայության պատճառով:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ նախարարության համակարգի Խարբերդի մասնագիտացված մանկատանը խնամվում է

130 չափահաս, Մարի Իզմիրյանի անվան մանկատանը՝ 5 չափահաս, Վանաձորի մանկատանը՝ 1:

Դեռևս 2013 թվականից Պաշտպանի կողմից բարձրաձայնվել է այն խնդիրը, որ Խարբերդի մասնագիտացված մանկատունը, որտեղ ապրում են մտավոր և ֆիզիկական լուրջ խնդիրներ ունեցող երեխաներ, ունի գերբեռնվածության լուրջ խնդիր: Նշվել էր նաև, որ չնայած հաստատությունը նախատեսված է մինչև 18 տարեկան երեխաների համար, այնտեղ ապրում են նույնիսկ մինչև 35 տարեկանին մոտ բազմաթիվ անձինք:

Ըստ նախարարության տվյալների՝ համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 957-Ն որոշման սահմանվել է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական նպատակը՝ առանց ծնողական խնամքի մնացած ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական ու մտավոր խնդիրներ ունեցող՝ 6-18 տարեկան երեխաների և մինչև 18 տարեկանը մանկատուն ընդունված և մանկատանը 18 տարին լրացած՝ նույն ախտաբանական վիճակում գտնվող և նույն ծավալի ծառայությունների կարիք ունեցող՝ հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա լրիվ խնամքի, երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարանով ապահովումն է: Այսինքն՝ նախարարությունը նախատեսել է հաստատության հիմնական նպատակի փոփոխությունը, ինչը չի կարող քննարկվող խնդրի լուծում համարվել:

Հարկ է ընդգծել, որ դեռևս 2015 թվականից սկսվել է Խարբերդի և Մարի Իզմիրյանի անվան մասնագիտացված մանկատաներից չափահասներին հաշմանդամություն ունեցող երիտասարդ չափահասների «Ձորակ» հոգեկան առողջության խնամքի կենտրոն տեղափոխելու գործընթացը:

Ինչ վերաբերում է նախարարության համակարգի մասնագիտացված հաստատությունների 18 տարեկանը լրացած սաներին բնակարաններ տրամադրելուն, ապա ըստ նախարարության, 2016 թվականի ընթացքում որևէ մեկին բնակարան չի տրամադրվել՝ սոցիալական բնակարանային ֆոնդում ազատ կացարաններ չլինելու պատճառով:

Արդյունքում, համայնքային ծառայությունների, այլընտրանքային խնամքի հաստատությունների սակավաթվության արդյունքում, մանկատան հաշմանդամություն ունեցող շրջանավարտները չեն կարողանում անկախ կյանք վարել ուստի և մնում են այն մանկատանը, որի շրջանավարտներն են կամ տեղափոխվում են «Ձորակ» հոգեկան առողջության խնամքի կենտրոն, կամ էլ հոգեբուժարաններ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ ներդնել համայնքային ծառայություններ մանկատաների հաշմանդամություն ունեցող շրջանավարտներին այլընտրանքային խնամքի հաստատություններով և բնակելի տարածքներով ապահովելու ուղղությամբ՝ հաշվի առնելով նրանց կարիքներն ու հասարակությանն ինտեգրվելու անհրաժեշտությունը:

13. Օրենսդրական թերի կարգավորման արդյունքում սահմանափակվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքները

Դեռևս 2014 և 2015 թվականների տարեկան զեկույցներում Պաշտպանն անդրադարձել էր այն խնդրին, որ օրենսդրական բացթողումների պատճառով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սահմանադրորեն ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքը լիարժեք պաշտպանված չէ:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի համաձայն՝ անձի գործունակության հարցը քննելիս քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը: Վերոգրյալից հետևում է, որ անձի դատաքննության մասնակցության հարցը լուծվում է դատարանի հայեցողությամբ: Ավելին, «առողջական վիճակը թույլ է տալիս» դրույթի բովանդակության բացահայտված չլինելու արդյունքում, այն հանգեցնում է տարատեսակ մեկնաբանությունների, ուստի գործնականում անձի համար դատարանի մատչելիության սահմանափակման: Արդյունքում, անհամաչափորեն սահմանափակվում են անձի արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև դատավարության կողմերի հավասարության և մրցակցային դատավարության հիմնարար սկզբունքները: Միևնույն ժամանակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդված համաձայն՝ անձի գործունակության վերականգնման հարցով դատարան իրավունք ունեն դիմելու միայն անձի խնամակալը, ընտանիքի անդամը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը: Տվյալ կարգավորման արդյունքում ստացվում է, որ դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձը չի կարող անձամբ կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացնել դատարան իր գործունակությունը վերականգնելու հարցով:

Հաշվի առնելով քննարկվող խնդրի կարևորությունը՝ Պաշտպանը 2014 թվականին դիմում էր ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով խնդրահարույց դրույթների սահմանադրականությունը: Արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2015 թվականի ապրիլի 7-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1197 որոշումը, որի համաձայն՝ դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, ներառյալ դատական ակտերը բողոքարկելու՝ անձի իրավունքները պետք է հավասարապես վերաբերելի լինեն նաև այն անձանց, ում գործունակության հարցը քննվում է դատարանում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ դիտարկվող հիմնահարցերի առնչությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա է իրավակարգավորման բաց,

ինչը համակարգային լուծում է պահանջում և կարող է հաղթահարվել միայն ՀՀ ազգային ժողովի կողմից՝ օրենսդրական համարժեք փոփոխություններ կատարելու միջոցով:³⁵¹

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարել անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կիրառվող «գործունակություն», «անգործունակություն» և «սահմանափակ գործունակություն» հասկացություններին:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է. «իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից»: Նույն օրենսգրքի 31-րդ հոդվածը բացահայտում է անգործունակության հատկանիշները՝ ամրագրելով, որ «Քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածն, իր հերթին, անդրադարձ է կատարում «սահմանափակ գործունակություն» հասկացության սահմանմանը, մասնավորապես նշելով, որ «ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով»:

Մակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռով սահմանվել է, որ անձին անգործունակ ճանաչելը հանդիսանում է վերջինիս անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտություն: Շտուկատուրովի մոտ բժիշկների կողմից արձանագրվել էին որոշակի հոգեկան հիվանդություններ, սակայն, ըստ դատարանի, վերջինիս անգործունակ ճանաչելն անհամաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին: Դատարանի կողմից արձանագրվել էր նաև Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ գործունակության և անգործունակության միջև միջանկյալ, այլընտրանքային (բացառությամբ՝ ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման հակում ունեցողների) տարբերակի բացակայությունը՝ հաշվի առնելով այն տրամաբանությունը, որ ոչ բոլոր հոգեկան խանգարումներն են հանգեցնում անձի ամբողջական անգործունակությանը³⁵²:

Այս կապակցությամբ, Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ

³⁵¹ ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի թիվ ՄԴՈ-1197 որոշում, կետ 9:

³⁵² Տե՛ս, Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի (Shtukaturov v. Russia) գործով 2008 թվականի մարտի 27-ի վճիռը, գանգատ թիվ 44009/05, կետեր 91-95:

հետագա օրենսդրական փոփոխությունների ընթացքում համապատասխան անդրադարձ պետք է լինի նաև այս խնդրին, ինչը թույլ կտա բացառել անձանց գործունակության նկատմամբ անհամաչափ միջամտությունները՝ առավել ամբողջական դարձնելով անձին «անգործունակ» կամ «սահմանափակ գործունակ» ճանաչելու հիմքերը:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվում է ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ, որտեղ փորձ է արվում կարգավորել նշված խնդիրները: Այնուհանդերձ, անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, որոնք պետք է կատարվեն նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ինչպես նաև փոխկապակցված այլ իրավական ակտերում, դեռևս չեն իրականացվել:

Արդյունքում, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք բոլոր դեպքերում զրկվում են իրենց գործունակությունից, միաժամանակ զրկվելով նաև անկախ կյանք ներգրավվելու և իրենց իրավունքների լիարժեք իրացումից:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է մշակել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ՝ ՀՀ քաղաքացիական, ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում, ինչպես նաև փոխկապակցված այլ իրավական ակտերում, գործող կարգավորումները ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1197 որոշմանը համապատասխանեցնելու նպատակով:

14. Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող որոշ անձանց նոր վարորդական իրավունք չտրամադրելու խնդիր

Դեռևս 2014 թվականից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել է տրանսպորտային միջոցների հարմարեցման համար անհրաժեշտ օրենսդրական հստակ չափանիշներ նախատեսված չլինելու պատճառով ֆիզիկական հաշմանդամություն ունեցող որոշ անձանց վարորդական իրավունքի տրամադրումը մերժելու խնդիրը:

Մասնավորապես, «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «Ժ» ենթակետի համաձայն՝ արգելվում է տրանսպորտային միջոցի երթևեկությունը, եթե բացակայում են վարորդի աչքը կամ վերին կամ ստորին վերջույթը, դաստակը կամ ոտնաթաթը, կամ առկա են շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտում, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումներ և արատներ, որոնք հանգեցնում են վերջույթի ֆունկցիաների խիստ խանգարման՝ բացառությամբ տվյալ անձի հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոցներ վարելու դեպքերի:

Այդուհանդերձ, օրենքը չի կարգավորում այն հարցը, թե ֆիզիկական խնդիրներ ունեցող անձն ինչ անհրաժեշտ փոփոխություններ պետք է կատարի տրանսպորտային միջոցի վրա, որպեսզի իրավասու մարմինը այն համարի անձի հնարավորություններին

հարմարեցված:

Նման կարգավորման պարագայում խախտվում է իրավական որոշակիության սկզբունքը, ինչի արդյունքում անձինք զրկվում են իրենց իրավունքների իրացման հնարավորությունից:

ՀՀ սահմանադրական դատարանը 2008 թվականի մայիսի 13-ի թիվ ՄԴՈ-753 որոշման մեջ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, նշել է, որ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի, որպեսզի իրավունքի սուբյեկտները համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտել նաև ՄԻԵԴ-ի վճիռներում³⁵³:

Հարցի լուծման համար անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 1327-Ն որոշման մեջ, քանի որ նշված որոշմամբ նախատեսվել է բժշկական եզրակացության 2 տեսակ. «պիտանի է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց վարելու» կամ «պիտանի չէ»: Եթե հավատարմագրման արդյունքում տրվում է «պիտանի է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց վարելու» եզրակացությունը, և տվյալ անձի կողմից ներկայացվում է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց, ապա ճանապարհային ոստիկանությունն այդ տրանսպորտային միջոցով ընդունում է գործնական քննություն: Նշվածը, սակայն ներկայիս օրենսդրական կարգավորումների դեպքում հնարավոր է այն դեպքերում, երբ անձի մոտ առկա է վերջույթների հետ կապված որևէ խնդիր, իսկ, եթե անձի մոտ բացակայում է որևէ օրգան, օրինակ՝ աչքը, օրենսդրորեն կարգավորված չէ, թե տրանսպորտային միջոցը ինչպես պետք է հարմարեցվի:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից հարցի բարձրացման արդյունքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ ոստիկանության հետ միասին 2015 թվականի ընթացքում մշակվել է համապատասխան նախագիծ, որը, սակայն դեռևս չի ընդունվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է իրականացնել փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 1327-Ն որոշման մեջ՝ սահմանելով ֆիզիկական հաշմանդամության առկայության պարագայում տրանսպորտային միջոցի հարմարեցման չափանիշների ավելի լայն շրջանակ:

³⁵³ St' u, օրինակ Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (The Sunday Times v. The United Kingdom) գործով վճիռ, 1979 թվականի. ապրիլի 26-ի վճիռը, զանգատ թիվ 6538/74, կետ 49:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ, ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (այսուհետ՝ ՄԱԿ ՓԳՀ) հայաստանյան գրասենյակի / ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ՏԿԶՆ ՄՊԾ) տվյալներին համապատասխան՝ 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում են գտնվել, ընդհանուր առմամբ 19,325 մտահոգության առարկա հանդիսացող անձ՝ փախստականներ, ապաստան հայցողներ³⁵⁴: ՀՀ ՏԿԶՆ ՄՊԾ պաշտոնական տվյալներին համապատասխան՝ 2016 թվականի ընթացքում ստացվել է ապաստանի հայցման 65 դիմում, 110 ապաստան հայցողներից փախստականի կարգավիճակ են ստացել 37-ը³⁵⁵: Հայաստանի Հանրապետություն տեղահանված փախստականների, ապաստան հայցողների և հարկադրաբար տեղահանված այլ անձանց հիմնական մասը Սիրիայից, Իրաքից, Իրանից, Ադրբեջանից, Աֆրիկյան պետություններից (Կոտ դ'Իվուար, Մալի, Կոնգո) և Ուկրաինայից են: Արցախում տեղի ունեցած ապրիլյան պատերազմից հետո մեծ է նաև Արցախի Հանրապետությունից տեղահանված անձանց քանակը:

1. Արցախից տեղահանված անձինք

2016 թվականի ապրիլին Արցախում տեղի ունեցած պատերազմը պատճառ հանդիսացավ, որպեսզի այնտեղ բնակվող մեր հայրենակիցների մի մասը հարկադրաբար տեղափոխվի Հայաստանի Հանրապետություն³⁵⁶: Տեղահանված բնակչության ճնշող մեծամասնությունը կանայք, երեխաներ և ծերեր էին, որոնցից շատերը շփման գծին հարակից՝ Մարտակերտի շրջանի Թալիշ, Տոնաշեն և Մատաղիս գյուղերից էին: Նրանցից շատերն ունեին հատուկ կարիքներ, կային հղի կանայք և կերակրող մայրեր, հիվանդ և հաշմանդամություն ունեցող մարդիկ: Հարկ է նշել, որ մեծ թվով տեղահանված անձինք, հիմնականում տղամարդիկ, ընտանիքներին թողնելով Հայաստանի Հանրապետությունում, վերադարձել են ԼՂՀ՝ սահմանների պաշտպանությանը մասնակցելու: Այժմ Արցախի Հանրապետությունից տեղահանված անձանց մեծամասնությունը վերադարձել է կամ պատրաստվում է վերադառնալ իրենց բնակավայրեր: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի դերը նշված անձանց ցուցաբերված աջակցության գործում:

2. Սիրիայի Արաբական Հանրապետությունից տեղափոխված անձինք

³⁵⁴ <http://www.un.am/hy/agency/UNHCR>

³⁵⁵ http://www.smsmta.am/?menu_id=151

³⁵⁶ <http://www.un.am/hy/agency/UNHCR>

Սիրիական պատերազմը նույնպես պատճառ հանդիսացավ մեր երկրում փախստականների և ապաստան հայցող անձանց թվի աճի համար: ՄԱԿ-ի ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի տվյալներին համապատասխան՝ 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սիրիայից Հայաստան են տեղափոխվել մոտ 20,000-ից ավելի անձ, հիմնականում ազգությամբ հայեր, որոնցից միայն 627-ն են ստացել փախստականի կարգավիճակ, իսկ մնացածին տրամադրվել է ՀՀ քաղաքացիություն: Նույն աղբյուրի համաձայն՝ 2016 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում են մնացել Սիրիայից տեղահանված մեր հայրենակիցներից մոտավորապես 14,633-ը: Վերջիններիս ինտեգրմանը նպաստելու և մարդասիրական կարիքները բավարարելու նպատակով միջոցներ են ձեռնարկվել ոչ միայն ՀՀ պետական իրավասու մարմինների, այլ նաև ՄԱԿ-ի ՓԳՀ-ի կողմից, որը մինչ օրս շարունակում է աջակցություն տրամադրել Սիրիայից և այլ երկրներից տեղահանված անձանց: Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ ինչպես տեղահանված այլ անձինք, այնպես էլ սիրիահայերն ունենում են բազմաթիվ խնդիրներ, որոնք հիմնականում առնչվում են աշխատանքին, կրթությանը և առհասարակ ինտեգրմանը հասարակությունում:

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել նաև, որ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ մինչև Սիրիայի պատերազմը Հալեպում բնակվել են մոտ 65,000 ազգությամբ հայ անձինք, որոնց թիվը պատերազմի սկսելուց հետո նվազել և հասել է 12,000-ի: Նրանց հիմնական մասը տեղափոխվել են Հայաստան, Շվեդիա, Լիբանան և Ավստրալիա:

3. Ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական իրավական ակտերը, ինչպես նաև առկա օրենսդրական խնդիրները

1993 թվականին ՀՀ-ի կողմից վավերացվել է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա), ինչպես նաև «Փախստականների կարգավիճակի մասին» 1967 թվականի արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն): Կոնվենցիան և Արձանագրությունը սահմանում են փախստականի կարգավիճակ ձեռք բերելու չափանիշները, ամրագրում մտահոգության առարկա հանդիսացող անձանց իրավական կարգավիճակը՝ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև գործնականում վերոնշյալ փաստաթղթերի կիրառմանն ուղղված այլ դրույթներ³⁵⁷:

ՀՀ-ում ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտը՝ 2008 թվականի նոյեմբերի 27-ի «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) սահմանում է ՀՀ պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցելու, փախստականի կարգավիճակ ստանալու կարգերը, ինչպես նաև ապաստանի հարցերով պատասխանատու կառույցների լիազորությունները և այլն³⁵⁸: Օրենքի կարգավորման առարկան է նաև փախստականների և ապաստան հայցողների

³⁵⁷ <http://www.parliament.am/library/MAKkonvencianer/11.pdf>

³⁵⁸ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=109246>

իրավունքների և պարտականությունների շրջանակը:

Իրականացնելով վերաբերելի իրավական ակտերի համապարփակ վերլուծություն՝ հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ-ում ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում և պատասխանատու պետական մարմինների իրավակիրառ պրակտիկայում առկա ձեռքբերումներին և խնդիրներին:

Կարևոր է մատնանշել 2016 թվականի հոկտեմբերի 19-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով նախատեսվում է, որ օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող երեխայի խնամակալ կամ հոգաբարձու նշանակելու ընթացակարգը սահմանվելու է ՀՀ կառավարության որոշմամբ: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է հետազայում իրավակիրառ պրակտիկայում ապահովել դրա պատշաճ իրականացումը:

2016 թվականի ընթացքում ՀՀ կառավարության կողմից քայլեր են ձեռնարկվել ներպետական օրենսդրությունը կատարելագործելու ուղղությամբ: Մասնավորապես, ընդունվել են փախստականների կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերին, ժամանակավոր վկայականին և նույնականացման քարտերի տրամադրման կարգին առնչվող Կառավարության որոշումներ, որոնք ուժի մեջ են մտնելու արդեն 2017 թվականին³⁵⁹:

2016 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվել է նաև ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայության կողմից մշակված «Ապաստանի տրամադրման ընթացակարգում ներկայացուցիչ նշանակելու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Որոշմամբ սահմանվում է, որ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողի, ինչպես նաև հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության կամ հաշմանդամության հետևանքով ապաստանի տրամադրման ընթացակարգի էությունն ու նշանակությունը գիտակցելու ունակություն չունեցող ապաստան հայցողի համար ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայության կողմից նշանակվում է ներկայացուցիչ, որն ապաստանի տրամադրման ընթացակարգի շրջանակներում ներկայացնում է վերոնշյալ անձանց շահերը:

Չնայած վերջին ժամանակահատվածում սույն ոլորտը կարգավորող օրենսդրական բարեփոխումներին, այնուամենայնիվ, առկա են որոշակի խնդիրներ, որոնք առնչվում են ոչ միայն օրենսդրական դաշտի համապատասխանությանը ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, այլ նաև գործնականում համապատասխան դրույթների պատշաճ կիրառմանը:

• Մասնավորապես, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«Պայմանավորվող Պետությունները սույն Համաձայնագրի դրույթները փախստականների նկատմամբ*

³⁵⁹<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106811>,
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107062#>,
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108122#>

պետք է կիրառեն առանց ցեղի, կրոնի, կամ ծագման երկրի մեջ խտրականություն դնելու:»։ Մտահոգիչ է այն հանգամանքը, որ, թեև Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կոնվենցիան, այնուամենայնիվ, այս դրույթը տեղ չի գտել Օրենքում։ Հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները՝ անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի այս ելակետային կարգավորումը սահմանվի նաև ներպետական օրենսդրության մեջ՝ իրավակիրառ պրակտիկան օրինաչափ ձևավորելու համար։

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է կատարել համապատասխան լրացում՝ Կոնվենցիայի վերը նշված հոդվածի ձևակերպումը նախատեսելով Օրենքում։

- Մեկ այլ, հավասարապես կարևոր խնդիր, որն անհրաժեշտ է ընդգծել, առնչվում է փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերին։ Կոնվենցիայի 1-ին հոդվածի գ) կետով սահմանվում են փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերի սպառիչ ցանկը, որն անդամ պետությունների կողմից փոփոխման ենթակա չէ։ Չնայած այն հանգամանքին, որ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված են Կոնվենցիայի վերը նշված դրույթով նախատեսված բոլոր 6 հիմքերը, այնուամենայնիվ, դրանով սահմանվում է հավելյալ՝ 7-րդ հիմքը, որով *փախստականը կարող է հրաժարվել իր կարգավիճակից անձնական պատճառներով*։ Օրենքում նշված դրույթի առկայությունը ոչ միայն հակասում է ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին, այլ նաև կարող է խնդիրներ առաջացնել գործնականում։

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Օրենքում կատարել համապատասխան փոփոխություն՝ ապահովելով Կոնվենցիայի վերը նշված դրույթի նույնանման ձևակերպումը Օրենքում։

- «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ *«Ապաստան հայցողներն ու Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ։»*։ Կոնվենցիոն չափանիշներից դրականորեն շեղվելով՝ այս դրույթը վարձատրվող աշխատանքի իրավունքով օժտում է և՛ ապաստան հայցող, և՛ արդեն իսկ փախստականի կարգավիճակ ստացած անձանց՝ հավասարեցնելով նրանց ՀՀ քաղաքացիների հետ։ Այնուամենայնիվ, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի ժա) կետի համաձայն՝ *«Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել փախստականի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով»*³⁶⁰։ Ամրագրելով աշխատանքի թույլտվության բացառություններ միայն փախստականի կարգավիճակ ունեցող, քաղաքական ապաստան ստացած, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ կարգավորման շրջանակից դուրս են մնում ապաստան հայցող անձինք։ Այս դրույթը

³⁶⁰ <http://www.arlis.am/documentview.aspx?docid=103612>

կարող է անհարկի շփոթություն առաջացնել և սահմանափակել ապաստան հայցող անձանց կողմից իրենց աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունը: Բացի դրանից, անհրաժեշտ է մատնանշել վերը նշված երկու օրենքների դրույթներում առկա հակասությունը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի ժա) կետում կատարել համապատասխան փոփոխություն: Մասնավորապես՝ առաջարկվում է փախստականների կարգավիճակ ունեցող, քաղաքական ապաստան ստացած, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց թվին ավելացնել նաև ապաստան հայցող անձանց՝ ապահովելով վերջիններիս աշխատանքի իրավունքի իրացումն առանց աշխատանքի թույլտվության:

4. Ոլորտում առկա գործնական խնդիրներ

Չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցառումներին վերը նշված անձանց պատշաճ օգնություն ցուցաբերելու և իրենց կարգավիճակից բխող իրավունքների իրացումն ապահովելու նպատակով՝ այնուամենայնիվ գործնականում նրանք բախվում են տարաբնույթ խնդիրների: Մասնավորապես,

- 2016 թվականի ընթացքում արձանագրվել են ապաստան հայցող անձանց քրեական պատասխանատվության դեպքեր սահմանն ապօրինի հատելու համար: Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Պայմանավորվող Պետություններն ապօրինի մուտքի կամ ներկայության պատճառով չպետք է պատժի ենթարկեն այն փախստականներին, որոնք, ուղղակիորեն գալով մի տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել Հողված 1-ի իմաստով, առանց թույլտվության մուտք են գործում կամ գտնվում են այդ Պետությունների տարածքներում (...):»* ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ *այդ հոդվածի («Սահմանն ապօրինի հատելը»)* գործողությունը *չի տարածվում այն դեպքերի վրա, երբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված ապաստանի իրավունքից օգտվելու համար օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն:* Չնայած Կոնվենցիայով և ներպետական օրենսդրությամբ նման կարգավորումների առկայությանը՝ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ ապաստան հայցողներն ենթարկվում են քրեական պատասխանատվության սահմանն ապօրինի հատելու համար, ինչը հակասում է թե՛ միջազգային, և թե՛ ներպետական օրենսդրության պահանջներին: Անհրաժեշտ է ընդգծել, որ այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նախորդ զեկույցներում:

- Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսվում է հատուկ կարիքներ ունեցող, այդ թվում՝ հոգեկան խանգարում ունեցող ապաստան հայցողների և փախստականների նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունք: Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի

համաձայն՝ հատուկ կարիքներ ունեցող անձինք իրավունք ունեն իրավասու մարմիններից ստանալու *անհրաժեշտ աջակցություն ու բավարար ժամանակ ինչպես ընթացակարգին նրանց հասանելիությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, այնպես էլ փախստականի կարգավիճակի հայցը հիմնավորելու համար անհրաժեշտ փաստերի ներկայացման նպատակով*: Ավելին, նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ *եթե առկա են հիմնավոր կասկածներ առ այն, որ ապաստան հայցողը հոգեկան հիվանդության, ժամանակավոր հիվանդագին հոգեկան խանգարման, այլ հիվանդագին վիճակի կամ տկարամտության կամ հաշմանդամության հետևանքով ունակ չէ գիտակցելու ապաստանի տրամադրման ընթացակարգի էությունն ու նշանակությունը և արդյունավետ կերպով ներկայացնելու իր ապաստանի հայցը, ապա միգրացիայի հարցերով լիազոր մարմինը համապատասխան մասնագետի եզրակացության հիման վրա ապաստանի տրամադրման գործընթացում, ապաստան հայցողի համաձայնությամբ, նշանակում է ներկայացուցիչ, որը ապաստանի տրամադրման ընթացակարգում պատշաճ կերպով ներկայացնում է ապաստան հայցողի շահերը*: Ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ ՏԿԶՆ ՄՊԾ կողմից գործնականում հատուկ վերաբերմունք չի դրսևորվում հատուկ կարիք ունեցող, հատկապես հոգեկան խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ: Նշվում է նաև, որ ՀՀ ՏԿԶՆ ՄՊԾ-ն պատշաճ միջոցներ չի ձեռնարկում նման անձանց բացահայտելու և Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված ներկայացուցչի ներգրավման հարցում:

- Շարունակում են արդիական մնալ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած մեր հայրենակիցների բնակարանային պայմանների բարելավման և/կամ ապահովման կարգի հարցերը: Ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրված տվյալներին համապատասխան՝ վերը նշված անձինք իրենց կենցաղային վատ պայմանների մասին բազմիցս տեղեկացրել են ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, սակայն մշտապես ստացել են պատասխաններ, որ հարցին լուծում չի կարող տրվել ՀՀ պետական բյուջեում միջոցների բացակայության արդյունքում: Հարկ է ընդգծել նաև, որ բնակարանային ապահովման խնդրին բախվում են ոչ միայն Ադրբեջանից, այլ նաև մյուս պետություններից տեղահանվված անձինք:

- Ապաստան հայցող անձանց բնակարանային ապահովման խնդիրը հաճախ կարգավորվում է «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Կացարան) սենյակ տրամադրելով: Ոլորտի հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ Կացարանում շարունակում է արդիական լինել նորոգման, ինչպես նաև ենթակառուցվածքների բարելավման անհրաժեշտությունը: Գործնականում այս հանգամանքը խոչընդոտում է ապաստան հայցող անձանց՝ Կացարանում տեղավորելու հնարավորությանը: Մասնավորապես, Կացարանի պայմանները պատճառ են հանդիսանում, որ ապաստան հայցող անձանց մի մասը հրաժարվեն բնակվել այդտեղ և փնտրեն բնակություն հաստատելու համար այլ վայր:

- Խնդրահարույց են նաև փախստականների կրթության իրավունքի ոչ պատշաճ իրացման հարցը: Համապատասխան լեզուներին տիրապետող մասնագետների պակասն առաջ է բերում փախստականների կրթությանն առնչվող մի շարք խնդիրներ: Դրա հետևանքով որոշ փախստական երեխաներ չեն հաճախում դպրոց և չեն ստանում կրթություն:

- Արդիական են նաև փախստականների աշխատանքին և զբաղվածությանն առնչվող խնդիրները: Վիճակն ավելի է բարդանում, երբ ցածր աշխատավարձերին գումարվում է նաև բնակարանի վարձակալության հարցը, այն պարագայում, երբ նրանց համապատասխան կացարան չի տրամադրվում: Հարկ է ընդգծել, որ սա կարող է պատճառ հանդիսանալ, որ այլ երկրներից ՀՀ տեղահանված մեր հայրենակիցները, օրինակ՝ սիրիահայերը, լքեն Հայաստանը՝ այլ երկրում աշխատանք գտնելու նպատակով:

- Առողջապահության ոլորտում առկա ֆինանսավորման, կառավարման, կառուցվածքային և կազմակերպչական խնդիրները, ժամանակակից սարքավորումների պակասն առաջացնում են փախստականի կարգավիճակ ունեցող և ապաստան հայցող անձանց անվճար բժշկական իրավունքի պատշաճ իրացմանն առնչվող խնդիրներ: Ոլորտի հասարակական կազմակերպությունների փոխանցմամբ՝ չնայած վերջիններիս տրամադրվող անձր հաստատող վկայականը բավարար հիմք է օրենքով սահմանված անվճար բուժօգնության ծառայություններից օգտվելու համար, սակայն որոշ դեպքերում, բուժաշխատողների կողմից այն չի ընկալվում որպես անձր հաստատող փաստաթուղթ ու համապատասխան բուժծառայություն չի մատուցվում, կամ բուժհաստատությունների աշխատակիցները ոչ միշտ են տեղեկացված ապաստան հայցողներին բժշկական օգնություն տրամադրելու իրենց պարտավորության մասին:

- Ոլորտի հասարակական կազմակերպությունները նշում են, որ գործնականում ապաստանի տրամադրման ընթացակարգերում առկա է վերապատրաստված թարգմանիչների քանակի խնդիր: Ապաստանի ընթացակարգերում թարգմանիչները տրամադրվում են, հիմնականում, ՄԱԿ-ի ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ, ինչի բացակայության դեպքում պետությունը սեփական ռեսուրսներով ի վիճակի չի լինի անհրաժեշտության դեպքում ապահովել ապաստան հայցողի՝ թարգմանչի ծառայությունից անվճար օգտվելու իրավունքը: